

ԷԶՄԻԱԾԻՆ



Բ-Գ
2002






ԾԸ ՏԱՐԻ

ԷԶՄԻԱԾՆԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ
ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ

Փ է ր ր " - ա ր - Մ - ր ր
2002



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պապագամը Սուրբ Հարության փոնի առիթով	3
Փրկչի Հրաշափառ և Սուրբ Հարության փոնի առթիվ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի և քույր Եկեղեցիների պետերի ու Հայ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալների, պատական պաշտոնական անձանց միջև փոխանակված ողջույնի և բարեմաղթանքների նամակներն ու հեռագրերը	7

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Զավեն արքեպիսկոպոս Չինչինյանին բաժանալագործության 50 և առաջնորդության 40-ամյակների առիթով	12
ԳԱՐԵԳԻՆ Բ ԵՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Կոնդակը Ազար Ասատուրովին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին	14
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը՝ ուղղված Ռուսաստանի Հայերի Միության արքահերթ համագումարին	16
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Ս. Ներսես Ընծայաբանին՝ հիմնադրման 40-ամյակի առիթով	18
Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Մարտի 8-ի առիթով	20
Հայրապետական գնահատություն	21
Նոր նշանակումներ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում	22
Հայ Եկեղեցու Կանոնադրության Հանձնախմբի նիստը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում	23
ԱՐԹՈՒՐ ՍԱՐԿԵՎԱԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ - Ավագ շաբաթը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում	24
Տյառնընդառաջի փոնը Մայր Աթոռում	29
Գարեգին Բ Կաթողիկոսը ներկա գտնվեց իրանական մշակույթի ցուցահանդեսի բացմանը	30

ԿՐՈՆԱԿԱՆ

S. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթրույանի քարոզը՝ խոսված Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում Բուն Բարեկենդանին	31
S. Արշակ վարդապետ Խաչատրյանի քարոզը՝ խոսված Մայր Տաճարում Տյառնընդատաջի տոնին	34
S. Ներսես արքեպիսկոպոս Պողոսյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Արքաքսման կիրակիին	37
S. Շահեն արքեպիսկոպոս Աճեմյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Անառակի կիրակիին	40
S. Տաթև արքեպիսկոպոս Սարգսյանի քարոզը՝ խոսված Մայր Տաճարում Տնտեսի կիրակիին	42
S. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանի քարոզը՝ խոսված Մայր Տաճարում Ճրագալույցի Պատարագին	46

ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

ՎԱՍԴԻՄԻՐ ՍՈՒՈՎՅՈՎ - Պաեքի մասին	49
---------------------------------	----

ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ-ՄԵԼԻՔՅԱՆ - Դիպողություններ Թուվա Արժրուտու «Պատմություն տան Արժրուտեաց»-ի վերաբերյալ	54
ՌՈՒԲԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ - Աղավնու քարայրը	68
ՅՈՒՐԻ ՄՎԵՏԻՍՅԱՆ - Արևմտահայ բանաստեղծության լեզվի պատմությունից. Ղևոնդ Ալիշան	72
ԽԱՉԻԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ - Մի անհայտ էջ Կոմիտասի կենսագրությունից	83
ՊԵՏՐՈՍ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակը և Նիկողայոս Ադոնցը	91
ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԻՈՆՑ - Հայացած Աստվածաշունչը և անոր պատմական տարողությունը	95
ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ - Վարդանանց քարոզների առանձնահատկություններից	104

Հայագիտությունը Եվրոպայում

Է. ՂՈՒԿԱՍՅԱՆ - Էդուարդ Դյուրենի (1807-1882 թթ.) հայագիտական գործունեությունը	111
---	-----

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

ԱՐԹՈՒՐ ՍՐԿ. ՀՈՎՀՄԵՆՆԻՍՅԱՆ - Սրբոց Ղևոնդյանց քահանայից փոխ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում	118
ԱՐԹՈՒՐ ՍՐԿ. ՀՈՎՀՄԵՆՆԻՍՅԱՆ - Ս. Վարդանանց նվիրված տոնակատարություն Մայր Աթոռում	126
ԱՐԹՈՒՐ ՍՐԿ. ՀՈՎՀՄԵՆՆԻՍՅԱՆ - Օրհնության և գնահատանքի գրեր Հայրապետական թափոռների ամպիտվանակներին	132
Վարդապետական թեզերի պաշտպանություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում	137
S. Մյուռոն ծայրագույն վարդապետ Գրվրգյան	138
S. Բագրատ վարդապետ Գալստայան	139
S. Աշոտ վարդապետ Մնացականյան	141
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Աբովյանի կանանց և անչափափասների կայանավայր	142
ԳՈՒՐԳԵՆ ՀԱՄԲՈՅԱՆ - Հուշ-ցերեկույթ Գևորգյան Հոգևոր ճեմարանում	143
Լուրեր Գերմանահայոց թեմից	144
ՊԱՐՈՒՅՐ ԶԱՀՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ - Օգտակար դասընթացներ	146
ԱՐԱՄ ՍՐԿ. ԶԷԹԷՆՃԵԱՆ - Անտիոքի եւ Համայն Արեւելքի Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ պետ Նորին Սրբութիւն Զաքար Ս. Պարթիարքի այցելութիւնը Ազգային առաջնորդարան ի Պաղատար	147

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը սպորագրեց օլիմպիական գինադադարի վերաբերյալ կոչը	150
Վեհափառ Հայրապետն ընդունեց Իսրայելի դեսպան Ռիֆկա Կոհենին	150
Վեհափառ Հայրապետն ընդունեց Բուշ Դյու Ռոն շրջանի գլխավոր խորհրդի նախագահ, սենատոր Ժան Նոել Գերինիի գլխավորած պատվիրակությանը	151
Վեհափառ Հայրապետն ընդունեց Հայաստանում Իրաքի գործերի հավատարմադար Աբդուլ Արաս Մուզհար Ալ Բադրիին	152
Վեհափառ Հայրապետին հրաժեշտ փվեց Սիրիայի դեսպանը	152
Վեհափառ Հայրապետն ընդունեց Սերգեյ Ստեպաշինին	153
Վեհափառ Հայրապետն ընդունեց պապական նոր նվիրակին	153

Վեհափառ Հայրապետն ընդունեց Ասորվաճաշնյան Ընկերության Մերձավոր Արևելքի ու Եվրոպայի բաժնի գլխավոր քարտուղարին	154
Վեհափառ Հայրապետն ընդունեց Ջոել Բուրդոյին	154
Վեհափառ Հայրապետն ընդունեց Ռ.Դ. Ներքին գործերի նախարար Բորիս Գրիգորյի գլխավորած պատվիրակությանը ...	155
Վեհափառ Հայրապետն ընդունեց ԱՄՆ սենատոր Ջեք Սքոթին	156
Վեհափառ Հայրապետն ընդունեց Հայաստանում Հունաստանի ղեսպանին	156
Եկեղեցական բեմ. լուրեր	157
“Эчмиадзин” официальный журнал Эчмиадзинского Католикосата ..	161
“Etchmiadzin” official monthly of Holy Etchmiadzin	165
“Etchmiadzine” organe officiel du Saint-siège d’Etchmiadzine	169

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՎԱՐՇԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՅԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала "Эчмиадзин"
Rédaction de la revue "Etchmiadzine", Etchmiadzine, Arménie

ԴԱՍԻԶ՝ 77764

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀՄՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄԱՐԿՈՅԵԱՄ

ԳԻՏԱԿԱՆ

ՔՈՑԱՆ ԴՅՈՎԻՄԱՆ


ՄԱԺԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ

ՔՈՐԱԳՈՐԾ ԴՅՈՎ

ԳՐԱԴԱՐԱՆՑ ԶԱԳՐՈ

Դ Գ - Ո - Գ - Գ - Գ - Գ - Գ

1901



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՎԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՊԱՏԳԱՄԸ ՍՈՒՐԲ ՎԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ

(31 մարտի 2002 թ.)

«Եւ ուր երթամն՝ գիտիցէք, եւ զճանապարհն գիտիցէք:
 ... Ես եմ ճանապարհն եւ ճշմարտութիւն եւ կեանք»:
 (Յովհ. ԺՂ 4-6)

«Եվ թե ուր եմ գնում, այդ գիտեք, գիտեք և ճանապարհը:
 ... Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը»:
 (Նովհ. ԺՂ 4-6)

Միրելի ժողովուրդ հայոց

Նարության ողջունարեք առաջնոր է: «Երկիրը լցվել է Տիրոջ ողորմությամբ» (Սաղմ ճԺԸ 64): Նարության ու կյանքի հաղթության հաշվարով, հույսով ու լավատեսությամբ են համակված մեր հոգիները՝ հաղորդ «Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը» (Նովհ ԺՂ 4-6) Բանին Կենաց Աստվածհայրության խոսքին:

Քրիստոսի սքանչելագործ Նարության խորհրդով մենք ապրում ենք այն մխթաարությունը, որ Աստված չթողեց իր արարածներին մեղքի հեղ միայնակ, կորստյան ճանապարհին, այլ շարունակ հայրենվեց մարդկությանը ևսահապետների և մարգարեների միջոցով, իսկ ի լրումն ժամանակի մարմին առավ ու բնակվեց մարդկանց մեջ:

Մեկ այլ աշխարհի՝ խաղաղ ու եղբայրասեր, Աստծո հեղ հաշի՝ փրկված աշխարհի սերը մարդկանց հոգիներում սերմանելու առաքելությամբ եկավ Քրիստոս, եկավ խաչի վրա անարար Իր արյան հեղմամբ մեղքն ու մահը խորտակելու հանձնառությամբ: «Միրեց յուրայիններին, ... իսպառ սիրեց ևրանց» (Նովհ ԺԳ 1), - աւսում է առաքյալը: Փրկչի իսպառ այդ սիրով գծվել է Գողգոթայի խաչելության ուղին և փայլարակել Նարության Լույսը՝ իբրև սիրո ու բարոյի հաղթության ճշմարտություն, իբրև քավություն ու աներում, իբրև հաշիություն:

Այսօր մենք, ում նույնպես խալատ սիրեց Քրիստոս, կանգնած ենք թափուր գերեզմանի առջև. որի դռնից քարը մեզ համար մի կողմ է գլորված: Գերեզմանից անդին մահվան սուղերից գերծնաապարհն է, և Հարուցյալ Քրիստոս ձայնում է մեզ. «Եվ թե ուր եմ գնում, այդ գիտեք, գիտեք և ճանապարհը: ... Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը» (Մովհ. Ժ 4-6):

Միքելի բարեպաշտ հավատացյալներ.

Աստուծո Միածին Որդու փրկագործական առաքելությամբ շնորհի ունենք ճշմարտությունը ճանաչելու, գրնելու կյանքի իմաստն ու նպատակը, երջանկության ճանապարհը: Ըշմարտությունը և կյանքը մեր հոգիներից պիտի բխեն. Քրիստոսին սիրող հոգիներից, որ հավատում են Նրա խոսքին՝ Սուրբ Ավետարանին, վստահում Նրա Հարությանը ու Նրա աստվածային ներկայությանը մեր մեջ, կյանքի հավիտենությանը, քրիստոնեական բարոյական արժեքների կենսահասարար ուժին: Մեր ամեն խոսք և գործ կա՛մ վաճառում է ճշմարտությունը, կա՛մ հաստատում այն: Կա՛մ խոցում է դիմացինի սիրտը, կա՛մ ամոքում ու մխիթարում, կա՛մ ավերում է, կա՛մ կառուցում, կա՛մ խափար է ծնում, կա՛մ լույս: Չի՞նենք ճշմարտության վաճառողներ այն զինվորների պես, որ կաշառվեցին ու սուր վկայություն տվեցին, թե աշակերտներն են տարել Հիսուսի մարմինը, այլ անկաշառ հոգով, արդար սրտիվ և Հարության անխառն հավատով մեր Եկեղեցու խորաններում հաղորդվենք Աստուծո Միածին Որդու կենդանարար մարմնին ու արյանը: Ով ճանաչել է ճշմարտությունը, խափարը չի ցանկա: Ով քայլել է ճշմարտության ճանապարհով, խափարում չի դեգերի: Մեր ճանապարհը Հայոց Մի, Առաքելական Սուրբ Եկեղեցին է՝ Հարուցյալ Քրիստոս քարոզող, Հարության հավատի մեջ, Հարության ճանապարհին մեզ հաստատող ու ապրեցնող:

Միքելի ժողովուրդ հայոց, Հարության լոռ արշալույս է բացված ի Հայաստան, Արցախ և ի Միջուռ՝ ներշնչուն լոռ կյանքի սպասումով՝ առաքելությամբ շնչող, ապահով, բարօր ու երջանիկ կյանքի: Երբ Հարության լոռ առավուր է հայ իրականության մեջ, չերկնջենք մեր Հայրենիքում իրավունք և օրինականություն պաշտպանելու, արդարություն և ճշմարտություն հաստատելու: Դառնանք դեպի Հարության անսուղի լույսը, բացենք մեր հոգին մեզ լորրոզող ու փրկող Հարուցյալ Քրիստոսի առջև: Երբ Հարության լոռ առավուր է, ինչպե՛ս լույսով անցնենք կեղծիքի կողմով և մեր անարարեությունը ու անփութությունը թույլ տանք, որ մեր կյանքը դառնա կեղծ արժեքների ու զաղափարների, անօրեն գործարքների վաճառարեղի:

Քրիստոնեական բարոյականի վերածնունդը այսօր համազգային խնդիր է և յուրաքանչյուրիս մտահոգության առարկա, քանզի առանց սիրո, առանց ազնվության, արդարամտության ու օրինավորության միայն կարճալի կարող են լինել բոլոր ձևափոխումներն ու հաջողությունները, արևմտությունը՝ գուրկ ազատ ու ներդաշնակ զարգացումից, գիտությունը՝ հեռու կյանքի առաքելությանից ծառայելու իր կոչումից, արվեստը՝ անհոգի ու միայն նմանակող: Առանց Փրկչի ոչինչ հարալի ու երջանկաբեր չենք կարող սրելով: Քրիստոս է ճանապարհը, «աղբյուր կենաց և բաշխող շնորհաց»... ով Ինձ հաժարում է, ինքն էլ կանի այն գործերը, որ Ես եմ անում» (Յովհ. Ժ 12),- ասում է Տերը: Լավը լավ կոչող, վարը՝ վար, բարին չարից տարբերող գործերն են դրանք, արեսիքով ներշնչուն արության գործերը, հաղթանակող, հրաշածին, անհնարինը հնարավոր դարձնող ու հարությանը շնչող գործերը:

Փրկչի ուղեկշած, Նրա արյամբ հարթված, Նրա սիրով ծաղկուն հարության ճանապարհով պիտի վերածնվի հայաստանը, ճշմարտությանը պիտի գորեղ լինի, լեցուն կյանքով ու երջանկությամբ, երկիր դրախտավայր՝ աշխարհապետո՞ր ողջ հայության համար ոչ միայն պատմական հայրենիք, այլ տուն հայրական, որ հավաքում է մեզ տապալակիր Արարարի շուրջ, Միածնականույց Սուրբ Էջմիածնի հովանու ներքո:

Աշխարհի բոլոր կողմերում հարության հաժարով արձագանքենք «հայաստան - Սփյուռք» միաբանության լեռ ուխտի հրավերին և Տիրոջով ուրախ, Տիրոջով վստահ ու քաջեսուն՝ ձեռնամուխ լինենք հայոց անկախ պետականության՝ մեր լեռ կյանքի կառուցմանը: Նոր լույսեր վառենք ազգային միության մեր Սուրբ Տաճարում, վստահենք մեր գործությանը Քրիստոսով, սիրենք մեր միաբանությունը՝ ամբողջ, պայծառ պահելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, ուր բնակվում է Աստված Իր օրհնությամբ, հարություն ճառագող Իր ճշմարիտ գործությամբ, որը զարթոնքով է լցրել հայ կյանքի անդադրանքներն ամենուր՝ լեռ կենսավիշ հաղորդելով կյանքի հաղթության հաժարով ապրող ու արարող Ազատ Արցախին և հայոց Սփյուռքին:

Այդենք Քրիստոսով, և մեր կյանքը միշտ կլինի հարության ողջունաբեր առավոտ:

Ամենայն հայոց Միածնաեջ Մայր Աթոռից «յարեաւ Քրիստոս» մեծաքանակ ավերիսն ենք հղում և եղբայրական Մեր ջերմ ողջույնը բերում Առաքելական մեր Եկեղեցու Նվիրապետության Աթոռների շնորհագարդ գահակալներին՝ Մեծի Տանն Կիլիկիո Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Կաթողիկոսին, Երուսաղեմի հայոց Ամենապարիվ Պար-

րիւարք Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին. Կոստանդնուպոլսո Տայոց Ամենապարիվ Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրաֆյանին:

Տարության բարի ավերիսով Տայրապետական Մեր օրհնություններն ենք բերում ուխտապահ ու նվիրյալ ողջ հոգևոր դասին և հավատարմոր համայն մեր ժողովրդին ի Հայաստան, Արցախ և ի Սփյուռքս:

Տարության օրհներգությունը Մեր շուրթերին, ողջունում ենք հայոց պետական ավագանուն՝ գլխավորությամբ Մ Նախագահ Տիար Ռոբերտ Զոհարյանի, և Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներին ու ներկայացուցիչներին:

Ի Զրիստոս սիրո եղբայրական Մեր ողջույնն ենք հղում քույր Եկեղեցիների հոգևոր պետերին և Տարուցյալ Փրկչի առաքաբաշխ շնորհները հայցում Զրիստոսի հավատարմոր հոյին, համայն աշխարհին: Զրիստոս հարյալ: Զրիստոսով հարուցյալ ու նորոգ են մարդն ու տիեզերքը: Չկա մահ՝ «Նա ամեն ինչ հասարակել է լինելու համար, և աշխարհի գործերը տրկության համար են» (Իմաստ. Սող. Ա 14):

Զրիստոսի Տարությամբ բացվել է կյանքի ճանապարհը: Մերն է ընտրությունը նոր ալգաբացին մարդկության երրորդ հազարամյակի և հայոց նորանկախ պետականության. «Եվ թե ուր եմ գնում, այդ գիտեք, գիտեք և ճանապարհը»... :

«Զրիստոս յարեալ ի մեռելոց,
Մեզ, ձեզ մեծ աներիս»:

Ս. Էջմիածին,
31 մարտի 2002 թ.

**ՓՐԿՉԻ ՆՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՆԱՐՈՒԹՅԱՆ
ՏՈՆԻ ԱՌԹՎ**

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ
ՆԱՅՐԱՊԵՏԻ**

**ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ՈՒ
ՆԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ**

**ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՈՆԵՐԻ ԳԱՆԱԿԱՆԵՐԻ,
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՋԵՎ**

ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ

**ԲԱՐԵՄԱՂԱՄՆՔՆԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐՆ ՈՒ
ՆԵՌԱԳՐԵՐԸ**

Հոռմնական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՆՈՎՆԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԵՊ (Հռոմ)

Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք,
Նորին Ամենասրբություն
ԲԱՐԴՈՒՂԻՄՆՈՍ Ա (Սրամբուլ)

Մոսկվայի և Համայն Ռուսիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԵՔՄԻ Բ (Մոսկվա)

Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ (Թբիլիսի)

Ղաթի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԵՆՈՒՂԱ Գ (Կաթիլի)

Անտիոքի և Համայն Արևելքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք,
Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔԶԱ Ս ԻՎԱՍ (Դամասկոս)

Եթովպիայի Պապրիարք, Նորին Սրբություն

ԱԲԲԵ ՊԱՌԻՆՍ (Ադիս Աբեբա)

Հնդկաստանի Ասորի Մալաբար Ուղղափառ Եկեղեցու պեպ, Նորին Սրբություն

ՄԱՏԹԵՈՍ Բ (Դելի)

Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Պապ և Պապրիարք,

Նորին Գերաշնորհություն

ՊԵՏՐՈՍ Է (Ալեքսանդրիա)

Անտիոքի և Համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Պապրիարք,

Նորին Գերաշնորհություն

ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԶԻՄ Դ (Դամասկոս)

Երուսաղեմի Ուղղափառ Եկեղեցու Պապրիարք, Նորին Գերաշնորհություն

ԻՐԵՆԻՈՍ (Երուսաղեմ)

Սերբիայի Ուղղափառ Եկեղեցու Պապրիարք, Նորին Սրբություն

ՊԵՎԼԵ (Բելգրադ)

Ռումին Ուղղափառ Եկեղեցու Պապրիարք, Նորին Սրբություն

ԹԵՈԿՏԻՍ (Բուխարեստ)

Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պապրիարք, Նորին Սրբություն

ՄԱՔՍԻՄ (Սոֆիա)

Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն

ԽՐԻՍՏՈՍՏՈՄՈՍ (Կիպրոս)

Աթենքի և Համայն Հունաց Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն

ԽՐԻՍՏՈՂՈՒՐՈՍ (Աթենք)

Վարչակալի և Համայն Լեռնաստանի Միտրոպոլիտ, Նորին Սրբություն

ՍԱՎԼԵ (Վարչակալ)

Մինսկի և Սլուցկի Միությունների, Համայն Բելառուսի Պապրիարք,

Նորին Սրբություն

ՖԻԼԱՐԵՏ (Մինսկ)

Եվրոպայի Կաթոլիկ Եկեղեցիների Եպիսկոպոսների Խորհուրդների

Միության Նախագահ, Պրահայի Արքեպիսկոպոս

ԿԱՐԴԻՆԱԼ ՄԻԼՈՍԼԱՎ ՎԼԿ (Պրահա)

Տանն Կիլիկիո Կաթողիկոս Հայոց Կաթողիկոս-Պապրիարք

ՆԵՐՍԵՍ-ՊԵՏՐՈՍ ԺԹ (Բեյրութ)

*

* *

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱԴԵՏԱԿԱՆ ԱԹՈՈՆԵՐԻՅ՝

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն

ՄՐԱՄ Ա (Անթիլիաս)

Երուսաղեմի Հայոց Պապրիարք, Նորին Ամենապատվություն

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (Երուսաղեմ)

Կոստանդնուպոլսի Հայոց Պապրիարք, Նորին Ամենապատվություն

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (Սպամբուլ)

Հայոց Եկեղեցու Թեմակալ առաջնորդներից, հոգևորականներից և Թեմական Խորհուրդներից ու համայնքներից:

Եկեղեցական պետերից բացի, բազմաթիվ նամակներ և հեռագրեր են ստացվել նաև Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդից, քույր Եկեղեցիների հոգևոր հայրերից՝ կաթոլիկներից, միություններից և մյուս առաջնորդներից ու հոգևոր սպասավորներից, Միխայիլյան Միաբանությունից, Էկումենիկ կազմակերպությունների և երկայնացուցիչներից:

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻՑ

Հայաստանի Հանրապետության Նախագահի վսեմաշուք

ՌՈՐԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի մեծափարզ

ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետի մեծափարզ

ԱՆԴՐԵԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Սահմանադրական Դատարանի նախագահի մեծափարզ

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի վսեմաշուք

ԱՐԿԱՂԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի մեծափարզ

ԱՆՈՒՇԱԿԱՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հայաստանի Հանրապետության նախարարներից, մարզպետներից, քաղաքապետներից, ակադեմիական և համալսարանական հաստատություններից, գիտութ-

յան, մշակույթի ու տարբեր բնագավառների բազմաթիվ գործիչներից և առանձին անհատներից, Հայաստանում գործող քաղաքական կուսակցություններից, հասարակական կազմակերպություններից և ստեղծագործական միություններից, Միջազգային Կարմիր խաչի կենտրոնից, PRO ORIENTE կազմակերպությունից (Ավստրիա), ինչպես նաև միջազգային տարբեր կազմակերպությունների Հայաստանյան գրասենյակներից, «ՀԱՅԱՍՏԱՆ» Համաեայկական Հիմնադրամից, ՀԲԸՄ-ից, Հայկական Համագումարից, ՂՕՄ-ից, Կյուլպենեկյան հաստատությունից, Կարազյուզյան հիմնարկությունից, սփյուռքահայ մի շարք այլ կառույցներից և հաստատություններից:

Շնորհավորականներ են ուղարկել Հայաստանում գործող դիվանագիտական հաստատությունների ներկայացուցիչները, արտասահմանյան երկրներում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանները, Սփյուռքում գործող հասարակական և համայնքային կազմակերպությունները:



**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅՈՅ ԹԵՍԻ
ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԶԱՎԵՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԻՆՉԻՆՅԱՆԻՆ՝
ՔԱՆԱՆԱՅԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ 50 ԵՎ
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ 40-ԱՄՅԱԿՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ
ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ՍԻՐԵՅԵԱՆ ՈՐԴԻՆ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱՆ ՄՊԱՍՄԻՈՐՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՈՅ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԶԱՎԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԻՆՉԻՆԵԱՆ,
ՈՐ Ի ԿԱՆԿԻՐԷ, ԵԳԻՊՏՈՍ**

Միրելի Սրբազան,

Աշխարհասփիտ մեր ժողովրդի հոգեւոր կենտրոն Աստուածակառույց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ եւ Մեր շնորհատրանսփերը բերում քահանայագործութեան յիսնամեայ եւ առաջնորդական Ձեր առաքելութեան ցառասնամեայ յոբելաններին ուրախաբեր առիթներով:

Հոգոյ խնդրեալք ենք անդրադառնում Տէրունակոյն երկրում հաւաքքի ու գիտութեան հունդեր ամբարած եկեղեցականիդ կեդարեայ ծառայութեանը: Զանաւայական շնորհին արժանանալուց յետոյ, Աստուածային կամքը Ձեզ առաջնորդեց դէպի Եգիպտոս՝ Հայրենիքից հեռու բնակուող մեր ժողովրդի զաւակներին անխոնջ բարոգչութեամբ առաջնորդելու առ Բարձրեալ Տէրը մեր, զօրացնելու նրանց հաւաքը եւ նրանց կեանքում կենդանի եւ զօրեղ պահելու մեր Եկեղեցին:

Մենք Հայրապետության առաջին տարում հաճելի առիթ ունեցանք լինելու Ե-գիպոտոսում, ուր հոգու խնդությանմբ ականապես եղանք թեմակալ առաջնորդի պաշտոնում Ձեր ծառայության բարի պատուհներին: Ձեր հոգածու սպասատրությանմբ շէն ու պայծառ է եգիպտահայ գաղութի ազգային-եկեղեցական կեանքը, վառ է սերն ու հաւաքարմութիւնը հանդէպ Հայրենի մեր աւերեաց երկիրը եւ Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Մեզ համար հաճելի էր Գեանել Ձեր եկաքմամբ բարեպաշտ հաւաքացեալների սերն ու յարգանքը, որին Դուք արժանացել էք Ձեր նուիրեալ ծառայութեամբ:

Արդարեւ, Դուք շնորհընկալ էք Ամենակարող Աստծուց, Ով հանապազ գորացնում է Ձեզ եւ Ձեր կեանքը լցնում Եկեղեցուն, հարազատ ժողովրդին ու հայրենիքին մարուցած բարի ծառայութեան երջանկութեամբ:

Սիրելի Սրբազան, մասնաւոր գոեունակութեան առիթ է Մեզ հասարարել, որ Դուք քանանայագործութեանը գուզընթաց գբաղում էք նաեւ գիտական գործունեութեամբ: Հայոց վարդապետի լուսաբաղձ առաքելութեամբ Դուք շարունակում էք ճանաչողութեան նորանոր ակունքներ պեղել՝ «ի պայծառութիւն Եկեղեցույս Հայաստանեայց եւ ի լուսաւորութիւն ազգիս հայոց»:

Մայր Եկեղեցու անդաստանում Ձեր արդիւնաշատ ծառայութեան բարձր գնահատանքով, ընդառաջելով Եգիպտոսի հայոց թեմի Թեմական հորիւրդի խնդրանքին, Ձեր յոբելանների ուրախ առիթով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱՆԻ

պատույ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի մաղթում ենք Ձեզ քաջառողջ եւ արեւշատ կենաց օրեր, որպէսգի Տիրոջ Աջի հովանու ներքոյ երկար փարիներ շարունակէք Ձեր հովուութիւնը՝ ի մխթարութիւն բարեպաշտ հաւաքացելոց եւ ի գորացումն մեր Մայր Եկեղեցու:

Թող Ամենակալ Տէրն անսասան պահի Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ Ամենայն Հայոց Աստուածակառոյց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեսուն մերոյ Յիսուսի Զրիստոսի եղիցին ընդ Ձեզ. ամէն»:

Օրինութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 27-ն Մարտի
Յամի Տեսուն 2002 եւ ի թուին Հայոց ՌՆՄԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 83

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ԱԶԱՏ ԱՍԱՏՈՒՐՈՎԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՄԻՐԵՅԵԱՆ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՆԱՐԱԶԱՏ ԶԱՄԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾԻՆԻ
ՄԵԾԱՐԳՈՑ ՏԻԱՐ ԱԶԱՏ ԱՍԱՏՈՒՐՈՎ,
ՈՐ յԱՊԵՐ, ՌՈՒՄԱՍԱՆ**

Նարաւային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Մովսէս եպիսկոպոս Մովսիսեանից տեղեկացանք Ձեր բազմարդիւն գործունեութեան մասին՝ ի խնդիր Առաքելական մեր Մայր Եկեղեցու պայծառութեան եւ հաւաքաւոր ժողովրդի բարօրութեան:

Մեծարգոյ պըն Ասափութով, մեծապէս ուրախ ենք հասարակական կեանքում արձանագրած Ձեր յաջողութիւններով, որ հայրենիքից եեռու բարի անուն ու ճանաչում են բերում Ձեզ՝ մեր Եկեղեցու ու ժողովրդի արժանաւոր զաւակիդ: Գովելի ու բարձրօրէն գնահատելի են Ձեր ջանքերը՝ ներդրուած յանուն Նարաւային Ռուսաստանի հայոց թեմի զօրացման ու պայծառութեան: Աստուածաճաճ Ձեր ձեռնարկների պսակն է Աղօնքում կառուցուած Սուրբ Մարգիս եկեղեցին, որի սրբազան կամարների ներքոյ բարեպաշտ իւրօրդիւնները իրենց աղօթքն են առ Աստուած բարձրացնում. եաղորդուում Աստուածային աւուր խորհուրդների եւ արժանանում Երկնապարգեւ շնորհների:

Նարաւային Ռուսաստանի հայոց թեմի բարեջան առաջնորդի եւ Թեմական Խորհրդի խնդրանքին ընդառաջ, համազգային նուիրական մեր սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Նայրապետական Մեր օրհնութիւնը եւ առ ի գնահատութիւն ազգային կեանքում Ձեր մեծ վաստակի՝ շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ

պատուով բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով հայցում ենք Ամենակալ Աստուծոց, որ Իր հանապազօրեանութեան ներքոյ միշտ բաջառողջ ու երջանիկ պապի եւ պապականի Ձեզ ու Ձեր

ընտանեաց անդամներին՝ առաջնորդելով բարի ու հայրենասնուէր նորանոր իրազոր-
ծումների:

Թող Ձեր յարկը շնորհրդակալ լինի երկնապարզի բիւր բարիքների եւ առաւոյ ո-
ղորմութեան:

**«Շնորհք Տեսնն մերոյ Յիշուսի Զրիստոսի շնդ ձեզ եւ շնդ
սունհսեան».** **սմէն»:**

Օրինութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 5-ն Փետրուարի
յամի Տեսնն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 79

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀՆԵՐԹ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՅԵԱՆ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ԶԱՒԱԿՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱՄԻՆ, ԱՆԴԱՄՍ ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ, ՈՐ Ի ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԱՀՆՈՒԹԻՒՆ

Ռուսաստանի Հայերի Միության արքաները համագումարի առիթով համագային մեր նուիրական սրբալայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմատություններն ենք յղում Միության նախագահ Տիար Արա Աբրահամեանին, նուիրեալ բոլոր անդամներին, Դաշնային Ռուսաստանում բնակուող հարազատ մեր ժողովրդի բոլոր զաւակներին եւ համագումարի պատրաստման մասնակիցներին:

Միջոյի զաւակներ մեր Մայր Եկեղեցւոյ, Ձեր յաջողութիւնները Ռուսիոյ օրհնեալ հողում անկեղծ ուրախութեամբ են համակում Հայրապետիս հոգին: Ձեր ստեղծագործ կեանքն ու շինարար գործերը բարի համբաւ են բերում Ձեր անձերին եւ յաւելում ռուս ժողովրդի յարգանքն ու վստահութիւնը՝ հանդէպ հայ գաղութը՝ նպաստելով երկու ժողովուրդների եղբայրութեան ամրապնդմանը:

Ռուսաստանի Դաշնութիւն կարարած Մեր բազմաթիւ այցերի ընթացքին, ինչպէս նաեւ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի միջոցով Մենք մշտապէս հաճելի ստիթներ ենք ունեցել հաղորդ դառնալու Ռուսաստանի Հայերի Միութեան հայրենաշէն շնորհակալ գործունէութեանը: Մենք համոզուել ենք, որ Միութեան շուրջ հաւաքուած հայրդիւնները ամենայն պատրաստակամութեամբ իրենց հոգեւոր, մտաւոր ու նիթական կարողութիւնները ի սպաս են դնում՝ առաւել արդիւնաշատ ծառայելու բարեպաշտ մեր ժողովրդին, ամրապնդելու Ռուսաստանի հայկական համայնքները, նպաստելու իր նոր կեանքը կերպող մեր Հայրենիքի առաջընթացին:

Մեզ հարկապէս գոեունակութիւն է պարգեւում Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի եւ Ռուսաստանի Հայերի Միութեան ջերմ ու անկեղծ համագործակցութիւնը, որի բարի արդիւնքները ծառայում են Ռուսաստանում բնակուող հայրդիւնների ազգային-եկեղեցական կեանքը զօրացնելու ազնիւ նպատակին: Փառք Բարձրեալին, որ Ռուսաստանի լայնարձակ հողում բնակութիւն հաստատած հայու-

թիւեր ապրում է Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին եւ հայրենեաց աւանդներին հաւատարիմ կեանքով՝ զօրեղ քրիստոնէական իր հաւատով, Անտարանի պարգամների եւ ազգային ու եկեղեցական սրբազան աւանդոյթների կենսագործումով: Վստահ ենք, որ ռուսահայոց աննուազ նախանձախնդրութիւնը հանդէպ մեր հոգեւոր եւ ազգային արժէքները շարունակ արգասաւորուելու են ազգաշէն ու եկեղեցանուէր նորանոր ձեռքբերումներով:

Բարձրեայի օրհնութիւնն ենք հայցում Ձեզ եւ յաջողութիւններ մաղթում համագումարի աշխատանքներին: Մեր գնահատանքն ու խորը գոհունակութիւնն ենք յայտնում Ռուսաստանի Հայերի Միութեան կողմից Մեզ շնորհուած բարձրագոյն պարգեւի՝ առաջին աստիճանի ոսկեայ շքանշանի համար՝ որպէս Միութեան որդիական սիրոյ արտայայտութիւն հանդէպ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Առ Աստուած աղօթքով մաղթում ենք, որ Բարձրեայ Տէրը խաղաղ երկնքի ներքոյ անշրջելի առաջընթաց ու բարգաւաճում պարգեւի՝ Ձեզ համար երկրորդ հայրենիք դարձած Ռուսիոյ աւանդաշատ երկրին ու աստուածասէր ժողովրդին, հանապազօրհնութեամբ միշտ ամուր պահի մեր ժողովուրդների եղբայրութիւնը եւ զօրաւոր Իր Աջով մշտապէս օգնական ու աջակից լինի բոլոր հայորդիներին ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի:


«Շնորհք Տեսուն մերոյ Յիսուսի Զրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեւեւանդ. ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա Գիրս Օրհնութեան ի 21-ն Մարտի
յամի Տեսուն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 246



**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ
ԹԵՄԻ Ս. ՆԵՐՍԵՍ ԸՆԾԱՅԱՐԱՆԻՆ՝
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 40-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ԸՆԾԱՅԱՐԱՆՆ,
ՈՐ Ի ՆԻՒ ԵՈՐՔ, ԱՄՆ**

Գոհունակ սրտով Լուսայ հոռան Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրինությանն ենք յղում ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանին, Սուրբ Ներսէս Ընծայարանի փեսայեանը, դասախօսական կազմին, սաներին, շրջանաւարտներին, կրթօջախի բոլոր նուիրեալներին ու բարեբարներին եւ շնորհատրում հասարակութեան հիմնադրման 40-ամեայ յոբելեանի առիթով:

Արդարեւ, ջանադիր գործունեութեամբ լեցուն փաստամակներ են անցել այն օրից, երբ մեր Եկեղեցու երախտաւոր Տիրան արքեպիսկոպոս Ներսէսեանի կենդանի փեսիլով, ներդրած ջանքերով ու հոգածութեամբ ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի հովանո՞ւ ներքոյ ծնունդ առաւ Սուրբ Ներսէս Ընծայարանը՝ Եկեղեցու սպասաւոր, ժողովրդի հովիւ ու ծառայ կրթելու մեծ կոչմամբ ու առաքելութեամբ: Բարեյիշատակ հոգեւորականի երազն էր, որ մեծագործ Սուրբ Հայրապետի անունը կրող կրթօջախը մշտապէս լեցուն լինի ճանաչողութեան լոյսով ու հոգեւոր իմացութեամբ՝ ի շինության եւ ի պայծառութիւն երկհազարամեայ մեր Սուրբ Եկեղեցու:

Այսօր Մենք առանձնակի գոհունակութեամբ ենք անդրադառնում Սուրբ Ներսէս Ընծայարանի շնորհակալ գործունեութեանը, Մայր Եկեղեցու կեանքում նրա հարուստ վաստակին: Տարիներ շարունակ կրթօջախի հարկից ներս Անպարանի կենաց խօսքով ու հայրենեաց սրբազան ժառանգութեամբ մնաւում ու գորանում են երիտասարդ հայադէները, պատրաստուում՝ անխոնջ ու նուիրեալ ծառայելու բարեպաշտ մեր ժողովրդին:

Առաջանալիս յիշարժան յոբելեանի առիթով Հայրապետական Մեր յորդորն ենք յղում Սուրբ Ներսէս Ընծայարանի ուսանողութեանը եւ բոլոր շրջանաւարտներին, ովքեր կոչուած են սպասաւորելու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Աստուածօրհնեալ անդաստանում: Շարունակե՛ք նոյն եռանդով, հայրենապաշտ նոյն ոգով ու եկեղացանութեամբ Ձեր գործերով ծառայել Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն՝ ի բարօրութիւն հաւատարմոր մեր ժողովրդի՝ Ձեր աչքի առջեւ ունենալով նաեւ Տիրան արքեպիսկոպոս Ներսէսեանի ծառայասէր բարի օրինակը:

Եւ թող Բարձրեայն Աստուած Իր հանապազ օրհնութեան ներքոյ պահպանի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, անկախ Հայրենիքն ու հավատարմորէ մեր ժողովրդին. հաստատուն ու շէն պահի Սուրբ Ներսէս Ընծայարանը եւ յարանորոգ յաջողութիւններ պարգեւի կրթօջախի բոլոր նուիրեալներին ու սիրասուն սաների ջանքերին ու ծրագրերին:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Արիւնդոսի և յիցիւն ընդ Ձեզ եւ ընդ ամենեւեան ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուալ Գիրս Օրհնութեան ի 18-ն Մարտի
Յամի Տեառն 2002 և ի ի թուին հայոց ԱՆԾԱ
ի Մայրավանս Արքայ Էջմիածնի
ընդ համարաւ 245

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶԸ
ՄԱՐՏԻ 8-Ի ԱՌԻԹՈՎ**

Մարտի 8-ի փոնական ամիթով շնորհավորում ենք բոլոր կանանց և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում Հայրապետական Մեր օրհնությունը:

Մեր մաղթանքն է, որ Աստված մշտապես շնորհագարդի մեր մայրերին ու բույրերին՝ քրիստոնեական ամոքիչություններով, սիրով ու նվիրումով պաշտպանելու ընտանեկան հարկերի ջերմությունը, իրենց կյանքով ու հավատավոր գործերով ծառայելու ազգային-հասարակական մեր կյանքի գորացմանը և նոր ավանդներ բերելու գիտության, մշակույթի ու կրթության ասպարեզներում:

Թող Տիրոջ օրհնությամբ սերը, լավատեսությունն ու խաղաղությունը թագավորեն կանանց ամոքիչագարդ հոգիներում և ճառագեն իբրև գեղեցկություն ու երջանկություն:

«Շնորհք սեր և խաղաղություն Տեսնեմք մերոյ Յիսուսի Քրիստոսի կողմից ընդ ձեզ և ընդ ամենեւեակն ամեն»:

Ն Ա Յ Ր Ա Պ Ե Տ Ա Կ Ա Ն Գ Ն Ա Ն Ա Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2002 թվականի փետրվար-մարտ ամիսների ընթացքում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին
Բ Ամենայն Հայոց Հայրապետի Կոնդակով

«Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրվել է.

Խաչիկ Յըլմազյան (Ֆրանսիա)

«Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվել է.

Ջորջ Վ. Հարությունյան (ԱՄՆ Արևելյան թեմ)

Ջորջ Տ. Հակոբյան (ԱՄՆ Արևելյան թեմ)

Օրհնության գիր է փրվել.

Կարապետ Ցաղսզյան (Սիրիա)

Ժյուլիեն Յըլմազյան (Ֆրանսիա)

Անդրանիկ Մինասյան (Ֆրանսիա)

Եվա Արթինյան (Ֆրանսիա)

Գևորգ Մուրադյան (Արարատյան Հայրապետական թեմ)

Վլադիմիր Աբաջյան (Արարատյան Հայրապետական թեմ)

Սարգիս Նաջարյան (Արարատյան Հայրապետական թեմ)

Գերմանահայոց Կենտրոնական Խորհուրդ

Հովնանյան վարժարան (ԱՄՆ Արևելյան թեմ)

Կալկաթայի Մարդասիրական Ընմարան

Լանջախաչ կրելու իրավունք է շնորհվել.

Մինաս քին. Մարտիրոսյան (Սևանի վանք)

Կյուրեղ քին. Տալյան (Կոփայքի թեմ)

Հովնան քին. Մաթևոսյան (Կոփայքի թեմ)

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՎ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվական համակարգ, 21 փետրվարի 2002 թ.:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ նոր նշանակումներ են կատարվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կառույցներում և թեմերում:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Արքանալ Եպս. Մկրտչյանը նշանակվել է Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի (ՔԴԿ) խորհրդի նախագահ՝ շարունակելով կատարել թեմակալ առաջնորդի իր պարտականությունները:

Հայրապետական եաջորդ տնօրինությամբ Սևանի Վազգենյան դպրանոցի տնօրէն Տ. Բագրատ արք. Գալստանյանը նշանակվել է Տեղեկատվական Համակարգի խորհրդի նախագահ:

Տ. Սարգիս քեն. Չոփուրյանը, Տ. Մադաքիա քեն. Օհանյանը և Տ. Վաչե քեն. Հայրապետյանը ծառայության են կոչվել Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմում: Թեմակալ առաջնորդ Տ. Եզրաս Եպս. Ներսիսյանի տնօրինությամբ քահանաները իբրև հոգևոր եղբայրներ իրենց ծառայությունն են բերելու Ս. Պետրբուրգում, Վերգորադում և Աստրախանում:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԱՐԻ ՆԻՍՏԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Մարտի 4-6-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում փեղի ուեցցավ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Կանոնադրության հանձնախմբի հերթական նիստը՝ հանձնախմբի նախագահ, ԱՄՆ Արևմտյան թեմի առաջնորդ Ս. Վաչե արքեպս. Հովսեփյանի նախագահությամբ:

Նորին Սրբություն Ս. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի փնտրիչությամբ հունվար ամսից հանձնախմբը գործում է նոր կազմով, որի մեջ ընդգրկված են Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պապվիրակ Ս. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը, Երուսաղեմի Հայոց պապրիարքությունից՝ Սևան եպս. Ղարիբյանը, Արարապյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Նավասարդ եպս. Կճոյանը, Անգլիայի թեմի առաջնորդ Ս. Նաթան եպս. Հովհաննիսյանը, Ս. Մամբրե քհն. Գուգույանը՝ ԱՄՆ Արևելյան թեմից, Կ. Պոլսի հայոց պապրիարքությունից՝ տիար Սեդրակ Տավուրխանը, ՀՀ Արդարադատության համակարգից՝ Տարիել Բարսեղյանը, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամներ Ռաֆայել Պապայանը և Ազատ Բոգոյանը:

Եռօրյա նիստերի ընթացքում Կանոնադրության նոր հանձնախմբը, շարունակելով նախորդ հանձնախմբի աշխատանքը, ամբողջությամբ վերանայեց կանոնադրության նախագիծը՝ թեմերից ստացված առաջարկությունների հիման վրա կատարելով անհրաժեշտ փոփոխություններ: Առաջիկայում մշակված նախագիծը կներկայացվի Ամենայն Հայոց Հայրապետի ուշադրությանը, ապա կբնանարկվի Գերագույն Հոգևոր խորհրդում:

Կանոնադրությունը վերջնականորեն կհաստատվի Ազգային եկեղեցական ժողովի կողմից:

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՎԱԳ ՇԱԲԱԹ-Ը

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

ԾԱՂԿԱԶԱՐԴ

Ավագ շաբաթվան, որն անվանվում է նաև Չարչարանաց շաբաթ, նախորդում է Ծաղկագարդը, որը խորհրդանշում է Պառլի հանդիսավոր մուտքը Երուսաղեմ:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ծաղկագարդի փոքր հոգակել է նաև Մանուկների Օրհնության օր և արդեն մի քանի փարի է, ինչ այդ օրը Հայաստանյայց եկեղեցիներում կատարվում է մանուկների օրհնություն: Ձևավորված ավանդույթով, այս փարի ևս Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, առավոտյան ժամերգությունից և Անդասարանի արարողությունից հետո, Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը փոխեց մանուկներին:

Ծաղկագարդի փոքին Նորին Սրբությունն այցելեց նաև Էրևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, ուր Ս. Պապարագ մարտիրոսից հետո՝ Հայրապետական իր օրհնությունը վերստին բաշխեց այնպեղ հավաքված մանուկներին:

ԱՎԱԳ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ - «Անպատդ թգնու» առակի և Երուսաղեմի փաճարի մաքրագործման հիշատակման օրն է: Մայր Տաճարում, լուսարարապետի պաշտոնակատար Հոգեշնորհ Տ. Արքայ վարդապետ Տիգրանյանի ժամօրհնությամբ, կատարվեցին գիշերային, առավոտյան և երեկոյան ժամերգություններ, որոնց ընթացքում ընթերցվեցին օրվա խորհուրդը ներկայացնող աստվածաշնչական հավաքածուներ:

ԱՎԱԳ ԵՐԵՔՇԱԲԹԻ - «Տասը կույսերի» առակի հիշատակումն է Մայր Տաճարում, Տ. Արքայ վարդապետ Տիգրանյանի ժամօրհնությամբ, կատարվեցին գիշերային, առավոտյան և երեկոյան ժամերգություններ:

Երեկոյան ժամերգության ընթացքում, «Հայր գթած» աղոթքից հետո, փաճարի աղյան դուռն եկան փառք դպիրներ, ովքեր փառք կույսերի օրհնակով՝ իրենց ձեռքում վառվող մոմեր ունեին, և կանգնեցին Ս. Ավետարանի առաջ: Եվ երբ բաժանանա ավետարանական հատվածից ընթերցեց «Որովհետև ահա մեր լապտերները հանգչում են» (Մատթ. ԻԵ 8) խոսքերը, եկեղեցականներից մեկը, ի նշան հիմար կույսերի մարած լապտերների, մոմերից հինգը հանգցրեց:

Կույսերի լապտերները խորհրդանշում են կուսության շնորհը, իսկ դրանց միջի պարունակությունը՝ յուրը՝ ողորմությունն ու մարդասիրությունը. «Թուղը լույսի նյութն է, իսկ ողորմությունն էլ՝ մշտնջենավոր կյանքի ու լույսի» (Ս. Գրիգոր Տաթևավաղի): Ներկայիս, մոմերը խորհրդանշում են առաքելությունների, իսկ դրանց լույսը՝ առաքինագարդ գործերի, քանի որ առակի առաքելությունը փրկության չի կարող արժանացնել (մարած լապտեր և մոմ), այլ հարկավոր են նաև գործեր, մանավանդ՝

ՄԱՍԻՍԻԱՆԻ ԱՐԽԵՐԻՍԵՎՈՒՆԸ ՄԱՐ ԶԱԶԱՐՈՒՄ



ողորմության. «Ողորմությունն անարգել մտնում է Աստծո, հրեշտակների ու սուրբերի մոտ և բոլոր մեղքերը ջնջում ու քաղում»:

Նեյսաբար, երկնային հարսանյաց սրահ մտնելու համար անհրաժեշտ են ինչպես առաքինություններ, այնպես էլ՝ առաքինի գործեր, որպեսզի այդ ամենն արվի ի սեր Քրիստոս Աստծո և Արքայությանն արժանանալու համար, քանզի եթե դրանցից զեթ մեկը պակասի՝ հոգու լապտերը կմարի:

ԱՎԱԳ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ - Բեթանիայում պոռնիկ կնոջ կողմից Նիսուսի ուրբերի խորհրդանշական օծման, այլև Տիրոջ մատնության հիշատակման օրն է: Նախորդ երկու օրերի պես, Ավագ չորեքշաբթի ևս կատարվեցին գիշերային, առավոտյան և երեկոյան ժամերգություններ, որոնց ընթացքում ընթերցվեցին օրվա խորհուրդը պարունակող սուրբգրային հատվածներ:

Ավագ շաբաթվա հիմնական արարողություններն սկսվեցին Ավագ հինգշաբթի, որը՝ Վերնադարնը Տիրոջ կողմից Ս. Հաղորդության հոգեհորոգ ու քավարար խորհրդի և խոնարհության ծայրագույն դրսևորումի արտահայտման հիշատակության օրն է:

Խորհրդավոր՝ Վերջին ընթերցի ժամանակ Աստվածորդին, «ի քառաթիւն եւ ի թողութիւն մեղաց», հացի ու գինու միջոցով Իր հետևորդներին բաշխեց Իր փրկարար Ս. Մարմինն ու Ս. Արյունը:

ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱՐԹԻ - Գիշերային և առավոտյան ժամերգություններից հետո, ի հիշարակ Ս. Հաղորդության խորհրդի հաստատման, Ավագ հինգշաբթի, առավոտյան, Մայր Տաճարի Ավագ Ս. Սեղանի վրա, Մայր Աթոռի լուսարարապետի պաշտոնակատար Հոգեշնորհ Տ. Արքայե վարդապետ Տիգրանյանի կողմից, մատուցվեց Ս. Պատարագ, որի ընթացքում, «Հայր մեր»-ից առաջ, Հոգեշնորհ Հայր Սուրբն ընթերցեց Ս. Բարսեղ Կեսարացու Ս. Հաղորդության խորհրդին նվիրված ճառը: Բազմաթիվ հավատացյալներ, ովքեր Մեծի Պահոց շրջանում իրենց իրենց նախապատրաստել էին Տերունի Ս. Մարմնի ու Ս. Արյան ճաշակմանը, հավաքվել և երկյուղով մոտեցան կենդանարար ու քավարար Սուրբ Հաղորդությանը:

Կեսօրից հետո Մայր Տաճարի Ավագ Ս. Խորանում կատարվեց Ուրնվայի արարողությունը՝ ձեռամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրելին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Նախքան Ուրնվայի հուզիչ և խորապես տպավորիչ պաշեղ՝ երգվեցին հոգեպարար շարականներ, որոնք մեկնաբանում էին սրբազան այս արարողության հոգևոր իմաստները: Այնուհետև ընթերցվեցին աղոթքներ ու սուրբգրային հատվածներ: Այս ամենից զատ, կարդացվեց Հովհաննես Պլուզ Երզնկացի վարդապետի գրած «Միրո մասին» աղոթքը, ապա օրհնվեցին ջուրը և յուղը (խորհրդանշում է Բեթանիայում պոռնիկ կնոջ կողմից Նիսուս Զրիստոսի ուրբերին հեղված անուշահոտ յուղը), որից հետո հանդիսապետ Վեհափառ Հայրապետը, որպես խոնարհ մի սպասավոր, կատարեց փառք ճեմարանական և ԵՊՀ աստվածաբանական ֆակուլտետի երկու ուսանողների ուրբերի լվացման ու օրհնված յուղով օծման կարգը:

Արարողությունն ավարտվեց ավերարանական ընթերցմամբ, որով մեկ անգամ ևս հիշարակվեց էր Տիրոջ ձեռքով իր աշակերտների Ուրվական:

Նավարտ Ուրվակայի՝ հավատացյալ հայորդիներին բաժանվեց օրենված յուր: Ինչպես մեղավոր կինը Տիրոջ ուրբերն օծեց յուրով և իր զոյման համար ներում ստացավ Նրանից, նույնպես և մենք նախևառաջ պետք է խորապես զգջանք, ապաշխարենք, խոստովանենք և ապա՝ օրենված յուրով օծենք մեզ, որպեսզի ըստ մեր հավատքի Բարձրյալն Աստծուց հոգու և մարմնի բժշկություն ստանանք:

Ավագ եկեղեցի, Ս. Եկեղեցու ենավանդ ավանդության համաձայն, կատարվեց Աստվածորդու մատուցության ու չարչարանաց հիշատակությունը, որը կոչվում է հաւ-վարում:

Սույն կարգը կատարվեց շքեղ հանդիսավորությամբ, զիջերային ժամերգության ընթացքում, հոգեզմայլ շարականների երգեցողության ընդհաւորմաներով Մայրա-վանքի միաբանների կողմից ընթերցվեց ավերարանական ընդարձակ յոթ հաւ-ված՝ ներկայացնելով Գեթսեմանիում Տիրոջ մատուցությանը, ձերբակալությունը և չարչարանքները: Յուրաքանչյուր ավերարանական հաւվածի ընթերցումից հետո հանգցնում էին Սուրբ Խորանում դրված տասներկու խորհրդանշական մոմերից (ո-րոնցից մեկը սև գույնի էր՝ ուրացող Նուդա Իսկարիովաբցու նշանակը) երկուսը: Խավարման կարգի ժամանակ, «Տէր յերկնից» շարականի երգեցողությունից հետո, մարվեցին եկեղեցու լույսերը (Ս. Խորանում միայն մի մեծ մոմ էր բեկբեկում լույսով լուսավորում իր շրջապարը՝ խորհրդանշելով Տիսուս Քրիստոսին, որ մնաց մենակ մատուցությունից հետո), ապա սկսվեց «Փառք ի բարձունս» օրհներգը, որի վերջավո-րությանը Սուրբ Տաճարում ստեղծված աղոթալից ու խորհրդավոր մթնոլորտում խավարման կարգի նշանակությունն արտահայտող ու դրանից ուսանելիք ճշմար-տությունների մասին բովանդակալից բարոգով հանգես եկավ Գերաշնորհ Տ. Տաթև արքեպիսկոպոս Սարգսյանը: Գերաշնորհ Սրբազան Հայրն իր խորհրդածություննե-րի ընթացքում անդրադարձավ նաև կարևոր հետաքննարկումներ, որ է՝ հայորդու պահ-վածքը սուրբ եկեղեցու աստվածային հարկի ներքո:

ԱՎԱԳ ՈՒՐԲԱՆՈՒՄ - Այդ օրը Մայր Տաճարում կատարվեց Տիրոջ խաչելության ու խաչից իջեցման՝ թաղման կարգը: Կեսօրին, Տ. Արտակ վարդապետ Տիգրանյանի ժամօրհնությամբ, ճաշու ժամերգության ընթացքում, կատարվեց Քրիստոսի խաչե-լության խորհրդանշական կարգը: Ընթերցվեցին ավերարանական հաւվածներ, ո-րոնք բովանդակում էին Քրիստոսի՝ Պիլատոսի մոտ տարվելը, մահվան վճիռը, խաչելությունը և այլն: Ի դեպ, Հայոց եկեղեցու ավանդության համաձայն, Ավագ ուր-բաթ Սուրբ Պարարագ զի մատուցվում, այդ օրը Աստվածորդին, իբրև կենդանի պա-րարագ, «Գառն Աստուծոյ», ինքն իրեն խաչի վրա գոհաբերելով, ընծայվեց Հայր Աստծուն: Երեկոյան, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հան-դիսապետությամբ, կատարվեց Քրիստոսի թաղման կարգը: Նախապես ծաղիկնե-րով ու եղևնու ճյուղերով զարդարված Տիրոջ խորհրդանշական գերեզմանը, հանդի-սավոր թափորով Մայր Տաճարի շուրջ պարեզվելուց հետո, կրկին բերվեց Տաճար, այնուհետև «խաչի բո Քրիստոս» փառաբանական շարականով ու «Պահպանիչ» ա-

դոժքի ընթերցումով ավարտվեց Տիրոջ թաղման կարգը: Հավարտ թաղման կարգի Նորին Սրբությունն իր հայրապետական բովանդակալից խոսքն ուղղեց հավատացյալ հայորդիներին:

ԱՎԱԳ ՀԱԲԱԹ - Վաղ առավոտյան Ս. Արտակ վարդապետ Տիգրանյանի ժամօրհնությամբ կատարվեցին գիշերային ու առավոտյան ժամերգություններ: Հերմիթքոբին, լուսարարները քանդեցին ծաղիկներից ու եղևնու թավ ոստերից էյտսված փերտնի գերեզմանը՝ ծաղիկներն ու ճյուղերը հավատացյալներին բաժանելու համար:

Երեկոյան, հավարտ ժամերգության, Հայոց Եկեղեցու հնավանդ ավանդույթի համաձայն, սուրբգրային հարվածներից հետո, երբ Ավագ Ս. Խորանից մասնավոր շուքով ենչեց օրվա ընթերցվածներից վերջինը՝ Դանիելի մարգարեությունից, սկսվեց Սուրբ Հարության ճրագալույցի Սուրբ Պապարագի «աեղ խորհուրդը»: Ս. Պապարագի ընթացքում, Սուրբ Հարության ժամամուտի երգեցողությամբ, ավելվեց Տիրոջ Հրաշափառ Հարության բարի լուրը. «Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Օրվա պապարագիչն էր Գևրաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզեց պապարագիչ Սրբազան Հայրը (փնն էջ 46):

Սուրբ Պապարագին իր մասնակցությունն էր բերել ազգիս Վեհափառ Հայրապետը:

Հավարտ Ս. Պապարագի, Նորին Սրբության հանդիսապետությամբ, կատարվեց նախատոնակ:

Հանդիսավոր թափորը «Այսօր յարեալ» շարականի երգեցողությամբ ուղղվեց Վեհարան՝ կատարելու փնօրհենեցի արարողություն և Հայոց Հոր Սուրբ և Օծյալ Աջը համբուրելով՝ Ա. Զափկի փոնի կապակցությամբ Նորին Սրբությանը շնորհավորելու:

Այնուհետև Մայրավանքի միաբաններից ու Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաներից կազմված թափորը, լուսարարապետի պաշտոնակատար Հոգեշնորհ Տ. Արտակ վարդապետ Տիգրանյանի առաջնորդությամբ, շարժվեց դեպի Մայր Աթոռի սեղանափուն՝ ճշմարիտ սիրով միացյալ «ընդ սիրոյն Քրիստոսի» միասին վայելելու խղթման ընթրիքը:

ԶԱՏԻԿ, ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ԹՐԻՍՏՈՍԻ - Առավոտյան ժամերգությանը երգվեց օրվա խորհուրդն ու իմաստըն իրենում կրող «Այսօր յարեալ ի մեռելոց» շարականը:

Առավոտյան ժամերգությունից հետո Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Հրաշափառ»-ով և մեծաեանդես թափորի ուղեկցությամբ ուղղվեց դեպի Մայր Տաճար՝ մատուցելու զափկական Ս. Պապարագ և Հիսուսի Հարության ավերիտով հայրապետական պարգամը եղելու եւամայն հայությանը:

Վեհափառ Հայրապետը Հարության խորհրդով իր ողջույնն ու շնորհավորանքը եղեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գաեհա-

կայներին. ողջ հոգևոր դասին. Հայաստանի Հանրապետության ավագանուն և համայն հայությանը (տես էջ 3):

Պատարագի սրբազան արարողությանը ներկա էին ՀՀ նախագահի Ռոբերտ Քոչարյանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Արկադի Դուկասյանը, ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Արմեն խաչատրյանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Ազգային Ժողովի պատգամավորներ, նախարարներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագետներ, Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամներ, արվեստի և մշակույթի գործիչներ, բազմաթիվ հավատացյալներ:

Սուրբ Պատարագի ավարտին Վեհարանի հանդիսությունների սրահում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում Վեհափստ Հայրապետն ամենքին վերստին տվեց Քրիստոսի Հրաշափառ Հարության ավերիսը:

Երկուշաբթի՝ ապրիլի 1-ին, ըստ Հայ Առաքելական Եկեղեցու փոխակարգի, նրնջեցյալների հիշարարկության օրն է՝ մոռելոց:

ԱՐԹՈՒՐ ՍԱՐԿԻՍՅԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



האזרחים נאספו לרגל חגיגות יום העצמאות



ՀԱՅՐԱՊԵՏՐԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԲԱԾԽՈՒՄ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՒՆԻՆ

ՏՅԱՌՆՆԴԱՌԱՋԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՒՄ

Փետրվարի 14-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին փոխում է Տյառնընդառաջը՝ 40-օրյա Հիսուսի ընծայումը փաճարին:

Փետրվարի 13-ին-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, կապարվեց երեկոյան ժամերգություն, որից հետո Կոնստանդնուպոլսի արարողություն, որը և ավարտեց Տերունական փոռի սկիզբը: Նախափոռնակի արարողության ավարտին Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ կապարվեց Անդաստանի արարողություն, որի ընթացքում օրհնվեցին աշխարհի չորս ծագերը:

Անդաստանին հաջորդեց մոմերի օրհնության կարգը, որոնց կրակով և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բակում բոցավառվեց ավանդական խառույկը՝ իբրև Զրիստոսի լույսի խորհրդանիշ:

Հաջորդ օրը, փետրվարի 14 ին, Տյառնընդառաջի փոռին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Տ. Արշակ վրդ. խաչատրյանը:

Հայ Եկեղեցու կանոնի համաձայն, Տերունական այս փոռին, չնայած որ սկսվել էր Մեծ Պահքը, մատուցվող Պատարագի ընթացքում բացվեց Ս. Խորանի վարագույրը:

Վերջին փոռիններին, Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի փոփոխությամբ, ավանդույթ է դարձել Տյառնընդառաջի Պատարագից հետո հայոց եկեղեցիներում կատարել նորապսակների օրհնության կարգ:

Այս փոռի օրհնություն ստացած գույգերին փրվեցին նաև նվերներ՝ հափուկ նորապսակների համար հրափարակված ճերմակակազմ Նոր Կտակարաններ, իսկ նորապսակ հարսներին՝ նաև մարգարտաշար մանյակներ, որ այս առիթով նվիրաբերել է եռնկոնգարնակ բարերար Պիեռ Հաջարը:

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՆԵՐԿԱ ԳՏՆՎԵՑ ԻՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՑՈՒՑԱՆԴԱՆԴԵՍԻ ԲԱՅՄԱՆԸ

Փետրվարի 1-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն այցելեց Հայաստանի Ազգային պարկերասրահ՝ իր օրհնությունը տալու Հայաստանում ԻԻՏ ղեկավարության մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ իրանական մշակույթի ցուցահանդեսի բացմանը՝ նվիրված ԻԻՏ հեղափոխության 23-րդ տարեդարձին:

Նորին Սրբությունը տրախություն հայտնեց, որ երկու հարևան ժողովուրդների և երկրների միջև զարգանում են դարավոր բարեկամական կապերը՝ արդյունավորվելով մշակույթային նման ձեռնարկումներով, ինչպես նաև բարձր մակարդակների հանդիպումներով:

Բացման արարողությունից հետո Վեհապառ Հայրապետը շրջեց ցուցասրահներով, ծանոթացավ իրանցի վարպետների փորագիր և գեղանկար աշխատանքներին:

Ցուցահանդեսի բացմանը ներկա էին ՀՀ մշակույթի նախարար Ռոյանդ Շառլյանը, ԻԻՏ ղեկավար Մուսամադ Ֆարհադ Զոլեյինին, Հայաստանում հավաքարմագրված օտարերկրյա դիվանագետներ, մշակույթի գործիչներ:

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՄԻՆ
ՏՆՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԿՐՈՆԱԿԱՆ

Տ. ՀՈՒՄԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆԹՈՒՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒԾ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻՆ

(10 փետրվարի 2002 թ.)

«Յանուն Հոր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Երանելի է այն մարդը, որն ամբարիշտների խորհրդով չի շարժվում... այլ հաճույք է ստանում Տիրոջ օրենքներից» (Մաղմ. Ա 1):

Սիրելի հավատացյալ թույրեր և եղբայրներ. մայրեր ու հայրեր.

Այսօր Բուն Բարեկենդան է, փարվա հինգ փաղափար փոներից Ս. Ծննդյան, Պայծառակերպության, Ա. Աստվածածի և Ս. Խաչի հինգօրյա պահոց բարեկենդանների համեմատությամբ, ամենից երկարատևն ու կարևորը հավատացյալի համար քառասունօրյա պահեցողությանը նախորդող: Հայ Եկեղեցին շատ գեղեցիկ անուններով է կոչել յուրաքանչյուր կիրակին՝ Բուն Բարեկենդանն այսօր է, հաջորդը՝ Արտաքսման, Անառակի, Տնտեսի, Դարավորի ու Գալստյան կիրակիներ: Մեր նախնիներն իրենց հոգու ջերմությամբ հոգևոր կապ են դրել Մեծի Պահոց բոլոր վեց կիրակիների միջև. մեկ կիրակիի նշանակությունն ու խորհուրդը է՛լ ավելի է բացափորվում և հասկանալի դառնում հաջորդող կիրակիների խորհրդով: Այսպես, եկող կիրակի՝ Արտաքսման. նախամարդն Ադամ մեղք գործեց և արտաքսվեց: Հաջորդող կիրակին Անառակի կիրակին է: Մի հոր երկու որդիներից կրտսերը իր ազապ կամբով իր բաժինը ուզեց ու գնաց օտար աշխարհ: Այսպեղ երկար մնալուց հետո գոջաց րնից հեռանալու համար, ապաշխարեց ու եկավ իր հոր մոտ ամոթով, կսկիծով ասելով. «Հայր, մեղայ յերկինս եւ առաջի թո», այսինքն՝ արտաքսմանը հաջորդում է գոջումը, որը նշանակում է, թե Աստված չի կամենում, որ մարդը մեղավոր մեռնի, այլ կամենում է նրան դուրս բերել իր այդ մեղքից: Նշված կիրակիներից յուրաքանչյուրը ներկայացնում է մարդկային հոգու տխուր պայրկները ու ողբերգական հոգեվիճակը, և թե ինչպես ազատագրել մեղքի ճիրաններում փառապող մարդուն:

Մեր Սուրբ Եկեղեցին հաստատել է գոջումը, պահեցողությունը և ապաշխարությունը, որպեսզի մեղավոր մարդը կարողանա այդ քառասուն օրերի ընթացքին ադորթով, զոջմամբ ու ապաշխարությամբ ամրապնդել և կուիել իր անձը, հոգեկան փառապանքից ազատագրվել ու դեպի Աստված դառնալ, իր խղճը կարարել Հոսուս Քրիստոսի փրկական գործությամբ: Ներանասական Բուն Բարեկենդանը, որ ոչ մեկ

կապ չունի քրիստոնեականի հետ. նշանակում է բարի կենդանություն, խրախճանքների ճոխ սեղաններով առատ ուրեխիքների օր, երբ կատարվում են դիմակավոր խաղեր, զբոսանքներ: Անգամ վանքերում են կատարվել բարեկենդանի հեթանոսական տոնակատարություններ՝ ազատություն տալով վանականներին կերտխումի ու մասնակցելու այդ զվարճանքներին, այդ օրը կոչվել է «աբեղաթող», որը հիմա չկա:

Քրիստոնեական շրջանում քրիստոնյա ժողովուրդը որոշ հեթանոսական տոնախմբություններ պահել է՝ տալով նրանց քրիստոնեական նշանակություն կամ բովանդակություն՝ առանց Եկեղեցու կանոնական որոշումի: Մեծ է եղել, սակայն, Բուն Բարեկենդանը, որ հայ ժողովրդի համար իր հոգևոր ու կրոնական կարևոր նշանակությունն է ունեցել: Հայ Եկեղեցին նախամարտո՝ Ադամի դրախտում անցկացրած անանցելի ու երանելի օրերը համարել է Բուն Բարեկենդան, որին նվիրված շարականները պատմում են, թե Ադամը ինչպես ստեղծվեց Աստծոց՝ ապրելով դրախտի փափկության մեջ. «Յնծայր գուարճացեալ անպիտական խնդութեամբ»: Ադամը միշտ երկա է եղել Աստծո առաջ, դրախտի զվարճությունը Ադամին երջանիկ է դարձնում հավերժորեն, այսինքն Երկնային Արքայության մեջ:

Բուն Բարեկենդանի շարականները Քրիստոնյա մարդկանց հիշեցնում են դրախտի երջանկության հոգևոր կյանքը: Ինչպես ասվում է Աստվածաշնչի «Շնեղոց գրքի» մեջ, Ադամը ստեղծվել է Աստծո պարկերի նմանությամբ: Ադամի կյանքը դրախտում, ըստ շարականացքի, նման էր մի տեսակ պահեցողության. «Որ գորենս սրբութեան նախ ի դրախտին առնողեցեր»: Ափսո՛ս, երկար չլսեց Ադամի երանական կյանքը դրախտում: Աստված նրան պարվիրել էր ճաշակել գիտության ծառի պտուղից: Դա մի ստուգում էր, թե Ադամը պիտի մնա՞ Աստծու հրամանին հավատարիմ:

Փորձությունը եկավ, և Ադամը դարձավ օրինազանց: Դրախտում կատարվեց առաջին զանցանքը, որին հետևեց անխուսափելի պարիժոլ: Ադամը Դրախտից արտաքսվեց, նա գրկվեց հոգեկան անմեղությունից, դրախտային երջանկությունից, դադարապարտվեց իր քրտինքով իր հացը ուրելու և, վերջապես, ճաշակեց մեղքի ու մահվան դառնությունը: Նրա հանցանքով մեղքն ու մահը աշխարհ մտան:

Ադամի այս ռեբերգական պարտությունը պարտությունն է մեղանչական մարդկության: Ահա թե ինչու այսօրվանից մեր Եկեղեցին և համայն հայ եավաբաղյալները սգո մեջ են ըստաաուն օր, քանզի մեր նախահայրը՝ Ադամ, արտաքսվեց: Քաշվել են Սուրբ Մեղանների վարագույրները, Սուրբ Պատարագները մատուցվում են փակ խորաններում փրփմաթախիժ ու հուզումնալից, Սուրբ Հարության հաղթական շարականների փոխարեն երգվում են Մեծի Պաեռոց համար գրված շարականները:

Քրիստոս անապատում անցկացրեց ըստաաուն օր ծոմապաեությանը և աղոթքով: Տերն այնպեղ սանձեց բերանը փորձիչին՝ սաղանայի, ասելով. «Երիս գնա, սաղանա», այդ փորձությունից հաղթական դուրս գալով Քրիստոս շարունակեց աստվածային իր գործությունը ցույց տալով՝ մեռելներին հարություն տալով, հիվանդներին՝ բժշկություն, քաղցածներին՝ հաց, իր հրաշալի խոսքերով սգավորներին մխիթարեց և, վերջապես, Քրիստոս իր նրեք փարիների քարոզությամբ կատարեց իր առաքելությունը երկրի վրա, որպես Փրկիչը հաևուր մարդկության: Քրիստոսի անա-

պարի քառասնորյա այդ պանեոգոությունն է, որ Եկեղեցին շարունակում է Մեծ Պահքով մեր հավաքացյալների համար:

Սիրելիներ, պահեց քառասուն օրերը ինքնամաքման, աղոթքի, գղջման և ապաշխարության օրերն են: Այսօրվա ճաշոց գրքում բերված են Պողոս առաքյալի՝ Կողոսացիներին ուղղված թղթի հետևյալ սրբառույ խոսքերը. «Ձեզնից դուրս վանեցեք պոռնկությունը, պղծությունը, չարախոսությունը և ազատությունը, որ չարյաց մեծագույնն է: Եղեք նոր մարդ՝ նորոգվելով ըստ ձեր առաջին պարկերի, եղեք զթասիրտ, ողորմած, խոնարհ, հեզ ու համբերաբար նեղությունների ժամանակ, եղեք միշտ պարաստ բարի, շինարար և աստվածահաճ գործերի» (Կող. Ե 5-12):

Այ՛ն, սիրելիներ, եարկ է ապրել ու գործել Մեծի Պահեց խորհրդով: Թող ձեր գործերը լինեն կենդանի ու փեսանելի: Միայն եկեղեցի գալ, ձեր երեսները խաչակնքել, մոմ վառել, խուսկ ծխել, գանձանակը դրամ գցել բավարար չեն հավաքացյալների համար: Աստված պիտի ձեր լավ ու բարի գործերին վարձատրույց լինի, ինչպես Հակոբոս առաքյալն է ասում. «Հավաքեն առանց գործերի մեռած է»:

Նորից եմ կրկնում՝ մոմ վառել, խաչակնքել, գնալ ու այլևս մոռանալ՝ դա մեռյալ հավաքք է. կենդանի գործ է հարկավոր, իսկ ի՞նչ են այդ գործերը ձեզ համար: Այցելեցեք հիվանդանոցներ, հիվանդների հետ խոսեցեք Աստծո Արքայության մասին, այցելեցեք բանտեր, բանտարկյալներին հրավիրեցեք գղջման ու աղոթքի, ապաշխարությամբ վերանորոգելու իրենց հոգևոր կյանքը և աղոթելու, որպեսզի Բարեգութ Աստված ընդունի նրանց խնդրանքներն ու քաղցրությամբ կատարի: Մեր Եկեղեցին Բարեկենդանի օրը կատարում է սրբազան արարողություններ և փոխի համապատասխան շարականներ երգում, բայց լավ է, որ դուք նաև ձեր լումաներով օգտակար լինեք մեր եկեղեցիներին, սիրեք մեր Հայրենիքը, ծառայեք նրա հզորացմանն ու բարգավաճմանը:

Թող մեր Փրկիչ Հիսուս Քրիստոս իր շնորհները սփռի բոլորիդ սրտերի ու հոգիների վրա, որպեսզի կարողանաք գորացյալ հավաքքով լսել Աստծո խոսքերը, գործերով կատարել Նրա կենսաբու պարվերները: Ապրեցեք քրիստոնյային վայել հոգեկան մաքրությամբ, պարաստ եղեք դիմավորելու Քրիստոսի Մուրբ Հարության հրաշափառ փոխը՝ փառքով, ցնծությամբ և ուրախությամբ:

«Շնորհ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ. ամեն»:

Տ. ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՏՅԱԶՆԵՆԴԱԶՄՁԻ ՏՈՆԻՆ

(14 փետրվարի 2002 թ.)

«Լույս ի յայտնության հեթանոսաց,
եւ փառս ժողովրդեան քում՝ Իսրայելի»:
(Ղուկ. Բ 32)

«Յանուն Տօր եւ Որդոյ եւ Հօգայն Սրբոյ. ամեն»:

Ինչպես մարտնչում է Տոնացույցը, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին այսօր փոխանցում է քառասնորյա Տիրոջ Տաճար գալստյան փոքր: Ղուկաս ավետարանիչը Տիրոջ Տաճար գալուստը հանգամանալից կերպով նկարագրում է և ներկայացնում Քրիստոսի կյանքի այն դրվագը, որը հետագայում ներառվեց մեր եկեղեցական ծիսա-արարողական կյանքից ներս՝ ստանալով «Տօն քառասնորեսյ գալստեանն Քրիստոսի ի Տաճարն» անվանումը և կամ, ինչպես Տյառնընդատաջի հեղատղությանը ժողովուրդն է ասում՝ Տրնդեզ: Նայն փոքն ունեն նաև հույները, ունեն նաև կաթոլիկները: Այս փոքն շեշտադրումը կատարված է Տյառնընդատաջի վրա, այսինքն՝ ընդատաջումի վրա, Տիրոջը ընդատաջ գնալու վրա:

Այժմ, սիրելի եավադաքայներ, տեսնե՞ք, թե Հիսուսի կյանքի այս դրվագը ինչպես է ներկայացնում Ղուկաս ավետարանիչը:

Հրեական ավանդույթի համաձայն, յուրաքանչյուր արու գավակ ունեցող գույզ՝ ծնողներ, պարտավոր էին մանկան ծնվելուց ութ օր հետո կատարել թվապարտությունը, որից հետո քառասունը լրանալուն պես փանել Տաճար՝ կատարելու ընծայման արարողությունը, քանի որ, ավանդույթի համաձայն, փակավին հրեաների Եզիպտոսում գտնվելու շրջում, յուրաքանչյուր արու գավակ, որն արգանդ էր բացում, ընծայվելու էր Տիրոջ պաշտամունքին: Սակայն հետագայում, երբ Աստծո փան մեջ սպասավորություն մարտնչելու համար ընտրվեց Իսրայելի փառսներկու ցեղերից մեկը՝ Ղևիի ցեղը, մյուս փառսմեկ ցեղերի անդրանիկներն ազատ կացուցվեցին Տիրոջ պաշտամունքին նվիրվելուց, որի համար նրանք արդեն պետք է փրկագին վճարեին իրենց անդրանիկների համար՝ փոխարեն դևադեցիների: Այս ավանդույթին հետևելով, նաև Հիսուս իր ծնողների կողմից տարվեց Տաճար՝ ընծայումը և մաքրության արարողությունը կատարելու, քանի որ մայրը՝ ծննդաբերած մայրը, Տաճարում պետք է կատարեր նաև մաքրագործման արարողությունը, մաքրագործման ծեսը:

Հովսեփն ու Մարիամը երբ իրենց գավակին վերցրած մուրք գործեցին Տաճար, այնպեղ նրանց դիմավորեցին Միմեռն ծերունի անունով մեկը և Աննա մարգարետուհին, ինչպես որ գրված է Ավետարանում:

Միմեռնի մասին եստակ, որոշակի ընդգծում չկա, որ նա քահանա է, սակայն, բնականաբար, Տաճարում գտնվելու պարագան, ինչպես նաև Աստվածաշնչին, Հին Կտակարանին, Մեսիայի գալստյանը ծանոթ լինելու, սպասումով լցված լինելու այդ գալուստի նկատմամբ պարագան հուշում է, որ նա ոչ միայն քահանա էր, այլև օրենսգետ և քաջագիտակ այն բոլոր մարգարեություններին, որոնք վերաբերում էին Քրիստոսի գալստյանը:

Նմանօրինակ սպասումով էր լցված նաև Աննա մարգարեուհին, և այս ընդառաջումից, Տիրոջը դեպի Տաճար առաջնորդելուց հետո, Միմեռն մարգարեն արտասանում է իր հոգակալոր ու հայրնի խոսքերը. «Արդ, արձակիր ինձ, ով Տեր, որովհետև իմ աչքերը տեսան այն փրկությունը, որ Դու նախապարաստում ես Քո ժողովրդի համար»: Նույն հոգևոր բերկրանքով է դիմավորում Տիրոջը՝ Փրկչին, նաև Աննա մարգարեուհին, և Փրկչի ծնողները, ինչպես ներկայացնում է Ավետարանիչը, զարմացած էին, թե ինչպիսի խոսքերով են դիմում իրենց գավակին, որովհետև տակավին նրանց համար էլ հաստ չէր իրենց գավակի ով լինելու պարագան:

Հիմնականում, սիրելի հավատացյալներ, այս է ավետարանական այն դրվագը, որը հետագայում Եկեղեցում դարձել է Տյառնընդառաջի տոնը, և որին առնչված են, աղերսված են, որի շուրջ հյուսվել են գեղեցիկ ժողովրդական ավանդություններ և սովորություններ: Այսպես, ավետարանական այս դրվագի մեջ, Տիրոջը ընդառաջ ելնելու այս պատկերի մեջ ինձ համար հատկապես ընդգծելի և շեշտելի են երկու պարագաներ, այն, որ Աստված պիտի Տաճար գնար՝ ենթարկվելով հրեական ավանդույթներին: Սա միանշանակորեն շեշտում է այն, որ Քրիստոս ինքը չուզեց խաթարել հրեական օրենքները, այլ ինքը մտնելով օրենքի տակ, ուզեց ցույց տալ, ընդգծել, որ յուրաքանչյուր ոք, որ օրենքի տակ է, չի նշանակում բնավ, թե օրենքը չկատարելու, օրենքից խույս տալու հնարավորություն և առիթն ունի: Յուրաքանչյուր քրիստոնյայի, յուրաքանչյուր մարդու համար, սակայն, առավել ուսանելի է Միմեռնի և Աննա մարգարեուհու վարքագիծը: Որն է այն և որն է նրանց նկարագիրը, նրանց բնութագիրը:

Առաջին՝ որ նրանց սպասումով էին լցված Քրիստոսի գալստյան նկատմամբ, ըստպատմ, որը ես ուզում եմ կոչել սրբազան սպասում, որովհետև նրանք չէին սպասում որևէ այլ բանի, քան միայն Քրիստոսի գալստյան: Երկրորդը, որ ուզում եմ ընդգծել իրենց վարքագծի մեջ, նրանց լավատեսությունն էր, վստահությունը և փրկությանը միջամուխ լինելու, փրկությանը հասնելու նրանց վճռականությունը:

Այսօր, սիրելի հավատացյալներ, ընդհանրապես մարդկությունը սպասումի մեջ է, յուրաքանչյուր անձ սպասում է և մեզանից յուրաքանչյուրն է սպասում: Հրեաները սպասում էին Մեսիայի գալստյանը, որ իրենց պիտի փրկեր, որ իրենց պիտի շնորհեր համաշխարհային տիրապետություն: Ընչազուրկը սպասում է ավելի բարձր մի կյանք ժառանգելու, զրկվածը սպասում է՝ երբ պիտի վերականգնվեն իր իրավունքները, և բոլոր նրանք, ովքեր վշտացած են, սպասում են, թե երբ պիտի սփռվեն, և այդ սպասումներով համակված ենք մենք ամենքս նաև: Նարեկացու բնորոշմամբ՝

երբ ձիավոր ենք տեսնում, սպասում ենք, թե հենց մեզ լուր պիտի տա, և այդ սպասումը մեր ժողովրդի մեջ, մեզանից յուրաքանչյուրի մեջ առկա է նաև այսօր:

Մենք, վերջապես, սպասում ենք, թե երբ պիտի տասնամյա կյանք ունեցող երիտասարդ մեր պետությունը վերջապես դուրս գա խանձարուրդից և մեզ առաջեռոդի դեպի ավելի լուսավոր մի ապագա, և այդ սպասումը մեր մեջ ծնունդ է առել դարերի հալոթյաթից, և մենք այդ ծայրը բարձրացնում ենք՝ նաև մեր հայրերի սրտի միջից քաղելով:

Տակավին 16-17-րդ դարերում մեր պատմիչներից մեկը, լցված լավ մի կյանք ժառանգելու սպասումով, ասում է. «Ամբողջ աշխարհը խաղաղության մեջ է գտնվում, և արդ, մենք արյան ծովի և սովի մեջ կոտորվում ենք», և սա ոչ այլ ինչ է, եթե ոչ նույն սպասումի, լավ ու բարձր մի կյանք ժառանգելու ակնկալություն և սպասում:

Երկրորդ պարագան, որ ընդգծեցի Միմոն ծերունու և Աննա մարգարեուհու կերպարի մեջ, նրանց փրկությանը հասնելու ճիգն էր, վճռակալությունն էր: Ինչպես Ավետարանում է ասվում Երկնքի Արքայության համար՝ «Բռունք յափշտակեն գնա» (Մատթ. ԺԱ 12):

Այո, եթե մեր ժողովրդի մեջ այսօրվա գործածական բառերից մեկն ընդրենք, ճիշտ պիտի ասենք իրապես, որ այն անձերն են հափշտակում, այն անձերն են հասնում Երկնքի Արքայության, որոնք գործայություն են դրսևորում այդ փրկությանը հասնելու, որովհետև Միմոն ծերունին և Աննան չկանգնեցին պասիվ և սպասեցին, թե երբ պիտի փրկությունը գա իրենց այդ փրկության մեջ ներառելու համար: Նրանք ընդառաջ գնացին այդ փրկությանը, և յուրաքանչյուր ոք, ով որ ի վիճակի կլինի, կարող կլինի այդ փրկությանը հասնելու և ճաշակելու այդ փրկության քաղցր պտուղները, երկինքը ընդառաջ կգնա այդ փրկությանը: Եվ նրանք, ովքեր որ ունեն այդ վստահությունը, ունեն այդ վճռակալությունը չոնկրկելու, այլ վստահությամբ, մերկ ձեռքով մեխի ծայրին հարվածելու, նրանք պիտի հասնեն փրկության:

Այսօր, այս դժվարությունների մեջ, մեր ժողովրդի համար սպասումներով, բարի սպասումներով լեցուն այս ժամանակաշրջանում մեզանից յուրաքանչյուրին անհրաժեշտ է այդ սպասումը, մեզանից յուրաքանչյուրին անհրաժեշտ է փրկությանը հասնելու այդ վճռակալությունը, որովհետև փրկությունը մեզանից յոթ սարեր այն կողմ չէ, փրկությունը մեր մեջ է և, պարզապես, պետք է որ մենք ձեռքներս մեկնենք դեպի փրկությունը, քանզի փրկության ձեռքը և փրկչի ձեռքը մշտապես մեկնված է դեպի մեզ, և միգուցե այդ փրկությանը ընդառաջ գնալու մեր պատրաստակամության մեջ ես վստահ եմ, որ առաջիկային մեզանից ամեն մեկը, որպես մեր ժողովրդի արժանավոր ներկայացուցիչ, մեր Եկեղեցու հավատավոր ու բարեպաշտ անդամ պիտի Միմոն ծերունու նման բաց ճակատով կանգնի երաշակելու այս կոթողներից մեկի, մեր եկեղեցիներից մեկի մեջ և բացականչի. «Լույս ի հայտնություն եեթանոսաց և ի փառս փառն Հայաստանյան, ի սփյուռս աշխարհի սփռված հայության, այժմ և հավիտյանս. ամեն»:

**Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՂԻՄԿՈՂՈՍ ՊՈԶԱՊԱՆՅԱՆԻ
ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ՄԱՅՐ
ՏԱՃԱՐՈՒՄ ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻՆ**
(17 փետրվարի 2002 թ.)

«Յանուն Տօր եւ Ռբբոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Որ զօրէնս սրբութեան պահող՝ նախ ի դրախտին աւանդեցեր»:

Այսպէս է կրգում շարականագիր բանաստեղծ-հոգևորականը՝ անդրադառնալով Հայաստանյայց Եկեղեցու Մեծ Պատեհի շրջանի այս օրվան՝ Արտաքսման Կիրակիին՝ ասելով. «Պատեհ պահելու օրեները, ո՛վ Տեր, Դու առաջինը դրախտի մեջ սահմանեցիր»: Մեծ Պատեհի այս շրջանի երկրորդ կիրակիին փեսնում ենք, որ խորանները փակված են, հոգևորականները բոլորովին սև են հագած: Եկեղեցին ապաշխարության, զոջումի մի շրջան է անցկացնում, որը ավանդվել է մեր Եկեղեցու Սրբազան Հայրապետների կողմից, որպեսզի մենք կարողանանք նախամարդու կորցրած դրախտը վերստին գտնել մեր հոգիների մեջ:

Այսօրվա խորհուրդը կապված է Ադամի ու Եվայի պարսկության ազանցության հետ: Նրանք ապրեցին դրախտի մեջ՝ վայելելով դրախտի փափկությունը, դրախտի երջանկությունը, դրախտի ազատությունը: Բայց մի օր սաղանան օձի կերպարանքով մտրեցավ Եվային և ասաց. «Գիտե՛ք, թե Աստված ինչու համար արգելեց ձեզ վայելել պտուղը բարու և չարի գիտության ծառի: Եթե այս պտուղից ուտեք՝ կդառնաք աստվածներ: Աշխարհի բոլոր գաղտնիքները կհասկանաք: Այդ պարճառով էլ, որպեսզի աստվածներ չդառնաք՝ Աստված արգելեց, որ այս պտուղը ուտեք»: Չդիմանալով գայթակղությանը, Եվան նախ ինքը կերավ, ապա և տվեց Ադամին: Ադամը ևս, հակառակ իր խոստման, կերավ այդ պտուղը և մեղանչեց:

Դրախտի բոլոր վայելքները ունեցող առաջին մարդիկ անհնազանդության պարճառով մեղանչեցին, ընկան մեղքի թակարդի մեջ: Այդ օրվանից մինչև այսօր մարդիկ տառապում են, մարդիկ իրենց ճակատի բերքներով են իրենց հացը հայթայթում, կանայք երկունքով են կյանք տալիս. օձը առողմ է գետնի վրա և մարդու գարշապարից հեռու է փախչում: Ադամին և Եվային Եդեմական դրախտից արտաքսելիս Աստված այս պարսկները սահմանեց մարդկության անհնազանդ նախառարկերին:

Սաղանան ամեն մեկիս փորձության է ենթարկում, և այդ փորձության ընթացքում եթե մենք սաղանայի ճանկերի մեջ ենք ընկնում, վայ է մեզ համար, որովհետև մեր ամբողջ կյանքը փորձության մի կյանք է, և մենք պետք է փորձություններից կարողանանք հաղթանակով դուրս գալ՝ ինչպես Հիսուս:

Հիսուս իր քարոզության սկզբում անապարտում քառասուն օր ապաշխարությանը և զոջումով էր նախապարտաստվում, ինչպես սովորությունն էր եբրայեցիների բոլոր քահանաների և մարգարեների, որոնք երեսուն տարեկանում քարոզությունից առաջ

քաշվում էին անապարհ՝ այնտեղ ճգնելու, և երբ Հիսուս իր ճգնության քառասներորդ օրը շրջանն էր անցկացնում, սափափան մտքեցավ և ասաց, «Ես էլ եմ անոթի, դու՛ էլ: Արի, այս քարերին շունչ փուր, թող հաց դառնան, որ ուրենք, անոթի չմնանք»:

Հիսուս, այո՛, Աստված էր, կարող էր քարերը հացի վերածել, բայց ասաց, «Ըն Տիրոջը մի՛ փորձիր»: Մի ուրիշ օր էլ սափափան Տիրոջը բարձրացրեց մի աշխարակի վրա և ասաց, «Այստեղից եթե քեզ ներքև գցես, հրեշտակները կախեն քեզ», ինչպես սաղմոսերգուն ասում է. «Հրեշտակաց խրոց պարտիրնալ է վասն քո... զի մի՛ երբեք հարցես զքարի գոտն քո» (Մաղմ. Դ 12): Հիսուս վերադին ասաց, «Երիս գեսա»: Երբորդ անգամ Տիրոջը Երուսաղեմի բարձուկում ասաց, «Անավասիկ ամբողջ աշխարհը, իր բնակիչներով, իր շինություններով, իր հարստությամբ, իր ամեն ինչով քեզ կտամ, եթե ինձ երկրպագես»: Հիսուս ասաց, « Ըն Տեր Աստծուն մի՛ փորձիր»:

Մենք ապրում ենք մի աշխարհում, ուր փորձությունները միշտ մեզ են հետևում, մեղքը միշտ մեր կողքին է, մեղքը շվաքի պես մեզ է հետևում մեզ մշտապես ենթարկելով բազում փորձությունների: Սակայն մեր Սրբազան Հայրապետները քառասներորդ պահեցողության այս շրջանը հատկապես փնտրինել են մեզ համար, որպեսզի մենք մեղքից հեռու մնանք, կարողանանք աղոթքով, պահեցողությամբ, զոքումով և սպաշխարությամբ մաքրել մեր հոգիները:

Պահեցողությունը միայն մսեղներից և կենդանական սննդից հրաժարվելը չէ՛, սիրելիներ: Պահեցողությունը նաև մեր լեզուները զսպել կարողանալն է՝ մեղք չգործելու և չքամբասելու համար, չհայհոյելու և ուրիշների մասին վատ վկայություններ չտալու համար: Այն մեզ համար մեր մտություններից հեռու մնալու շրջան է: Չայլազանց ծիպել, հարբենալը և փարբեր թմրեցուցիչները մեր հոգին տկարացնում և աստվածային տաճար համարվող մեր մաքուր մարմինը, որտեղ մեր Տերը՝ Հիսուսը, պիտի բնակվի, եղծանում են: Այս ամենից հեռու մնալու համար է, որ պահեցողության այս շրջանն է փնտրվում: Այո՛, պահեցողությունը նաև զոքումի շրջան է, և զոքումին անպայմանորեն հետևում է ապաշխարությունը:

Ամեն մարդ, որ մեղավոր է, պետք ունի զոքման, ամեն մեղավոր պետք ունի ապաշխարության:

Պողոս առաքյալը, որ Մոզոս էր մինչ դարձի գալը, հալածում էր քրիստոնյաներին: Մի օր, Հիսուսի համբարձումից հետո, նա իրավունք ստացավ քահանայապետներից, որպեսզի զնար Դամասկոս, այնտեղի հրեա քրիստոնյաներին ևս ձերբակալելու, պատժելու և նույնիսկ մահվան դատապարտելու: Մոզոսին Դամասկոսի ճանապարհին հանկարծ մի հրաշք է պատահում, մի առեղի լույս է բացվում նրա աչքերի առջև, և նա, շփթված այդ լույսի զորությունից, պայծառությունից, ձիուց վայր է գլորվում և ապշահար հարց տալիս, թե այս ինչ լույս է: Այդ պահին մեր Տերը՝ Հիսուս Զրիստոս, նրան հարցնում է. «Մոզոս, ինչո՞ւ ես ինձ հալածում»: Լույսի շողքից Մոզոսի աչքերը կուրանում են: Հիսուս նրան ասում է. «Երբ Դամասկոս հասնես, այնտեղ Անանիա անունով մի քրիստոնյայի կհանդիպես, նա՛ քեզ կբուժի»: Այսպիսով հեթա-

նոս Սողոսը դառնում է քրիստոնյա Պողոս առաքյալը՝ ամենամեծ ջարդագութ Զրիստոսի վարդապետության:

Սուրբ Օգոստինոս Նայրապետը, որ ապրել է չորրորդ դարում, ծնունդով ավժեքիացի էր, բայց ապրում էր Հռոմում: Նրա մայրը քրիստոնյա էր: Ինքը ժամանակի հայերնի փիլիսոփաներից մեկն էր: Նա մեկ անգամ Սուրբ Գիրքը վերցրել էր կարդալու: Հագիվ երկու տոդ կարդացած, գցել էր մեկ կողմ՝ ասելով, թե շատ պարզունակ է իրեն համար, բայց ահա երբ ծանոթացավ աշխարհի մյուս կրոններին և այդ կրոնները ուսումնասիրեց, տեսավ, որ այդ կրոնների մեջ չկա իր հոգին, իր տենչերը բավարարող ոչ մեկ միջոցարարություն: Եվ երբ Միլանում Ամբրոսիոս եպիսկոպոսի քարոզները լսեց, նրա քարոզներից ազդված գնաց եկեղեցու դիմացի այգին՝ խորհրդածելու, խոկալու, թե ինչ պետք է անի իր հոգին խաղաղեցնելու համար:

Հանկարծ մի երեխա մոտեցավ նրան և ասաց. «Առ, կարդա»: Անհավատ Օգոստինոսը վերցրեց Աստվածաշունչը և կարդաց: Եվ կարդալով անդրադարձավ, որ իր ողորմելի կյանքը, ցուփոթյամբ և զանազան տեսակի մեղքերով լեցուն, անիմաստ է մի սովորական քրիստոնյա հավատացյալի կյանքի համեմատությամբ, և ինքն իր ամբողջ գիտելիքներով Աստծո աչքի առջև ոչ մի արժեք չի ներկայացնում: Անդրադարձավ և քրիստոնեությունը ընդունեց, կարդաց Սուրբ Գիրքը և գտավ այնպեղ իր հոգու միջոցարարությունը, որից հետո իր այլ գործերի շարքում գրեց «Խոստովանություն» անունով հոգեթով աղոթքների շարքը, ինչպես Նարեկացին հեղափոխում գրեց «Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ» հոգեգմայլ աղոթալից Մատյանը:

Մի՞թե, սիրելի հավատացյալներ, Տրդատ թագավորի կյանքը մի անդրադարձ չէ՞ր, զոչում և ապաշխարություն չէ՞ր, մեղքից դեպի արդարության լույսը դառնալու, աստվածային ճշմարտությանը դառնալու մի առիթ չէ՞ր: Նա մի հրովարտակ էր արծակել Վայաստանում գտնվող քրիստոնյաներին հավածելու և խտրագույն ձևով պարծելու համար: Սակայն Լուսավորչի չարչարանքները, Հռիփսիմյանց կույսերի նահապետությունը եկան իր մեջ անդրադարձ տալու, որ ինքը սխալ ճամփի վրա է և փրկվելու կարիքն ունի վիրապում բանտված Սուրբ Գրիգորի աղոթքների միջոցով:

Միրելի հավատացյալներ, տեսե՛ք, թե ապաշխարության ինչպիսի առիթներ է ընծայում մեզ Աստված: Քառասներորդա պանեոթոլոթյան այս շրջանը մեզ համար անդրադարձի մի շրջան է: Բացի պանեոթոլոթյունից, անդրադարձի՞, որ մեղքերից կարողանանք ձերբազատվել և Աստծո արքայությանը ձգտել մեր կյանքի այս օրերին:

Թող բարին Աստված Արարչսման այս կիրակի օրվա խորհրդով մեզ անդրադարձ պարզևի դեպի իր փառավոր լույսը դառնալու, դեպի մարդկությունը դառնալու, ողորմած և գթասիրտ լինելու, ջրամբասելու, չիայեղելու և մեր մոլություններից հեռու պառի մեզ, որպեսզի այդպիսով կարողանանք պառքի ավարտին արժանանալ Զրիստոսի Հրաշափառ Հարության օրվան, որ հարություն պիտի պարզևի նաև մեր հոգիներին այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Տ. ՇԱՀԵ ԱՐՔԵՂԻՍԻԿՈՂՈՍ ԱՃԵՄՅԱՆԻ ՔԱՐՈՋՐ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱՄԻՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԱՆԱՌ-ԱԿԻ ԿԻՐԱԿԻՆ

(24 փետրվարի 2002 թ.)

«Յանուն Տօր եւ Որդոյ եւ Տօգոյն Սրբոյ. ամեն»:

«Հայր. մեղայ յերկինս եւ առաջի քո»:

Անցյալ կիրակի՝ Արարքաման կիրակի, մեր Եկեղեցին հիշեցուց իր հավաքագլաներուն, թե մարդս ծնած է մեղավոր, կապրի մեղքի իշխանության փակ եւ ենթակա է միշտ սխալելու Աստուծո հանդեպ: Իսկ այսօր մեր Եկեղեցին կիստի իր հավաքագլաներուն Աստուծո ուրախության մասին, ուրախություն, երբ մարդը կիսոնարիկի Աստուծո առջև ու կրթես. «Հայր, մեղայ յերկինս եւ առաջի քո»: Այդ ուրախությունը հիստու նմանեցուց հովիվի մը, որ մեկ ոչխարը կկորսնցնե, կտառապի, կփնտրե, կենդիվի և, սակայն, կգտնե ոչխարը: Եվ երբ կգտնե այդ կորուսյալ ոչխարը, կուրախանա: Նույն ուրախությունն է Աստուծո, երբ հոր փունեն հեռացող մեղավոր որդին դարձի կուգա և կվերադառնա իր հոր փունը:

Երկրորդ օրինակով հիստու կնմանցնե մեղավորը և Աստուծո ուրախությունը մեկու մը, որ դրամ կորսնցուցած է. կփնտրե և կգտնե և այդ գլուխով ինքը կուրախանա և փառք կուրա Աստուծո:

Երրորդ առակը, որով կկոչվի այս կիրակին՝ Անառակ որդիին կիրակին, այն պարտությունն է, որ բոլորդ ալ գիտեք, շատ լավ գիտեք ե ձեր կյանքին մեջ զգացած եք այդ վիճակը, որ անառակին վիճակը եղավ և զնաց մի օր իր հոր մոտ և ըսավ. «Տո՛ր ինձի քո գանձեղ ինձի բաժին ինկած մասը, ես պիտի երթամ քո փունեն»: Հայրը չմերժեց, փովավ անոր, ինչ որ կուզեր ունենալ: Զավակը թողուց իր հոր փունը և հեռացավ: Ան թողուց աշխատանքի և պարտախանափության կյանքը և զնաց ուրախության, մարդկային ուրախության, մեղավոր ուրախության կյանք ապրելու, մինչև այն օրը, երբ կորսնցուց իր ամբողջ ունեցվածքը և ստիպվեցավ խոզարած դառնալ ու խոզին ներված աղբերեն սնունդ, մինչև եկավ այն օրը, երբ հանկարծ արթնցավ և ըսավ. «Ես ինչպե՛ն թողեցի իմ հորս փունը, ուր ամենեն պարզ աշխատավորը շատ ավելի լավ կապրի, քան թե ես այստեղ՝ այսօր»: Եվ որոշեց վերադառնալ իր հորը:

Վերադարձավ հոր փունը այն մտածումով, թե պիտի ըսե իր հորը. «Հայր, ես մեղք գործեցի քո նկատմամբ, թույլ փոր, որ ես պարզ բանվոր մը ըլլամ քեզ մոտ և ապրիմ գոնե բանվորի մը կյանքը»: Սակայն այդ մտածումը, կըսե Ավետարանը, մարդկային սխալ մտածում է, որը կփաստե, թե մարդը շատ քիչ կհանչնա իր Հայրը,

Երկնավոր Հայրը և իր Աստվածը: Եկավ այդ անասակը դեպի իր հորը և ըսավ անոր՝ «Հայր, ես մեղք գործեցի, ներս ինձի և պարզ բանվոր ամ զիս բեզի մօր»:

Հայրը ըսավ իր ծառաներուն. «Պատրաստեցեք խնջույքի սեղանը, մորթեցեք պարարտ հորթը, փոխեցեք անոր հագուստները, դրեք անոր մատին մատանին և թող զա դեպի ինձ»: Եվ ողջագործեցավ, ուրախություն փրեց իրենց շուրջը, բացի մեծ եղբորը սրտեն, որ գանգաբեցավ և ըսավ. «Ես այսքան արեմ բեզի հեպ աշխատած եմ, ինչո՞ւ մի օր ինձի այդպիսի աղվոր խնջույք չստրբեցիր»: Եվ հայրը տվավ անոր իր պարասխանը և ըսավ. «Դու ինձի հեպ էիր միշտ, բայց այս քու եղբայրդ կորսված էր և գտնվեցավ, կորսված էր մեղքի մեջ և հիմա վերադարձավ ապաշխարանքի»:

Այս է այսօրվա պարգամը, սիրելի հավատացյալներ: Աստված ամենամեծ գանձը, որ տված է մարդուն, իր սիրտն է, որովհետև Աստված կտալատ, որ ամեն մարդ, որ ամեն մարդ արարած երբ մեղանչե, զգա, թե ինքը սխալ ճամփով գնաց, և վերադառնա ուղիղ ճամփուն, գա, զղջա և ըսե. «Հայր, մեղայ յերկինս եւ առաջի քո»: Այս սիրտն է, որ գոջումին մեջեն կգարգացեն իր մեջ սերը, սերը՝ դեպի բարին, սերը՝ դեպի գեղեցիկը, սերը՝ դեպի ճշմարիտը:

Բարին Աստված է, բարին այն զգացումն է, որ մարդը կզգա, երբ կդառնա դեպի Աստված և կզգա ինքզինքը որդիության, հարագատ որդիության վիճակին մեջ: Եվ կհեռանա մեղավոր կյանքեն, կապաշխարե և կարժանանա Աստուծո քալության: Գեղեցիկը այս մեր փիեզերքն է, մարդն է, Աստուծո բոլոր արարածներն են և ամբողջ արարչությունն է: Եվ այն մարդը, որ ամեն առիթու երբ կարթնա և կտեսնե գեղեցիկ բնությունը, փառք կու տա Աստուծո, որ այդ բնության մեջ մեկ օրվա կյանք մը ևս պետք է ունենա, կնշանակե, թե այդ մարդը կսիրե իրապես գեղեցիկը: Իսկ ան, որ կսիրե ճշմարտությունը, այն է, որ կհավատա Աստուծո և կտեսնե Անոր մեջ և Անոր խոսքին մեջ իրեն ավանդված ճշմարտությունը, ճշմարտությունը՝ հավատքին, ճշմարտությունը՝ սիրտին, ճշմարտությունը մանավանդ՝ մարդկային ազնիվ զգացումներու:

Մեր Տեր Աստվածը այսպես սրեղծեց մարդը և մեզ բոլորս ալ հրավիրեց ապրելու դրախտային կյանք մը: Մենք է, որ մեղանչեցինք, մենք է, որ հեռացանք, ամեն անգամ, որ մեղքի մեջ ինկանք և մարիկ չըրինք մեր Փրկչին, որ կըսե. «Մխալ է քու դրածը, վերականգնե, վերադարձիր մաքուր կյանքին և պիտի գտնես ուրախություն, պիտի գտնես աստվածային սեր, պիտի գտնես մանավանդ խաղաղությունը սրտի»:

Այդ է, որ հրավիրն է այսօրվան բոլոր հավատացյալներուն:

Հայր, բոլորս մեղանչեցինք Զո դեմ, թողություն փութ մեղքերուն, որովհետև մենք սխալած էինք, սխալ ճամփով գացած էինք և ահա կվերադառնանք՝ մեր հույսը դրած Զու ներողամտությանդ. Զու հայրության զգացումիդ, մեր ամբողջ հույսը դրած Զու երկնային Հոր մարդասիրությանդ: Ողորմած Աստված, փութ թողություն մեր բոլորի մեղքերուն և առաջնորդե մեզ դեպի բարի կյանքը, դեպի գեղեցիկ կյանքը և Զրիստոսի հավատքով ճշմարտացած կյանքը, և մենք պիտի փառաբանենք Զու անունդ, այժմ և հավիտյան:

Տ. ՏԱԹԵՎ ԱՐՔԵՂԻՄԿՈՂՈՍ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՏՆՏԵՄԻ ԿԻՐԱԿԻՆ

(3 մարտի 2002 թ.)

*«Եվ ես ձեզ ասում եմ, անհրաժեշտ է մամոնայից ձեզ համար
բարեկամներ արեք, որպեսզի երբ այն պակասի,
հավիտենական հարկերի տակ չնդունեն ձեզ:
Չեք կարող և՛ Աստուծոն ծառայել, և՛ մամոնային»:
(Լուկաս ԺԶ, 13)*

Հոգևոր եղբայրներ և պապավորժան հայորդիք,

Վստահ եմ, որ բոլորդ էլ գիտեք, թե այս կիրակին մեզ դարձյալ հրավիրում է ապաշխարողական կյանքի, Ղուկասու Ավետարանում պարմվող Տնտեմի առակի խորհրդով, որի համար Մեծի Պառհոց այս կիրակին կոչվում է նաև Տնտեմի կիրակի:

Առաջում ասվում է, որ մեծահարուստ մի մարդ մի փոքր տներ, որի մասին գանգադներ են հասնում իր ականջին, թե կշարաշահեր իր պաշտոնը: Մեծատունը կկանչե իր փոքրերին և կերանգե, որ հաշիվ տա: Հանցավոր լինելով զգալով, փոքրերը տագնապի կմարմնակի և ինքն իրեն հարց կտա՝ «Ի՞նչ պիտի անեմ, երբ փոքրերի պաշտոնիցս զրկվեմ: Ո՞չ արհեստ գիտեմ, ո՞չ էլ մի բան եմ խնայել հեղափոխական կյանքիս համար»: Բայց ճարպիկ և հնարամիտ անձ լինելով, ասում է՝ «Գիտեմ, ի՞նչ պիտի անեմ»: Անմիջապես գնում է և կանչում իր փոքր չարապաններին և հարցնում.

- Ի՞նչ ես պարտք իմ փոքրքը:

Երբ նա պարտախտնում է՝ հարյուր տալատ ձեթ, հրահանգում է, որ պարտամորհակ պարտատերն և գրեն հիստն, իսկ 100 տալատ պարտք ունեցողի պարտքը դարձնում է 80:

Անկասկած այս բոլորն էլ հասնում է մեծահարուստի ականջին. այդպես են այս աշխարհի փոքրերը, թույլ չեն տալիս, որ իրենց սրացվածների և կավածների մեջ որևէ բան կատարվի առանց իրենց գիտության: Առաջն ասում է, թե փոքր որքան զայրացավ, նույնքան էլ համակրանքով վերաբերվեց փոքրերի արածին, որովհետև «իմաստությունը արար»: Շահեց պարտապանների համակրանքը՝ հուսալով, որ ներողության օրերին նրանք էլ բարյացակամությամբ կվերաբերվեն իրեն:

Առակի վերջում Հիսուս երկու կարևոր և հստակ պատվերներ է տալիս հավաքվածներին.

Առաջին՝ անիրավ մամոնան (մամոնան միշտ էլ անիրավ է) այնպես օգտագործեցեք, որ բարեկամներ չափեք, որպեսզի երբ այն ձեզ պակասի՝ դուք կարողանաք հավիտենական հարկերու փակ ընդունվել:

Երկրորդ՝ չեք կարող թե՛ Տեր Աստծուն և թե՛ մամոնային միաժամանակ ծառայել:

Միևնույն ժամանակ մեր Փրկչի պատրամած առակները հեքիաթներ չեն, որոնց կարելի է մի պահ ականջ դնել, փայլավորվել, բարոյական մի դաս առնել և վերջ: Դրանք մեզ լինելու կամ չլինելու, փրկվելու կամ կորստյան դատապարտվելու ճանապարհը ցույց տալու և կոչված պարզամտներ են: Ըստ Ս. Գրքի մասնագետներու, Փրկիչ ինք չէր հորինել այս պարմությունները, այլ կբաղեր իր օրերում պարանոց դնալներից, որոնք այսպիսով կլանեցից վերցված օրինակներ էին:

Կարևորը, սակայն, առակը ճիշտ մեկնաբանելն է: Պետք է ընդունել, որ, իրավամբ, դժվար է այս առակին ճիշտ մեկնաբանություն տալը: Վերջիվերջո գործ ունենք մի խարդախ և ստախոս անձի հետ, որ իր փիրոջն է խաբում և չարաշահում, իսկ տերը փոխանակ նրան սաստիկու և պատժելու՝ գովում է:

Մամոնան ոչ միայն փող-դրամ եասկացությունն է, այլ նաև ընդգրկում է նյութական այն բոլոր բարիքները, որոնցով մենք կարողանում ենք լավ կյանք ապահովել: Սուրբ Գրքի կարգ մը մեկնաբաններ այս առակի իմաստը խտրեցնում են բարոյական այն հորդորի մեջ, համաձայն որի մենք պարտավոր ենք մեր նյութական բարիքները օգտագործել այնպես, որ շահենք մարդկանց բարեկամությունը, որպեսզի նրանք մեզ օգնեն մեր դժվարին օրերին: Ուրիշներ ետևադրում են, որ մեր Տիրոջ մեզ փոխանցած ճշմարտությունն այն է, թե մենք ոչ թե **տնտեսներ** ենք, այլ՝ **ժամանակավոր տնտեսներ**: Մեր կյանքը, մեր նյութական գոյությունը և բարիքները փեր ունեն, մերը չեն: Մենք նրանց ժամանակավոր պատասխանատուներն ենք, նրանց համար հաշիվ պիտի տանք, երբ զանոնք վերադարձնենք մեր Տիրոջը կամ նրանք մեզանից պահանջվեն Տիրոջ կողմից հարմար նկատված ժամանակին:

Ըստ մեզ, սակայն, Փրկիչն ավելի կարևոր մի ետքադրում է կատարում. ի՞նչ պիտի պատահի, երբ մամոնան մեզ պակասի: Ի՞նչ պիտի անենք մենք, երբ նյութական աշխարհը, նրա բարիքները մեզ պակասեն:

Կկարծե՞ք՝ պարզ հետեւորական հա՛րց է սա. մամոնան չի՞ պակասում: Ոչ միայն մեզ մոտ, Նայաստանում, այլև ամբողջ աշխարհում մամոնան միշտ պակասում է: Բոլոր պարեղացմաները, աշխարհի մեջ ծագած բոլոր դժվարություններն ու տագնապները մամոնայի մախվածության կամ պակասության արդյունք են: Երբ մեր հույսը դրել ենք նրա վրա, ի՞նչպես պիտի կարողանանք բարեկամներ շահել, կամ մեզ համար հավիտենական հարկեր ապահովել:

Տեսե՛ք, երբ մոռանում ենք մեր **ժամանակավոր տնտեսներ** լինելու իրողությունը, երբ անտեսում ենք **հաշվեդու** լինելու մեր պարտաւարկամությունը, ի՞նչ ճակատագրական սխալներ ենք գործում: Ոչ միայն մեր սեփական կորստյան, այլև միլիոնավոր ուրիշ մարդկանց ճակատագրի հետ ենք խաղում: Ի՞նչ պիտի անեն այն մարդիկ, ովքեր մամոնա չունեն: Ի՞նչ պիտի անենք մենք, երբ մամոնան պակասի

մեզ: Մեր տերերի բարեկամությունը շահելու կարողությունից պիտի զրկվենք: Հավիտենական հարկերի ներքո ընդունվելու պարտություն պիտի չընծայվի* մեզի:

Բայց չէ՞ որ մամոնան միշտ պակասում է և պիտի պակասի: Ե՞րբ են հաղթուսրները հազնում, որ աղքատները մի օր կարողանան հազննալ: Տակավին կա ավելի ահավոր այն պահը, երբ մահվան օրը մեր ունեցած և՛ նյութական կյանքը, և՛ ամբողջ մամոնան մեզանից պիտի առնվեն և վերացվեն: Մեր Տիրոջ առաջ պիտի հայտնվենք մերկ և մեր ձեռքում նյութական ոչինչ պիտի չունենանք մենք մեզ արդարացնելու: Նյութապաշտ կյանքի ահավոր վախճանի մասին այս հարազատ պարկերը մեզ ուսուցանում է ուշադիր լինելու մեր Փրկչի տված հետևյալ ազդարարությանը.

- Մարդիկ, լինելով ժամանակավոր տնտեսներ, իրավունք չունեն և չեն փրկվի միայն ժամանակավոր բարեկամություններ ամրապնդելով և նյութական կարիքների գոհացման միջոցներ ապահովելով: Դրանք ժամանակավոր հարկեր են, որոնցից ամեն վայրկյան դուրս վարվելու վրանգին ենթակա ենք: Պաշտոնից հեռացվելու վրանգը և անապահովությունը նույնքան իրական են, որքան մեր պաշտոններն ու մեր ժամանակավոր տնտեսի հետ մեր բարեկամությունը: Պատճառը մեկն է. մարդիկ սխալական են, անվստահելի, նույնքան խաբեբա՞ որքան հավատարիմ, այնքան բարի՞ որքան չար, որչափ արքայադուր՝ նույնքան և մսխող: Չի կարելի միայն մամոնային ծառայելով ապահովություն գտնել, որովհետև մամոնան միշտ պիտի պակասի: Իսկ մամոնային ծառայելով՝ արդեն ծառայում ենք ժամանակավոր տերերին և մոռանում մեր կյանքի իսկական հավատարիմ, մշտադարձ և ճշմարտապես սիրող իսկական Տիրոջը՝ Աստծուն: Մենք մեզ խաբում ենք, երբ ասում ենք, թե այս աշխարհում գտնված ժամանակամիջոցում պետք է ծառայել մամոնային, իսկ անդեմնականի մեջ Աստծո հետ մի կերպ լեզու կցտնենք: Կարելի չէ երկու փրոք ծառայել: Մամոնան մեզ գերում է, ստրկացնում է չի թողնում, որ մենք մերժենանք, հնազանդվենք և ծառայենք մեզ ազատագրող, փրկող և հավիտենական հարկեր մեզ համար պարտասուրող Աստծուն:

Չի կարելի ծառայել և՛ Աստծուն, և՛ մամոնային:

Իրապես, որքան դժվար է հասկանալ և մեկնաբանել այս առակի տարողությունը և իմաստը: Առանց մեր կյանքի հավիտենական տարողության ընկալման և չափափանքների՝ որքան շուտ և որքան շար ենք սխալվում և շփոթվում: Բայց մեր Եկեղեցու Հայրերը, տեսե՛ք, մեզ օգնում են, որ ուղիղ ընկալենք աստվածաշնչական դասերը: Այսօրվա մեր աղոթքների և շարականների մեջ ի՞նչ ներշնչիչ և իմաստուն հորդորների ենք հանդիպում: Պիտի փառագեծի, որ բոլորիս ուշադրությունը մի պահ կենտրոնանա շարականի հետևյալ տողերի վրա. «Որ շինեցեր բարձրագույն գեղեղեցիք թո խորերդեամբ եւ ի սմա կարգեալ տնտես գլխառոգ բանին ճշմարտութեան, օրհնեմք զանհատանելի գործերինդ»:

Աշխարհի և փիեզեքի ճարտարապետն իր ստեղծագործության ծրագրի մեջ միայն նյութական, տեսանելի այս աշխարհը չէ, որ արարել է. կա ավելի մեծ և հզոր ճարտարապետական ոգեղեն կառույց, որ Եկեղեցին է՝ Աստծո խորհրդական Մարմինն այս աշխարհի և փիեզեքի մեջ Իր ներկայություն իրականացնող և ամրապն-

դող մի Աստվածամարդկային հասարակություն, որ մեր ուշադրությունը սևեռում է մարդու և մարդկային կյանքի հավիտենական չափանիշների և արժեքների վրա:

Այս առակը ճիշտ հասկանալու և մեկնաբանելու համար մի շարք կարևոր բառի վրա պետք է սևեռենք մեր ուշադրությունը՝ **յաւիտենական յարկեր**: Մարդը հավիտենական արժեք է, մեր կյանքը հավիտենականն է սահմանված: Ճիշտ է, այս աշխարհում մենք ապրում ենք ժամանակի մեջ և ժամանակավոր, անցողական արժեքներով ու խնդիրներով ենք զբաղվում, բայց մեր փրկումը և հանգիստը մենք գրքում ենք հավիտենական հարկերի փակ և հավիտենական արժեքների մեջ: Խաբվեցինք և տարվեցինք ժամանակավոր և խաբուսիկ երևույթներով կամ վարձարժայրությամբ, այն ժամանակ կդառնանք անիրավ տնտեսներ և կորստյան կմարմնովներ: Իսկ եթե հավատարիմ մնացինք մեր հավիտենության փնջին և առավել կյանքին. այդ ժամանակ է, որ կդառնանք բարի ծառա, ազնիվ և հավատարիմ: Փոքրը բաների մեջ հավատարիմ մնալով Աստծուն, արժանի կլինենք ավելի մեծ վարձարժայրության:

Մեծի Պառիկ այս օրերին, երբ բոլորս գիտակցական ճիգով փորձում ենք ավելի մերձենալ Աստծուն և Աստվածայինին, իմ աղոթքն ու մաղթանքն է, որ մենք հեծա՛մուր չլինենք միայն ու միայն նյութական և մամոնայի մեզ տված ժամանակավոր և խաբուսիկ ապահովություններին ու ժամանակավոր ապավեններին: Փնտրենք նաև հոգևոր սխրանքը, բարոյական հզորությունն ու փրկությունը: Իրավամբ, քանի որ մարդն Աստծո համար հավիտենական արժեք է, Աստված վարձարժեք է նրան հավիտենական կյանքով, ուստի չգոհանանք այն փոքրով և փոքրոգի չափանիշներով, որոնց միջոցով նյութապաշտ, ընչաքաղց և աշխարհիկ կենցաղը մեզ կաշկանդում ու պարտավորեցնում է: Մենք ազատ Հայաստանի և ամեն օր մեզ ազատագրող Աստծո հարազատ զավակներն ենք: Մենք ազատ ենք ընտրելու մեր կյանքի ուղին, մենք ազատ ենք ընտրելու մեր ցանկացած չափանիշները:

- Երանի չլիոթվենք, չդառնանք անիրավ տնտեսներ, մանավանդ մեր Հայրենիքի և ժողովրդի համար ճակատագրական այս օրերին:

Դարերով մենք հավատացինք, որ Հայաստանը և Հայոց Եկեղեցին մեր ժողովրդի ամենն ապառով և հարազատ հավիտենական հարկերն են, որոնք կոչեցինք մայր, որովհետև նրանց տված սնունդով մենք հավատացինք, որ հավիտյան կապրենք և հավիտենության համար կապրենք:

Համոզված եմ, որ այդ հավատով է, որ մենք տակավին երկար կապրենք և կկառուցենք մեր նոր կյանքը, որ բոլորիս համար Աստծուց մեզ պարգևված մեծագույն շնորհն է:

Տ. ԵԶՆԻԿ ԵՊԻՄԿՈՂՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՃՐԱԳԱՆՈՒՅՑԻ

ՊԱՏԱՐԱԳԻՆ
(30 մարտի 2002 թ.)

«Յանուն Տօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամեն»:

«Այսօր երկնքում հրճվում են հրեշտակները, հրճվում են եւ փառաբանում Տեր Աստծուն, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հարության ավերելով»:

Այսօր մենք այս Սուրբ Տաճարի կամարների ներքո հրճվեցինք մեր կյանքում մի անգամ եւս, երբ տրվեց Քրիստոսի Հարության ավերիսը եւ երբ Հայր Սուրբը ընթերցեց Հարության ավերարանական ետավածը:

Այսօր Քրիստոսի Հարության տոնն է, սիրելի հավաքացյալներ:

Սակայն մեզ համար, իբրեւ քրիստոնյաների, բավական չէ միայն Քրիստոսի Հարությունը տոնել, բավական չէ միայն Քրիստոսի Հարության հիշատակով ոգևորվել եւ գոտնայնդվել: Մենք, իբրեւ քրիստոնյաներ, պետք է գիտակցենք, որ այսօր նաեւ մեր հարության տոնն է, մեզանից յուրաքանչյուրի հոգևոր հարության տոնը:

Սուրբ Զատիկ է այսօր: Զատիկը թարգմանությունն է երեսկան պատիսա բառի, որը նույնությամբ պատկերավոր է նաեւ հունարեն Մ. Գրքում, որ թարգմանաբար նշանակում է՝ «մանր կողքով անցավ»: Մենք մտովի մտաբերում ենք Շգիպտոսը, երբ Աստված պատրաստվում էր Շգիպտոսի գերությունից ազատելու Իր ժողովրդին, եւ պատվիրեց, որ նրանք իրենց տներում գառ մորթեն եւ գառան արյունից խաչածն քսեն իրենց դռների վրա, որովհետեւ գիշերը Տիրոջ հրեշտակը պիտի գար եւ սպաներ բոլոր անդրանիկ գավակներին, սակայն արյան նշանով նա պիտի պահպաներ, նա պիտի երկարացներ կյանքը հրեա ժողովրդի անդրանիկների, եւ այսպիսով Զատիկի շնորհիվ հրեա ժողովրդի անդրանիկները փրկեցին իրենց կյանքը:

Այդ փրկությունը, սակայն, ժամանակավոր մի տնտեսություն ուներ: Քրիստոս Իր գալստյամբ, Իր խաչելությամբ Իր արյունը թափեց, Իր արյամբ դրոշմեց մեր բոլորի սրտերը, մզբերը եւ հոգիները, եւ Քրիստոսի արյունով մանր մեր կողքով անցավ: Մեր մեջ ապրում էր առաջին մարդը, որ դրախտում անհնազանդ գտնվեց Աստծո առաջ եւ դատապարտվեց մահվան: Քրիստոսի խաչելությամբ եւ Քրիստոսի արյան շնորհիվ մենք հարություն առանք եւ արժանացանք հավիտենական կյանքին: Անա թե ինչու, սիրելի հավաքացյալներ, ես ասացի, որ այսօր ոչ միայն Քրիստոսի Հարության տոնն է, այլեւ մեզանից ամեն մեկի հարության տոնը:

Յուրաքանչյուր կանայք, որոնք եկել էին Քրիստոսի գերեզման՝ օծելու Փրկչի մարմինը յուրով, կնդռուով եւ անուշաեղբայր յուրերով, երբ ականադրես եղան Քրիստոսի Հրա-

շափառ հարությանը, շտապեցին առաքյալների մոտ՝ ավերելու նրանց Քրիստոսի հարության լուրը: Առաքյալները, կես շփոթված, կես գարմացած, կարծեք իրենց գլուխները կորցրած, սակայն ոչ երբեք հիասթափված, հավաքված մտածում էին, թե այս ինչ եղավ, իրենց Տերը՝ Վարդապետը, որ հարություն տվեց Ղազարոսին և ուրիշ մարդկանց, որ բժշկություններ կատարեց, որ կարողացավ իրեն ենթարկել բնության փորձերը՝ խաչվեց, մահացավ, թաղվեց և չկարողացավ իրեն օգնել:

Այսպիսի մտածումներ էին անցնում առաքյալների մտքով, սակայն նրանց հոգում հաստատվեց էր համոզումը, որ այդ բոլորը ժամանակավոր մի երևույթ էր, ինչպես Պեղորոս առաքյալն ասաց. «Տեր, ես մինչև վերջ պիտի գամ Քո եղևից», սակայն նա չդիմացավ փորձությանը և երբեք անգամ, նախքան աջադադի կանգնելը, ուրացավ Քրիստոսին: Այդ նույն Պեղորոս առաքյալի մեջ կար անսասան հավատը Քրիստոսի նկատմամբ, և այդ հավատի վրա է, որ Քրիստոս Իր Եկեղեցին կառուցեց, ինչպես անապատում հրեաները, երբ մի պահ կասկածեցին Աստուծո հզորության վրա, երբ մի պահ կարծեք մոլորվեցին և ոսկե հորթ կանգնեցրեցին իբրև իրենց պաշտամունքի առարկա:

Աստված նրանց որպես պարիմ ուղարկեց օժերին, և այն ժամանակ Մովսեսը խորհրդանշաբար խաչի վրա կանգնեցրեց պղնձե օձը, որին նայելով փրկվեցին օձից բոլոր խայթվածները, այնպես էլ կանգնեցվեց Քրիստոսի խաչը, որպեսզի հեղաշարժեց բոլոր Քրիստոսին հավատացող բոլոր հավատացյալներս, ովքեր որ ինչ-ինչ պայմաններում երբևէ կարող ենք սասանվել, երբևէ կարող ենք շփոթվել, երբեք իրավունք չունենանք հիասթափվելու, որովհետև մենք ունենք Ս. Խաչը, որին նայելով պետք է հիշենք Քրիստոսի թափած արյունը և այդ արյամբ նորից հարություն պիտի առնենք:

Միեւնի հավատացյալ ժողովուրդ, անցավ Մեծ Պաեքի շրջանը, անցավ Ավագ Շաբաթը: Շաբեղը եկել էր այսօր եկեղեցի, որպեսզի Ս. Հաղորդություն առնեք, որպեսզի ճաշակեք Քրիստոսի արյունը և Քրիստոսի մարմինը: Ձեզանից ոմանք կարողացել են ամբողջ Մեծ Պաեքի ընթացքում պաս պահել, ոմանք ցանկացել են դա անել, սակայն ինչ-ինչ պատճառներով չի հաջողվել այդ անել, այլ պահել եք մեկ շաբաթ կամ մի քիչ ավելի, կամ մի քիչ պակաս: Ուրիշներ դարձյալ ցանկանալով պաս պահել, սակայն դարձյալ ինչ-ինչ պատճառներով չեն կարողացել այդ անել, սակայն այսօր ծոմ են պահել և եկել են եկեղեցի՝ խոստովանել, իրենց մեղքերը հայտնել Աստծուն՝ ցանկանալով հաղորդվել Քրիստոսի մարմնին և արյանը:

Այս պահին ես ցանկանում եմ հիշել Քրիստոսի ամակներդից մեկը, թե ինչպես մի գործադիր դուրս եկավ առավոտյան և բանվորներ բերեց իր հողամասի վրա աշխատելու և նրանց խոստացավ, որ կվճարի մեկ օրվա համար մեկ մնաս: Երբեք ժամ ենդոս ևս զնաց, նորից բանվորներ բերեց: Նա նրանց նույնպես խոստացավ վճարել մեկ մնաս: Անցավ երեք ժամ, նորից բանվորներ բերեց՝ դարձյալ մեկական մնաս վճարելու պայմանով: Եվ երբ մնացել էր աշխատանքային օրվան մեկ ժամ, դարձյալ

բերեց բանվորների և այդ բոլորին հավասար մեկ մնաս վճարեց: Նույնն է պարագան այսօր ձեզ համար: Նրանք, ովքեր պահել են պասը բոլոր օրերին, լիիրավ արժանացել են Զրիստոսի մարմնի և արյան հաղորդմանը, նրանք, ովքեր պահել են շար ափելի նվազ կամ ընդամենը մեկ օր ծոմ են պահել, նրանք վաստակել են այն, ինչ որ վաստակել են, իսկ այն մյուսը, որ չեն վաստակել, այսօր Զրիստոս նվեր պիտի անի ձեզ: Այնպես որ, սիրելի հավատացյալներ, այսօր, երբ դուք եղեցալես հարություն եք առել, մի՛ վարանեք, և բոլորդ կմտքենաք մեր Տեր Հիստոս Զրիստոսի մարմնին և արյանը, որին փառք հավիտյանս հավիտյանից, ամեն:

Զրիստոս հարյավ ի մեռելոց:

ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

ՎԼԱԴԻՄԻՐ ՍՈՒՐԱՅՈՎ

ՊԱՆԴՔԻ ՄԱՍԻՆ*

Աղոթքի մեջ Աստծու շնորհը ստանալով, մենք ողորմության ձևով փոխանցում ենք այն (մեր) մերձավորներին, այսինքն՝ ցանկացած գործում, որի ժամանակ (որում) մենք վերջիններիս ըստ Աստծու ենք վերաբերում, ինչպես մեզ մեր հավատքն է պարտավորեցնում: Բայց մեր պարտականությունները միայն մարդկանցով չեն սահմանափակվում: Մենք պարտավորություն ունենք թողոր այն արարածների նկատմամբ, որոնց մեր մեղքի պատճառով ցարդ հառաչում և տառապում են: Եթե մենք Աստծու շնորհը տարածողներն ենք դառնում, ապա պետք է նրա ներգործությունը տարածենք և՛ մեր կենդանական բնության վրա, և՛ մեր ողջ աշխարհի վրա, քանզի անկարելի է սահմաններ ենթադրել աստվածմարդկային գործության համար: Ինչպես մարմնացած Աստված է փրկում մարդկությանը, նմանապես Աստծու հետ վերամիավորված մարդկությունը պետք է փրկի ողջ բնությունը, քանզի ինչպես մարդկությունը համձին եկեղեցու Քրիստոսի կենդանի մարմինն է, այդպես էլ ողջ բնական աշխարհը պետք է վերածնված մարդկության կենդանի մարմինը դառնա: Բոլոր արարածները պետք է թողություն ստանան և Աստծու որդիների փառքի ազատության մեջ ներմտնվեն: Իր ամբողջության մեջ սա տիեզերական գործ է և համաշխարհային պատմական խնդիր: Բայց յուրաքանչյուրը դրանում իր անհատական անմիջական պարտականությունն ունի, քանզի յուրաքանչյուրը սեփական մարմնում կարող է օժանդակել համաշխարհային մարմնի քաղությանը:

Մենք գիտենք, որ ոչ միայն մարդկային հոգին, այլև տիեզերքի մարմինն է աղավաղված վիճակում մեղքի և մահվան իշխանության տակ գտնվում: Ջուր չէ ասված, որ ամբողջ աշխարհը չարի մեջ է: *Ջարը նրանում է, որ հոգին հակառակվում է Աստծուն, իսկ մարմինը՝ Հոգուն:* Մեր հոգին չի ուզում, որ իրեն Աստված տիրի, այս իսկ պատճառով ինքն էլ չի կարողանում տեղ լինել ո՛չ սեփական մարմնին, ո՛չ աշխարհի մարմնին: Աստծուն պատշաճում է ազատ տիրել մեր հոգուն, զբաղելով նրան իր կատարելության ուժով և արտաքին աշխարհի նկատմամբ իր ամենակարողության ուժը նրան հաղորդելով:

Աստված. Ում մեջ ամբողջը մի է և ներդաշնակ, մեր կամքի համար գերագույն քարիքն է հանդիսանում, անվերապա ճշմարտություն՝ մեր մտքի համար, և կա-

* 19-րդ դարի մեծ մտածող Վլադիմիր Սոլովյովի (1853-1900 թթ.) ներկայացվող գործը մի հատվածն է Որա «Կյանքի հոգևոր ճիմքերը» աշխատության: Թարգմանությունը՝ Ռեդիմակի «Избранные произведения» (Դոմի Ռոստով, 1998 թ.) հրատարակությունից, էջ 180-186 [սմբ.]:

տարյալ գեղեցկություն՝ մեր զգայարանների համար: Կատարելության այս լրություն-
 քն իբրև մեր ցանկությունների, մտքերի և զգացմունքների սահման ընդունելով,
 մենք ճշմարիտ անսահմանության ենք հասնում: Բայց մենք ուրիշ անսահմանու-
 թյուն ենք ցանկանում: Իրավունք ունենալով ամբողջի ներքին սկզբի հետ հաղոր-
 դակցվելու միջոցով տիրել ամեն ինչին՝ սրա փոխարեն մենք ինքնեքս ենք ցանկա-
 նում սկիզբ դառնալ և առանձնանալով թուրից՝ թուրրին դրսից տիրել: Մենք ցան-
 կանում ենք սկիզբ դառնալ և, արդարև, մեղքի, հիվանդության և մահվան սկիզբն
 ենք դառնում: Փոխարեն այն բանի, որ միակ գերագույն բարիքը բաղձանք, որում
 ամենայն ինչ է, որում թուրը բարոյական կերպով միավորված են, թուրը համե-
 րաշխ են իրար հետ, մենք բազում բարիքներ բացառապես մեզ համար ենք ցանկա-
 նում, առանձնանում ենք թուրրից՝ ամեն ինչի մեջ մերը փնտրելով, և որևէ բանի
 վրա կանգ առնել չենք կարողանում: Այն բանի փոխարեն, որ ամբողջական ճշմար-
 տությունը նկատի ունենանք, որի մեջ թուր իրերն ու պատկերացումները միավոր-
 ված են ներքին բանական կապով, մեր միտքը կանգ է առնում առանձին առարկա-
 ների վրա, վերլուծում է, տարրալուծում է դրանք ոչ թե տարբերության միջոցով
 դրանց միությունն ավելի լավ հասկանալու, իր իմացության մեջ դրանք իրար ամուր
 կապելով մի ամբողջություն կազմելու համար, այլ՝ այլևս ամբողջականին բնավ էլ
 չվերադառնալու, ավելի հեռու, մինչև անսահմանություն իր առարկան մասնատելու՝
 ողջ տիեզերքը անվերջանալիորեն մանր և ներքնապես ոչնչով անկապակից մաս-
 ցիկների մեռյալ խառնախմբի վերածելով: Վերջապես, մեր զգայական հոգին փո-
 խանակ ոգու գործունեության համար հեռադահլ և միջոց ծառայելու, զգացական ո-
 լորտում բարիքի և ճշմարտության բովանդակությունը մարմնավորելու՝ տալով
 նրան գեղեցկության պատկերը, մեր զգայական հոգին տրվում է մարմնական կյան-
 քի կույր և անչափելի ձգտումին, որը չուհի ներքին նպատակ, այլ միայն մի արտա-
 քին վախճան՝ մահվան և ապականության մեջ:

Փոխանակ ընկալունակ կերպով իրականին ուշադրությունն ուղղելու, իր մեջ
 նրան տեղ տրամադրելու և ընդօրինակելու նրան՝ դառնալով նրա լրության նոր
 կենդանի պատկերը, մենք կենտրոնանում ենք մեզ վրա և, սրելով մեր թուրը հոգևոր
 ուժերը, կարծես թե դրանք այդ սայրով ուղղում ենք իրականի դեմ՝ միայն կործա-
 նում և քայքայում առաջ բերելով:

Մեր կամքը միաբանության փոխարեն տիրապետության է ձգտում, մեր միտքը
 համընդհանուր իրականն ըմբռնելու փոխարեն տրվում է անվերջորեն շատ առար-
 կաների մասին կամայական գաղափարներին: Վերջապես, մեր զգայական հո-
 գին հոգևոր ուժերով նյութին կենդանություն տալու փոխարեն՝ նյութով անհիմաստ
 հաճույքի է միայն ձգտում:

Եթե մեր հոգին պահպաներ իր ներքին առիթը՝ աստվածային կատարելությունն
 իր կյանքի իրողություն և նպատակ ունենալով, նա ոչ մի արտաքին սահմանափա-
 կունքների կարիք այլևս չէր ունենա և կօգտվեր ճշմարիտ ազատության և անսահ-
 մանության լրությունից: Բայց, երես թեքելով Աստծուց, նա իր բնությունն է աղա-
 վաղում, վատ պարունակությամբ է լցվում, անհիմաստ հետություններ է ձեռք բերում

և կեղծ անտահմանությամբ տարվում անտահման ինքնասիրությամբ, անմպատակ իմաստակությամբ, զգայական ցանկությունների անչափությամբ: Այս ցկատառու մով, մեր հոգին Աստծու և բնության միջև իր իսկական դիրքում վերականգնելուց առաջ, մենք պետք է նրան մաքրեմք ձեռք բերված չարից: Մեր հոգու կեղծ անչափությունը պետք է չափավորվի և սահմանափակվի մեր բարի կամքի հետ զուգակցված շնորհի ներգործությամբ: Մեր աղավաղված բնության վերաբերմամբ այդ ներգործությունը ժխտողաբար է արտահայտվում՝ ժուժկալության կամ լայն իմաստով պաճքի պարտականության մեջ: Սա մեր սկզբնական, արմատական պարտականությունն է մեր բնության վերաբերմամբ: Ամեն տեղ, ուր բնական ուժերի անչափելի անհագուրդ ձգտում է ի հայտ գալիս, անհրաժեշտ է ժուժկալություն, ինքնասահմանափակում կամ պահք:

Կա հոգևոր պահք. ժուժկալում ինքնասեր և իշխանասիրական գործունեություններից, հրաժարում մարդկային պատվից ու փառքից: Այս պահքը հատկապես անհրաժեշտ է հասարակական գործիչների: Նրա սկզբունքն է. մի փնտրիր իշխանություն և տիրապետություն, եթե կոչված ես իշխելու և տիրելու, մայիր դրամն իբրև ծառայության: Ամեն անգամ, երբ վիճակվում է առանց մերձավորների համար օգուտի հայտարարել ինքն իր մասին, ցույց տալ սեփական գերազանցությունն ու ուժը՝ ժուժկալիր դրամից. մի սնիր ինքնասիրությունը :

Կա մտավոր պահք. ժուժկալում մտքի միակողմանի գործունեությունից, հասկացությունների և պատկերացումների անպտուղ և անվերջ խաղից, առանց իմաստի և նպատակի առաջադրվող մշտական հարցերից: Այս պահքը հատկապես անհրաժեշտ է փորձված Հերակլիտի ասացվածքը մոռացության տվող գիտուն մարդկանց. բազմափնտրությունը միտքը չի կրթում: Այս մտավոր պահքի սկզբունքն է. մի փնտրիր իմացություն համուն իմացության, որն անօգուտ է և՛ մերձավորի, և՛ Աստծու գործի համար: Մտքերի մեջ մորույթ և յուրօրինակություն մի փնտրիր: Ամեն անգամ, երբ վիճակվում է ընդհանուր բարօրության հետ չառնչվող կարծիք արտահայտել, ժուժկալիր դրամից: Գիտական իմացություններից չափազանցված նշանակություն մի տուր, քանզի գիտությունը միշտ երկու անխուսափելի սահման ունի. գիտնականների կանխակալ կարծիքները և գիտական նյութի թերիությունը: Մտավոր գործունեությունը բարոյական պահանջներին ենթարկիր: Մի խոսքով. մի սնիր դատարկ իմաստակումը :

Վերջապես, երրորդ, թուճ իմաստով, պահքը՝ զգայական հոգու պահքն է, այսինքն՝ ժուժկալում զգացական հաճույքներից, որոնք մտքի գիտակցությամբ և հոգու իշխանությամբ անկառավարելի և անչափավորելի են: Ֆիզիկական պահքի հիմնական և ամենաէական տարատեսակը միշտ արդարացիորեն արյունոտ կերակրից, տաքարյուն կենդանիների մսից ժուժկալումն է համարվել, քանզի այս կարգի կերակուրը ուղղակի հակասում է մեր ֆիզիկական գործունեության իդեալական կոչմանը: Մեր զգայական կյանքի ճշմարիտ խնդիրը երկրի այգին մշակելն է, անկենդանը կենդանի դարձնելը, երկրավոր էակներից ավելի մեծ իմտեմսիվություն և կյանքի լրություն հաղորդելը, նրանց կենդանացնելը: Սրա ուղիղ հակադրությունն է

կենդանի էակներին սպանելը, հատկապես այնտեղ, ուր կյանքն առավել մեծ ուժ-
նության և լարվածության է հասած, ինչպես տաքարյուն կենդանիների պարա-
դային: Քանի դեռ մենք ի զորու չենք կենդանություն տալ անկենդան բնությանը,
մենք առնվազն պետք է, որքան հնարավոր է, քիչ մեղցնենք կենդանին: Այսպիսով,
ֆիզիկական պահքի նախնական պարտականությունն ուղղված է ոչ միայն մեր
զգայական հաճույքների սահմանափակմանը, այլև արտաքին բնության նկատ-
մամբ մեր անմիջական հարաբերությունների շտկմանը:

ԱՆՈՐ չենք կարող միանգամից շտկել այդ հարաբերությունը, չենք կարող թուրովին խուսափել մահ պատժառելու ամհրաժեշտությունից, որպեսզի ապրենք. քայքայ մենք կարող ենք և պարտավոր ենք աստիճանաբար թուլացնել և նվազեցնել այդ ամհրաժեշտությունը: Եթե այս չարիքը չի կարող իսպառ ոչնչացվել, ապա, ամեն դեպքում, որքան քիչ լինի այն, այնքան լավ, և մենք պետք է կարելի ունենանք չափ հաճեցնենք այն նվազագույնի: Այս պատճառով, Ա. Եկեղեցու իմաստությունը ֆիզիկական պահքի բազում աստիճաններ և տարատեսակներ է ընդունում՝ չպահանջելով անվերապա մոծկալություն:

Ֆիզիկական պահքի ընդհանուր սկզբունքն է. մի սնիր զգալունակությունը, սահմաններ դիր այն սպանդությանն ու ինքնասպանությանը, որոնց անխուսափելիորեն հանգեցնում է նյութական հաճուքների հետապնդումը, սրբիք և վերափոխիր թո սեփական մարմինը, որպեսզի Գախապատրաստես թեզ համաշխարհային մարմնի կերպարամափոխմանը:

● ● ●

Աղոթքը, ողորմությունն ու պահքն անձնական կրոնական կյանքի երեք հիմնական գործողություններն են, անձնական կրոնի՝ երեք սկզբունքները: Ով չի աղոթում Աստծուն, չի օգնում մարդկանց և ժուժկալությամբ չի ուղղում իր բնությունը, մաօտաբ է ամեն տեսակի կրոնի, եթե մուսլիսկ իր ողջ կյանքում կրոնական նյութերի մասին է մտածել, խոսել և գրել: Կրոնի այս երեք հիմնական գործողություններն իրար հետ այնպես սերտորեն են կապված, որ մեկը մյուսից անջատ որևէ գորություն չունի: Եթե աղոթքը մեզ բարեգործության չի դրդում և չի զսպում մեր զգայական բնությունը, ապա այդպիսի անբարի և անգոր աղոթքը ճշմարիտ աղոթք չէ, նրանում շահամոլության, կեղծիքի և ինքնասիրության ինչ-որ խառնուրդ կա: Ըիշտ այդպես էլ, երբ ողորմությունն աղոթքը մախապայման չունի և ժուժկալությամբ չի ուղեկցվում, այդ դեպքում այն առավել թուլակամություն է արտահայտում, քան իրական սեր: Ըշմարիտ ողորմությունը բարձրագույն արդարություն է, այդ իսկ պատճառով այն պետք է հիմնվի գերագույն շնորհի վրա: Վերջապես, ինքնատիրապետման վարժանքի համար ինքնասիրաբար ձեռնարկված պահքը, կամ թե փառասիրությամբ դրդվածը, եթե մուսլիսկ գորություն է տալիս, ապա՝ ոչ ի բարին, իսկ պահքը, թեկուզև եթե աղոթքով է զուգակցված, քայք ողորմությամբ չի շաղախված, այն զոհն է մնում, որի մասին ասված է. ողորմությունն եմ ուզում և ոչ թե՝ զոհ: Այս

երեքի՝ աղոթքի, ողորմության և պահքի միացության մեջ Աստծու միասնական շնորհն է ներգործում, որը ոչ միայն մեզ շաղկապում է Աստծու հետ (աղոթքի ժամանակ), այլև մեզ մեզանեցուն է ամենաբարի (ողորմության ժամանակ) և ոչնչի անկարող (ժուժկալության ժամանակ) Աստծուն :

Կրոնական կյանքի այս երեք հիմնական գործողությունները միաժամանակ կրոնական մարդու հիմնական պարտականություններն են: Մենք կարող ենք պարտավորված լինել միայն մրան, ինչի ընդունակ ենք: Մեր անձնական կարողությունից դուրս է մեր ամբողջովին Աստծու հետ միավորումը, մարդկության փրկությունը և աշխարհի բնության վերափոխությունը: Այդ պատճառով էլ կրոնը մեզանից ոչ մեկին անձնապես չի ասում. միաձուլվիր Աստծու հետ, փրկիր մարդկությանը, վերածնիր տիեզերքը: Բայց մեր կարողությունից դուրս չէ Աստծուն աղոթելը, կարիքավոր մերձավորներից ոգնելը և սեփական բնությունը պահեցողությամբ վերափոխելը: Սա մեր կարողության սահմաններում է և սա մեր պարտականությունն է, մեզանից յուրաքանչյուրիս անձնական պարտականությունը:

Երեք կրոնական պարտականությունների իրագործմամբ մարմնավորվում են նաև երեք կրոնական առաքինությունները. Աղոթիր Աստծուն Հավատքով, մարդկանց բարությունն արա սիրով և Հաղթիր քո բնությանը զալիք Հարուսյան Հույսով: Սրանով սպառվում է մեր վերաբերմունքը Աստծու շնորհի նկատմամբ, որը մեր ներսում է: Բայց Աստծու շնորհը բացահայտվում է նաև մեզանից դուրս՝ աշխարհի և մարդկության կյանքում: Ներքին և արտաքին կյանքի, մի անձի և մրա հավաքական միջավայրի միջև իրական բաժանում չի կարող գոյություն ունենալ, այդ իսկ պատճառով մենք պետք է ճանաչենք պատմական հայտնության էությունը և այն մոր, արդեն ոչ անհատական, այլ հասարակական պարտականությունները, որոնք այն մեզ վրա է դնում:

**ՌՈՒՍԵՐԵՆԻՑ ԹԱՐԳՄԱՆԵՑ
ԳԵՎՈՐԳ ԱԲԵՂԱ ՍԱՐՈՅԱՆԸ**



ՊԱՏՄԱՔԱՆԱՄԻՐԱԿԱՆ

Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ-ՄԵԼԻՔՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՆՆ ԱՐԾՐՈՒՆԵԱՑ»-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թովմա և Ամանուն Արծրունիների «Պատմություն տաճն Արծրունեաց» ստեղծագործությունը հասել է մեզ միակ ձեռագրով, որը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում 10451 համարի ներքո: Սույն ձեռագիրը ընդօրինակվել է 1403 թ. Աղթամարի Ա. Խաչ վանքում Դանիել գրչի ձեռքով XII դարում գրված օրինակից, որը ոչ բարկոց վիճակում էր, թերթերի խախտված դասավորությամբ, առանց տիտղոսաթերթի, մի շարք քաջթողումներով, քառային աղճատումներով ու գրչական սխալներով:

Սույն հոդվածը նպատակ ունի ինչ-որ չափով լրացնել որոշ քաջթողումներ, ճշգրտել և բացատրել բնագրում տեղ գտած առանձին փաստեր, արտահայտություններ ու քառեր, որոնք կարող են հատուկ քննության:

Թովմա Արծրունու առաջին գրքի՝ «Ազգաբանություն Արծրունեաց սեռի» հիմնական աղբյուրներից է Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնը¹, որից և նա կատարում է բազմաթիվ բառացի մեջբերումներ, ինչը հնարավորություն է տալիս լրացնելու որոշ քաջթողումներ:

Եվսեբիոսի բնագրի օգնությամբ կատարված լրացումները տրվում են քառակուսի փակագծերում: Այն լրացումները, որոնք կատարված են, եղելով տվյալ կոտեքստի իմաստից, կամ էլ նպատակ ունեն ավելի պարզ դարձնել այն, տրվում են կլոր փակագծերում: Բնագրի ճշգրտվող հատվածների էջերը մշված են ըստ 1985 թ. հրատարակության² և ըստ ձեռագրի լուսապատճենման (1985/լուսապատճ.):

¹ Եվսեբի Պամփիլեսց Կեսարացույ. Ժամանակականց երկնասմեայ. Աշխատասիրութեամբ հ. Մկրտիչ վարդապետի Մխիթարեան Ազգերեանց: Վենետիկ, 1818:

² Թովմա և Ամանուն Արծրունիների Պատմություն Արծրունեաց տաճն: Բնագիրը հրատարակության պատրաստեց, աշխարհարար թարգմ. և ծանոթագրող՝ Վ. Մ. Վարդանյան: Եր., 1985:

I

Թով. Արծ.	Եվս. Կես.	
[Քսեռքսէս Բաղէոս՝ ամս Լ]: Ի վերջին ամի սորա տիրեն եզիպտացոց հովիւքն³ [ամս ԸԳ]: 56/68 Եւ յետ ճորա (Փռա թագաւո- րի) թագաւորն ասորեստանեայց Թագղաթիադասար: Սա ել ի վերայ Հրէաստանի և զմեծ մասն ժողովրդեանն գերեաց յԱսորես- տան: (Եւ յետ թագաւորեաց) Սաղմանասար. սա իսպառ գե- րեաց զտասն [ցեղսն հրէից ազ- գին խաղա]ցուցանելով ի յերինս Մարաց եւ եթարծ զթագաւորու- թիւնն [ի Սամարիա] որ եւ տե- ւեաց ամս ՄԾ: էջ 60/72	Քսեռքսէս Լ	Եզիպտացիս ժէ հարս- տութեամբ թագաւորեցին հովիւք ամս ԸԳ: Բ, էջ 78 Առ Փակէիս արքաի Թագսար թագաւոր Ասորես- տանեայց ել ի վերայ Հրէաս- տանի և զմեծ մասն ամե- ճայն ժողովրդեան երա- յեցոց տարաւ Ասորեստան: Բ, էջ 172 Առաջին գերութիւն իս- րաէլի՝ ժ ցեղից հրէից ազ- գին՝ որ իսրաէլ կոչէին, որոյ ի Սամարիայ թագաւորու- թիւնն էր. գերեցան ի յերինս Մարաց, հասնալ զօրօք ի Սամարիայ եւ պաշարեալ զնա Սաղմանասար արքա քաղդէացոց: Եւ եկաց թա- գաւորութիւնն ի Սամարիայ ամս ՄԾ: Բ, էջ 174

³ Փոխառությունը մշված է Մ. Ավգերյանի տողատակի ծանոթագրությունով (II, էջ 79, ճճ. № 190):

Տվյալ հատվածները համեմատելի են մաև Դ. Թագ. գրքի ԺԵ գլխի 29 և ԺԸ գլխի 9-10 տների հետ՝ «Յաւորս Փակէի արքայի Իսրայելի. եկն Թագադաթպաղսար արքայ ասորեստանեայց. եւ առ... զամենայն երկրին... եւ խաղացոյց զմոսս յասորեստանեայս»։ «Եւ եղև յամին չորրորդի եզեկիայ արքայի... ել Սաղմամասար արքայ ասորեստանեայց ի վերայ Սամարիա եւ պաշարեաց զմա, եւ առ զմա ի կատարել ամաց երից։ ... եւ խաղացոյց արքայն ասորեստանեայց զՍամարիա յԱսորեստանեայս»։ Աստվածաշնչային տվյալ հատվածը աղբյուր է ծառայել ինչպես Եվսեբիոսի, այնպես էլ Թովմայի համար։ Վերջինս Եվսեբիոսի բնագրում տեղ գտած Թաղսար անվան փոխարեն գործածում է Դ. Թագ. գրքում օգտագործված Թագադաթպաղսար ձևը, Եվսեբիոսի բնագրի «զերեցին»-ի փոխարեն՝ «խաղացուցանելով» ձևը։

Յետ մորա թագաւորէ եղբայր Սենեքերիմայ [եւ յետ տիրելոյ Ակիսեայ բաբելացոց, մինչ չեւ եւս զերեսուն օր կայեալ էր իշխանութիւն փոթյապէս մեռանի ի Մարութաք Բաղդան, իբրեւ [Մարութակ Բաղդան բռնացեալ] ունէր զվեց ամիս, սպանաւ եւ մա ի միոջէ ումեմէ, որում ամուն էր Ներեղիբդ, եւ թագաւորէր, եւ յերրորդ ամի թագաւորութեան մորա Սենեքերիմոս զօր գումարէր ի վերայ մորա...

Էջ 60/72

Աղտադաս, ամս ԼԲ, առ սովաւ Պրոմիթես այր իմաստուն երեւեցաւ⁴։

Էջ 56/68

Յետ թագաւորելոյ եղբօրն Սենեքարիբայ, եւ յետ տիրելոյ Ակիսեայ բաբելացոց, մինչ չեւ եւս զերեսուն օր կայեալ էր զիշխանութիւն սպանաւ ի Մարութակ Բաղդանայ. և Մարութակ Բաղդան բռնացեալ ունէր զվեց ամիս և սպանանէր զմա ոմ՝ որում անուն էր Եղիբուս, եւ թագաւորէր։ Եւ յերրորդում ամի թագաւորութեան մորա Սենեքարիբուս արքայ ասորեստանեայ զօրս գումարէր ի վերայ բաբելացոց...

Ա, էջ 43

Աղտադաս ԺԷ։ Զայսու ժամանակաւ էր ըստ ոմանց Պրոմեթես, յորմէ զմարդիկ կազմեալս յիշատակեն, թէ իմաստուն էր...

Բ, էջ 90

ԼԲ տարեթիվը Եվսեբիոսի կանոնում տեղադրված է կողքի սյունակում և վերաբերվում է սիկոնացվոց Երաստոս թագավորին։ Վրիպակը Թովմայի անուշադրության հետևանք է։

⁴ Փոխառությունը ընկած է Մ. Ավգերեանի տողատակի № 332 ծանոթագրությունում։

Դերկիդոս [ամս խ]:

Էջ 50/69

Նաբուճիդոս ամս ԺԵ: Այլ սա ի վեց ամից լքեալ ի Կիւրոսէ, եւ աստ անկեալ կենօք ջրջէր միմչեւ իսպառ բարձաւ թագաւորութիւնն Ասորեստանեայց եւ Մարաց ի Կիւրոսէ, որ թագաւոր էր Բաբելոնի ամս Թ:

Էջ 62/73-79

Դերկիդոս ամս խ.

Ա, էջ 92. Բ, էջ 142

...Նաբուդենոս՝ ամս ԺԷ: Առ որով Կիւրոս Կամբիսեայ զօրածողով եղեւ ի վերայ երկրին Բաբելացոց: Որում ի դիմի հարաւ Նաբոդենոս եւ մատնեալ ի պարտութիւն՝ փախստական եւ թագաւորէր Բաբելոնի Կիւրոս ամս Թ:

Ա, էջ 45

II

1. «Իսկ ի վերայ բոլսեալ աղբիւրն դարձեալ պարսպէ զքարաբլուրն ի պահպանութիւն ջրոյն ամրագումիւք շինուածովք եւ շէն մարգարիտ ըզքարաբլուրն յօրինէ պարսպաւոր անկասկածելիս անմատչելիս ձեռաց պատերազմեողաց...» (էջ 88): Տվյալ հատվածում իմաստի տեսակետից անհասկանալի է «շէն մարգարիտ» բառակապակցությունը: Ձեռագրում (էջ 130) գրված է «շէն մարմարգարիտ»: Ակնհայտ է, որ խոսքը ոչ թե մարգարիտի, այլ մարմարի մասին է, ինչը համապատասխանում է հատվածի բովանդակությանը: Թերեւս պետք է լինի «մարմարակերտ», կամ էլ «մարմարապատ»:

2. «Իսկ ամիրային թողլով երկուս ոստիկանս ներքինիս բազում հեծելովք ի մեծն վան եւ յուտանն աւան, որոյ անուն ճամաչիւր առաջնոյն Սափի. եւ ինքն երթեալ ի գաւառն Աղբակ՝ դադարէ ի Յադամակերտն աւանի: Եւ առաջէ զայր մի ներքինի, որում անուն էր Յիւսր զօրօք բազմօք, զի երթեալ պատերազմեսցէ ընդ իշխանին: ... Եւ քանզի նոքա ամրացեալ էին ի դժուարս Կակեմից գեաղջ՝ դառնայ ներքինին մեծաւ ամօթով, ոչ ինչ կարացեալ ստնանել նոցա վասն տեղւոյն ամրութեան եւ զօրացրն քաջամարտիկ լինելոյ: ... Իսկ ամիրայն այնուհետեւ անց գնաց յԱտրպատական... մնալով երկրոցունց ներքինեաց յերկոսին աւանն, զոր վերագոյնն ասացաք: Եւ ի գալ զարմանոյն այր մի ներքինի, զոր կարգեալ էր ի վերակացութիւն քաղաքին Պարտաւայ, զօրածողով եղեալ ապստամբի յԱփշնէ» (էջ 426/556-557):

Անանուն Արծրունու պատմածից կարելի է եզրակացնել, որ Ափշինն իր հետ բերել է Հայաստան երեք, կամ էլ, նույնիսկ, չորս ներքինիներ: Դրանցից երկուսին նա թողնում է Վասպուրականում, ընդ որում մեկի անունը Սափի է և նրա նստավայրը վանն է, երկրորդի անունը, որի նստավայրը Ուտանն է, անհայտ է, երրորդ ներքինին, որի անունը Հիւսր է (?), անհաջող մարտեր մղելով Վասպուրականի իշխանի

դեմ՝ պարտության է մատնվում: Վերջապես չորրորդը՝ Պարտավի վերակացուն, ապրտամբում է Ափշինի դեմ:

Ակնհայտ է Ամանուհի դեպքերին անտեղյակ լինելը: Իրադարձությունների ակնառեստես Թովմա Արծրունին խոսում է միայն երկու մեղքի՝ Արծրունի մասին. դրանք հիմնականում «Արծրունի հալածանքները զաշխարհս ծառային ունեմն Սափի անունի ի գերելոց յունաց մեղքի...» (էջ 372). երկրորդ մեղքի՝ Արծրունի մասին Թովման պատմում է հաջորդ՝ 26-րդ գլխում՝ «Թովսեփ անունի ի յունաց ազգականութենէ ի ծառայութիւն հասնալ Արծր. մեղքի... այդ զազանաբարոյ վայրենամիտ. առատաձեռն առ արքունի արեան մարդկանց, այդ զօրաւոր զօրութեամբ ի գործս պատերազմաց. ահարկու ազանց, կարողութիւն եւ ուժեղութիւն Արծր. ի սորա ձեռս բաւականացնալ: Այլ որ փոփոխէ զսիրտս իշխանաց մախախմանօղն Աստուած, քակեալ բաժանեաց ճեղքեաց զԹովսեփ ի յԱրծ. եւ թողեալ զքաղաքն Պարտաւ... զնացեալ ի յաշխարհըն Աստուածանի» (էջ 374):

Թովմայի տեղեկությունը Թովսեփի մասին հաստատվում է նաև դեպքերի ժամանակակից Հովհաննես Դրասխանակերտցու վկայությամբ՝ «Իսկ արքա Սմբատ ի դառնալն իւր ի Տայոց երթալ հանդիպի մեղքիմապետին մեծի մերձ յամուրն Անի յեզր Ախուրեան գետոյ ի պաշման սիրոյ ընդ միմեանս բերեալք: Եւ բազում պարգես եւ պատիւս ընկալեալ ի մեանէ՝ զնայր մեղքիմապետն ի Փայտակարան քաղաք... Իսկ յետ այսորիկ մեղքիմապետին խումապեալ և հատուածեալ ի Ափշինէ... Չունալ զնացեալ մեղքիմայն ի սահմանս Եգիպտոսի՝ եւ անդ ըմբռնեալ սպանանի յամիրապետէն իւրմէ»⁵:

Այս երկրորդ մեղքի՝ Պարտավի ոստիկանի մասին պատմում է նաև Մովսես Կաղանկատվացին⁶. «Ի մոյն ամի զայդ հասանէր տաճիկն երկրորդ անգամ յերկիրն Հայոց, եւ նորին հրամանէ եղանէր մեղքիմին ի դառնէն Պարտաւայ զալ ի Հայս. եւ էր այդն այն ժպիրն եւ անաստուած: Ինչպես Դրասխանակերտցին, այնպես էլ Կաղանկատվացին, առանց անունը մշտնապես հիշատակում են միայն երկրորդ մեղքի՝ Արծրունի, որին Ափշինը Պարտավի վերակացու էր կարգել, և որի գործունեությանը երկում էր թագ ծանոթ էին: Ուրեմն ըստ Թովմայի ստույգ վկայության Ափշինն իր հետ Հայաստան է բերել երկու մեղքիմաներ, որոնց անուններն էին Սափի և Հովսեփ:

Ամանունը վերոբերյալ հատվածում հիշատակում է, բացի Սափիից, նա մի մեղքի՝ «Թիսր անունով: Հ. Մարկվարտը այդ Թիսրին նույնանուն է նշարի հետ, որին, ինչպես նշում է ինքը, հիշատակում է նաև Դրասխանակերտցին» «...Նշար... Արուկն ի բազմաց յորջորէր» (էջ 330)⁷: Նշարը Յուսուփ իբն Արուսաքի ստորուկն էր,

⁵ Թովհաննես Կաղանկատվացի Դրասխանակերտցու. Պատմություն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 186-188:

⁶ Մովսես Կաղանկատվացի. Պատմություն Աղոռամից աշխարհի-քմակամ բնագիրը և մեղադրությունը Վ. Առաքելյանի. Երևան, 1983:

⁷ Հ. Մարկվարտ. Պարսկահայք մահամզը. ՊԲՀ, 1961, № 1, էջ 188, ծմ, 1.

որին նա Ռեյզնայիս թողնում է Հայաստանում որպես ոստիկան: Սակայն Ամանու-
ցի տեղեկությունը ոչ մի կապ չունի Յուսուփի և ճրա ստրուկ Նըսրի հետ, քանի որ
Նըսրի հետ կապված դեպքերը տեղի են ունեցել 922-924 թթ., մինչդեռ Ամանունը
պատմում է 898-901 թթ. իրադարձությունների մասին, կապված Ափշինի հետ:
Թվում է, որ ավելի ճիշտ կլինի Յիսր աղավաղված անունը փոխել Յիսափ, այսինքն
Հովսեփ անվամբ, ինչպես Թովման անվանում է երկրորդ մերքինում:

III

«Իսկ Ներքրովթ որդի Քուշայ որ ի Քամայ՝ յոյժ ուժգնագոյն ոչ միայն քան զա-
ռաջիմս ուրուականաց լինել, այլ եւ ոչ Հերակլի որ յետուստ...» (Էջ 36/42): Սույն
հատվածից երևում է, որ Թովման, համեմատելով Ներքրովթին սկզբից ուրվական-
ների, իսկ հետո Հերակլեսի հետ, «ուրուականաց» ասելով հասկանում էր ինչ-որ Հե-
րակլեսի հետ համեմատելի, դեռևս կենդանության օրոք փառաբանված հերոսների՝
մարդկանց (և ոչ ճրանց հոգիները), որոնք օժտված էին բացառիկ ֆիզիկական ու-
ժով: Փոքր ինչ հետո Թովման կրկին հիշատակում է ուրվականներին՝ «Քանգի ա-
ռաշնոցն ուրուականք եւ ստուերականք ոմանք...», սակայն կողքին դրված է մշա-
նակությամբ շատ մոտիկ, համանիշ «ստուերականք» բառը:

Եվսերիոս Կեսարացին իր Քրոմիկոմի եգիպտոսի պատմությանը նվիրված է-
ջերում նույնպես հիշատակում է ուրվականներին՝ «...եւ եգիպտացիք դից իմն եւ այ-
լոց ոմանց դիցազանց, եւ առ այնու ուրուականաց եւ մահկանացուաց այլոց թագա-
ւորաց բազում ինչ զառանցելոց առասպելս տողեն» (Ա, 6): «Եւ ապա ուրուականաց
եւ դիցազանց Թագաւորութիւնն ամս ի ՊժԳ» (Ա, 200): «Դից իմն լինել զինքեան եւ
դիցազանց եւ ուրուականաց...» (Ա, 201)⁸: «...դիցազանց եւ ուրուականաց...»
արտահայտությունը Մ. Ավգերեանը լատիներեն է թարգմանում՝ «post manes et
semideos», որտեղ manes-ը մշանակում է՝ «մեռածների հոգիներ», «համգուցյալների
ստվերներ», «աստվածային հոգիներ», իսկ semideos-ը՝ կիսաաստվածներ:

Ակնհայտ է, որ Թովման նկատի ուներ ոչ թե առասպելական եգիպտական թա-
գավորական հարստությունները, այլ աստվածաշնչային գրքերում հիշատակված
ինչ-որ անձնավորությունների, քանի որ քննության առարկա հատվածի բովանդա-
կությունը անկասկած կապված է աստվածաշնչային իրադարձությունների, հերոս-
ների հետ, որոնք ապրել էին Ներքրովթից շատ ավելի վաղ ժամանակներում: Եվ ի-
րոք Աստվածաշնչում բազմիցս հիշատակվում են հսկաներ, որոնք ապրել են դեռևս
ջրհեղեղից առաջ և աչքի էին ընկնում իրենց արտակարգ ֆիզիկական ուժով (օր.
Մճճդ. Զ: Թիւ. ԺԳ 33-34, Բար. Գ 24-28: Ա. Մճաք. Ի 4, 6, 8, Բ. Թագ. ԻԱ 16-22):

⁸ Տե՛ս Ոսե՛ն՝ Ա. էջ 202-203:

Աստվածաշնչի հայերեն թարգմանությունում մախաբրեղեղյան մարդկությունը անվանվում է «սկայք»:

Նույն այդ բառով՝ «ископаны» (սկայք) այն կոչվում է նաև Աստվածաշնչի ռուսերեն թարգմանությունում: Մինչդեռ Թովման օգտագործում է այդ պարագայում երկու տերմին՝ «ուրուականք» և «ստուերականք»: Դրա բացատրությունը, թերևս, պետք է փնտրել Աստվածաշնչի հին հրեական բնագրում, որտեղ մախաբրեղեղյան մարդկության վերաբերյալ ևս օգտագործված են երկու տերմիններ՝ nephilim և ghibborim. Nephilim-ներ էին կոչվում մախաբրեղեղային մարդկության այն սեռունդները, որոնք բնակեցնում էին երկիրը մինչև այն ժամանակները, երբ Սեթի հետնորդները («որդիք Աստծոյ») սկսեցին ամուսնական կապեր հաստատել Կայնի դստերի («դուստերք մարդկան») հետ. այս խառը ամուսնությունների պտուղները հին հրեական բնագրում կոչվում են ghibborim-ներ, որոնք ֆիզիկական հատկանիշներով զգալիորեն գերազանցում էին իրենց մախաթիպեր nephelim-ներին⁹:

Աստվածաշնչի հայերեն բնագրում գրված է՝ «Եւ Քուշ ծնաւ զՆեբրովթ. նա սկսաւ լինել սկայ ի վերայ երկրի» (Մճդ. Ժ 8), սակայն հին հրեական բնագրում «սկայ» բառի փոխարեն օգտագործված է ghibborim տերմինը: Կասկածից վեր է, որ Թովման, համեմատելով Նեբրովթից ուրվականների հետ, մկատի ունեւ հենց հրեական բնագրի ghibborim-ներին: Ճշելով այնուհետև, որ «...առաջնոցն ուրուականք և ստուերականք ունանք՝ ըստ իւրաքանչիւր կարծեաց թուելոց վրիպեցան յաստուածածամօթն գիտութենէ հոգեշահ մահապետաց» (էջ 40/45), նա մկատի ունեւ Բարուքի ասածը, «Ով իսրայել՝ որպէս զի մեծ է տունն Աստուծոյ, եւ ընդարձակ է տեղի ստացուածոց մորա. մեծ է՝ եւ ոչ գոյ բաւ, քարծր եւ անշափ: Անդ ծնան սկայք անուանիք՝ ի սկզբանէ եղեալք մեծամեծք, հմուտք պատերազմաց. ոչ եթէ զմոսա ընտրեաց Աստուած, եւ ոչ զճանապարհ իմաստութեան ետ մոցա. եւ կորեան առ ի չգոյէ իմաստութեան, եւ սատակեցան վասն անմտութեան իրեանց» (Գ 24-28): Հենց այս հսկաների վրա է քերել Աստված ջրհեղեղը (տե՛ս՝ Մճճդ. Զ 4-7, Գ. Մակ. Բ 4, Իսնաս. ԺԴ 6, Սիր. ԺԶ 8): Գիրք Թուոցի բնագրում (ԺԳ 33) nephilim տերմինով ճշանակված է նաև Պաղեստինի մախաթիսրայեղական բնակչությունը: «Այն կոչվում էր նաև ghibborim»¹⁰: Գոյություն ունի Պաղեստինի մախաթիսրայեղական բնակչության ևս մեկ անվանում՝ ուսիայիմ, որը ծանոթ էր Մովսես խորենացուն. «Այլ զՏիտանս եւ Ռափայիմսն յիշեն աստուածային Գիրք»¹¹:

Հսկաների մասին այս առասպելական տեղեկությունների հիմքում ընկած են ինչ-որ իրական տվյալներ, որոնց արմատները թաքցնված են դարերի խորքում: «Գիրքորինների ու մեփելիմների հիշատակումը Աստվածաշնչում արդյունք է հնամենի ժողովրդական ավանդության հետագա զարգացման, ըստ որի Պաղեստինում

⁹ Толковая Библия, или комментарий на все книги Ветхого Завета. Петербург, 1904-1097. I, էջ 46, ծ. 4:

¹⁰ Толковая Библия I, էջ 46, ծ. 4:

¹¹ Մովսես խորենացույ Պատմութիւն Հայոց. Ցփղիս, 1913, Ա, 6, էջ 25:

հնագույն ժամանակներում ապրել են հսկաներ: Հետագայում նեփելիմ և գիբբորիմ բառերը ստուգաբանորեն սերտորեն կապվում են մեռած մարդկանց հոգիների կամ նրանց ստվերների տարբեր ամվանումների հետ»¹²:

Երրորդ հատվածում, որտեղ Թովման հիշատակում է «ստուերականքներից», այն է՝ «Ոչ կարծողական իմ ըստ առաջնոց Աէլայ ասացելում, կամ այլոց ստուերականացն երեւեցելոց երազականաց եւ խաբեբա դիւաց, այլ ձեռագործ մեռելական իսկ եցոյց ի պաշտօն...» (էջ 40/46), ասես, արտացոլվել է ստուերականք և ուրուականք տերմինների ստուգաբանական փոխակերպությունը, որը կատարվում էր զուգահեռաբար նեփելիմ ու գիբբորիմ հասկացությունների փոխակերպումով: Վերջիցներս արդեն նշանակում էին ոչ թե իրենց առասպելականությամբ հանդերձ կարծես իրական հսկաներից, այլ մեռած մարդկանց երևակայական, տեսլային հոգիներ: Հենց այս վերջին իմաստով օգտագործված է ուրուական տերմինը Ագաթանգեղոսի Պատմությունում (և բացի Թովմայից միայն նրա մոտ)¹³:

Վերոհիշյալ երեք հատվածներն էլ Աստվածաշնչի հաղորդածի շրջանակներից դուրս չեն գալիս: Այն հանգամանքը, որ բացառությամբ Թովմայի «ուրուականք» տերմինին հանդիպում ենք միայն Եվսեբիոսի Քրոնիկոնի հին հայերեն թարգմանությունում, ինչպես նաև Ագաթանգեղոսի Պատմությունում (իբր արդեն ստուգաբանորեն փոփոխված իմաստով), այսինքն V դ. առաջին կեսին պատկանող հուշարձաններում, ընդ որում, ինչպես վերը նշվեց, Թովմայի պատմածը մնում է լոկ Աստվածաշնչի շրջանակներում, կարելի է ենթադրել, որ նրանք ունեցել են մի ընդհանուր աղբյուր, այն է, Աստվածաշնչի առաջին թարգմանությունը ասորերենից հայերեն, կատարված Սահակ Պարթևի կողմից 405-409 թթ.:

Այդ թարգմանությունը օգտագործվում էր եկեղեցական շրջաններում մինչև 432 թ.¹⁴: Թվում է, թե հենց ինքը՝ Սահակ Պարթևը, Աստվածաշնչի իր առաջին թարգմանությունը կատարելիս, կարողացել է գտնել երկու տերմիններ՝ «ստուերականք» և «ուրուականք», որոնք շատ հաջող արտացոլել են մախաջրեփեղային հսկաների երկու սերունդների՝ nephelim-ների ու gibborim-ների միջև եղած նուրբ իմաստային տարբերությունը, ինչպես նաև ավանդականորեն նրանց հաղորդած միստիկական, տեսլային երանգը, առաջացած ժամանակի ընթացքում տերմինների ստուգաբանական փոփոխության հետևանքով, ինչը վկայում է նրա թարգմանական արվեստի բարձրագույն մակարդակի մասին:

Թերևս 432 թ. հետո, երբ Հայաստան է բերվել Աստվածաշնչի հունարեն բնագիրը (Եթթանանից) և նրա հիման վրա փաստորեն կատարվել Աստվածաշնչի, հատկապես Հին Կտակարանի, նոր թարգմանությունը՝ ուրուականք և ստուերականք

¹² Еврейская энциклопедия. VI, էջ 474:

¹³ Ագաթանգեղոս. Պատմություն Հայոց. Թիֆլիս, 1914, էջ 80:

¹⁴ Եվսեբիոսի Քրոնիկոնը թարգմանված էր 403 թ., իսկ Ագաթանգեղոսի Պատմության մախնական խմբագրությունը կատարվել է 420-430 թթ. (Տե՛ս Ս. Ս. Аревшатяна. Формирование философской науки в древней Армении (V-VI вв.), 1973 թ. էջ 34-44):

տերմինները, որ համազոր էին *gibborim* և *nephelim* տերմիններին, փոխարինվել են հունարեն բնագրի «սկայք» (*nîyos*) բառով: «Սկայք»-ը հավասարապես վերաբերվում է և *nephelim* և *gibborim* տերմիններին ու բնավ չի արտացոլում դրանց միջև եղած այն տարբերությունը, որը նշված է Աստվածաշնչի հրեական բնագրում և թերևս, հին ասորական թարգմանությունում: Մեր ասածը լույս ենթադրություն է, որը կարոտ է ավելի ծանրակշիռ ձեռագրական տվյալների վրա հիմնված հետազա ուսումնասիրության:

IV

«Եւ երկայնագոյնս զպատաղմունսն ի ճանապարհից արարեալ՝ ձգից մինչ յԱրզն Աղձնեաց եւ անդ մարգարէն Եզր եւ թագաւորն Սաղաթիէլ վախճանեալ թաղի ի Մարբակատիմա ի բլրակի մի տեղւոջ. եւ տուեալ պատերազմ զաւուրս ոչ սակաւս...» (Էջ 66/104): Սույն հատվածում, որի միջին մասը՝ «եւ անդ մարգարէն Եզր... ի բլրակի մի տեղւոջ», կրում է միջանկյալ բնույթ և անմիջական կապ չունի Թովմայի պատմածի հետ, հատուկ ուշադրության է արժանի Մարբակատին անվանումը: Նախ մեզ համար ինչպիսի՞ օգտակար տեղեկություններ հնարավոր է քաղել այս միջանկյալ հատվածից: Աստվածաշնչում Եզր մարգարէի և Ջորոբաբելի հոր՝ Սաղաթիելի անունները ոչ մի ձևով իրար հետ չեն կապվում, սակայն Հին Կտակարանի հայերեն անկանոն «Գիրք Եզրի երրորդ»-ում հանդիպում ենք հետաքրքիր տեղեկության՝ «Ես Սաղաթիէլ՝ որ Եզր կոչեցեալ»¹⁵, ինչը մտածել է տալիս, որ թերևս Թովմայի վերոբերյալ տեղեկության աղբյուրը ինչ-որ պարականոն գրվածք է: Ըստ Հովսեփոս Փլավիոսի, Եզրը մեռել և թաղվել է Երուսաղեմում¹⁶:

Եզր մարգարեի և Սաղաթիել թագավորի միջև եղած կապի հարցը հետաքրքիրում է մեզ այնքանով, որքանով հնարավորություն է տալիս որոշել Թովմայի տեղեկության աղբյուրի մոտավոր շրջանակն ու բնույթը: Երկրորդ կարևոր փաստն այն է, որ Մարբակատինը գտնվում է Արզն քաղաքից ոչ հեռու բլրաշատ վայրում: Այս երկու հանգամանքները մտածել են տալիս, որ Մարբակատին բառը՝ Մարտիրոսուպոլիս քաղաքի բազմաթիվ անվանաձևերից մեկի աղավաղումն է: Հայկական ձևը՝ Նփրկերտ (*neferkert*), համապատասխանում է ասորական *mefrkt*-ին, *mprkat*-ին, որոնցից առաջացել են՝ *meferkat*, *miperkat* արաբերեն *muyafarkin*-ին համազոր են *musarkin* և ասորերեն *mefarkin* ձևերը, ընդ որում «վերջին վանկը՝ կերտ, կատ իրանական բառ է, որ նշանակում է քաղաք»¹⁷:

¹⁵ Թագարամ Հիմ և Նոր Ուխտեաց. Ա. Ամկանոն գիրք: Վեմստիկ, 1896, էջ 251:

¹⁶ Иосиф Флавий. Иудейские древности, I, с. 454, Москва, 1996.

¹⁷ Նիկողայոս Աղոնց. Հայաստանը Հուստինիանոսի դարաբեքում: Երևան, 1987, էջ 16-17: «Հասունի եր. Ամիր (Տիգրանակերտ), Տիգրանակերտ (Փարկին): Օսիրթը հայ պատմագրության մեջ: Պեյրոյր, 1966, էջ 10:

Նփրկերտը նույնացվում է Մեծ Հայքի մայրաքաղաք Տիգրանակերտի հետ, որը կառուցվել է 77 թ. մ.թ.ա. Տիգրան Մեծի կողմից Տավրոսյան լեռնաշղթայի հարավային լանջին, ոչ հեռու Աքեմենյան «մեծ արքայական ճամապարհից»։ Այս տեղանքը հայտնի էր հնագույն ժամանակներից՝ խեթական և, ավելի ուշ, ուրարտական թագավորները, որպեսզի հյուսիսից մտնեին Աղձնիք (Արմե-Օուարիա), պետք է անցնեին Կղեսուրք լեռնանցքով, որից հետո անխուսափելիորեն հայտնվում էին Բաթման գետի դաշտավայրում (որտեղ ավելի ուշ կառուցվել է Տիգրանակերտը, միջնադարյան Մարտիրոսուպոլիսը)։ Նույն ձևով էլ ասորական թագավորների պարսկական մայրաքաղաք Օռնից Լիդեայի մայրաքաղաք Սարդես տանող երթուղիները անցնում էին Հայաստանի տարածքով (մոտավորապես 300-350 կմ), ընդ որում Հայաստանի և Միջագետքի սահմաններում ասորեստանյան թագավորների ճամապարհը համընկնում էր Դարեհ I «արքայական ճամապարհի» արևելյան հատվածի հետ։ Ասորեստանցիներին այդ լավ ծանոթ ճամապարհը պահպանվել է և ավելի ուշ ժամանակներում, Սասանյան թագավորների (IV դ.) օրոք¹⁸։

Այս ճամապարհով անցնող գործերը, անկախ հրանից, թե որ կողմից էին հրանք շարժվում՝ նախքան Կղեսուրք լեռնանցք մտնելը, կամ էլ դուրս գալը, հայտնվում էին Բաթման գետի լայնածավալ ցածրավայրում, որը կարող էր ծառայել բազմաթիվ գործի համար որպես ճամբարային կայան։ Այստեղ հաճախակի ծավալվում էին խոշոր ճակատամարտեր։ Այդպիսի մի ճակատամարտի կենտրոնում հայտնվեց Տիգրանակերտը մ.թ. առաջ 69 թ. Լուկուլլոսի արշավանքի ժամանակ, իսկ պարսից թագավոր Օպայուհ II-ի արշավանքի հետևանքով (364-367 թթ.) վեր է ածվել ավերակների։ Միայն Մեծ Հայքի 378 թ. բաժանումից հետո քաղաքը վերականգնվել է Մարտիրոսուպոլիս կամ Նփրկերտ անվան տակ։

Թովմայի պատմածի դեպքում էլ՝ Կյուրոս թագավորի գործը հայ գորավարներ Բսեռքսեսի ու Արշեզի հրամանատարության ներքո Պարսկահայքից գալիս-հասնում են միջև Արզն, որը տեղադրված էր Նփրկերտի վերաբերությամբ Բաթման գետի հակադիր կողմում, որտեղ և տեղի է ունենում երկարատև ճակատամարտը։ «Եւ անդ,- ի միջի այլոց ավելացնում է Թովման,- մարգարէն եզր եւ թագաւորն Սաղաթիւլ վախճանեալ թաղի ի Մարբակատիմա ի բլրակի մի տեղոջ...»։ Եթե հիշենք նաև, որ, ըստ ավանդության, Մարտիս եպիսկոպոսը, կառուցելով Մարտիրոսուպոլիս քաղաքը, ժողովել ու թաղել է այնտեղ սրբերի բազմաթիվ մասունքներ, ապա տվյալ կոնտեքստում թուր վերոգրյալ հանգամանքները որոշակի հիմքեր են տալիս ենթադրելու, որ Մարբակատիմա անվանումը՝ Մարկատ, Միպերկատ, Մայֆերկատ ձևերից մեկի աղավաղումն է։

¹⁸ Гр. Копыцкая. Хайвса-хольбель армян. «Историко-лингвистические работы», т. 1, էջ 158-159, 195, Ереван, 1956.

Դրասխանակերտցու պատմելով 915 թ. ամռանը Աշոտ II թագավորի Բյուզանդիայից վերադառնալու մասին, նաև հաղորդում է՝ «եկն եւ մեծ Հայկազունն Վասակ եղբայր մանկագրաւ իշխանին Գրիգորոյ»²⁶: Վերջինին 912 թ. Յուսուփ իբն Սաջիդի հրամանով, թունավորելով, սպանել են: Իհարկե Գրիգոր Սուփանը 896 թ. կարող էր ունենալ երիտասարդ որդի²⁷ և մնալ անգավակ նրա մահվանից հետո, սակայն Դրասխանակերտցու տվյալ վկայության լույսի տակ հատուկ նշանակություն է ստանում այն, որ Թովման, հաղորդելով Աշոտի մահվան մասին, փոխանակ պարզապես գրի՝ «անկեալ էր Աշոտ՝ որդի Սուփանայ», գրում է՝ «անկեալ էր... Աշոտ... որ Սուփանայ որդի ճանաչէր...»:

Սույն արտահայտությունը մտածել է տալիս, որ Աշոտը անգավակ Գրիգոր Սուփանի հոգեորդին էր: Բագրատունյաց Հայաստանում թագավորական կամ էլ իշխանական զահի ամփիջական (ավագ որդու) ժառանգորդի բացակայության դեպքում զահը կարող էր անցնել մեկ այլ՝ կանացի գծով մերկայացուցչի ձեռքը²⁸: Տվյալ դեպքում իրավիճակը, ըստ երևույթին, հենց այդպիսին էր, որովհետև, ինչպես գրում է Թովման՝ «... տիկինն սպարապետականի Տարունոյ եկեալ եւ նշանացի զդի նորա գտեալ՝ տարաւ ի Պորայ յիւր աւան եւ եղ ի գերեզմանի»:

Ակնհայտ է, որ այդ տիկինը Աշոտի մայրն էր և որ նա Գրիգոր Սուփանի կինը չէր: Դուկաս Ինճիճյանը «տիկին սպարապետական» բառերի կողքին փակագծերում ավելացնում է՝ «այսինքն Մամիկոնյան»²⁹: Հայտնի է, որ Սահակ կաթողիկոս Պարթևի մահից հետո Մամիկոնյան տոհմը, ըստ նրա կտակի, ստացել է Տարոնի կաթողիկոսական տիրությունը: Տարոնի արևմտյան ծայրամասում Հաշտեանք գավառի սահմանին կից մի փոքրիկ շերտ կազմում էր Պալունյաց գավառը, որտեղ և գտնվում էր Պորայ (Պորպես, այժմյան Բորբասը) ավանը³⁰: Այսպիսով, անանում տիկինը, ինչպես նշում է Ղ. Ինճիճյանը, իրոք Մամիկոնյան տիկինն էր և, ելնելով Դրասխանակերտցու ցուցմունքից, թերևս Աշոտ I արքայի, մեզ անհայտ, հիմքերորո՞ղդ դուստրն էր, որը ամուսնացած էր Մամիկոնյան ինչ-որ իշխաններից մեկի հետ:

²⁶ Պատմություն Հայոց, էջ 294:

²⁷ Հ. Մ. Ութմազյանը Աշոտին համարում է Գրիգորի որդի (Այումիքը IX-X դարերում. Եր., 1957, էջ 313):

²⁸ См. К. Н. Юзбашев. Армянские государства эпохи Багратидов и Византии IX-XI вв., Москва 1988, с. 73-74.

²⁹ Ինճիճյան Գ. Ստորագրություն Հիմ Հայաստանայց: Վեճեսիկ, 1882, էջ 108:

³⁰ Ն. Աղոմց. Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 28:

VI

Անճառն Արծրունու Պատմության ժԲ գլխում, որտեղ նա խոսում է «...կերպագրության անձին եւ փառաց մեծի արքային Հայոց Գագկայ» մասին, հանդիպում ենք հետևյալ հետաքրքիր հատվածին. «Ուստի եւ յոյժ սիրելի էր ինձ յայնժամն անկի առնուլ ի հնդկայինն աշխարհէ եւ ի Տպագ քաղաքէ, մանաւանդ թէ ի քարկոփչացն, եւ լկէրաստարացոց, եւ Թէրէացոց վաճառոց զոսկետեսակն տպագիովն, եւ շարամանել ի թագի մորա...» (էջ 470/614): Սույն հոնտորական հատվածի հիմքում ընկած է ավելի քան տասնյակ ձեռագրերում պահպանված Ե-պիփան կիպրացու «Վասն ժԲ քարանց» գործի գրաբարյան թարգմանությունը: Ստորև բերում ենք Մատենադարանի № 266 ձեռագրից (1468 թ., էջ 91ա) համապատասխան հատվածը:

«Տպագիոնն կարմրագոյն է, նման եղական կայծի. բայց գտանի ի Տպագէ քաղաք հնդկաց, զոր երբեմն քարկոպղն գտին ի մէջ քարին, եւ տեսիլ պայծառ եւ զուարճացեալ վաճառեցին աղեբաստարացոցն դոյզն գնոյ, իսկ աղեբաստարացիք՝ Թէրէացոցն յաւելագոյն գնոց. եւ մոջա մատուցին Թագուհոյն որ էր յայնմն ժամանակին, իսկ մորա առեալ ի թագին իւրում ի մէջ ճակատոյն կապեաց»³¹: Հին հնդկ-նակները տարբեր ձևերով էին բնորոշում Տպագ քաղաքի տեղադրությունը: Դրանց մի մասը, այդ թվում նաև Եպիփանը, այն համարում էին հնդկական քաղաք. ոմանք ենթադրում էին, որ Տպագ քաղաքը գտնվում է Արաքսայում. սակայն ավելի հավանական է այն տեսակետը, համաձայն որի Տոպագոսը՝ Կարմիր ծովում գտնվող կղզիներից մեկն է և իր անվամբ կոչվում է նաև թանկարժեք քար, որի հարուստ հանքերն այնտեղ են հայտնաբերվել: «...Տոպագոսը,- գրում է Պլինիոս Մեծը, կղզու անուն է, որը գտնվում է Կարմիր ծովում, մայրցամաքից 35 մղոն հեռավորության վրա...»³²:

Տոպագոս կղզին իր անվանումը պահպանել է մինչև XX դարի սկիզբը: Այժմ այն կոչվում է Զեբերջեղ³³, և այնտեղ մինչև հիմա շահագործվում են տպագիոնի կամ, ավելի ճիշտ՝ խրիզոլիտի հարուստ հանքերը, որովհետև Պլինիոսը, խոսելով տպագիոնի մասին, նկատի ուներ, այսպես կոչված, «արևելյան տպագիոնը», այսինքն՝ խրիզոլիտը³⁴: Ըստ երևույթին, Անճառն Արծրունցին, խոսելով «ոսկետեսակն տպագիովն»-ի մասին, նույնպես նկատի ուներ խրիզոլիտը: Ի դեպ, Տոպագոս կղզու արաբերեն Զեբերջեղ անվանումը նույնպես նշանակում է «խրիզոլիտ»:

³¹ Հունարեն բնագիրը զուգահեռ լատիներեն թարգմանությամբ տե՛ս J. P. Migne, *Patrologia graeca*. Brepolis-Turnholt (Belgium), t. 43, էջ 325:

³² Pliny, *Natural History*. London, t. X, 1962, էջ 251.

³³ Տե՛ս Н. И. Корняков, Ю. П. Солодова, *Ювелирные камни*. Москва, 1986, с. 143. Զեբերջեղ կղզին հայտնի է նաև Ս. Հովհաննի անվամբ. *Natural History*, X, էջ 251, ձգ. լյ:

³⁴ Տե՛ս Natural History, X, էջ 250. Патканов К. П. Драгоценные камни, их названия и свойства по понятиям армян в XVII в., СПб., 1873, էջ 74:

Խնդրոտ առարկա Քատվածի երկրորդ տեղումը, որ կարոտ է լուսաբանման, «աղեքասարացիք» տեղումն է, որը Թովմա Արծրունու Պատմության աշխարհաբար թարգմանությունում թարգմանված է որպես «մարմարագործներ»³⁵: Ռ. Թոմսոնը իր անգլերեն թարգմանությունում պահպանել է առանց թարգմանության «Alebasarsaksis» ձևը. Գշելով միայն ծանոթագրությունում, որ «Վ. Վարդանյանը այս տարօրինակ տեղումը թարգմանում է որպես «մարմարագործ»³⁶: Կրկին վերադառնալով Պլինիոսին, որը, շարունակելով իր խոսքը տպագիրման մասին, գրում է՝ «Աղբյուրների մեծ մասը պնդում է, թե այդ թանկարժեք քարը տեղավորված է նաև փոքրիկ Ալաբաստրում քաղաքում, որը գտնվում է Թեբայիցում...»³⁷: Եվ իրոք, Ալաբաստրում քաղաքը գտնվում էր Ռյուսիսային Եգիպտոսում. քաղաքի մոտակայքում Աղեքաստրյան լեռներում առկա էին գիպսի այն տեսակի հարուստ հանքերը, որը քաղաքի անվանը ևս կոչվում է «աղեքաստր»։ Հետևաբար «աղեքասարացիներ»-ի տակ պետք է հասկանալ Ալաբաստրա-Աղաբաստրա քաղաքի բնակիչներին։

Այսպիսով, յուրովի մշակելով Եպիփանի 12 թանկարժեք քարերի մասին գործում պարունակվող տեղեկությունները, Անանուն Արծրունին ստեղծել է իր գեղեցիկ հոեևորական հատվածը՝ ևս յուրօրինակ մի թանկարժեք քար, որը զարդարել է իր՝ Գագիկ Արծրունի թագավորին նվիրված ներքողը։



³⁵ Պատմություն Արծրունյաց տան, էջ 471:

³⁶ Thoma Artseruni. History of House of the Artseruniks. Translation and Commentary by Robert W. Thomson. Detroit, 1985, էջ 366, ծձ. 2.

³⁷ Natural History, էջ 250:

ՌՈՒԲԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՂԱՎՆՈՒ ՔԱՐԱՅՐԸ

Նշանակալի պատմա-մշակութային կառույցների բացակայության պատճառաբանությամբ ցայսօր անտեսված է Տավուշի մարզի Լուսաձոր գյուղի հնավայրը: Նախկինի պես Իջևանի տարածքի Ռուշարձանների ցուցակում հիշատակվում են միայն գյուղամիջի հին գերեզմանոցը, գյուղից մեկ կիլոմետր արևմուտք գտնվող գյուղատեղը, գերեզմանոցը և խաչքարերը: Ի տարբերություն այդ ցուցակի հաղորդման, ՀԱՀ հանրագիտարանում նաև ասվում է, որ Լուսաձորի մերձակայքում կան քարայրներ, որոնցում լեզգիների հարձակումների ժամանակ (XVIII դ.) ապաստանել են շրջակա գյուղերի բնակիչները: Իսկապես մերձակայքում եղել են ոչ թե մեկ, այլ մի քանի գյուղեր, որոնց հետքերը կան Լուսաձորի հանդամասերում: Վերջիններին ուսումնասիրությունը թողնելով ապագային, հարկ եմք համարում ներկայացնել հնավայրի քարայրները:

Նախ տեղադրության մասին: Լուսաձորը գտնվում է Աղստևի ձախափնյակում, Գուգարաց լեռնահամակարգի կենտրոնից դեպի հյուսիս-արևելք ձգվող Մթնասարի ամտառապատ լեռնաշղթայի արևելյան մեղմաթեք լանջին, պատմական կայան գտնված: Լեռնաշղթայի միջնամասում բարձրացող Կարմրաքար (ճախկինում՝ Ղզըկայա) գագաթի արևելյան լանջերից սկիզբ առնող Մթնաձոր գետակը ճախ հոսելով արևելք, ձախից իր մեջ է առնում Կլոր ուրթի ջրերը և մտնում մի խոր ու մութ ձորի մեջ, այստեղից էլ անուընդ, ապա արևմուտքից հարավ աղելվում երկնագնա հզոր ժայռի ստորոտին, ուղղվում դեպի արևելք և գյուղի հարավ-արևմուտյան եզրից անցնելով, միանում մայր գետին՝ Աղստևին: Ահա այդ բարձրագույն ժայռի կրծքին և գետի ափերն իրենց վրա կրող հզոր քարափների մեջ բացված բնական այրերը դարեր առաջ հարմարեցվել են որպես ապաստարաններ: Մի քանիսը ճախատեսված են եղել մեկ ընտանիքի, մյուսները՝ մի քանի տասնյակ, իսկ ամենամեծը՝ մի քանի հարյուր մարդու համար:

Մեկ ընտանիքի (կամ փոքրաթիվ մարդկանց) համար ճախատեսվածները եղել են «երկհարկանի առանձնատներ»: Գետափերի խոռոչները հատիչով ընդարձակվել ու հարմարեցվել են բնակության համար: Երկրորդ հարկի հատակ (առաջին հարկի առաստաղ) են ծառայել փայտե հեծանքներից զգված ծառի ճյուղերից գործված լաստերը, որոնց վրա փռվել են չոր խոտ, խաշած կամ ծղոտ, ապա ծածկվել խփրներով ու մորթիներով: Դեպի երկրորդ հարկ ելումուտն իրականացվել է սանդուղքով, իսկ անտառում փայտի պակաս չի զգացվել: Խոր ձորի հատակին մոտ գտնվողներից առանձնահամար է Ղազարի քարայրը, ուր կարող են իրար կողքի պահել 40-50 մարդ: Հավանաբար մուտքի եզրին վառվելիս է եղել խարուկը, որը

տաքացրել է քարայրը և ուտելիք պատրաստելու հնարավորություն ընձեռել: Հին դարերի մուրը դեռ մտած է առաստաղին: Այս մատչելի շինությունները մտածել են տալիս, որ դրանք հակառակորդի մոտենալու ահագանգով գյուղերից հեռացած մարդկանց ծառայել է որպես միջանկյալ ապաստարան, որպես պաշտպանական համակարգի առաջին գիծ:

Անտառ քաշվելուց հետո, եթե գյուղերի զինյալները կարողացել են դիմագրավել ասպատակին ու հալածել, կամ ասպատակիչները չեն հետապնդել խաղաղ բնակչությանը և բավարարվել են գյուղերի թալանով ու հեռացել, ապա ժայռերի ստորոտների քարայրներում ապաստանածները շուտով վերադարձել են տուն: Գերի վերցնելու նպատակով երբ սկսվել է խաղաղ բնակչության հետապնդումը, իսկ գերիները փրկագնելիս կամ հեռավոր շուկաներում վաճառելիս հնչում ունի արժեքի, ապա փախստականները դիմել են պաշտպանական համակարգի երկրորդ և գրեթե անտիկ գծին՝ Աղավնու քարայրին, որը տեղական խոսվածքում կոչվում է «Եղունցիկի էր», այսինքն՝ աղավնու այր, որովհետև այստեղ թառելիս են եղել անթիվ վայրի աղավցիներ՝ եղունցիկներ:

Գետակի վերմ ասված աղեղի մեջ մի հզոր քարե զանգված է վեր ելնում: Ձորի հատակից բարձրացող ծառերով ու թփերով պատված ժայռի գագաթի, հաճախ գրեթե ուղղահայաց պատն ավարտվում է մոտավորապես 250 մետր բարձրության վրա և գագաթից կորությամբ շարունակվում հյուսիս ու միանում Մթնասարի լեռնաշղթայի բազուկներից մեկին, որը ճառագայթվում է Պայտաթափ գագաթից:

Ահա այդ ուղղահայաց պատի գրեթե մեջտեղում է գտնվում Աղավնու քարայրը, որն անտեսանելի է դրսից, որովհետև նրա նկատելի մասը՝ արևելյան ձեռքերից մեկին դրված մուտքի պատը, շարված է ժայռից հանված նույն կարմրագույն քարերից և միանգամայն ձուլված է նրա հետ: Դրա շեմից բացվում է Աղատևի ձորի համայնապատկերը, որի շնորհիվ ինքնապաշտպանության դիմաձեռքերը լավ հնարավորություն են ունեցել հետևելու մոտեցող թշնամու շարժումներին: Իսկ այդ չեչաքարի մեջ բացված մեղմաթեք հատակով մի բնական խորշ է, որը 35 մետր երկարությամբ աղեղվում է արևելք-հարավ ուղղությամբ: Բարձրությունը 4-6, լայնությունը 6-8 մետր է:

Հարանձավն ունեցել է երկու բնական մուտք: Հարավայինը լինելով ձորի անդունդի վրա, որպես պատուհան և ձորափովի հարավ-արևմտյան լանջերի հարմար դիտակետ, մնացել է ցախաստեղծ վիճակով, առջևում ունենալով բոլորշի մի հրապարակ, ուր բաց երկնքի տակ կարող է մտնել 15-20 մարդ: Իսկ արևելյան մուտքը, որն ունի 230 x 600 սմ բացվածք, փակվել է 2 մետր հաստությամբ պատով: Ըստ ավանդագրության, շաղախն արվել է այստեղ քշված ոչխարների հոտի կաթով, ուստի կրաշաղախով կերտված պատից անհնար է թեկուզ մեկ տաշեղ պոկել: Ծինվածքի ներքևի աջ անկյունում կառուցող վարպետը թողել է դռան բացվածք, որի քարավորը պահել են չոր միջավայրում պողպատի նման կարծրացած 8 գիհի կտրակոճերը, որոնցից երրորդի վրա դիտվում է փայտե դռան ծխնու կտր խոռոչը:

վերջինս ամփրամեջտության դեպքում Երեսից հուսալիորեն փակվել է փայտե սող-նակներով, որոնց ծայրերը մտնելիս են եղել պատի մեջ:

Դուռը փակելուց հետո պաշարվածները շարունակել են Աղստևի հովտում և մոտակա ձորի մատույցներում կատարվող շարժումներին հետևել քարափի մուտքի վերնամասում թողնված անցքերից, որոնցով ցերեկային լույսը թափանցել է Երես և հեռացվել ներսում վառվող խարույկների ծուխը, որի մուրը առատորեն մնում է պատերին: Ավանդազրույցը նաև հայտնում է, որ XIX դարում հմուտ հովիվները վառ եղանակներին իրենց հոտերը բերելիս են եղել քարայր, ուր մակաղելիս է եղել մինչև 400 ոչխար: Այդ պարագայում այստեղ կարող էր ապաստանել մինչև 250 մարդ: XX դարի սկզբին սա նաև թաքստոց է ծառայել դաշաղներին:

Աղավմու քարայրի մուտքին կարող է մոտենալ իմացողը, այն էլ՝ հարավային կողմից, վերելքը սկսելով Մթնածո գետակի հատակից: Ծառերի ու թփերի արանքով կածանը նախ դեպի վեր քարափների եզրով տանում է հյուսիս, ապա կտրուկ թեքվում արևմուտք, բազմաթիվ ոլորքներ տալուց հետո, որոնցով հազիվ կարող է անցնել մեկ մարդ, հանգչում մուտքը փակող պատի ստորոտին: Գործնականում անտիկ բերդի դեր է կատարել այս քարայրը: Եթե դրա տեղը հակառակորդն ի վերջո իմանար, ապա նրա զինվորները չափազանց դժվարությամբ կմոտենային մուտքին, որովհետև նրանք կարող էին քարծրանալ իրար հետևից՝ իծաշարուկ, իսկ այդ դեպքում վերևից նետված քարերով նրանց հեշտությամբ անդունդ կգլորեին ժայռի հարմար դիրքերում թաքնված փոքրաթիվ հայ տղամարդիկ: Անգամ եթե հարձակվողները հասնեին մուտքին, ապա կգտնեին խուլ փակված մի ամուր դուռ, որից Երես սննդի և ջրի պաշար կուտակած մարդիկ կարող էին օրեր շարունակ հանգիստ ապասել իրարարձությունների ցամակայի հանգուցալուծամանը, քանի որ ավարառության եղած ավազակները ո՛չ պարսպակործան մեքենաներ կարող էին բանեցնել լեռնային բարձունքում և ո՛չ էլ այն դարերում կարելի էր ժայռեր պայթեցնել: Իսկ տևական պաշարումը ռազմավարին ոչինչ չէր ավելացնի, ուստի, ինչպես ժողովրդի հիշողությունն է հուշում, ասպատակիչները հաջողության են հասել հանկարծակի հարձակմամբ, խաղաղ բնակչությանը դեպի իր թաքստոցները քաշվելու հնարավորությունից զրկելու դեպքում:

Իսկ ո՞ր ժամանակներից է Աղավմու քարայրը ծառայել որպես ապաստարան: Մեզ թվում է, թե XII-XIII դարերից, գուցե նաև ավելի վաղ շրջանից: Այսպես ասելու հիմք են տալիս մոտակայքում գտնվող այդ դարերին վերաբերվող խաչքարերն ու շինությունների մնացորդները: Նաև նշանավոր Մահկանաբերդի մոտիկությունը, որն ուղիղ գծով քարանձավից գտնվում է 6-7 կմ հեռավորության վրա, Մթնասարի լեռնաշղթայի արևմտյան լանջի ժայռերից մեկի կատարին (Այժմ հիմ ամրոցը կոչվում է Բերդաքար):

Ամենայն դեպ, որ նրա տները՝ վրաց արքունիքում XII-XIII դարերում կարևոր դիրքեր գրաված Արծրունիները, լավագույնս չիմանային իրենց իշխանապետության բնության ինչպես տնտեսական, այնպես էլ պաշտպանական հնարավորությունները: Պատմությունից հայտնի է, որ Մահկանաբերդի Արծրունիները իշխել են և Մեծ

Հայքի Գուգարք աշխարհի վաղ միջնադարյան հայտնի կանգարք զավառում: Վերջինս ընդգրկել է Ջողաս գետի և նրա Ոսկեպար ու Կիրանց վտակների հովիտները, իշխանության կենտրոն ունենալով Կուր գետի ավից Կյուրիկյանների թագավորության (XI-XII դդ.) մայրաքաղաք Լոռի բերդ ձգվող քարավանային ճանապարհի վար փոխած Կունեն գյուղաքաղաքը:

Նրանից 7-8 կմ հյուսիս-արևմուտք, Ոսկեպարի ձորում է եղել միջնադարյան Հայաստանի նշանավոր պաշտպանական համալիրներից մեկը՝ Գագ բերդը: Արծրունիների իշխանապետությանը հյուսիս-արևելքից XII դարի վերջից սահմանակից է եղել Ջաքարյանների կոտսեր ճյուղի՝ Վահրամյանների իշխանությունը: Իսկ սահմանը հավանաբար անցել է հյուսիս-արևմուտքում Ոսկեպար ու Կիրանց գետերի ջրաբաժան լեռնաշղթայի կատարներով, Գագ բերդի արևելյան կողմով իջել մինչև այդ գետերի միախառնման անկյունը, ապա, ուղիղ անկյան տակ թեքվելով դեպի հարավ-արևելք, Մթնասարի լեռնաշթան հատելով Սարի գյուղի թամբոցում, իջել Աղստևի ձոր և, հաղթահարելով Հախումի լեռնաշղթան, ընդգրկել համանուն գետի վերնագավառը: Այս սահմանը կարելի է առանց տարակարծության ընդունել, որովհետև «մեծ և հզաւր» պատվանդուններով մեծարվող Արծրունիները 1181 թվականից հետո հիշատակված են այդ գծին մոտ գտնվող Շխմուրադի, Մորո ձորո և Մակարա վանքերի ու հին Կունեն գյուղաքաղաքի մերձակա շինությունների արձանագրություններում:

Այս համալիրները ճանապարհներով կապված են եղել իրար հետ, իսկ դրանց և իշխանական ուստան Մահկանաբերդի միջև կենտրոնական դիրք է զբաղել Աղավմու քարայրը: Նաև անառիկ տեղադրությունն ու Մահկանաբերդին մոտիկությունն իրավունք են տալիս պնդելու, որ սա եղել է մեծագործ Արծրունի իշխանների տերության պաշտպանական համակարգի կարևորագույն օղակներից մեկը: Անշուշտ, հնագետներին շատ նյութ կարող է մատակարարել քարայրի դարավոր նստվածքի պեղումը, որն առայժմ սպասում է պատեմ օրվա:



ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ
ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ.
ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Հայոց բանաստեղծության պատմության մեջ Ալիշան ստեղծագործողի տեղը արձանագրվում է առաջին հերթին «Երգք Նահապետի» շարքի տասնմեկ բանաստեղծություններով՝ «Հայոց աշխարհիկ», «Հայ հայրենիք», «Ողբամ զքեզ, հայոց աշխարհ», «Մասիսու սարերն», «Ծուշանն Շավարշան», «Պլպուլն Ավարայրի», «Վերջին Երգ», «Աշոտ Երկաթ ի ծովուն Սևանա», «Հայ հանճար» և «Լուսընկայն զԵրեզմանացն հայոց»։ «Բազմավեպում» և «Երգք Նահապետի» առաջին հրատարակության մեջ (Վենետիկ, 1858) կարգ առ կարգ հայտնվող այդ երգերը և՛ ժամանակի, և՛ հետագա բանասիրական մտքի զննատությամբ նորություն էին քերում երեք առումներով՝ տիրապետող կլասիցիստական մտայնությանը հակադրվող թեմատիկ-գաղափարական նոր ուղղվածությունը (արյուն-ավեր հայրենիք, պանդխտությունից բնօրրան դարձած ժամանակի հայ մարդու ցավ ու կսկիծ, հայրենապաշտություն, հավատ գայիքի համար և այլն), ոգին՝ հայրենասիրական պաթոսը, շունչը, հուզումը, կիրքը, որ Ալիշան անհատականության կարևոր բացադրիչներից է, և վերջապես՝ լեզուն, որով բանաստեղծը հակադրվում է դասական չափածոյում անվերապահորեն իշխող գրաբարին։

Արևմտահայ բանաստեղծության պատմության մեջ Ալիշանի տեղը ցուցանող բնութագրումները՝ «Արևմտահայ աշխարհաբար ճշմարիտ բանաստեղծության» հիմնադիր¹, արևմտահայ բանաստեղծության լեզվի զարգացման նոր փուլի սկզբնավորող², աշխարհաբար չափածոյում սկիզբ նշանակող հեղինակ³ և այլն, ուղղակիորեն կամ ենթադրաբար նկատի ունեն մաս երրորդ գործոնը՝ լեզվականը։

Լեզուն, որով շարադրված են Ալիշանի նշված գործերը, հետո է ժամանակի նորմավորվող գրական արևմտահայերենի լեզվական վիճակը ներկայացնելու հանգամանքից։ 1840-50-ականներին, երբ արդեն վիճարկվում էին աշխարհաբարի գիտակցական կանոնավորման և հասարակաց լեզու դարձնելու կարելիության հարցերը, նոր գրականը բառապաշարի մշակման և քերականական կանոնավորման լուրջ ճանապարհ էր անցել. նոր ընթացք էր ստանում աշխարհաբարը օտարաբանություններից (հայատառ թուրքերենից) մաքրելու գործը, նկատելի է դառ-

¹ Տես Վ. Գաբրիելյան, Դասականների ժամանակը, Երևան, 1997, էջ 18:

² Տես Ռ. Իշխանյան, Արևմտահայ բանաստեղծության լեզվի պատմություն, Երևան, 1978, էջ 27-29:

³ Տես Հայ նոր գրականության պատմություն, Բ. 1-ին, Երևան, 1962, էջ 478:

նում մեղքարքառային բառերի ու արտահայտությունների դուրսմղումը լեզվի մշակված տարբերակից, ակտիվություն է հանդես բերում գրաբար բառաշերտը. քերականական իրողություններում ամշուշտ առկայում են բազմաձևություններն ու տարքնթաց կառույցները՝ պայմանավորված զուգաձևերի (գրաբար, միջին-հայերեն-քարբառ, աշխարհաբար) գործածությամբ:

Փաստ է սակայն, որ այս շրջանում արդեն առկա են գրական արևմտահայերենի բոլոր հիմնական օրինաչափությունները: Դրանք դրսևորում են ընդհանրացման և կայունացման շատ որոշակի միտումներ. գործառնման առանձին ոլորտներում ձեռքտում են դառնալ իշխող քերականական ձևեր: Կայունացման ակնհայտ մշակներ են ցույց տալիս սահմանական կը/կ՝ համառոտված ձևերը (փոխանակ միջին հայերեն կու-ի), եր/ներ հոգմակերտները, անձնական դերանունների՝ գրականին հատուկ ուղիղ և թեքված տարբերակները՝ քու, դում, քեզի, մեզմե, ինձմե, ինք և այլն), որոշիչ հոդով սեռականը, է/մե-ով բացատրականը, մով-ով գործիականը, ու հոլովիչի ընդլայնումը, բուն արևմտահայերենին հատուկ մի շարք բառաձևեր՝ ըլլալ, իյնալ, մոռնալ, ունէ, սպաննել, գիտնալ, սորոիլ, մըտիկ ընել (լսել իմաստով), անցընել (անցկացնել իմաստով), մեյ մը, հատ մ'ալ, խալսիլ, բարակ (նուրբ, հաճելի իմաստով)՝ Հայաստանի հոդն է քաղցր ու *բարակ*) և այլն:

Նույն՝ 40-50-ականներին հիմնականում մշված օրինաչափությունների պահպանմամբ կամ ժամանակի գրական աշխարհաբարով են հրատարակվում «Բազմավեպ» (Վենետիկ, 1843-ից), «Եվրոպա» (Վիեննա, 1852-1908), «Մասիս» (Կ. Պոլիս, 1847-1863) պարբերականների մյուսերի մի զգալի մասը, տպագրվում են ինքնուրույն և թարգմանական գիտական ու գեղարվեստական երկեր, դասագրքեր՝ Ա. Գալֆայան, «Համառոտ պատմություն», Վենետիկ, 1849, Ղ. Հովնանյան, «Մեծ Ներսես...», Վիեննա, 1851, Ն. Զորայան, «Ընթերցասիրություն», Կ. Պոլիս, 1852, Մ. Պեշիկթաշլյան, «Կոռնակ», Կ. Պոլիս, 1850, և այլն:

Ժողովրդական չափածոն նույնպես (առակներ, հանելուկներ, երգեր) միտում էր ժամանակի գրական-խոսակցական լեզուն (նկատի ունենք միջքարբառային ընդհանուր խոսակցական հայերենը)՝ ազատ գրաբարի կաշկանդումներից:

Ինքը՝ երիտասարդ, բայց բազմագետ վարդապետը, լավագույնս տիրապետում էր գրական աշխարհաբարի այդ որակին և բանասիրական ուսումնասիրություններում, հոդվածներում ու պատմագիտական մյուսերում հաճախ էր դիմում դրան: Տակավին 1843-ին «Բազմավեպ»-ում նրա հեղինակած «Ազգային երգերու և ուրիշ ավանդներու վրա» հոդվածաշարը գրված է ժամանակի մաքուր գրական աշխարհաբարով: Ահա մի հատված. «Մեր խորեմացին ալ շատ եռանդուն ջանքով և իմաստուն ընտրությամբ իր պատմությանը մեջ իբրև անգին զանձ հավաքեր ու պահեր է մեզի մեկ քանի հին երգեր ու ավանդություններ, որոնց վսեմ գեղեցկությանը վրա ոչ միայն մենք, այլև օտարները կը զմայլին ու կը զարմանան: Իրավ է, որ շատ անգամ այդպիսի երգերուն ու ավանդություններուն մեջ մշարտությունը առասպելներով զարդարված կ'ըլլա, բայց խորեմացինն պես լուսավոր միտք ունեցողը անոր

չ'նայիր, հապա ան առասպելը շինողին վախճանը կը հասկնա և ամով գոհ կ'ըլլա»⁴:

Եվ ահա չորս տարի հետո ժամանակի աշխարհաբարին այսչափով տիրապետող քանաստեղծը նույն «Բազմավեպ»-ի էջերում ստորագրում է «Հայոց աշխարհիկ»-ը և նույն ոգով ստեղծված էլի մեկ տասնյակ «երգեր», որոնք, միմյանցից էականորեն չտարբերվելով ընդհանուր լեզվական նկարագրով, ամբողջությամբ մեջ երևան են հանում ժամանակի գրական աշխարհաբարի հաստատված որակից տարբերվող յուրահատկություններ: Լեզվական հիմնական ատաղձը, ամբողջ, ժամանակի արևմտաֆայ աշխարհաբարն է. նրա լեզվական կանոնն ու օրինաչափությունն է: Բայց քանաստեղծի լեզվական ոգորումների ընթացքը դուրս է աշխարհաբարի կանոնի ու օրինաչափության նոր-նոր ուրվագծվող շրջանակներից: Այն միտում է լեզվական բարդ ու դժվարին խաչաձևումների փորձությամբ, ուր իշխողը միայն աշխարհաբարը չէ, և գրաբարը կամ քարբառները սոսկ ռճական հանդերձանք չեն հեղինակի գեղարվեստական փնտրտուքներում:

Իր երգերը «Բազմավեպ»-ում հրատարակելուց առաջ, փոքրիկ մի հաղորդումով իրեն ներկայացնելով որպես «քանի մը դար առաջ՝ Օսմաբասին ժամանակները Հայաստան մնացող ազգայիններեն»՝ Ալիշան-Նահապետը այս ամենը մեղքով փորձում է լուծել երկու կարևոր խնդիր: Նախ՝ նորոգծա աշուղ-քանաստեղծը նպատակ ուներ մեղմելու լեզվական այն քացաֆայտ հակադրությունը, որ կար այդ երգերի «ոսմկախառն» լեզվի և Մխիթարյանների գրաբար քերթության միջև: Ապա, ակնհայտորեն դժգոհ լինելով վեց-յոթ տասնամյակ առաջ «Հայաստանի ու Երևանու կողմերեն» հրապարակ իջած աշուղ քանաստեղծների լեզվից, որոնց ստեղծագործությունը «բնական տուրք միայն ըլլալով, երգերնին ալ կա՛մ խիստ ոսմկական է, և կա՛մ ոսմկաց բերանն անցնելով անհասկանալի եղեր է. շատն ալ տաճկի ու պարսկի լեզուով շարադրած է»⁵ և տուրք տալով դասական քանաստեղծության մեջ 18-րդ դարի գրաբար չափածոյի ու Մխիթարյանների որդեգրած ավանդույթին, Ալիշանը ուզում է ներկայանալ իբրև այդ ավանդույթները արդեն իսկ 17-րդ դարում պաշտպանող քանաստեղծ. մերժում է ընդգծված քարբառայնությունը, դեմ է օտարաբանություններին, սկզբունքորեն չի հրաժարվում գրաբարի իրավունքից:

Բառերի զուտ գրաբարյան իմաստով գործածությունը հաճախեալ չէ (կույսկողմ, ահագին-սարսափազդու, կանգնել-կառուցել և այլն) և, հետևաբար, այդ քանաստեղծության հատկանիշը չէ: Բայց ահա գրաբար բառաձևերի, արտահայտությունների, դարձվածային կապակցությունների և հատկապես նախդրավոր կառույցների առատ գործածությունը աշխարհաբարի ձևերին զուգահեռ ստեղծում են գրաբար քանաստեղծությանը հատուկ մթնոլորտ, ընդգծում այդ քանաստեղծության ուժեղ ազդեցությունը: Սա բնորոշ է հեղինակի բոլոր գործերին՝ առավել կամ պակաս չափով: Այսպես, «Օուշան Օավարշանա» երկը, որն, ըստ տեղեկությունների

⁴ Ղ. Ալիշան, Երկեր, Երևան, 1981, էջ 99:

⁵ «Բազմավեպ», վեմետիկ, 1847, քի 12, էջ 188:

րի, եղել է հեղինակի սիրած գործերից մեկը և իր լեզվով թերևս ամենաաշխարհաբարյաններից է. դարձյալ աչքի է ընկնում գրաբար տարրերի առատ գործածությանը՝ կուսանք, կուսանաց, պրսակ պարծանաց, շրթայք, ի դաշտ Շավարշան, ի քող, ի հով, ի դաշտ, որում, գան ի ուխտ, քան զերկիր, սիրեց զքեզ, աչացըն, զԱնահտա, մընայր, զորս, զհակատըն, ուսկից, շարծեր (շարծում էր), անցան, տայր հրաման (Չ.36-43) և այլն:

Այստեղ և մյուս բանաստեղծություններում չկան բուն արևմտահայերենից հատուկ սահմանակամ ներկայի և անցյալի տարբերակները (կը/կ'), իշխում է միջին հայերեն-բարբառային կու-ն, երբեմն էլ՝ գրաբարյան ներկան (Ալիշանը անգամ չի խուսափում դիմել գործածվող լեզվից վաղուց անտի դուրս մղված՝ սահմանակամ ներկայի գրաբարյան ձևերին՝ գրեմք, իջնունք և այլն), գրեթե առանց բացառության հայցականը նախդրավոր է և այլն: Գրաբարաշունչ են և նախդիրներով ծանրաբեռն «Ողբամ զքեզ հայոց աշխարհ», «Պլպուլն Ավարայրի», «Հուսնկայն գերեզմանաց հայոց» գործերը: Ահա մի հատված վերջին բանաստեղծությունից.

Ռու այլ, ո՛վ մեծդ հըսկայից և թագավորաց սուրբ Տըրդատ,
Որ զցանկալիս քո թողած՝ զերեզ, Գառնի ու Արտաշատ,
Ջահեն՝ղ զըլուխըդ վերուցիր և հետ մահուդ ահավոր
Մի՛նչ ի հանգիստըն Հոգյաց վանաց առիր քուն մ'այլ մոր
Ջեփրատ թողած՝ զորով վագ տվիր երագ մի քայլ... և այլն:

Հայտնի է, որ ամեն անգամ մոր հրատարակության պատրաստելով իր գործերը, հատկապես «Երգք Նահապետի» շարքը, Ալիշանը կատարել է փոփոխություններ. փոխել է բառեր, արտահայտություններ, տողեր ու նախադասություններ: Եվ ի՞նչն է ուշագրավ. լեզվական այդ փոփոխությունները, որոնք ընդհանուր առմամբ կատարվում են հոգուտ աշխարհաբարի, խիստ մասնակի բնույթ են կրում: Հեղինակը կարծես փորձում է լեզուն միայն մասամբ բեռնաթափել գրաբարյան ձևերից, և դա էլ հիմնականում ի հաշիվ նախդրավոր կառույցների: Ինչպես, օրինակ՝ Յայն (>Այն) բարձր ծառից, որ *երկնուց* են մոտ, Այն *քո* բյուր բլրուց (>բլուրներ) ու բյուր *վտակահիք* (>*վտակիք*), Արագիլ յերդիսն (>երդիսն) ավլեց իր բունիկ, Սարն ի վար վագեց *զինչ* կայծակն յամպուն (>ամպուն), Ըզհողն *համբուրեն* (>Հողու *հավսարին*) ծառերն ու *մայրիք*, Որ զքեզ(>քեզ) պինդ սիրեց, Հայոց՝ աշխարհիկ («Հայոց աշխարհիկ»⁶), և այլն:

Հաճախ գրաբարյան մի ձևը փոխարինում է մեկ ուրիշ՝ համեմատաբար պարզ ձևով⁷. Անուշիկ հովերդ ի յիս (>ի գիս) ածեք մոտ, Որոտալով նետ թըրուց զինչ մեծ

⁶ Ղ. Ալիշանի բանաստեղծությունների հետագա արտատպությունների համար հիմք է ընդունվել վերջին հրատարակությունը՝ Վենետիկ, 1867: Բնագրային փոփոխությունները մեծք տալիս ենք՝ համեմատությամբ «Բազմալեզու»-ում հրատարակված սկզբնական տարբերակների, տե՛ս «Բազմալեզու», 1847, թիվ 2:

⁷ Փոփոխությունները տալիս ենք ըստ վերը թշված տարբերակների:

գերան>Որոտաց թըռուց ըզնետըն գերան. Թըռել դաշտիցն ի վեր (>ի դաշտեն) եղել են լերկին (>երկին), և այսպես շարունակ:

Առանձին դեպքերում էլ աշխարհաբար գրական կամ խոսակցական ձևն է դարձնում գրաբար. ինչպես՝ Զե՛զ կասեմ մանկտիք (>մանկունք) սիրունք մազեղք. Զաշխարհն մեր սիրեք (>սիրեաց) Աստված ի սկզբան, քըչիկ մ՛ուշ (>մի ուշ). Ով քեզ օտար ծաղկնուն (>ծաղկան) հետ փոխե. և այլն:

Կարելի է շարունակել օրինակների այս շարքը: Բայց կարծում եմք, բերված փաստերն էլ վկայում են, որ օրերի աշխարհաբարին լավագույնս տիրապետող բանաստեղծը չափաժողում ակնհայտորեն չի ընդդիմանում աշխարհաբարին:

Լեզվական մյուս կարևոր հատկանիշը, որով աչքի են ընկնում Ալիշանի մշված գործերը, ժողովրդախոսակցական և զուտ բարբառային բառերի, ինչպես նաև աղեղախաղ լեզվամիջոցների հաճախակի գործածությունն է:

«Պլպույն Ավարայրի» երկը, որ հյուսված է պատմական նյութի շուրջ, թվում է՝ առանձնապես հարկը չպետք է ունենար բարբառային հանդերձավորման: Բայց ահա, բացի ժողովրդախոսակցական ձևերից՝ փոքրացուցիչ մասնիկավոր բառաձևեր, հարադրավոր ու կրկնավոր բարդություններ կամ ուղղակի բանավոր խոսքից հատուկ բառեր ու բառաձևեր (ճերմակ-ճերմակ սարեր, սև-սև ամպեր, լուսնակ, լուսովդ, գիշերաժամիկ, կապես կարմիր վառ, ձեցիկդ, վիզ վըզի պըլլված, սըրտիկս, կարմրիկ, քաղցրագրուցիկ, լըռիկ մընջիկ, կաթիլ մ'արունիկ, տան-առնուն հարված, կանաչ ծոցիկ, կափկափ, աստի ու ամտի, պատասխանիկ, մեկիկ և այլն), այստեղ զգալի հաճախակածություն ունեն գեղաբարբառային բառերն ու արտահայտությունները, բարբառային բառաձևերը՝ առվըտուն, քըրտըքըտվ, խըղդով, փըրթավ, թթվից, անկըսկած (միանգամից), թավլեցընելով, գարագի (գթոտ), ճըղքը, ջուխտակ, աստան (ապստամբ), լուկ (լոկ), գեջ (վավաշոտ), ոտնվոր (հետևակ), լափիլիզող, հեծելվոր, կանգնավոր, կըտըրճնուն, տապաստ (գետից տված), ոտկունք, եղեգունք, մոտանց, քըմթըռնեցնեին, սրացան (փութով փախչել), ժողովըրդոց և այլն: Այս օրինակներն ընտրված են պոեմի միայն մի հատվածից (43-45): Պատկերը մույնն է նաև մյուս գործերում:

Ակզբունքային է Ալիշանի վերաբերմունքը օտարաբանությունների հարցում. նրա լեզուն գերծ է թրջաբանություններից ու օտարաբան ձևերից: Դրանք փոխարինվում են կա՛մ հին հայերեն բառերով ու ոճերով, որն իր հերթին հանգեցնում է գրաբար լեզվամիջոցների ակտիվացման, կա՛մ բարբառային-խոսակցական և գեղաբարբառային ձևերով՝ հատկապես Պոլսի բարբառից բնորոշ, մասամբ էլ նորաստեղծ բառերով ու փոխառություններով: Սա արդեն մինչալիշանյան, մասնավորապես Մխիթարյան բանաստեղծության մվանումն էր. Ալիշանը այն սրբագործեց աշխարհաբար բանաստեղծության մեջ:

Այսպիսով, ունենք աշխարհաբար հուշակված չափածո, որ կարծես չափից ավելի հարուստ է գրաբար և բարբառային լեզվատարրերով: Ալիշանի գեղարվեստական խոսքի այս յուրահատկությունը պայմանավորված է նրա բանաստեղծական շնորհքի ձևավորման ու զարգացման կրկնակ ազդեցություններով. մի կողմից՝

Մխիթարյան հոգևոր մթնոլորտը, գրաքար լեզվի դասերն ու ավանդները, որոնցից աբբա բանաստեղծը երբեք էլ միմյև վերջ չկարողացավ ձերբազատվել, և դա բնական է, մյուս կողմից՝ բանասիրական այն տքմանքն ու հետաքրքրությունը, որ բանասեր-մշակողը ցուցաբերում էր իր ժողովրդի բառ ու խոսքի նկատմամբ, անընդհատ ժողովրդական գրույցի, խոսք ու տարերքի մեջ, Ալիշանի բանաստեղծական աշխարհը անպայման պիտի հյուսվեր նաև ժողովրդական բանարվեստի նուրբ, բայց և հախուռն այդ տարերքով:

Սակայն Ղևոնդ Ալիշանի վերաբերմունքը գրաքար-աշխարհաբար առնչություններին և առհասարակ նրա լեզվական ողջ քաղաքականությունը ավելի հիմնավոր պատճառներ և մի ուրիշ խորհուրդ էլ ունի: Պատճառներից մեկը ու թերևս կարևորագույնը՝ Ալիշանը վերապահ վերաբերմունք ուներ աշխարհաբարի նկատմամբ ի սկզբանե: Նա սկզբունքորեն չի ընդունում աշխարհաբարը՝ իբրև բանաստեղծության լեզու, և հակառակը պնդելու գոնե անպատեհությունը պիտի չունենանք: Աշխարհաբարի մասին իր բարեկամներից մեկին նա գրում է. «Ինձի, իմ զգացման՝ արդարև այս աշխարհիկ լեզուն շատ պզտիկ, շատ ցած, շատ անբավական եկած է. այնպես կ'երևի ինձի, թե մեծ կրակ մը փտտած քուրջերով ծրարել կ'ուզեմ, երբ այն իմ հին և սրբազան հայրենյացս հրեղեն հիշատակները այսպիսի խեղճուկ լեզվով կ'ավանդել, թողլով իր վսեմական գրոց լեզուն»⁸:

Ինչպես իրավացիորեն նկատվել է հայ բանասիրության մեջ, բնավ էլ պատահական չէ, որ խորոխտ, մարտնչող, պայքարի ու ընդվզումի կոչող բանաստեղծություններ գրելիս («Սեպուհի վասակ», «Քաջակորով Մուշեղ» և այլն) Ալիշանը դարձյալ դիմում է գրաբարին⁹: Արտահայտման վսեմ ու հանդիսավոր կերպը, որ խոսքին հաղորդում է գրաբարը, աբբա բանաստեղծը անուրանալի հատկանիշ է համարում բանաստեղծության լեզվի համար:

Մյուս կողմից, լինելով ժամանակի շատ տեղյակ ու խորագգաց մտավորական գործիչներից մեկը և ըստ ամենայնի ընթերցելով լեզվական-մշակութային առաջընթացի տրամաբանությունը, Ալիշանը ընդառաջ գնաց աշխարհաբարին: Ամենից առաջ դա հնարավորություն էր տալիս ընթերցվելու կամ, ինչպես ինքն է ասում, «դյուրհասկանալի ու ախորժելի լինելու»: Հարազատ ժողովրդին ազգային արժանապատվության և հայրենասիրության դասեր տալու ելած բանաստեղծը պիտի խոսեր հնարավորինս մատչելի լեզվով: Գրական աշխարհաբարի, նաև բարբառային-խոսակցական լեզվամիջոցների առատ գործածությունը, գրական մշակումներում չափածո խոսքի թելուզ դույզն բեռնաթափումը նախդիրների անտեղի կուտակումից, զուտ գրաքար բառաձևերի փոխարինումը աշխարհաբար տարբերակներով կամ դասական լեզվի բազմաբարդ կառույցները մույն դասականի ավելի պարզ ձևերով փոխարինելը և կամ մույնիսկ առանձին բառերի, արտահայտությունների, տողերի «խմբագրումը», որ թվում է, նախ և առաջ ոճական միտումներ պիտի հետա-

⁸ Ա. Ալիշան, Հուլիկո հայրենեաց հայոց, Վնենսիկ, 1869, էջ 19:

⁹ Տե՛ս նաև Ս. Օտիկյան, Ալիշանի գեղարվեստական ստեղծագործությունը, Երևան, 1967, էջ 60-62:

պընդեհեմ, կոչվում են առավելապես այդ նպատակին՝ խոսքը մատչելի, դյուրին, հասկանալի դարձնել ընթերցողին:

Սա արդեն ժամանակի պահանջն էր. գրական-գեղարվեստական ընթացքի թելադրությունը, և Ալիշանը ունեցավ համարձակությունն ու տաղանդը ընդառաջ գնալու այդ պահանջին: Սակայն նա չհասավ ժողովրդական լեզվի այն պարզությանը, որ հենց ինքը մեծ առավելություն էր համարում ժողովրդական երգերի համար. «Իմասական երգը ազգային հոգվույն մեկ ծայցն է. ... ասանկ երգեր կամ գուրջվածներ ի սրտե առաջ եկած են և սիրտը միշտ վարպետ է,- գրում է Ալիշանը և մի այդպիսի երգի առիթով ավելացնում՝ «կարծեմ, ավելի վսեմ հայկական լեզվով ալ գրված ըլլար մե՛» նույն աղվորությունը չէր ունենար» (Ձ,102-104), ապա՝ «ազգային կամ ռասական ըսված երգերը, որոնք թեպետև գուրլ ըլլան այն վսեմական և գեղեցկաշար լեզվին գեղեցկութենեց, սակայն շատ հեղ քան զայն լեզվով գրվածները ազդու և սիրելի կ'ըլլան» (Ձ,108):

Առարկայական (օբյեկտիվ) պայմանների այս խաչաձևումը առիթ է տալիս լեզվական մի ուրույն որակի ձևավորման. Ալիշանը փորձում է չափածոյի լեզվում հաշտության եզրեր գտնել գրաբար-գրական արևմտաֆայերեն-քարբառ կողմերի համար. ստեղծել լեզու, որում ներդաշնակ համադրության զան մեր լեզվի թուրր «տարիքները»: Արդյունքում ունենում ենք «ալիշանյան աշխարհաբարը» (Հր. Աճառյան), որն իրոք իր տեսակի մեջ մնաց եզակի ու անկրկնելի:

Մյուս խնդիրը կապվում է լեզվի գեղագիտական մշակման հետ: Քննվող շրջանի արևմտաֆայ աշխարհաբարը դեռևս մորմայի ու կանոնի որոնումների մեջ էր: Բայց ահա Ալիշանի գեղարվեստական փորձը երևան է հանում լեզվի գեղարվեստական յուրացման ինչ-ի՜նչ դրսևորումներ: Ունի՞ այդ փորձը երևույթի տեսական-գեղագիտական ընկալումը՝ դժվար է ասել: Բանաստեղծի ելակետը «ռասկական» երգերի առիթով արտահայտած այն վիճելի տեսակետն է, թե «բանաստեղծությունը և զգացմունքը լեզվին հետ կապված չէ. կամ կապված չէ գեթ այն չափով, որքան «գուրցըված կերպին, իսկ զգացմունքը ավելի մյուրին և ամոր կարդացողին մերձավորությանը հետ» (Ձ,108-109):

Լեզուն միայն կանոն ու օրինաչափություն չէ, ոչ էլ՝ սոսկ նշանների համակարգ: Ոգի է ու մտածողություն, հոգեկանություն է ու զգացմունքների դրսևորման միջոց: Եվ լեզվական ամեն մի բարեշրջություն անպայման տեղաշարժեր է ենթադրում ոգու և հոգեկերտվածքի մեջ, զգացման և մտածումների և դրանց արտահայտման ուղորտներում: Չգիտե՞ր այդ մասին օրերի ճանաչված ու քազմագետ մտավորականը, թե՞ հոգևոր կյանքը պարտադրում էր այլ տրամաբանություն, քանի որ խոսքը աշխարհաբարի մասին էր: Ըմբարտությունն այն է, որ լեզվի գեղարվեստական յուրացումը հազիվ ըմբարվող երևույթ էր, և Ալիշան բանաստեղծի զգացողությունը այս հարցում դարձյալ, թեև մասամբ, չվրիպեց:

Գրաբարի մկատմամբ վերաբերմունքը, ինչպես ասվեց, զալիս էր ավանդաբար: Բայց գեղարվեստական մտածողության ազդեցությունները դեռ չհաղթահարած բանաստեղծը ընտրում է արտահայտման լեզվական այն կերպը, որն առավել հար-

մար է խոսքը վսեմ, համդիսավոր, առանձին դեպքերում պաթետիկ ու վերամբարձ, հոեոտորական դարձնելու համար: Հնարքները բազմազան են՝ գրաբար բառեր ու բառաձևեր, ծավալում պարբերությո՝ հաճախ տասնյակ տողերի հասնող, հոեոտորական դիմումը, գրաբար-միջին հայերենից եկող և ընդունված բանաստեղծական չափը (4+3, 5+5, 7+7) և այլն:

Խոսակցական և բարբառային բառերի գործածությունը նոր բանաստեղծության մեջ զուտ լեզվական երևույթ էր, չուներ ոճական նպատակադրում, կոչում էր դարձյալ խոսքի մատչելիության, պարզության: Եվ նախանձախնդիրն էլ Ալիշանը չէ: Բայց հենց նրա չափածոյում փորձեր են արվում դրանց ոճական գործածության՝ խոսքը ավելի ժողովրդային, ավելի մտերմիկ, անմիջական, հուզիչ (որ գալիս է ման ապրումի խորությունից) դարձնելու համար: Երբեմն հաջողությամբ հերթազալում են գրաբար-քարբառ-խոսակցական լեզվատարրերը՝ իրենց բնույթի հակադրությանը ստեղծելով պատկերակերտման անսովոր ու ինքնատիպ եղանակներ՝ մի կողմից՝ բարձր, վսեմ, համդիսավոր, հնչել, ազդեցիկ, մյուս կողմից՝ մտերմիկ, հարազատ, անմիջական, ժողովրդական: Դա բանաստեղծին ավելի հաճախ հաջողվում է տողի կամ բանաստեղծության համեմատաբար փոքր հատվածի տիրույթում, ինչպես՝

Ճակատն ի քող խորոտիկ

Ի հոյ տըված խոպոպիկը.

Տառրակ տոտամբ մանտրաքալլ,

Ման գա ի դաշտ ցողափալլ:

Գրաբար բանաստեղծության իշխող մթնոլորտում Ալիշանի երգերը իրենց ինքնատիպ աշխարհաբարով, «ոսմկորեն» լեզվով ու մանավանդ հայրենաշունչ հուզումներով ու ոգիով հայտնության պես մի բան էին: «Հին տաղարաններու և ոսկեփորիկներու մեջ թաղուած՝ ուրիշ խառն երգերու և ոսմկական ոտանավորներու հետ» լույս աշխարհ եկած Նահապետ Ծածկանուցը (10,188) շատ շուտով հայտնի դարձավ ամենուր:

Հարկի ու երևի թե հաճախ անհարկի մեզանում խոսք է բացվել Ալիշան բանաստեղծի բերած թեմատիկ նորությունների մասին՝ ի հեճուկս ժամանակի գրական ուղղությամբ (նկատի ունենք կլասիցիզմը) սրբագործված «վսեմական» թեմաների: Ղևոնդ Ալիշանի թեմատիկ աշխարհը դատականն է, ավանդականը՝ հայոց աշխարհը, դաշտն Ավարայրի, Աշոտ Երկաթ. կույս Սանդուխտի ավանդապատումը, երգը վիրավոր բամբուկաբաղի, Մասիսու սարերը և այլն: Թեմաներ, որոնց մասին դժվար է ասել, թե «ընդհանուր ոչինչ չունենի հայ կլասիցիստների նախընտրած «վսեմական» սյուժեների հետ: Ալիշանի բերած նորությունը պատմական-ավանդական թեմատիկայի շրջանակներում հայրենասիրական ոգու վերակերտումն էր, հայ մարդու հերոսական էության գեղարվեստական հնարավոր պատկերումը և նախնյաց

հերոսական օրինակներով ու հիշատակներով հայկական հոգեկանության ոգեկոչումը:

Այլիշացի ստեղծագործություններում առկա հակադիր լեզվատարրերի համադրություն-հերթազայությունը, որով բանաստեղծը շատ ինքնատիպ ուղի է «առաջարկում» արևմտահայ չափածոյի լեզվի զարգացման համար. արդեն իսկ դժվարին լեզվաոճական խնդիր է: Լեզուն ձևավորման ընթացքի մեջ էր, և կանոնի ու նորմայի շարունակվող տարուբերումների մեջ գրաբար-բարբառ-գրական արևմտահայերեն տարրերի այսօրինակ համադրությունը ստեղծում է գրաբարախառն աշխարհաբարի կամ «խառնակ հայերենի» շատ իրական տպավորականությունը. գրաբար նյութի հարստությունը հաղորդումը դարձնում է վերամբարձ, անհարկի պաթետիկ, հոնտորական, խոսքը հաճախ դառնում է անհնչելի ու անհստակ կամ ուղղակի անբանաստեղծական, ինչպես է հետևյալ օրինակը.

Ինչպես հոն վերա քաջացըն հեցուկ
Նետին հաղթանակ Հայոց անանցուկ,
Զինքըն կանգնելով՝ Պարսիկն ընդ ռոյութ,
Ինք զինքըն դիտեր հոգվույն մայեցութ
«Ո՛հ, ես ի ճակտիդ վրա երդնում, վարդամ,
Կանչեց Եղիշե, որ ձեռքն աստվածյան
Հոն մեծ փոխարեն է գրեք քո մահվան...

Խոսքին մկատելի անբանաստեղծականություն են հաղորդում մահ խոսակցական, հատկապես մեղաբարբառային բառերի ու բառաձևերի հաճախակի գործածությունը: Տողի, մախադասության, քառատողի սահուն ընթացքը մեկ էլ ընդմիջվում է անհարկի բարբառայնությամբ. ասելիքը դառնում է կա՛մ խիստ պարզունակ, կա՛մ էլ՝ անորոշ ու մանվածապատ, ինչպես, օրինակ, Գեոնգեղոսն ամեն բացել են շուշան, Պայծառ դընդըղնով ցրնցըղկեն գնաց...: Այս երևույթը մասամբ մկատվում է մահ Պեշիկաշյանի և Ժամանակակից այլ հեղինակների ստեղծագործություններում: Եվ պատճառը այդ հեղինակների տաղանդի կամ ձիրքի պակասը չէր: Նույնը մկատվում է մահ այլ ժողովուրդների գեղարվեստական գրականության լեզվի ձևավորման որոշակի փուլերում: 19-րդ դարի 30-90-ականների ռուս գրական լեզվի բառային կազմի զարգացման ամենից նշանակալից երևույթներից մեկը, օրինակ, Յու. Սորոկինը համարում է ծագումնաբանորեն տարբեր աղբյուրների պատկանող բառերի՝ գրքային և հասարակ-խոսակցական, մշտական փոխանցողությունն ու փոխառնչությունը¹⁰:

¹⁰ Տե՛ս Ю. Сорокин, Развитие словарного состава русского литературного языка 30-90-е годы XIX века, III, 1965, էջ 38: Այդ մասին տե՛ս մահ Ա. Соболевский, История русского литературного языка, Ленинград, 1980, ст. 121-132, Н. Мещерский, История русского литературного языка, Л. 1981, էջ 179-193, և այլն:

19-րդ դարի կեսերին, երբ հայոց ազգային գրական լեզվի նորմաները նոր էին հաստկվում, երբ շատ դեպքերում տակավին պարզ չէր, թե հատկապես լեզվական ո՞ր իրողություններն էին գրական, իսկ որո՞նք՝ խոսակցական և բարբառային, բառի կամ լեզվական մշակման ընտրությունը թեղադրվում էր մախ և առաջ լեզվական ըսկըզբունքներով ու չափանիշներով: Իսկ դա ստեղծում էր գրաբար-բարբառ-գրական արևմտահայերեն լեզվատարրերի ոճական անհամատեղելիություն: Արևմտահայ բանաստեղծության լեզվում այս երևույթը հաղթահարվեց ավելի ուշ՝ ազգային գրական լեզվի նորմավորման շրջանում, երբ տարասեռ լեզվական միավորների ընտրությունը հնարավոր եղավ կատարել գեղագիտական կամ ոճական սկզբունքներից ելնելով, երբ լեզվական մշակման ընկալվեց ոչ միայն որպես գրական լեզվի, այլև գեղարվեստական ոճի տարր:

Թվում է՝ գեղարվեստական պատկերի ստեղծման մտահոգությունն ունեն մակդիր-փոխաբերությունների, համեմատությունների, շրջասության հաջողված մի քանի գործածությունները՝ Լուսնակն ամպի տակ բացխըփիկ խաղայր (Ձ,44), Պատառտի աչք դողդող աստղերում, ժողիկ կաթնաբուխ թափի ի ամպերում (57), Աչքն ուներ միզակ մահվանք ձանձրացած (59), Կույր մըթության աչք անփակ... (=լուսինը, 69), Մահ կենդանացա, մեռնի կենդանին (41), Գետեզերք ամեն բացել են շուշամ (15), Մշուշ մահվան, խամրած մատներ, սաստկորոտ ամպ (51):

Դժվար չէ նկատել բանաստեղծի միտումը՝ պատկերակերտման համակարգում նույնպես դասական բանաստեղծության վսեմ ու հանդիսավոր ընթացքը զուգակցել մոտ անցյալի աշուղական երգի մտերմիկ ժողովրդական ձևերին, համադրել դասական ու ժողովրդականը: Մի կողմից դրամատիզմը, խոհը, ռոմանտիկական հուզական պերճանքը, մյուս կողմից՝ կլասիցիստական զուսպ ու սառը գույները, կանոն ու ձև դարձած տողը, պատկերը: Սակայն միշտ չէ, որ դա նրան հաջողվում է, միշտ չէ, որ հայրենասեր քերթողի հախուռն տարերքը ներդաշնակում է բանասեր հոգևորականի զուսպ զգայնությանը: Համեմատվող կամ փոխաբերվող եզրերի սուբյեկտիվ ընկալման հիմքը թույլ է, պատկերներն ստեղծվում են դասական կամ միջնադարի բանաստեղծության համադրություն-համեմատությունների ծանոթ օրինակներով՝ Նախշուն զարդարին նոր հարսին նըման (Ձ,15), ջուրն անույշ (64), Մաղիկ հողմավար (61), արև անուշ (23), Մապուկ ճորտերն են հրեղեն (38), թոռմած ծաղիկ, չար թըռնամիկը (19), զհոտըն սիրուն (23):

Առանձին դեպքերում կա պատկերի որոշակիությունը, տեսանելի, իրական առարկայական գույնն ու զգացողությունը, որ անշուշտ նորություն էր բանաստեղծական մտածողության մեջ, բայց չկա գեղագիտական մշակման անհրաժեշտ մակարդակ՝ Սանատրդկո սև հրաման Հընոցի ծըխում գայր նըման (41), Զետ արծըթի ափսե կու թավլիս (75), ճըմոռտած ճակատը (19): Մի ուրիշ դեպքում հաջող է պատկերը, բայց հարիր չէ ու չի ներդաշնակում խոսքի միջավայրին, հնչում է հանդիսավոր ու պաթետիկ՝ Աղամանդե կայծակներ (Ձ,69), Կրակն արտասուք թափե ջրի պես (51), ըզզարկ սըրտին կայծակադ (64), ահեղ ունքեր (64), Կարմիր են քրտնել, կարմիր խըմել են (19), քաղցրըն հայրենիք (24), և այլն:

Նախադասության անվերջամալի ընթացք, խիստ ծավալուն պարբերությո՞ւք, լեզվական միջոցների կուտակում, մանրամասնությունների ծավալում, ճարտասանական անտեղի բացականչություն ու հոնտորական հարց, ուսմանտիկական պարետիկ շունչ, սրանք հատկանիշներ են, որոնք ձուլվելով բանաստեղծության թեմատիկ-գաղափարական իմչ-իմչ գծերից՝ գաղափարական լայն հարցադրումներ, համազգային ցավեր, պատմական ընդլայնումներ և այլն, ստեղծում են հոնտորական խոսքի շատ իրական տպավորությունը, ի ցույց են դնում գեղարվեստական պատումի ընդգծված հրապարակախոսականությունը: Մեր օրերի լեզվագեղագիտության չափանիշների մեջ չտեղավորվող այս գիծը 19-րդ դարի 40-50-ականների գեղարվեստական մտածողության անուրանալի հատկանիշն է, հետևաբար՝ Ալիշանի բանաստեղծության պոետիկայի օրյեկտիվ բովանդակությունը: Բանաստեղծի տաղանդը մասամբ միայն կարողացավ հաղթահարել այն:

Նոր գրական լեզվի գեղագիտական մշակմանը միտող մեղեդայնությունը՝ ուրմը, չափը, տաղաչափական բազմազանությունը, հնչյունների դասավորության մերդաշնակ կարգը, մի խոսքով՝ լեզվի բանաստեղծականության այդ շատ կարևոր կողմը անհրաժեշտ ուշադրություն չէր վայելում:

Բռնահանգը ժամանակի գրաբար չափածոյի՝ իշխող գրական ուղղությամբ (մասամբ նկատի ունենք նաև ուսմանտիզմը) մվիրագործված հատկանիշն է, որին հաճախ ի սպաս են դրվում ոճական հմարներ հոչակված ամենատարբեր լեզվական շեղումները: Ալիշանի գեղարվեստական փորձին բնավ էլ խորթ չեն դրանք՝ արհեստական հոդազեղչում, որոշիչ հոդի կամ ցաղտնավանկի ը-երի հավելում, բառի անհարկի կրճատում կամ սղում՝ տաղաչափական մպատակներով՝

ՋԱր/տազմ/ է / բըդ/ներ/ թնդ/մամբ/ կայ/ծա/կան/ (10-վանկ.)

Ոչ / լուկ/ պա/տե/րազ/մըմ/ թըշ/նա/մու/թյան/... (10-վանկ.)

Կույ / սըն / կե / ցավ / լուռ/ հու / շիկ, (7)

Հա / պա/ հառ / չեց / ա/ մու / շիկ:

Այս բոլորով հանդերձ՝ Նահապետի երգերը իրենց աշխարհաբար բնույթով մի կարևոր առաջընթաց քայլ էին մոր բանաստեղծության լեզվի աշխարհաբարացման ճանապարհին: Մի շարք կողմերով հակադրվելով վերածնվող գրաբար չափածոյի ավանդույթներին, բայց նաև որդեգրելով մույն չափածոյի և ժողովրդական բանարվեստի ձեռքբերումները՝ այդ երգերը նախապատրաստեցին գրական արևմտահայերենով բանաստեղծության հետագա զարգացումը:



ԽԱՉԻԿ ՍԱՄՎԵԼ ՅԱՆ*Բանասիրական գիտությունների թեկնածու***ՄԻ ԱՆՀԱՅՏ ԷՋ
ԿՈՄԻՏԱՍԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԻՑ**

Կոմիտասը, իբրև ստեղծագործող, այն մեծություններից չէ, որոնց կենսագրության մեջ ուսումնասիրողների համար կարող է ամհայտ մնալ թեկուզ մեկ էջ...

Այսուհանդերձ մեզ չհաջողվեց Կոմիտասագիտության մեջ հայտնաբերել որևէ խոսք մրա կատարած թարգմանությունների մասին: Այն ամուշադրության է մատնըվել ոչ միայն Կոմիտասագիտության կողմից, այլև հենց ինքը՝ Կոմիտասը մի առանձին մշակակություն չի տվել այդ ասպարեզում իր կատարածին, այլապես հրատարակած «Ինքնակենսագրականում», երբ թվարկում է իր կարդացած բանախոսությունները, խոսում է իր տպագրած հոդվածների և հրատարակած երգարանների մասին, կարող էր թվարկել նաև իր կատարած թարգմանությունների վերնագրերը, մինչդեռ նա ընդամենը մշտում է, թե կատարել է «Թարգմանություններ (երաժշտության վերաբերյալ)»¹ և ուրիշ ոչինչ...

Եթե ընդունենք, որ ինքնակենսագրականը վերաբերվում է մրա միայն վաղ շրջանի գործունեությանը, ապա կարող ենք ասել, որ հաջորդող շրջանի հրապարակումների ու գրառումների մեջ նույնպես ո'չ մի խոսք չկա իր կատարած թարգմանությունների մասին:

Այս ամենով հանդերձ, անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ այդ բնագավառը ևս, թեկուզ և սահմանափակ չափով, զբաղեցրել ու որոշ կշիռ է ունեցել մրա գործունեության մեջ: Եվ քանի որ Կոմիտասին վերաբերվող ամեն մի մանրուք համարվող փաստն իսկ ունի գիտական արժեք, հարկ համարենցինք անդրադառնալ այս ասպարեզում մրա ծավալած գործունեությանը:

Կոմիտասի թարգմանչական գործունեությամբ զբաղվելու պատեհությունը պայմանավորված է հետևյալ շարժառիթով:

Գևորգյան Հոգևոր Մեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանին Բեռլինից 1896 թվականի դեկտեմբերին Կոմիտասի հղած նամակի մեջ տեղ է գտել մի կարեվոր հիշատակություն. «...Իմ գրած երաժշտական բեկորները,- գրում է նա,- ուսուցչապետս հանձնառու եղավ տպել տալու յուր ծաղքով»²:

Այս հանձնառությունը՝ իր երաժշտական բեկորները գերմաներենով տպագրել տալու իրականացումը կարող էր Կոմիտասի համար ստեղծել այդ առաջարկը

¹ «Անահիտ», 1931, թիվ 1-2, էջ 2-6:

² Տե՛ս Կոմիտաս, «Նամակներ», Ե., 2000, էջ 83:

թարգմանությամբ իրականացնելու պատենություն, որը սակայն տեղի չի ունենում: Նա չի շտապում, որովհետև ցանկանում է «խորը թափանցել» այդ գործի մեջ:

Ավելի ուշ՝ Կարապետ Կոստանյանին Բեռլինից գրած մի այլ նամակում Կոմիտասը նրան տեղյակ է պահում, որ «Եկեղեցական երաժշտության տեսականն ամբողջապես վերջացրել» է. «պարպում է սիայն գործնականով» և կարող է «ազատորեն երաժշտական երկեր հորինել»: «Ա՛նք հոգևոր երգերից»՝ շարունակում է նա. «մի քանի կտոր պատրաստել եմ քառաձայն, վեց ձայն և ութ ձայն: Ուսուցչապետս առաջարկեց երգեր տալ. պատրաստում եմ մի քանիսն էլ, ապա երգել պետք է տա ինքը՝ ուսուցչապետս, մի որևէ եկեղեցում կամ Singakademie - ում, իբրև հոգևոր համերգ»³:

Ուսուցչապետ Ռ. Շմիդտի հանձնարարականը Կոմիտասի համար դառնում է պարտավորեցնող: Նա սկսում է համապատասխան երգասացություններ ընտրել ու մշակել թագնաձայն խառը խմբի համար և ապա դրանց գրաքարյան տեքստերը թարգմանում է գերմաներեն:

Այս պարագայում թարգմանությամբ զբաղվելը Կոմիտասի ստեղծագործական կյանքում ձեռք է բերում մոր և որոշ առումով իմաստավորված գործելակերպ:

Ստանալով նման հանձնարարություն՝ Բեռլինում սովորող Կոմիտասը, օգտվելով ամառային արձակուրդից, ձեռնարկում և Պատարագի, շարականների ու հոգեվոր երգերի միջից ընտրում է մեկ տասնյակից ավելի երգասացություններ և ուսուցչապետ Շմիդտի պահանջին համապատասխան մշակում դրանք թագնաձայն խառը խմբի համար: Եվ ապա այդ երգերի գրաքարյան տեքստերը թարգմանում է գերմաներեն և տեղադրում նոտագրության տողատակում:

Նույն՝ 1897 թվականի սեպտեմբերի 15-ի իր թարգմանած ու մշակած երգերի նոտագրությունները Կոմիտասը մաքրագրում և մախապատրաստում է՝ դրանք Ռիխարդ Շմիդտին հանձնելու համար:

Հարկ եմք համարում մշել, որ անհայտ պատճառով այդ երգերի նախատեսված կատարումները (որքան մեզ հայտնի է) ո՛չ գերմանական եկեղեցիներում և ո՛չ էլ Զինգակադեմիայում չեն իրականացվել և մշակումները անխաթար վիճակում հասել են մեզ ու խմամբով պահվում են Երևանի գրականության և արվեստի թանգարանի Կոմիտասի դիվանում 1648 համարի տակ:

Թե ինչպիսիք է նոտագրության տողատակում զետեղված այդ թարգմանությունների որակը, մենք դրան չենք անդրադառնա, սակայն պատկերացումը ամբողջական դարձնելու մատակարար հարկ համարեցինք մեջբերել այդ թարգմանությունների վերնագրային ցանկը:

- «Khre dir» («Փառք քեզ, Տէր»),
- «Heilig, heilig» («Աուրբ, սուրբ»),
- «Im Welten all» («Բամենայմի»),

³ Նույն տեղում, էջ 87:

«O, entzückender, furchtbarer Anblick» («Ով սքանչելի եւ տեսիլ ահաւոր» խաչելության շարական)։

«Jerusalem lobe den Herrn» («Գովեա Երուսաղէմ՝ ճաշու շարական Ս. Զատկի)։

«Halleluja h allekuja Der Hezz ist hoch» («Ալելուիա. Բարձր է ի վերայ»)։

«Wer ist wie der Herr» («Ով է որպէս Տէր»)։

«Heut erstand von den Toten» («Այսօր յարեաւ ի մեռելոց փեսայն անմահ»)։

«Heiligkeit heiligkeit» («Սրբութեան սրբոց» սրբասացություն)։

«O, prachtvolles» («Ով զարմանալի»)։

«Der Himmel zerrisse» («Երկինք պատահեալ»)։

«Vater unser im Himmel» («Հայր մեր»)⁴։

Նույն ժամանակամիջոցում Կոմիտասը գերմաներենից հայերեն է թարգմանում ևս երկու գործ (պահպանվել են սևագրությունները)։

ա) Օտտո Ռոկենտի «Նոր գարուն» երգը՝ խառը երգչախմբի համար, նոտագրության տողատակը՝ հայերեն և գերմաներեն⁵։

բ) Օտտոմի «Ապրիլ»՝ երգ դաշնամուրի ընկերակցությամբ, նոտագրության տողատակը՝ հայերեն և գերմաներեն⁶։

Բեռլինում սովորող Կոմիտաս վարդապետը, ինչպես հայտնի է, նամակագրական սերտ կապի մեջ էր Վիեննայի Մխիթարյան միաբանության հոգևոր հայրերի հետ։

1898 թվականի մարտի սկզբներին Կոմիտասը մի նամակ է ստանում «Հանդես ամսօրյա» պարբերականի խմբագիր Ռ. Գ. Մենցլիշյանից։ Վերջինս Կոմիտասին խնդրում է մի հոդված թարգմանել իրենց ամսագրում տպագրելու համար։ Այդ նամակը չի պահպանվել, սակայն հրապարակված է Կոմիտասի պատասխանը, որը հնարավորություն է տալիս պարզաբանում մտցնել այդ խնդրանքի մեջ։

«Ստացա Ձեր բարեկամական գիրը, - գրում է Կոմիտասը, - Արժանապատիվ Հայր, մեծ ուրախությամբ և հոժարությամբ պատրաստ եմ Ձեզ խոնարհ ծառայությունն մատուցանելու։ Խնդրում եմ հաճեցեք փութով առաքելու հիշյալ տետրակը, զի համալսարանական դասախոսություններից ազատ եմ այժմ արձակուրդի պատճառով»⁷։

Այս ամորոշ պայմանավորվածությունը որոշակիություն է ստանում «Հանդես ամսօրյայում» տեղ գտած մի հրապարակման շնորհիվ։ Ամսագրի 1898 թվականի ապրիլյան համարում «Նոր հրատարակություններ» ենթավերնագրի տակ խմբա-

⁴ Կոմիտաս, «Երկերի ժողովածու», հտ. 8, Ե., 1988, էջ 246։

Այս թարգմանության մշակումների նոտագրությունները առաջին անգամ հրապարակվել են Կոմիտասի «Երկերի ժողովածուի» ութերորդ նստում, հրավերագրել Գ. Գյոդակյանի խմբագրությամբ ու ծանոթագրություններով (Կոնս Լք 195-220, 245-246)։

⁵ ՀԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 502։

⁶ Նույն տեղում, 549։

⁷ Տե՛ս «Գրական թերթ», Ե., 1991, № 18։

գիր Ռ. Գ. Մենելիշյանը, խոսելով «Բյուզանդական պարբերագիր» հանդեսի մեջ Նիկողայոս Մառի տպագրած ռուսերեն հոդվածի մասին, շատ կարևոր է գտնում «Պրոֆեսորի այդ ուսումնասիրությունը» և ասում, որ միտք ունի այդ աշխատությունը «ամբողջովին առաջ բերել հարմար առիթով»⁸ ամսագրի մեջ: Այս հրապարակումից որոշ ժամանակ անց, ապրիլի 16-ի նամակում Կոմիտասը Բեռլինից Ռ. Գ. Մենելիշյանին գրում է. «Հարգո բարեկամ... ստացել եմ Ձեր առաքած հոդվածը, դժբախտաբար, երկրորդ օրն արդեն ինձ բռնեց մի սաստիկ ջերմ, որ երեք օր առաջ միայն բարեհաճեցավ յուր այցելությունից վերադառնալու: Երեկ բավական առողջ զգալով թարգմանեցի հոդվածի առաջին կեսը, որը և առաքում եմ նամակին հետ, գուցե շարելու պատրաստություն տեսնեք, իսկ մնացյալ կեսն էլ մի քանի օրից կուղարկեմ...

Թարգմանության վրացերեն և ասորերեն կտորների տեղերը բաց թողի, վաճաղի ես չգիտեմ այդ լեզու»⁹:

Այս ամենի շարունակությունն է կազմում Կոմիտասի նույն թվականի ապրիլի 18-ին գրած նամակը՝ ուղղված ամսագրի խմբագրին: «Այսօր,- գրում է Կոմիտասը,- վերջացրի թարգմանությունը, թղթակին հետ մեկտեղ առաքում եմ: Նախընթաց նամակովս հայտնելու մոռացած էի, թե Ռ. Գալուստ Տեր-Մկրտչյանի խոսքերը, որ թարգմանությամբ առաջ էր բերել պ. Մառը, ավելի լավ կլիներ նույնիսկ «Արարատից» արտագրվել, թեև ես էլ թարգմանեցի, որպես Մառն էր ռուսերենի փոխադրել:

Պետք է ասեմ,- շարունակում է նա,- որ պ. Մառի լեզուն ոչ միայն ծանր, այլև բուն, մաքուր ռուսերեն չէ, ուստի շատ մթություններ կային...»¹⁰:

Նույն «Հանդես ամսօրյա» խմբագրին ուղղված իր հաջորդ նամակներից մեկում Կոմիտասը խոսք է բացում կենսագրական քննության մի հարցի վերաբերյալ, որը թեև ուղղակի փաստարկ չէ, սակայն կապ ունի իր կատարած թարգմանության, լեզվի ընտրության հարցում գործադրած մոտեցման հետ:

«Արժանապատիվ Հայր,- գրում է նա,- ես բնիկ կուտիմացի եմ, այնտեղ իսկ ծնված Սողոմոնյան ընտանիքից: Տասն տարեկան Գևորգյան Շեմարան եկած և այնտեղ ավարտելով վարդապետություն ստացած: Արդեն 18 տարի է, Ռուսաստանում կապրիմ, իբրև տաճկախոս ստիպված էի ռուսաճայոց բարբառն ուսումնասիրել և գործածել (ընդգծումը իմն է, իս. Ս.), թեև ցարդ տաճկաճայատակ եմ և կմնամ»¹¹:

Այս բացատրությունը Կոմիտասը տվել է թերևս այն նկատառումով, որպեսզի ենթատեքստում տրամաբանական դարձնի իր կատարած թարգմանությունը արևելաբանական՝ «ռուսաճայոց բարբառով» կատարած լինելուն նախապատվություն տված լինելու հանգամանքը:

⁸ Տե՛ս «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1898, № 4, էջ 121:

⁹ «Գրական թերթ», Ե., 1991, № 18, 16-ը ապրիլի նամակը:

¹⁰ Նույն տեղում, 18-ը ապրիլի նամակը:

¹¹ Նույն տեղում, 6-ը մայիսի նամակը:

1898 թվականի մայիս-հունիս ամիսների ընթացքում Կոմիտասը ո'չ միայն ավարտում է Մառի Ռոդվածի թարգմանությունը, այլև հասցնում է ժամանակին ուղարկել Վիեննա: Նույն թվականին «Հանդես ամսօրյա» պարբերականի օգոստոս-սեպտեմբեր միացյալ համարում «Գալուստ Տեր-Մկրտչյան (Միաբան)» Ազաթանգեղոսի աղբյուրներից: Յիշատակ դատակնքաց Գորիա եւ Շմոնի վկայից որ վկայեցին յմութիւնս» խորագրով լույս է տեսնում Կոմիտասի կատարած թարգմանությունը¹²: Տողատակին ամսագրի խմբագիր Ռ. Գ. Մեմելիշյանը հարկ է համարում տեղեկություն տալ թարգմանչի վերաբերյալ: «Մեր խոստման համեմատ,- գրում է նա,- կը հրատարակենք ներկա մատենախոսականը՝ որ մեր խնդրանքը հաճեցավ ռուսներեն թարգմանել Արծաճապատիվ Կոմիտաս Վ. Ի Բեռլին»¹³:

Թարգմանության որպիսության մասին ծանուցում տալու նպատակով հարկ համարեցինք մի պարբերություն մեջ բերել Կոմիտասի թարգմանությունից.

«Հայ թարգմանության ժամանակը կարելի է մոտավորապես միայն սահմանել: Շատ հավանական է, որ դա կատարված լինի ասորական շրջանում, այսինքն Հայոց գրականության առաջին դարերում: Շատ կարելի է մույնպես, որ այս թարգմանությունը հասնի մինչև Ե դարը, բայց դրա համար գլխավոր ապացույցը ոճի մաքրությունն է, իսկ գրաբարի ոճի մաքրության և լեզվի ճշտության հասկացողությունը մեր մատղաշ գիտության մեջ բավական պայմանական է, և այդ նշաններով միայն վերագրել այս կամ այն դարում, կամ այս կամ այն քառորդ դարում, հավասար է գուշակության»¹⁴:

Պետք է ենթադրել, որ ամսագրի խմբագիր Մեմելիշյանը գոհ է եղել Կոմիտասի կատարած թարգմանությունից, այլապես մի մոր առաջարկով չէր դիմի նրան:

Կոմիտասի թարգմանչական գործունեության վերաբերյալ մեզ հայտնի հաջորդ փաստարկը մույնպես կապված է Գաբրիել Մեմելիշյանի նախաձեռնության հետ: Վերջինս խմբագրություն առաքված գրքերի մեջ ծանոթանալով Լևոն Մսերյանցի «Հայերեն բարբառախոսություն» վերնագրով ռուսերեն աշխատությանը, «Հանդես ամսօրյա» պարբերականում «Նոր հրատարակությունը» ենթավերնագրի տակ տպագրած անոտացիայի մեջ խոսելով այս աշխատության մասին, համոզմունք է հայտնում, որ «Լեզվագետները ապահովապես շնորհակալությամբ պիտի ընդունեն այս ներկասիրության թարգմանությունը»¹⁵: Այնուհետև նա ո'չ միայն հայերեն է թարգմանում Լ. Մսերյանցի աշխատությունը, այլև խոստանում է պատեմի առիթով հրատարակել «Հանդես ամսօրյայում», սակայն քանի որ ինքը «կատարելապես չի տիրապետում ռուսերենին», որոշում է իր թարգմանությունը շտկելու նպատակով

¹² «Հանդես ամսօրյա», Վիեննա, № 8-9, էջ 267:

¹³ Նույն տեղում: Ցավով է, որ Կոմիտասագիտության մեջ խոսք չկա Կոմիտասի կատարած այս թարգմանության մասին: Գրառումը տեղ չի գտել մեկ Ն. Ա. Թեյմուրազյանի կազմած «Բիշխոգրաֆիայում», Ե., 1957 թ.:

¹⁴ Նույն տեղում, էջ 270:

¹⁵ «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1898, № 7, էջ 214:

դիմել Կոմիտասի օգնությանը: Գ. Մենելիշյանի այս առիթով Կոմիտասին գրած նամակը մեզ չի հասել, սակայն որոշ լուսաբանումներ տեղ են գտել Կոմիտասի գրած պատասխան նամակում:

«Սիրելի բարեկամ,- գրում է Կոմիտասը Մենելիշյանին ուղղված նամակում,- ես միշտ պատրաստ եմ, որքան ձեռքիցս կգա աջակցելու Ձեր Հայրությանը: Խնդրեմ առաջելու կարգադրություն արեք, որ ազատ ժամերին Ձեր թարգմանությունը և բնագրի [ոտևերների, խ. Ս.] համեմատությունը ի գրումի կանեմ»¹⁶:

Այս ամենից հետո, Կոմիտասի կատարած խմբագրական աշխատանքի՝ «ի գրումի» արածի մասին մեզ չհաջողվեց որևէ նոր մանրամասներ ի հայտ բերել, որոնցմենքը չտվեցին շոշափելի արդյունք: Սակայն հայտնի դարձավ, որ այդ՝ Գ. Մենելիշյանի թարգմանած և Կոմիտասի խմբագրած աշխատությունը 1898 թվականին հրապարակվել է Վիեննայում «Համդես ամսօրյա» պարբերականի հոկտեմբեր նոյեմբեր միացյալ համարում¹⁷:

1899 թվականի մարտին Լևոն Մանթլանցի հեղինակած «Հայերեն բարբառախոսություն» աշխատությունը Գ. Մենելիշյանի թարգմանությամբ ու Կոմիտասի խմբագրությամբ լույս է տեսնում Վիեննայում նաև առանձին գրքով՝ իբրև «Ազգային մատենադարան» մատենաշարի Լ գիրք:

Գ. Մենելիշյանը իր կատարած թարգմանությունը իրականացրել է արևմտահայերենով, սակայն բնագրում որոշ նախադասություններ տպագրված են արևելահայերենով: Պետք է ենթադրել, որ այդ նախադասությունները իրենց վրա կրում են Կոմիտասի կատարած խմբագրական աշխատանքի կնիքը:

Այս գրքի առաջաբանում թարգմանիչ Գ. Մենելիշյանը, այնչալ բացատրություններ չի հետ, հարկ է համարել անդրադառնալ և իր գոհումակությունը հայտնել նաև Կոմիտասի կատարած աշխատանքի վերաբերյալ.

«...Քանի որ մեզի համար,- գրում է նա,- կարևորագույն լեզվի՝ ոտևերների ուսումնս նոր էր, չխորշեցանք մեր բարեկամաց աջակցության դիմելու, որոնք սիրահոժար հանձն առին մեր թարգմանությունն աչքե անցնելու, և իրենց կարևոր դիտողություններն ընելու: Ի մասնավորի էջմիածնի միաբան Սողոմոնյան Կոմիտաս վարդապետին կհայտնենք հրապարակավ մեր ջերմ շնորհակալությունը...»¹⁸:

Գ. Մենելիշյանի խոստովանությունը հիմք է տալիս ասելու, որ աշխատության խմբագրման ընթացքում նրանց միջև տեղի է ունեցել ծավալուն խոսակցություն՝ փոխընթերցումներ, որոնք, սակայն, մեզ չեն հասել: Անհրաժեշտության դեպքում Կոմիտասի կատարած խմբագրական աշխատանքի մասին լեզվաբանները կարող են գալ համապատասխան եզրակացություն:

¹⁶ «Գրական թերթ», Ե., 1991, № 18, 14-րդ հունիսի նամակը:


¹⁷ ՑԵՄ, № 10-11, էջ 306-316:

¹⁸ ՑԵՄ վերը նշված գրքի «Ցառաջարանը», էջ 2 -- է:

ժամանակագրական առումով Կոմիտասը հաջորդ թարգմանական աշխատանքը կատարել է 1904 թվականին, երբ գտնվում էր Էջմիածնում և աշխատում Հոգևոր Մեմարանում որպես երաժշտության ուսուցիչ և երգչախմբի ղեկավար: Հենց այս թվականի ընթացքում էլ նա ձեռնարկում և իրականացնում է Ֆրից Ալբերգի¹⁹ «Ձայնամարդություն» վերնագրով աշխատության թարգմանությունը: Թե ո՞րն է եղել այս գործի թարգմանությունը ձեռնարկելու շարժառիթը, մեզ չհասցողվեց պարզել, Կոմիտասը այդ մասին ոչ մի հավաստիացում չի թողել: Հավանական ենթադրությունն այն է, որ այդ ձեռնարկումը կատարված է եղել Մեմարանի ուսուցման բնագավառում որոշակի ծրագրերի գործադրման հետ: Անհավանական չէ, որ Կոմիտասը այդ բանն արել է ավելի հեռում գնացող ծրագրերի իրականացման նկատառումով՝ թերևս կապված նաև երաժշտանոց հիմնելու մտադրության հետ:

Թարգմանության մասին որոշ պատկերացում տալու նկատառումով, հարկ համարեցինք մի հատված ներկայացնել ընթերցողների ուշադրությանը.

Թեև խոսափողն իր կազմով ինքնաբեր է գործում, բայց և կարևոր է իմանալ, թե ի ն չ ե ղ ա ն ա կ ո վ է ձայն առաջ գալի: Երբ մեծը կամենում ենք երգել, ձայնալարերը սկսում են անմիջապես ինքնըստիճյան գործել, նոցա շարժական ծայրերը մոտենում են իրար, ձգվում են, լարվում և ձայնանցը փակում, ցնցողիների հետև գտնված եռանկյան ճեղքը ծածկվում է, իսկ թոքերիցն արտահոսող օդըն էլ ձգված լարերը ենթարկում է շարժողության, և ձայնը պատրաստ է: Որպեսզի ձայնալարերի տատանման եղանակը լավ ըմբռնենք, նախապես պետք է պարզենք: Հենց այն բույսին, երբ պետք է ձայնը հնչել սկսե, ձայնալարերը հանգիստ են, այսինքն դիրքը հավասարակշիռ է: Ձայնանցն էլ փակ է: Ձայնը սկսելու թուպին՝ տակից օդի հոսանքը ճնշում է ձայնալարերի վերա, որոնց արտաքին ծայրերը կորանում են կողքից դեպի վեր և միայն հաստատուն ծայրերն են դեռ միացած մնում: Այսպես, ձայնարանը բացվում է և օդին տալիս է ազատ ելք: Բայց հենց այդ օդը խանգարում է ձայնալարերի հավասարակշռությանը, իսկույն առաձգականության ուժն է առաջ գալի և փորձում է նոցա նախկին հավասարակշռությանը բերել: Սկսում է օդի հոսանքի և առաձգականության մեջ կռիվ,



¹⁹ Ֆրից Ալբերգ - Մեզ հասցողվեց տեղեկություններ հայտնաբերել այս հեղինակի ինքնության վերաբերյալ:

որ վերջանում է, երբ պարտություն է կրում օդի հոսանքը, իսկ ձայնավարերն ըս-
կանքում են. ստիպված իրենց մախկին դրությունը բռնել...»²⁰:

Կոմիտասի կատարած թարգմանությունների մասին մի հետաքրքրական ու արժեքավոր դրվագ պահպանվել է ման Աղավնի Մեսրոպյանի հուշերում: «...Փարիզի հայտնի Միջազգային երաժշտական համագումարեն վերադարձին,- գրում է Աղավնի Մեսրոպյանը,- Կոմիտասի բերած երաժշտական բազմաթիվ գրքերուն մեջ կային ման շարք մը ֆրանսիական ու գերմանական զուգավոր պատկերազարդ երաժշտական մանկական գրքուկներ»: «Այդ գրքերեն մի քանին,- տողատակի ծանոթագրության մեջ գրում է Ա. Մեսրոպյանը,- ինչպես ման Կոմիտասի ձեռքով կատարված թարգմանության ձեռագիրը (ընդգծումը մերն է, Խ. Ա.) այժմ կցտնվին երևանի Կոմիտասյան արխիվի մեջ»²¹:

Մեզ չհաջողվեց Կոմիտասի արխիվում հայտնաբերել Ա. Մեսրոպյանի «Ռիշտատական այդ մանկական գրքերն ու «թարգմանության ձեռագրերը», սակայն Ռուշագրողի գրառման մեջ պահպանված տեղեկությունը ինքնին հետաքրքիր է ու մի մոդ կողմից է բացահայտվում Կոմիտաս թարգմանչի մտայնությունը: «Կոմիտասի երազն էր,- շարունակում է Ռուշագիրը,- աստուծո օրինակով գումարկոր պատկերազարդ երաժշտական գրքույկներ կազմել և հրատարակել իր սիրելի հայ մանուկներուն համար»²²:

Այս ամենով, սակայն, չեն ամբողջանում Կոմիտասի կատարած թարգմանությունները, ուստի կոմիտասագիտությունը պետք է շարունակի իր հետազոտական աշխատանքները:

²⁰ Տե՛ս ԶԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 747, էջ 13-14: Մեզ հայտնի է, որ երաժշտագետ Յիւրան Լոյսնա-
գլուզյանը զբաղվում է Կոմիտասի այս թարգմանությամբ ձեռագիրը տպագրությամբ մախապատրաստե-
լու աշխատանքով: Հաջողություն ունի ցանկանում միայն այդ Ռուստարակությունը իրականացնելու գոր-
ծով:

²¹ Տե՛ս՝ «Ժամանակակիցների կոմիտեի մասին», Ե., 1960, էջ 265:

²² ក្រុមហ៊ុន ហេតុការណ៍:

ՊԵՏՐՈՍ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պարմական գիտությունների թեկնածու

ԱՍՏՎԱԾԱԾՆՁԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ 1500-ԱՄՅԱԿԸ ԵՎ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՅԸ

1934 թվականին լրացավ Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակը: Բնականաբար այդ հոբելյանը, որպես ազգային մշամակալից իրադարձություն, պետք է համապատասխան պատշաճ վերաբերմունքի արժանանար, սակայն Մայր Հայրենիքի քաղաքական կացությունը, Եկեղեցու մկատմամբ ձեռնարկված քոմարարքներն ու հոգևորականների հետապնդումները հմարավոր չէին դարձնում միայն մի կարևոր միջոցառում Հայաստանում կազմակերպելը: Գիտակցելով հոբելյանի անցկացման հույժ կարևորությունը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանը մեծ ջանքեր է թափում այն արտասահմանի թեմերում կազմակերպելու և պատմական այդ թվականը համդիսավորելու համահայկական հոբելյանով: 1934 թվականի հոկտեմբերի 1-ին հայրապետական կոմիակով (№ 1076) Ամենայն Հայոց Կաթողիկոսն ազդարարում էր. «Հայրապետական այսու կոմիակաս յայտարարենք զայս ամ ողջոյն տարի յոբելյանական»¹:

Նույն կոմիակով Երուսաղեմի հայոց Պատրիարք Թորգոմ արքեպս. Գուշակյանը կարգվում էր կաթողիկոսական ցերկայացուցիչ և «զղեկավար կազմակերպության գործոյս»²: Թորգոմ Պատրիարքն առանձին պատրաստականությամբ ու գոհունակությամբ ձեռնամուխ եղավ իր մոր պարտականությունների կատարմանը: «Սիոն» ամսագրի հոկտեմբերյան համարի խմբագրականը, որ կրում էր «Հազարհինգհարիւրամեակ Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան. 434-1934» խորագիրը, վկայում է ոչ միայն պահի համդիսավորության գիտակցությունը, այլև այն մեծ պատասխանատվությունը, որ դրվում էր Երուսաղեմի Պատրիարքի ուսերին³:

Կաթողիկոսական մեկ այլ կոմիակով (№ 1077) վեհափառ Հայրապետը Թորգոմ Պատրիարքին հանձնարարում է ստեղծել «զառանձին լանձնաժողով ընդ մախագահութեամբ քերով»⁴: Շուտով հանձնաժողովը կազմվում է, որի մասին 1934 թվականի դեկտեմբերի 1-ին տպագրվում է հատուկ շրջաբերական⁵:

¹ «Թուշարձամ Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան հազարհինգհարիւրամեակի», Երուսաղեմ, 1938, էջ 538-540:

² Անդ:

³ «Սիոն», ամսագիր, Երուսաղեմ, 1934, № 10:

⁴ «Թուշարձամ», էջ 541-542:

⁵ Անդ, էջ 544-547:

Ամբողջ 1935 թվականի ընթացքում հոբելյանական միստեր են գումարվում հայկական գրեթե բոլոր հայաշատ գաղթավայրերում՝ ԱՄՆ, Անգլիա, Ավստրիա, Արգենտինա, Բելգիա, Բուլղարիա, Գերմանիա, Եգիպտոս, Եթովպիա, Թուրքիա, Իտալիա, Իրաք, Լիբանան, Կիպրոս, Հնդկաստան, Հունաստան, Պաղեստին, Պարսկաստան, Սիրիա, Ռումինիա, Շվեյցարիա, Ֆրանսիա և այլուր: Հոբելյանական միջոցառումների մասին ընդարձակ տեղեկատվություն է տպագրվում «Սիոն» ամսաթոշակում⁶, Նկատի ունենալով, որ այդ ժամանակ Փարիզում կենտրոնացած մեծ թվով ընտիր հայ մտավորականությունը կար և համապատասխան գիտական միջավայր, հանդիսությունների կենտրոնատեղի համարվեց այն: Այստեղ էլ պետք է տեղի ունենային եզրափակիչ հանդիսավոր արարողություններն ու միստերը⁷:

Փարիզյան այդ միջոցառումների կազմակերպման պատասխանատվությունը դրվեց Գարեգին արքեպս. Հովսեփյանցի վրա, որն այս իրադարձություններից քիչ առաջ վեհափառ Հայրապետի կոնդակով նշանակվել էր Արևմտյան Եվրոպայում կաթողիկոսական ներկայացուցիչ: Գարեգին արքեպիսկոպոսը զգալի ջանքեր և եռանդ գործադրեց Աստվածաշնչի թարգմանության հոբելյանին մեծ շուք և հանդիսություն հաղորդելու ուղղությամբ: Նրա անձնական հրավերով միջոցառումներին մասնակցելու ցանկություն են հայտնում հայ և օտար շատ նշանավոր մտավորականներ: Բնականաբար, Գարեգին արքեպս. Հովսեփյանցը հրավեր է ուղարկում նաև իր վաղեմի թարեկամ, ճեմարանական տարիներից մտերիմ, Բյուրեղի Ազատ համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, պրոֆ. Նիկողայոս Աղոնցիին⁸, որը Փարիզից Բյուրեղ էր տեղափոխվել 1931 թվականի վերջերին: Այստեղ՝ փարիզյան գիտական միջավայրից ու հայկական կենտրոններից շատ հեռու, նա իրեն միայնակ էր զգում: Բացի այդ, կոնց' Օդա Աղոնցի ծանր և երկարատև հիվանդությունը նրան ամբողջությամբ զրկել էր գիտական աշխատանք կատարելու հնարավորությունից:

Այդ օրերին Արտաշես Չիլիճկիրյանին գրած նամակում պատմաբանը խոստովանում է. «Օտտ ծանր օրեր են անցնում, տարին բոլորեցի (1934 թվականը - Պ.Շ.) գրեթե կոշմարի մեջ և տակավին շարունակվում է: Մենակ եմ, ամբողջ հոգսը վրաս է, որ մեծ արգելք է զբաղումներին: Մնացած եմ շվարած, քեկած հոգով և մոլորած զխով»⁹: Կոնց մահը¹⁰ հնարավորություն չընձեռեց Ն. Աղոնցին մասնակցություն ունենալու 1935 թ. մարտի 10-ին Գարեգին արքեպս. Հովսեփյանցի նախագահությամբ Փարիզի «Մյուրթյուալիթե» սրահում հրավիրված հանդիսություններին: Ի միջիայրոց, Ն. Աղոնցը պետք է լիներ հիմնական զեկուցողը այդ օրը անցկացվող միջոցառման, սակայն «փոխանակ նրա, որ սգավոր լինելով չէր կրքեր ներկա գրտ-

⁶ «Սիոն», 1935, № 12, էջ 365 և հտ.:

⁷ Այդ միջոցառումների մասին մամուլմասն տե՛ս ֆրանսահայ «Ցառաք», «Ապագայ» և այլ օրաթերթերի 1935 թվականի համարները:

⁸ Ն. Աղոնցի և Գարեգին արքեպս. Հովսեփյանցի մասնակցությունը տե՛ս մեր «Երկու զազա» հրապարակման մեջ, «Հասկ հայագիտական», Բյուրեղ, 1994, 2 տարի, էջ 339-352:

⁹ Ցե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1963, 1, 5, էջ 24:

¹⁰ Օդա Աղոնցը մահացել է 1935 թ. հունվարի 23-ին:

ճղվիլ, վերջին պահում խոսելու կիրավիրվի և. հասմանյանը»¹¹: Նույն օրերին «Ա-նահիտ» ամսագիրն ափսոսանքով արձանագրում է. «Պրոֆ. Ն. Ադոնցը, որ հրավիրված էր այդ ճշմարտոր ժամանակաշրջանին պատմական պարզաբանումն ընելու, իր ծանր սուգին տակ ընկճված՝ չկարողացավ զալ իր մասնակցությունը բերել այդ հանդեսին»¹²:

Ամիսներ անց, սակայն, երբ անձնական վիշտը փոքր-ինչ մեղմացել էր, 1935 թվականի հոկտեմբերի 20-ին, Բրյուսելի Գեղարվեստասիրաց սրահի մեջ հրավիրված միջոցառման ժամանակ Ադոնցը հանդես եկավ ընդարձակ զեկուցմամբ¹³: Նա իր զեկուցմամբ բացեց հանդիսությունը և բեղցիացի, ֆրանսիացի, հայ մերկաներին ծանոթացրեց հանդիսությանը բուն մպատակին, ապա պատմական «ակնարկ մը Եւտելով գրերի գլուտին և թարգմանության մասին»¹⁴, ընդարձակորեն վերլուծեց Աստվածաշնչի թարգմանության հանգամանքներն ու ճշմանկությունը հայ մտավոր կյանքում:

Հորեղյանական ամփոփիչ հանդիսությունները պետք է տեղի ունենային 1936 թ. մարտին, Փարիզում: Հորեղյանական հանձնաժողովը 1935 թ. հոկտեմբերին հատուկ զրույցմամբ դիմում է Ադոնցին՝ խնդրելով հանդիսությանը մասնակցել զեկուցմամբ: Նոյեմբերի վերջերին Եւ տալիս է իր զրավոր համաձայնությունը և մերկայացնում զեկուցման թեման: Կնոջ մահից հետո առաջին անգամ էր, որ պետք է հրապարակային ելույթով հանդես գար փարիզյան մտավորականության ընտրաճու առջև:

Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակի տոնակատարության վերջին ճիստը տեղի ունեցավ 1936 թվականի մարտի 29-ին Սորբոնի համալսարանի հանդիսությունների մեծ դահլիճում: Նիստի ժամանակ ելույթներ ունեցան հայ և ֆրանսիացի շատ ճշմարտոր մտավորականներ՝ մերկայությամբ Ֆրանսիայի պետական և հասարակական հայտնի գործիչների՝ զորավարներ Պրեմոն, Շարտինիե, հայագետ Ֆրեդերիկ Մակլեր, հայտնի մտավորականներ Մարսել Պան, Բենուա դ'Ազգի և այլք:

Հանդեսը վարում է Ֆրանսիայի Ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Սուլիեն: Վերջինիս բացման խոսքից հետո ընթերցվում են պրոֆեսորներ Շառլ Դիլի և Անտուան Մեյեի զրավոր ուղերձները, որոնք ինչ-ինչ հանգամանքների բերումով չէին կարողացել մասնակցել ճիստին: Այնուհետև լսվեցին Գաբրիել արքեպս. Հովսեփյանցի, պրոֆեսորներ Գաբրիել Միլլեի, Ամիդե Կաստուեի, Լազար Լեվիի և Նիկողայոս Ադոնցի զեկուցումները: Ադոնցի զեկուցումը մերկաների վրա թողել է անցնելի տպավորություն: «Անահիտ» ամսագիրն արձանագրում է. «Պրոֆ. Ն. Ադոնց հմտալից ու շահեկան ճառ մը կարդաց. ճիստ ունենալով Հայ Աստուածաշունչը և անոր պատմական տարողությունը»¹⁵:

¹¹ «Թուշարձան», էջ 84:

¹² «Անահիտ» ամսագիր, 1935, № 3-4, էջ 108-109:

¹³ Տե՛ս «Բազմավեպ» ամսագիր, Վենետիկ, 1936, № 3-7, էջ 124:

¹⁴ «Թուշարձան», էջ 92:

¹⁵ «Անահիտ», 1936, № 3, էջ 2:

Ֆրանսիական հայտնի օրաթերթերը հատկապես շեշտել են Ն. Ադոնցի զեկուցման կարևորությունը և այն զնախատել որպես շատ կողմերով հորույթ ու գիտական մեծ հետաքրքրություն մերկայացնող («Թամ», «Մաթեն», «Փըթի փարիզիեն» և այլն): Զորավար Պրենդը «Լա Ֆրանս Միլիթեր» օրաթերթում հանդեսն անվանում է «հայ մշակույթը պանծացնող երևույթ», որտեղ վեր հանվեց հայ ժողովրդի գիտական հանճարն ու մտավորական անկրկնելի կարողությունները», իսկ Ադոնցի զեկուցումն անվանում է տոնախմբությունների «զարդը»¹⁶:

Այս զեկուցումը, որ կարդացվել էր ֆրանսերեն, մախ լույս տեսավ հայերեն թարգմանությամբ¹⁷ և միայն երկու տարի անց՝ հոբելյանին մվիրված ֆրանսերեն ժողովածուում¹⁸: Ավելի ուշ այն թարգմանվեց և հրատարակվեց մաև ռումիներեն¹⁹:

Զնայած հայերեն թարգմանությանն ու մրա երկու հրատարակությունների իրողությանը, Ն. Ադոնցի սույն հոդվածը դասվում է պատմաբանի առավել քիչ հայտնի աշխատությունների շարքին: Հայաստանյան ընթերցողը, ըստ էության, հմարավորություն չի ունեցել ծանոթանալու ադոնցյան այս փոքրիկ գլուխգործոցին²⁰: Ահա այս պատճառով անհրաժեշտ համարեցինք ընթերցող լայն հասարակայնության ուշադրությանը հրավիրել շուրջ 70 տարի առաջ գրված ադոնցյան այս մասունքը, որտեղ արծարծված հիմնական գաղափարն այնքա՛ն համահունչում է այսօրվա մեր մտածումներին ու երևույթի զնախատման մեր մոտեցումներին:

Հոդվածի ինքնագիրը անհայտ է: Տպագրում ենք «Անահիտ» հանդեսում լույս տեսած թարգմանությունը, որը համեմատել ենք «Յուշարձանում» հրատարակվածի հետ: Թարգմանությունը հրապարակում ենք մույնությամբ, անհրաժեշտ կետադրական ու ուղղագրական միջամտություններով: Տողատակի աստղանիշերով ծանոթագրությունները պատկանում են «Անահիտի» խմբագիր Արշակ Չոպանյանին:

¹⁶ Ամբողջ հանդեսի մասի մամուլմասն տե՛ս «Անահիտ», 1936, № 3, ապրիլ-մայիս, էջ 1-29:

¹⁷ Տե՛ս Ն. Ադոնց, Հայացած Աստվածաշունչը և ամոր պատմական տարողությունը, «Անահիտ», 1936, № 3, ապրիլ-մայիս, էջ 16-23: Հայերեն թարգմանությունը զետեղված է մաև «Յուշարձան» հոբելյանական ժողովածուում, էջ 318-329:

¹⁸ N. Adoncz, La Bible Armenienne et sa portée historique, տե՛ս, "Ce le bration solennelle du Quinzième Centenaire de la traduction armenienne de la Bible, au Grand Amphithéâtre de la Sorbonne, Dlmanshe 28 mars 1936", Paris, Libr. Ernest Leroux, 1936, p. 47-63.

¹⁹ Տե՛ս «Ան», ամսագիր, Բուխարեստ, 1941, № 1, էջ 90-100:

²⁰ Ն. Ադոնցի սույն աշխատության մամուլմասն վերլուծությունը տե՛ս R. Adallan, From scripture to text to icon: The Armenian Bible in view of modern technology and scholarship. In: "Armenia and The Bible", Papers presented to the International Symposium Held at Heidelberg, July, 16-18, 1990. Atlanta, 1993, p. 1-14:

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆՉԸ ԵՎ ԱՆՈՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հայացած Աստվածաշունչը, որում հազար հիմզհարյուրամյակը կտոմեմք, տարեկից է լատին թարգմանության, որ ծագող է Վուլկաթա անունով: Արդարև՝ 392-ից է, որ Ս. Հերոնիմոս որոշեց լատիներենի թարգմանել Հին Կտակարանի եբրայեցերեն բնագիրը և իր այդ աշխատությունը ավարտեց 405-ից: Ընշտ նույն միջոցին է, որ Ս. Սահակ և Ս. Մաշթոց կատարեցին իրենց անմահ գործը: Մաշթոցի հետազոտությունները՝ հայ Այթուքենն ստեղծելու համար, 392-ից սկսված, ավարտեցան 405-ից. այս թվականին ոչ միայն տառերը պատրաստ էին, այլև Սուրբ Գիրքը, գեթ մասամբ, թարգմանված էր արդեն:

Անոնք, որ Աստվածաշունչը հայացնելու ազնիվ աշխատանքն ստանձնած էին, չէին կրնար երևակայել, որ իրենց գործին տարեդարձը օր մը պիտի տոմվեր պանդխտության մեջ, լատին մշակույթի հեռավոր հողին վրա, ուր առաջին հայ մը եկած է այն դարուն իսկ, երբ լատին թարգմանությունը կկատարվեր, Arbandus (Երվանդ) անունով մեկը, որ իբր նահանգապետ Գալլիան կառավարեց 464-են 469-ը: Բնահաճ դիպվածը՝ այսպես մեզ կդնե տարեդարձներու եղանկի մը առջև, տարեդարձը՝ հայ Աստվածաշունչին, լատին Աստվածաշունչին և հայոցս այս երկրին մեջ բնակիլ սկսելուն:

Վուլկաթան լատին երկիրներում համար չունեցավ այն կարևորությունը, զոր հայ Աստվածաշունչն ունեցավ հայ ժողովուրդին համար: Լատին գրականությունը շատոնց ի վեր գոյություն ուներ, երբ Վուլկաթան երևցավ, մինչդեռ հայ Աստվածաշունչը սկզբնավորությունը եղավ հայ գրականության, սկզբնավորությունը նոր թվականի մը, ուր հայ ժողովուրդը, առաջին անգամ ըլլալով, գրիչ ի ձեռին իր տեղը կուգա գրավել լուսավորյալ մարդկության մեջ:

Հայ Աստվածաշունչը ազատեց հայությունը իրանական աշխարհին մեջ ծուլվելու վտանգեն: Ամրացուց քրիստոնեությունը Հայաստանի մեջ և խաչին ճառագայթները հակադրեց հարձակողական մագդեզականության կրակին: Հայաստան վերջնականապես փոխվեցավ էականորեն քրիստոնյա դաշտի մը և այլևս այդպես մնաց դարերու ընթացքին:

Երկրին բարոյական ու մտավորական վերականգնումը բնականաբար արթնցուց ճշմարիտ ազգային գիտակցությունը: Պետք չէ մոռանալ, թե հայ Աստվածաշունչը երևցավ Բյուզանդիոսի և Պարսկաստանի միջև Հայաստանի բաժանումեն անմիջապես հետո, որուն հետևեցավ քիչ հետո Հայաստանի թագավորության անդարմանելի կործանումը: Այնուհետև գոյություն ունեցան երկու Հայաստաններ՝ մին

բյուզանդական, մյուսը պարսկական, ազգային մարմնի մը երկու հատվածներ, որոնց յուրաքանչյուրը դեպի տարբեր ճակատագիր մը փխրո:

Հայոց պատմական կյանքը պարզվեցավ երկու տարամետ ուղղություններով, զոր կարելի է կերպով մը նկատել իբր աստվածաշնչական ոգվույն երկու այլազան արտահայտությունները:

Կուզեի քանի մը խոսքով անդրադառնալ այս կրկնակի հոսանքին վրա, հանել ատաք ատկից հետևություն մը, որ կրնա մեզի օգտակար լլլալ: Պարսկական Հայաստանը եղավ վառարանը ազգային մշակույթին: Նորածին գրականության հիմնադիրները սքանչելի կերպով անոր ծառայեցին: Թարգմանությանը այն գրական ու պատմական հրաշակերտին, որ է Սուրբ Գիրքը, հետևեցավ կամ ընկերացավ հայացումը դարուն մշանավոր արտադրություններեն ամբողջ շարքի մը, ինչպես: Հովհան Ոսկերեանի, Բարսեղ Կեսարացիի, Եփրեմի, Ափրաադի (Ջգոմ) գործերու, Եվսեբիոսի Բրոնիկոնից և Եկեղեցական պատմության:

Եվ ահա մախախայրիքը ինքնուրույն ստեղծագործության մը՝ Ս. Գրիգոր Լուսավորչի վարքը, Հայաստանի քրիստոնյա թագավորներու պատմությունը, հայ դպրության հոր՝ Մաշթոցի վարքը, կամքի ազատության մասին հմարամիտ տեսություն մը, որուն կրկերանա հերքումը քրիստոնեական վարդապետության հակառակ այլաստ աղանդներու: Այս այնքան հուզիչ մտավորական զարթումը պիտի ընդմիշտ պահե, ինչպես երջանիկ մանկություն մը, իր հրապույրն ու թարմությունը գրական առաջին մերժման և հաջորդ սերունդին կողմն պիտի համարվի իբր ոսկեդարը հայ դպրության:

Հոգեկան այսպիսի ծաղկավթթումի մը հանդեպ պարսիկ իշխանությունները պետք էր ըմտություն մը ընեին երկու քաղաքականության միջև, զոր կթելադրեին քանիմաց խորհրդականներ՝ կա՛մ բռնաբարել քրիստոնեությունը և կա՛մ զայն բյուզանդական քաղաքականությունեն հեռու պահել, ինչ որ փորձվեցավ:

Հայերը ատկից օգտվեցան՝ ընդմիշտ ապահովելու համար Հայ Եկեղեցվո բացարձակ անկախությունը և անոր ազգային նկարագիրը վարչական և վարդապետական (dogmatical) տեսակետով:

Եկեղեցին այդ թվականին ոչ միայն պահպանեց իր կրոնական գիտակցության, այլև կընդգրկեր մարդկային մտքի թլոոր արտահայտությունները: Ազգային Եկեղեցի մը ունենալ՝ կմշանակեր ունենալ սեփական մշակույթ, ինքնահատուկ լեզու, գրականություն, արվեստ, մեկ խոսքով՝ ամեն ինչ, որ կըմորոշե ազգի մը հոգեկան կյանքը:

Հայաստանյազ Եկեղեցիին ազգային գիծը իր ավատական կառուցվածքին մեջ կկայանա: Երբեմնի Հայաստանը կներկայացներ երկիր մը՝ մեծ ու պզտիկ քանի մը տառնյակ տանուտեությունց ցանցով մը ծածկված:

Եկեղեցին կազմակերպվեցավ քաղաքական քարտեսին հարմարվելով, հոգեկան իշխանությունը կտոր-կտոր եղավ ու գլխավոր մախարարությանց միջև բաժնրվեցավ: Ամեն մեկ իշխան կհավակներ ունենալ եպիսկոպոս մը, հոգևոր պետ մը՝ իր կալվածին համար, թլոոր եպիսկոպոսները բացահայտորեն ստորադասված էին

Եկեղեցվո գերագույն պետին, ինչպես և իշխաններն իրենք իսկ կճանաչան զգրագրությունը իայ, պարսիկ կամ արաբ թագավորներուն: Հայաստանին անճանաչմանցած է մվիրապետական համրիչը մետրոպոլիտներու, ինքնավար կամ ինքնագլուխ արքեպիսկոպոսներու:

Եկեղեցին, ավատական ռեժիմին հետ մույնացած, ամոր առավելություններն ու պակասությունները կյուրացներ: Այսուհանդերձ՝ աշխարհագրական և հոգևոր իշխանությանց միջև ընդհարումները հաճախադեպ չէին, ոչ ալ ծանր: Համերաշխությունը կհայտնվեր մանավանդ արտաքին վտանգի պահուն: Նախարարները եկեղեցական ժողովներուն կմասնակցեին մույնքան իրավունքով, որքան եպիսկոպոսները, և այս վերջինները հախարարներուն կողքին կկենային քաղաքական խոսվությանց միջոցին:

Ատոնք երկու սատարներ են, որ կանգուն պահած են պատիվն այդ երկրին, հըմայքն այդ ժողովուրդին, որ մույնիսկ այն շրջաններուն, ուր կեղեքված էր, երբեք չէ կորսնցուցած իր արժանապատվությանց գիտակցությունը և պատրաստ էր իր քաջարի պետերու առաջին կոչին՝ կովի երթալու: Պետք է կարդալ իայ պատմաբանները, զադափար կազմելու համար այն վստահության վրա, զոր կենրոնչեին իր իշխանները, այն հիացման վրա, զոր առաջ կբերեր ամոնց քաջությունը:

Արքայական գահուն անկումեն հետո, Հայաստան կունենա շրջաններ խոսվությանց և հեղափոխությանց, որ հաջորդաբար կայաթին, քամի մը տանցյալ տարիներով իրարմե զատված, միցն այն վայրկյանն, ուր օտար լուծը թոթափեցավ:

Թ դարու վերջերեն իսկ սկսյալ, կտեսնվին շարք մը իշխանապետություններ, որ մեկը մյուսին ետևեն ոտքի կկանգնին, և որոնց տմանք թագավորություն անունը կկրեն: Ժ դարուն ատոնց թիվը տասներկուքի չափ էր, և ատոնք ինքզինքնին այնքան անկախ կզգային, որ առանձին հարաբերություններ կհաստատեին Բյուզանդիոնի հետ: Կոստանդին Միրանանին, հայազգի Վասիլի թոռը, ատոնց անուններն ու տիտղոսները մեզի պահած է՝ ըստ «Կայսերական արքունի դիվանագրքին»:

Հայ եկեղեցին ալ ունեցավ իր մեղության օրերը: Հույն ուղղափառությունը, կայսրության ուժերու վրա կոթնած, որևէ առիթ չէր փախցներ՝ վերսկսելու համար իր հարձակումները Հայ եկեղեցիի անկախության դեմ:

Այս վերջինը ուժգնորեն պաշտպանեց ինքզինքը և պահպանեց իր ավանդությունները, վարդապետությունները (dogma), ծեսերը և ամեն ինչ, որ ազգային անհատականությունը կկազմե: Մեկն ավելի անգամներ իր հմուտ վարդապետներն ու համբավավոր աստվածաբանները մայրաքաղաք կանգնեցան ու հոն կայսերական ժողովին առջև հայկական դատը պաշտպանեցին: Ո՛չ հրապուրիչ առաջարկներ, ո՛չ սպառնալիքներ կարող եղան ամոնց համոզումը խախտել կամ ամոնց քաջությունը թուլացնել:

Հայ եկեղեցիին պարծանքն է՝ ամեն տեսակ հալածանք կրած ըլլալը պաշտպանելու համար ինչ որ կնկատեր իր հայրերն իրեն թողված մվիրական ու անքոնաբարելի ժառանգության մը:

Այդահսի դիմացկունության մը և անոր պարտադրած զոհաբերությանց արդյունքը եղան ծաղկումը. Եկեղեցիին ծոցին մեջ, գրականության մը և արվեստի մը, որ հայոց կվերապահեն պատվավոր տեղ մը քաղաքակիրթ Արևելքին մեջ: Ըոխ ու այլազան գրականությունը, պատմական, աստվածաբանական, վարդապետական, իմաստասիրական, և արվեստը, մանավանդ ճարտարապետությունը, կազմության մեջ ինքնատիպ և գործողության մեջ՝ ազնիվ:

Մեկ խոսքով, Հայաստան իր ճիգերը պսակեց քաղաքականությամբ մը, որ ծաղկեցավ վերոհիշյալ տասներկու իշխանապետությանց մեջ և որ կրճա Բագրատունյան կոչվի՝ կարևորագույն թագավորության անունով: Անի քաղաքը, վառարան այդ քաղաքակրթության, իր վեհափառ ավերակներով այդ շիջած քաղաքակրթության շքեղությունը կվկայե:

Այսպես եղավ բնաշրջությունը արևելյան կամ պարսկա-արաբական Հայաստանին: Բայց Բյուզանդական Հայաստանը ի՞նչ կմերկայացներ նույն ժամանակաշրջանին:

Աստվածաշունչի թարգմանության միջոցին, Բյուզանդական Հայաստանը մասնակցեցավ այդ գրական շարժման: Մաշթոցի գլխավոր աշխատակիցները Բյուզանդական Հայաստանեն էին, այսինքմ՝ Եկեղյաց գավառեն, Դերջանեն, Խործյանեն և Տարոնեն, Մաշթոց ինքն իսկ Տարոնեն էր: Հունարենը հայտնապես ավելի ընտանի էր այդ շրջաններում մեջ, Հայաստանի բաժանումեն իսկ առաջ, Բյուզանդական երկիրներու դրացության պատճառով: Այդ տեղվանքի թարգմանիչներն ուրեմն ավելի լավ պատրաստված պիտի գտնվեին:

Ատեն մը ետքը Բյուզանդական Հայաստանը կթվի այլևս չհետաքրքրվի սահմանի մյուս կողմն անցած-դարձածով: Անիկա հոգածու չերևար ազգային հարցերում հանդեպ, ինչ ալ ըլլան անոնք: Ան ոչ մեկ հեղինակ տվավ հայ գրականության, ոչ ալ որևէ կրոնավոր՝ կաթողիկոսական Աթոռը գրավելու արժանի:

Բյուզանդիոն, Հուստինիանոսի օրերեն իսկ, կձգտեր Հայաստանի այդ մասը իրեն կապելու և հայերը կայսրության կյանքին ու շահերուն շրջանակին մեջ միախառնելու: Ավատական կազմակերպությունը կամաց-կամաց կործանեցավ և երկրին իշխաններուն հրավեր եղավ իրենց կալվածները փոխանակելու արքունիքին և պետության մեջ պատվակալ պաշտոններու հետ: Գաղթականական Ռոսանք մը ատկից ծայր տվավ դեպի Բյուզանդիոն, մեկ դարեն մյուսը ավելի ներս դառնալով: Ինչ ալ ըլլային այն պատճառները, որ հայերը դեպի Բյուզանդիոն կտեղեցն, պետք է հաշվի դնել հրապույրը զոր կ'ընծայեր Բյուզանդիոնն այդ թվականին, իբր կայսրություն մը՝ տիեզերական նկարագիր զգեցած և աշխարհաքաղաքացիական հղեալով մը ոգևորված:

Նոր Հռոմի մեծ հիմնադրին երազը լավ թարգմանված է իր բարեկամին՝ Կեսարիո հմուտ եպիսկոպոսին՝ ձեռքով: Հեթանոս աշխարհը, ըստ իրեն, ենթարկված էր զանազան իշխանությանց. ատկից առաջ կուգային թշնամությունը, ստրկությունը,

* Այսինքմ՝ Եվսեբիոս Կեսարացույն, խ. - Ա. Չոպանյան - Դ, Է.)

ամեն կերպ ցավեր: Պատմաբանները ջանացած են ատոր պատճառները գտնել: Ատույզ է վերջապես, թե այս բոլորը արդյունքն է բազմաստվածության մոլոր ոգի-ին: Անմիջապես որ «Զրիստոսի Ռավատքը Ռադթանակե, այդ բոլոր ակտերը, դիվա-յին արտաշնչումները պետք է անհետանան, ու միևնույն ատեն կառավարության բաժանումը զանազան վեհապետներում միջև վերջ պիտի գտնե:

«Հիմա, որ միակ Աստված մը հռչակված է, ըսավ ան, միակ կայսրություն մը պետք է աշխարհը կառավարե՝ Հոռմեացվոց կառավարությունը: Քրիստոնեական Ռավատքը և Հոռմեական կայսրությունը կկազմեն երկու ընծյուղ միևնույն ատեն թուսած՝ կարծես երկնային հրաշքով մը՝ մարդկությունը հովանավորելու համար: Գոյություն ունեցող բոլոր տերությունները, Սուրիո, Ասիո, Մակեդոնիո, Եգիպտոսի, Արաբիո, Պաղեստինի մեջ, այսուհետև միակ միություն մը պիտի կազմեն: Բովան-դակ աշխարհը միակ ազգ մը պիտի դառնա, մարդկությունը պիտի համախմբվի իր միակ ընտանիք մը՝ միակ մականի մը տակ, հելլեններու և բարբարոսներու միջև՝ առանց որևէ խտրության»:

Ասիկա բորբոքյալ հոգիով վամականի մը երազը չէր: Նոր կայսրությունը այդ-պիսի առաքելության մը կհավակներ արդարև ու կխորհեր զայն իրականացնել՝ քրիստոնեության հիմունքին վրա աշխարհաքաղաքացիական տերություն մը ստեղծելով: Բյուզանդիոնը ո՛չ հոռմեական կայսրություն մը պիտի ըլլա, ո՛չ հուճա-կան կայսրություն մը: Ան պիտի ձևացնե լայն կազմակերպություն մը համաշխարհային բնույթով, զանազան ցեղերու և լեզուներու պատկանող ժողովուրդներու հա-մագործակցության վրա հիմնված, առանց ազգային նախապաշարման:

Բյուզանդական Հայաստանը մին եղավ այն երկիրներեն, որոնք ինքզինքնին ի սպաս դրին այդ քրիստոնյա կայսրության: Փոքր Ասիո ժողովուրդներուն մեջ, որոնցմե կայսրությունը պիտի քաղեր իր կենդանի ուժերը, ոչ մեկը ավելի կամ նվազ որոշապես սահմանված ազգային մարմին մը կներկայացներ, կամ ինչ-ինչ ավան-դություններով ոգևորված կերևար, Կապադովկիա, Լյուդիա, Փոյուգիա, Գաղա-տիա, Պափլագոնիա, Պիսիդիա, Իսավրիա և ուրիշ շրջաններ շատոնց կորսնցու-ցած էին իրենց ազգային դիմագծությունը:

Այդ անվերապահ և կրավորական զանգվածին վրա կկանգներ գործուն ու ձեռ-ներեց մտքով հույն տարրը: Հպարտ՝ անցյալով մը որ մեկ հատիկ է մարդկային պատմության մեջ, զինված՝ լեզվով մը և մշակույթով մը, որ համաշխարհային դար-ձած էին հելլենիստիկական ժամանակաշրջանեն ի վեր, հույներն ունեին բոլոր առավելությունները կայսրության մեջ առաջին կարգն անցնելու համար:

Բայց բան մը կպակսեր իրենց, որպեսզի բոլորովին տեր դառնային Բյուզան-դիոնին: Ծառոնց ի վեր քաղաքաբնակ դարձած ճարտարարվեստական կյանքին վարժված, հույները կերևա, թե կորսնցուցած էին զենքի սերը: Ամեն պարագայի մեջ, իրենց զինվորական կարողությունները չէին հավասարի որ այն համբավին, զոր ունեին գործունեության մյուս ճյուղերուն մեջ:

Արդեն իսկ Հուստինիանոսի օրով, հոռի զինվորները պարսավելու համար, գա-
նոնք «յոյն» կկոչեին, որպես թե ոչ մեկ քաջ բան, իմչպես կրսե ժամանակին պատ-
միչը* ։ Կարենար ելել այդ ցեղեն։

Հայերը պիտի լրացնեին, ինչ որ կպակսեք հույներում տոկուն լեռնականներ,
գործել ու հուժկու, օժտված տպավորիչ ֆիզիկականով մը, զենքերու գործածության
մեջ քաջավարժ, ամոնք ունեին հարկ եղած հատկությունները բանակը վարելու և
զայն հաղթանակի առաջնորդելու համար։ Իրոք այ Բյուզանդիոնի զինվորական
հանձնար ծնունդով ու ծագմամբ հայ գորավարներով է ներկայացված։

Զինվորական կարողությունն է դարձյալ, որ զահուն բախտը կվճռեր, երբ ան
խախտած էր։ Ուստի և կտեսնենք, որ հայ ռազմիկները կփառասիրեն կայսերական
թագին տիրանալ ու կհասնին ասորի և մեկե ավելի անգամ տեական հարստություն-
ներ (dynastie) կհիմնեն։

Հիմա գիտենք, թե Հերակլիոս, Բյուզանդիոնի ամենն ճշամավոր կայսրերն
մին, հայ էր, ծնած Թեոդոսուպոլիս, որ մեր օրերով Էրզրում կկոչվի։ Հարստութ-
յունը, գոր ան հիմնեց, պետք է որեմն առաջին հայ հարստությունը նկատվի։

Մեծանուն արևելագետ Սեն-Մարթենը կկարծեր, թե Իսավրյան հարստության
հիմնադիրը՝ Լեոն, նույնպես հայ էր ծագմամբ, Թեոփանոս ժամանակագիրը շփոթ-
ած ըլլալու էր Գերմանիկը, այժմ Մարաշ, որ Լեոնի ծննդավայրն է, Գերմանիկոպո-
լսո հետ, այժմ Էրմենք, Իսավրիո մեջ, և սխալմամբ անոր տված ըլլալու էր Իսավ-
րացի մականունը։ Լեոն սկսավ պատկերամարտ քաղաքականությունը, իր փեսան
էր Արտավազդ Հայը, և իր զարմիկը կկրեր Սիսիմաքիոս անունը, որ ո՛չ հունական
է, ո՛չ սուրիական, ասոնք իրողություններ են, որ ուժ կուտան Սեն-Մարթենի հայտ-
նած կարծիքին։

Իսավրացիներեն հետո հայերն են միշտ, որ գերագույն իշխանությունը իրենց
ձեռքը կպահեն։ Միջայել Թլվատ, անճշան ծագումով մարդ մը, սպաննեց Լեոն Հա-
յագին, բայց հայերը իր կողմը քաշելու համար խնամություն հաստատեց հզոր ըն-
տանիքին հետ Մարիմոսի, որ Մամիկոնյանց տոհմեն պատրիկ մըն էր։ Մարիա-
մոսի դուստրը՝ գեղեցիկ Թեոդորան, զահուն վրա է, անոր շուրջ՝ իր հորեղբայրը՝
Մանվել, ժամանակին առաջին գորավարը, իր երկու եղբայրները՝ Բարդաս (վարդ)
կեսար և Պետրոնաս, իր փեսան՝ կեսար Ալեքսիոս-Մուսելե (Մուշեղ), իր երկու քույ-
րերուն ամուսինները, Արսաբեր (Արշավիր) և Կոստանդին Բաբոցիկ, բոլորն ալ
կկազմեն այն փայլուն դեմքերը, որ կայսրության ճակատագիրը կվարեն։

Վերջապես կերևա Վասիլ, հիմնադիրը ամենն փառավոր հարստության, որ
Մակեդոնական կանվանվի և իրապես հայկական է, և որո՞ւ տևողությամ միջոցին
կայսրությունը իր զինվորական ու մշակութային մեծության զագաթնակետը բարձ-
րացավ։

Ռամպո, անվիճելի հեղինակություն, Վասիլի հարստության նվիրած իր մեծա-
գրության մեջ հաստատեց, թե հայերը ժ դարուն տեր դարձած էին կայսրության, թե

* Այսինքն՝ Պրոկոպիոս Կեսարացի (ծ.յս.)

ամեն տեղ հայեր միայն կտեսնվեին: Վասիլի հետ իրենց երևումն ըրին այն հզոր հայ ընտանիքները, ինչպես Լեկապեմոս, Գուրգուաս (Գուրգեն) կամ Չմշկիկ, Փոկաս, Սկլիոոս, որոնք իրենց հերոսական ժեսերով ստեղծեցին մեծ դյուցազներգությունը, հավիտենական փառքը Բյուզանդիոնի:

Հոս տեղը չէ պարզելու երկար ու շարունակական շրթան հայ դեմքերուն, որ իրենց փայլով կլեցնեն կայսրության պատմությունը Զ դարեն ժԲ դարը, ոչ ալ գնահատելու այն անսահման ծառայությունները, զոր հայերը մատուցած են պետության՝ հանրային կյանքի բոլոր մարզերում մեջ: Հիշեցնենք միայն, որ մուսլիմ թ դարուն հեղինակական գիտությանց և հելլեն մշակույթի վերածնունդը հայոց գործն է: Բարդաս կեսար Հայն է, որ հիմնեց առաջին համալսարանը Կոստանդնուպոլսո մեջ և զայն դրավ դեկավարությանը տակ Լևոն Իմաստասերի, որ ինքն ալ հայ մըն էր, հռչակավոր, թե՛ իբր մաթեմատիկոս և թե՛ իբր հեղինակատ:

Լևոն եղբորորդին էր Հովհաննես Բերական պատկերամարտ Պատրիարքին, ուսումնական անձ մը, որդի աստղաբաշխ Բագրատի, ուրեմն հայու մը:

Պատրիարքը ուներ եղբայր մը, որ կկոչվեր Արսաբեր (Արշավիր), որուն քաղաքամերձ պալատը ժամադրավայրը եղավ գրական աշխարհին: Անշուշտ այդ սալոնին մեջ է, որ կազմված է, իմիջիպայոց՝ համբավավոր Փոտը՝ Կ. Պոլսո Պատրիարք և պարծանք օրթոտոքս եկեղեցվո: Ան հայ էր իր մորը կողմն, որ էր Իոնեն, քույրը Արսաբեր հայազգի բարձր պաշտոնատարին, Թեոդորա կայսրուհվոյն քեռայրին:

Վերջապես Զ դարեն ժԱ դար, մինչև հայ հարստության վախճանը, հայերը փառավորապես ծառայած են կայսրության և զայն դարձուցած են քրիստոնեական քաղաքակրթության այստանը ընդդեմ մահմեդականության:

«Առանց հայազգի Վասիլի, կրսե հայտնի բյուզանդագետ մը^{*}, իսլամությունը եվրոպայի վրայեն պիտի անցներ, քարոքանդ ըմելով ամեն ինչ, որ զայն այսօր Եվրոպայի և Հոմի դուստրը կկացուցանե»:

«Առանց հայ գորավարներու, Բյուզանդիոն պիտի կործաներ բարբարոսներու հարվածներուն տակ: Ծանր յոպեններուն հանկարծ երևան կուգար Հերակլ մը, Վասիլ մը, Չմշկիկ մը, Փոկաս մը, որ այդ հոգնած քաղաքակրթության մոր թարմություն մը կուտար, և այն ատեն կայսրությունը, այդ ծեր կինը,՝ ըստ բյուզանդացի պատմագրի մը բացատրության,՝ կերևար ինչպես մանկամարդ աղջիկ մը ոսկիով ու թանկագին քարերով զարդարված»^{**}:

ԺԱ դարուն մեջտեղը մեծ փոփոխություն մը առաջ եկավ: Հայկական հարստությունը կշիջանի և բոտն հակազդեցություն մը կշրթայագերծվի հայերու դեմ: Ատիկա արդյունքն էր հույն ազգայնամոլության, գեշ մշակի մը տակ արթնցած, և որ պիտի խաթարեր դարավոր բարի ավանդությունները և պիտի դրոշներ կայսրության շենքը: Այդ այնքան հրաշալիորեն պտղաբեր գործակցության անխուսափելի խզումը չուշացավ իր անդրադարձումն ունենալու կայսրության ճակատագրին վրա:

* Այսիոցն՝ Ա. Վեկո (Ճ.Խ.):

** Այս հատվածի հեղինակն է Ռամպո (Ճ.Խ.):

Կայսրերը, որ իրարու հաջորդեցին այն ատեն, ամկարող և անարժան՝ վասիլի ժառանգության, փոխանակ ջանալու դարձանումը գտնել հույներու և հայերու միջև ծագած աղետաբեր պատակտումին, բազմավճառ այդ ուղղությունը ընդգրկեցին՝ առանց գիտակցությունում ունենալու իրենց քաղաքականության ծանրակշիռ հետևանքներում: Բյուզանդական իշխանները սկսան բռնում հարձակումներ գործել Հայ վանքներում: Բյուզանդական իշխանները և կործանել հայ իշխանությունները՝ այն Եկեղեցի դեմ և ամխոհորեն աշխատեցան կործանել հայ իշխանությունները՝ այն միջոցին, երբ Սելճուքյան հրոսակները Հայկական բարձրավանդակը կըմազեցին:

Ասիկա ստիպեց հայերը Բյուզանդիոնին կոմակ դարձնելու, իրենք իրենց մեջ ամփոփվելու: Իրենց ճիգերը համախմբեցին՝ սեփական քաղաքական վատարան մը ստեղծելու համար իրենց:

Քաջ Փիլարետը, կյուրապաղատ, բարձր պաշտոնատար արքունիքին և նախկին սպասավոր Աջունդու, այսինքն՝ ընդհանուր հրամանատար բյուզանդական բանակին, քիչ ժամանակի մեջ հաջողեցավ իրեն համար կազմել ընդարձակ պետություն մը, որ Մելիտիոնեն կտարածվեր մինչև Անտիոք:

Ուրիշ հայ մը, որ նույնպես կայսրության ծառայողներն էր, Ռուբեն գորավարը, միևնույն ատեն քաշվեցավ Կիլիկիա և Տավրոսի լեռներում մեջ հիմնեց ավելի ամուր իշխանապետություն մը և հայկական մշակույթի նոր վառարան մը:

Հայերու խուժումը դեպի մայրաքաղաքը դադարեցավ: Բյուզանդիոն այլևս չտեսավ ժայթքիլն այդ աղբյուրին, որմե իր մեջ հոսած էին այնքան կենսական ուժեր և զոր ինքն իսկ ցամքեցուցած էր: Կայսրության ծոցին մեջ հայ-հույն համերաշխության խզումը կնշանակե այն թվականը, որ Բյուզանդիոն սկսավ սահիլ դեպի անկում:

Կ. Պոլսո մեջ Թոռոնի հայազգի ընտանիքին վերջին անդամներն էին՝ Թեոդորոս Թոռոնիկը, արդեն 1261-ին կնախատեսեր, որ թուրքերը օր մը պիտի տիրանային Կ. Պոլսին և ամբողջ կայսրության:

Այս հակիրճ ընդհանուր տեսությունը կրնա ամփոփվիլ ստապես. հայկական անցյալին որոշ մեկ ժամանակաշրջանին, ժամանակաշրջան, որ մեկն ավելի տեսակետներով նշանավոր է, կրկին հոսանք մը կտրեց-անցավ հայկական պատմությունը, մին ազգային հողի վրա, մյուսը աշխարհաքաղաքացի ուստանին մեջ, մարդկության ծառայելու որոշ եղանակներով՝ ազգային շրջանակի մեջ կամ անկից դուրս: Հետո կտեսնվի, որ այդ հոսանքներն էին, աշխարհաքաղաքացիությունը, ձախողվածի մը կենթարկվի կամ հույն ազգայնամոլության ձեռով կայլասերի: Հայերը, երկար ատեն ու լայնորեն շտալելն հետո իրենց լավագույն ուժերն ի սպաս աշխարհաքաղաքացի պետության, զիրենք ստիպված զգացին ազգային երդիքը դառնալու:

Արդ, այս հանդիսավոր օրվան մեջ հավաքված ենք, նախ՝ կատարելու համար պարտականություն մը, այն է մեծարանքի հարկ մատուցանել հիշատակին անոնց, որ 1500 տարի առաջ բարոյական հիմը դրին մեր պատմական գոյության: Հետո ինձի կթվի, թե այս հանդեսը կրնա զործնական որոշ օգտակարություն մըն ալ ունենալ՝ պայմանով որ պատրաստ ըլլանք անցյալին փորձառությունը գնահատելու:

Մենք ի հայտ բերինք գոյակցությունը երկու հոսանքներու, որոնք իբրև հիմն ունին երկու հակընդդեմ սկզբունքներ: Այժմ այլ այդ երկու սկզբունքները իրարու դեմ կռվի մեջ են, մեկ կամ մյուս կերպով, երբեմն՝ ծայրահեղության մղված ձևերով, քաղաքակիրթ աշխարհին մեջ:

Անցյալի փորձառությունը, որում կակնարկենք, պետք է մեզի օգնե, պետք է օգնե մանավանդ մեր երիտասարդության, որ մասամբ որք է, իր քախտին ձգված և բոլոր վտանգներում եմթարկված, այդ աճյուն հրահանգիչ փորձառությունը պետք է, որ անոր թույլ տա հաստատական ու գիտակից ըմտրություն մը ըլնելու երկու ուղիություններու միջև, որպեսզի ազգային շրջանակի մ հարի և հաստատ պահպանե ինչ որ կխորհրդանշե մեր ազգությունը՝ լեզու, կրոնը, ծես, ավանդություններ:

Թող այսօրվան հանդեսը և Սահակի ու Մաշտոցի հիշատակը մեզ բոցավառեն մոր եռանդով մը՝ հավատարիմ մնալու համար այն ժառանգության, զոր ամենք մեզի թողած են: Այդ ժառանգությունը նկատենք իբր տապան մը այս ալեկոծ օտար ծովերում վրա, այն դժոխակ պայմաններում մեջ, ուր կոգորի մեր ազգային կյանքը, և հուսանք՝ որ օր մը այդ տապանը, հարություն առած արդարության շունչեն մղվելով պիտի իջնե Արարատ լեռան վրա և մեզ թույլ պիտի տա վերականգնել ազնվականները մեր հայրենիքին, որ լքված է այսօր, բայց ոչ մոռացված⁸⁸:



⁸⁸ Հնդգծված ամբողջ հատվածը դուրս է մնացել «Թուշարձան» ժողովածուի հրատարակությունից: Ատորն տրվող «Ամահիտի» խմբագրության ծանոթագրությունը կարող է լույս տնելն մեծ կրճատման հանգամանքների վրա:

⁸⁹ Այս ճառին արտասանված օրը վերջին պարբերությունը ունկնդիրներին ումանց այնպես կարծել տվեր էր, թե թվագրակ հայ ժողովրդի այժմյան ազգային կյանքն է, որ հոս «դժոխակ» ածականով, կորակվել, և թե «լքված, քայքայ ոչ մոռացված հայրենիքի ավերակներու ապագա վերականգնման» մասին հայտնված հույսը կվերաբերեր խորհրդային Հայաստանին: Այդ մեկնությունը անճիշտ է, ինչպես հեղինակն այլ երբ իրեն հաղորդեցինք այդ կարծիքը, ըսավ մեզի: Հայրենիքն հեռու օտար երկրներում ցրված հայոց կյանքն է, որ ան կգտնե դժոխակ, և երբ կճշդե, թե «վերականգնման» արդարության տապանը օր մը Արարատին՝ այժմ թուրքերու ձեռք անցած Արարատին վրա է, որ պիտի իջնե, հայտնի է, որ չի կրնար ակնարկել մեր այժմյան Հայաստանի Համրապետության, որ լքված ըլլայի հեռու, մեկ միլիոն կնոդամի, աշխատող, արտադրող հայերու բույնը է: Այլ հայերն ու հայ կյանքն քոլորտի մ պարպված, քայքայ վտարանդի հայերն երբեք չմոռցված այն հայկական մահաճգններում, որ մնացին կամ տասնհիմա տարի առաջ մորեն անցած թուրք լուծի տակ (ձ.խ.):

ՀԱՅԿԱՆՈՒԹ ՄԵՍՐՈՊԵԱՆ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՔԱՐՈՋՆԵՐԻ
ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Քարոզխոսությունը հովվական աստվածաբանության բաղկացուցիչ մասերից մեկն է. որով հոգևոր հովիվն անմիջական հաղորդակցություն է հաստատում իր և բազում հավատացյալների միջև: Քարոզչական սուրբ ամբիոնը եկեղեցու բեմն է, որտեղից հնչած խոսքի առաքելությունը հոգիներից ուղղություն տալն ու ժողովրդին դաստիարակելն է: Քարոզխոսության արտահայտության ձևն է քարոզը, որը, որպես հոգևոր, քրիստոնեական գրականության ժանր, հայտնի է դեռևս առաքելական ժամանակներից: Քարոզը, հարաբերվելով հեռտրության ու ճարտասանության հետ, ավետարանական ճշմարտությունների միջոցով ներագրում է ունկնդրի վրա՝ նրան մղելով ապրել քրիստոնեական հավատով և բարոյականությամբ: Ժամանակի Մեծի Տանն Կիլիկիո Աթոռակից Կաթողիկոս Բաբկեն Կյուլենդյանը «Քարոզելու արվեստը» աշխատության մեջ քարոզի հաջողության ու արդյունավորության գրավական է համարում մախ և առաջ համոզումն ու հավատքը, որոնք արվեստով արտահայտելիս քարոզը դարձնում են կատարյալ:

Մեր ուսումնասիրության թեման ժամանակակից հայ հոգևոր գրականության մեջ առկա վարդաճանց քարոզներն են, որոնք նվիրված են Ավարայրի հերոսամարտի սուրբ մահատակներին: Միաժամանակ անդրադարձել ենք մասն առնալ դրանց հեղինակի հոգևոր հայրերի որոշ քարոզների: Նյութը ընտրել ենք «Արարատ», «Էջմիածին», «Հասկ», «Սիոն» ամսագրերից և անհատական քարոզգրքերից: Նշված ամսագրերը վարդաճանց տոնին հիմնականում անդրադարձնում են խմբագրականների կամ բացատրական հոդվածների ձևով, որոնցում քարոզները հատվածաբար են տրվում:

Վարդաճանց տոնին նվիրված նյութերից և խմբագրականներից ենթադրելի է, որ մեր հոգևոր հայրերից շատերը քարոզներով հանդես են գալիս վարդաճանց մահատակներին նվիրված տոնի օրը, սակայն ոչ բոլոր քարոզներն են, որ տպագրվում են: Ուստի վարդաճանց քարոզները կարելի է բաժանել երկու խմբի՝ բանավոր և գրավոր: Վերջիցներս էլ հանդիսանում են մեր քննության նյութը:

Վարդաճանց քարոզներն աչքի են ընկնում անհողդողդ համոզումով, քրիստոնեական հավատքի շատագույնամբ, հայրենասիրական գաղափարների արծարծումով, հեռտրական ոճին բնորոշ բառապաշարով, սահուն և անկաշկանդ շարադրամբով: Դրանց լեզուն հիմնականում պարզ է, հանրամատչելի ոճին բնորոշ առանձնահատկություններով, երբեմն գեղարվեստական ոճի տարրերով հագեցած:

Հոգևոր գրականությունն ուսումնասիրելու ընթացքում նկատեցի՝ որ քամակական առումով Վարդանանք քարոզները գիշում են Տաղավար տոներին նվիրված քարոզներին, հատկապես մեծաթիվ են Սուրբ Ծննդյանը և Սուրբ Հարությանը նվիրված քարոզները:

Գրավոր քարոզները քննության ենք ենթարկել Ս. Գրիգոր Տաթևացու կողմից սահմանված քարոզի ժանրի դասական կառուցվածքային առանձնահատկությունների համաձայն. որոնք մա շարադրում է «Գիրք քարոզութեան» երկի «Ամարան» և «Ձմերան» հատորներում: Ս. Գրիգոր Տաթևացին առանձնացնում է քարոզի կառույցի հետևյալ հաջորդականությունը. ա) բնաբան, բ) բնաբանի խոսքի վերլուծություն և մեկնություն, համապատասխան մթնոլորտի և շրջագծի ստեղծում, գ) բուն նյութի ներկայացում, իմաստային վերլուծում, դ) պատգամ-առնչում հավատացյալների ներկա կյանքին՝ դրանից բխեցնելով կոչը, հրավերը, ներշնչումը, ներգործողությունը:

Պետք է նշել, որ մեզ հետաքրքրող քարոզները հաճախ միահյուսված կերպով համդես են գալիս մահ որպես Ղևոնդյանք քարոզներ: «Քարոզներից շատերը հենց այդպիսի վերնագրեր էլ ունեն՝ Սուրբ Վարդանանք և Ղևոնդյանք մահատակների հիշատակին: Քարոզները ծավալային առումով այնքան էլ ընդարձակ չեն (1-ից 5 էջ): «Հաագոյն, մշակուած քարոզն իսկ կը կորցնէ իր տպատրուքինը, մինչեւ իսկ կը ծանծրացնէ ունկնդիրներին, եթէ մա չափից անելի երկար է», - գրում է Գարեգին Հովսեփյան Կաթողիկոսը «Քարոզի յաջողութեան գաղտնիքը» հոդվածում:

Թերևս ամենաընդարձակը (7 էջ) Գևորգ Զ Կաթողիկոսի 1950 թվականի հունիսի 1-ի սրբատառ Կոնդակն է, որով Հայոց Հայրապետը 1951 թվականի հուն բարեկենդանը հայտարարում է Ավարայրի ճակատամարտի ու Ղևոնդյանք մահատակության 1500-ամյակի համազգային եկեղեցական տոն:

Հարևանից ուզում ենք անդրադառնալ Վարդանանք և Ղևոնդյանք մահատակների նվիրված մի մշակակալից աշխատության, որը ծավալում լինելու պատճառով դուրս է մնում քարոզի ժանրի ոլորտից: Դա Գարեգին եպիսկոպոս Խաչատուրյանի «Աշխարհի լույսն է Հայս» գրքի երկրորդ հատորում գետեղված «Վարդանանք եւ Ղևոնդեանք» ընդարձակ ուսումնասիրությունն է (մոտ 100 էջ), որում քարոզխոսության ոճով համակողմանիորեն և համազամանալից վերլուծության ենթարկվում Ավարայրի ճակատամարտը: Հեղինակը Վարդանի և Վասակ Սյունու կենսագրական մանրամասները ներկայացնելուց զատ վերլուծության ենթարկում Վարդանանք հերոսամարտը՝ գուգահեռներ տանելով Մակաբայեցիների շարժման հետ: Նա Մակաբայեցվոց գիրքը կոչում է Վարդանի գիրք, քանի որ այն եղել է Վարդանի ազգային և կրոնական մախանձախնդրության գլխավոր ներշնչարանը: Այս աշխատության մեջ Գարեգին եպիսկոպոս Տրապիզոնցին խոսում է մահ պարսկական կրոնի, ավեստայի և մազդեզականության մասին:

Ինչպես նշեցի՞ք, Սուրբ Գրիգոր Տաթևացին որպես քարոզի առաջին մասնաշունչ է բնաբանը, որը հիմնականում բերվում է Աստվածաշունչ մատյանից, ինչպես և հոգևոր բանաստեղծությունից:

Մեր ուսումնասիրած շատ քիչ քարոզներ միայն չուենց համապատասխան բնա-
ճանցներ ինչպես. օրինակ՝ Վազգեն Ա-ի, Դերենիկ եպիսկոպոս Փոլադյանի, Ար-
տան աղքեպս, Մանուկյանի, Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի և այլոց
քարոզները): Մեզ հետաքրքրող քարոզների բնաբաններն ամենևին չեն կրկնում
մեկը մյուսին: Այսպես՝ բնաբանների օրինակներ.

«Արդ ո՞վ մեկնեացե՞զ մեզ ի սիրոյն Քրիստոսի» (Հռովմ. Ը 35) - Կարապետ եպս.
Տեր-Մկրտչյան, Գարեգին կթղ. Հովսեփյան:

«Զի թեպէտ եմք ածու փոքր» (Խորենացի) - Գևորգ Զ Չորեքչյան:

«Յայսմ հաւատոց զմեզ ո՛չ ոք կարէ խախտել» (Եղիշե) - Արամ եպիսկոպոս
Քեշիշյան (Արամ Ա.):

«Ոչ եթէ մարմնական համարեին կոհն, այլ հոգեւոր՝ առաքինութեան» (Եղիշե) -
Թորգոմ Պատրիարք Գուշակյան:

«Զի թեպէտ եւ յաչս մարդկան տանջեցան, այլ յոյս նոցա լի է անմահութեամբ»
(Իմաստ. Գ. 4) - Ընթեք արքեպիսկոպոս Աճեմյան:

«Երանի՜ այն ժողովրդին, որի տերն Աստված է» (Սաղմ. ԾնԳ. 15) - Ասողիկ ե-
պիսկոպոս Արիստակեսյան: Սրբազանի այս թեմայով երկրորդ քարոզի բնաբանն
է «Օրհնյալ է իմ տեր Աստվածը, որ ձեռքս վարժեցրեց պատերազմի» (Սաղմոս
ԾնԳ. 1):

«Կամաւոր յօժարութեամբ կատարեցան սիրով Փրկչին», «Ռաբունեացն ճշմար-
տից եկայք եւ մեզ հետեւեցուք» (Ծարական) - Հովման արքեպս. Տերտերյան:

«Մի պարծեսցի հզօրն ի զօրութեան իւրում, եւ մի՛ պարծեսցի մեծն ի մեծութեան
իւրում, այլ որ պարծելոցն իցէ՝ յԱստուած պարծեսցի» (Վարդանի խոսքը գորաբա-
նակի առջև Փարպեցի, Վենետիկ, 1933, էջ 202) - Արտավազդ արքեպիսկոպոս
Թրթոյան:

Ինչպես տեսնում ենք, բերված բնաբանները հիմնականում աստվածաշնչյան
են և ենթադրում են հանուն քրիստոնեության և քրիստոնեական անխախտ հա-
վատքի վրա հիմնված խոսք: Ունկնդիրն արդեն իսկ տրամադրվում է անձնագո-
հության հրավիրող վեհ ու խորխտ մի գաղափարի, որի ենթատեքստում տեսնում
ենք հզոր ուժերի մի բախում, սկզբունքի ու ազատ կամքի դրսևորման մի պոռթկում:

Այնուհետև բուն քարոզի սկզբում սովորաբար կարևորվում է տոմբ, ծանուցվում
են նշվող տոնակատարության հետ առնչվող դեմքերն ու դեպքերը: Վարդանանց
քարոզների բովանդակային պլանում շեշտը հիմնականում դրվում է հանուն
Քրիստոսի հավատքի մղվող պայքարի վրա, որին զուգադրվում է հայրենիքի և ազ-
գի գաղափարը: Ավարայրի ճակատամարտը բնորոշվում է իբրև գաղափարի պա-
տերազմ: Ըստ քարոզիչների՝ այստեղ մարտնչելու է եղել իրավունքը: Հաշվարկը և
դիվանագիտությունը չեն, որ գործում են այս պատերազմում, այլ սերը: «Հայրենիքի
սեր և կրոնքի հրայրք, ահա գորաբանակը շարժող ուժերը»: Քարոզներին բնորոշ
են նաև հայրենասիրական ոգին և պաթոսը, որոնք արտահայտվում են մարտա-
շունչ արտահայտություններով: Բոլոր քարոզներում փառաբանվում է Աստծու
տված պարգևը՝ ազատությունը:

Ինչպես և պահանջվում է քարոզչից, հեղինակները խորապես ծանոթ են ազգային և ընդհանուր պատմությանը, գրականությանը, բնականաբար և Աստվածաշունչ մատյանին, որոնց հենքի վրա էլ տալիս են պատմական ժամանակաշրջանի նկարագրությունը: Պատմական իրավիճակի մասին խոսելիս, քարոզիչներից ոմանք կատարում են զուգահեռներ պատմական այլ անցքերի հետ: Այսպես՝ Թորգոմ Պատրիարք Գուշակյանը «խոկումներ Վարդանանց տոմի առթի» քարոզում Վարդանանց ճակատամարտը համեմատում է Լեոնիդասի Թերմոպիլյան պատերազմի հետ, իսկ Ասողիկ եպս. Արիստակեսյանը «Վարդանանց հավերժական ոգին» քարոզում Վարդանանց պատերազմը համեմատում է Կատալաունյան դաշտերի վրա մղված պայքարի՝ ընդդեմ Աթիլայի հորդանքերի՝ ի պաշտպանություն քրիստոնեության և քաղաքակրթության:

Որոշ քարոզիչներ տուրք են տալիս պատմական մանրամասների, որը թուլացնում է քարոզի ընդհանուր ոգին: Ըստ Եղիշեի և Փարպեցու կատարվող պատմական շարադրանքը հիմնականում արվում է մեջբերումներով, որոնք ազատատեմչության ու քրիստոսասիրության խտացումներ են: Ամենաձավալուն քարոզում Գևորգ Զ Չորեքյան Կաթողիկոսի Կոմդակում, թվարկվում են մեր ժողովրդի կատարած մեծագործությունները: Սակայն մեր պատմական անցյալին խորհորդ ու փառք տվող սքանչելագործություններից հեղինակն առանձնացնում է Ավարայրի «հոգեցունց և հիասքանչ ճակատամարտը»:

Ուզում ենք նշել, որ միայն այս քարոզում հանդիպեցինք կոռյ մեծարմանն ու արժևորմանը, նրա գնահատանքին՝ Ավարայրի ճակատամարտում ունեցած նրա մեծ դերին: Երջանկահիշատակ Հայրապետն այսպես է բնորոշում կոռյը. «Որդեսէր, գորովագութ մայր, անձնուէր ու անդավաճան ամուսին, հայրեմասէր ռազմիկ, հարազատին պաշարի ոգետորդ անմման քոյր, առաքինազարդ հերոսածին ու ինքնին հերոսատեմչ «Տիկնայք փափկասունք»: Այս հրաշալի բնորոշումներից հետո Հայոց Հայրապետը Եղիշեի՝ փափկասուն տիկնանց նվիրված տողերը համարում է համաշխարհային գրականության «գոհար մարգարտաշար» էջերից, որոնք գորովալից քնքշությամբ ոգված մի սքանչելի օրհներգ են առաքինի կանանց:

Քարոզի ժանրային կառուցվածքին առանձնահատուկ մասերից զատ հանդիպում են նաև հարակից այլևայլ հարցերի վերլուծություններ: Այսպես՝ Գարեգին Հովսեփյան Կաթողիկոսը «Ղևոնդեանց և Վարդանանց յիշատակը» քարոզում վերլուծում է ազգերի հոգեբանությունը՝ վկայաբերելով Հայացիցի համալսարանի պրոֆեսոր Վուդդի դասախոսությունները և մանավանդ բազմահատոր աշխատությունը ազգերի հոգեբանության մասին. «Հայ ազգի հոգեբանությունն ու անհատականությունը՝ անյիշատակ ժամանակների հետ կապուած իւր ծագումով, իւր լինելութեան պարզ եւ գիտակցական ուղին գծում է երրորդ դարի վերջերից եւ չորրորդ դարի սկզբից՝ քրիստոնէութեան ազգովին ընդունելութեամբ եւ հայ գրի գիտով»:

Ափյուռքում ասվող քարոզներում անպայման շեշտվում է հայրենիքի և Մայր Աթոռի հետ հոգևոր կենսապարզ և ներտ կապը: Վարդանանց ոգով տոգորելով ունկնդրին՝ քարոզիչը նպատակ ունի անշեշ պահել հայրենիքի սերը, որով և պայմա-

ճաշկրթվում է օղիստոցեական հավատքի կենսումնակությունը: Այսպես՝ «Վարդա-
նաց կու գան Այրարատեան դաշտէն, ուր Հոփսիսմէի եւ Գայեանէի վկայա-
րանցեալն միջեւ կանգնած լուսոյ խորանը՝ Ս. Էջմիածնի Մայր Տաճարը, յափ-
տեմական ուխտի կնիքն է հայ ժողովուրդին եւ իր Աստուծոյն միջեւ»։ «Մեր յոյսը չի
կրնար սխալիլ եւ մեր ինքնավստահութեան աղբիւրն է մեր սիրելի հայրենիքը՝ Հա-
րատան» (Ծափն արքեպս. Աճեմյան)։ «Ափիւղի հայութեանը մահ է սպառնում, եւ
մենք ունինք միացնող մի հաստատութիւն՝ Հայաստանեայց եկեղեցին՝ իր քրիս-
տոնէական եւ ազգային բովանդակութեամբ» (Գարեգին Կաթողիկոս Հովսեփյան)։

Բոլոր քարոզներն էլ կրում են լավատեսական ոգի։ Այսպես՝ «Չընկճուող հայու
հոգին լի է անմահութեամբ, երբ չի վախճար պայքարներէն բոլոր ճակատներուն
վրայ, ուր որեւէ ոյժ կ'ուզէ բռնաճալ մեր նկարագրին. խաթարել զայն, մեր մշակոյ-
թին եւ այլասերել զայն, մեր հաւատքին եւ ջնջել զայն» (Ծափն արքեպս. Աճեմյան)։

«Պատմությունը ցույց տվեց, որ քարոս ու ճշմարտի համար մարտնչողները հաղ-
թեցին և՛ Ավարայրում, և՛ Կատալունյան դաշտերում. հաղթե-
լու են ճակ Արցախում» (Ասողիկ), «Վարդանացը ապահովում են մեր բոլոր արդար
իղձերի ապագա իրականացումը» (Վազգեն Ա.), «Շնորհիվ Վարդանների կապրեց
որպես ազգ և ոչ մի ուժ չի կարող մեզ կասեցնել մեր ճանապարհից» (Սահակ եպս.
Տեր-Հովհաննիսյան), «Հայը ամիօրէն փարած է քրիստոնէական իր հաւատքին, իր
սրբազան եկեղեցիին, ուրկէ մենք ստացած ենք դարերով ու տակաւին գալիք բոլոր
ժամանակներում պիտի ստանանք, մեր հոգեւոր ու ազգային սնունդը» (Հովնաճ
արքեպս. Տերտերյան)։

Քարոզների ավարտն արդիական շունչ ունի։ Ավարայրի ոգին, Վարդանաց
հայրենասիրությունն արդիականացվում է և քարոզվում՝ ներկա սերնդին, ոգե-
շնչում՝ նրանց կրոնասիրական և հայրենասիրական գաղափարներով։ Այսպես՝
«Աւարայրը վճռական ճակատամարտ մըն է տակ հայոց պատմութիւն կոչուած յա-
րատե կոտիկն», «Աւարայրը հայու արդար եւ անլուելի պահանջատիրութեան հաւա-
տամարտն է այսօր», «Այս հաւաքական պայքարի մէջ նահանջ չկա» (Արամ Ա.)։

«Անմահ Վարդանացը, ձեր յիշատակը թող զարթոցնէ մեր մէջ որդիական սիրոյ
ամենաջերմեռանդ զգացումներ, եւ մենք սովորենք մեր հարազատ մօր խանդակաթ
այքերից կաթած մի շիթ արցունքն անելի քարձր գնահատել, քան աշխարհիս բոլոր
մարգարիտներն ու գանձերը, կեանքի ու մահուան ատպարեզում ձեզ առաջնորդող
խաչի դրօշը թող շարունակի առաջնորդել եւ մեզ» (Կարապետ եպս. Տեր-
Մկրտչյան)։ «Եւ կը մղենք պայքարը այսօր՝ պահելու համար մեր հայեցիությունը,
որպէսզի չը կորսուի յոյսը վերադառնալու հողին, հայրենի հողին, սրբազան հողին,
որ «լի է անմահութեամբ» (Ծափն արքեպս. Աճեմյան)։ «Վարդանաց հավերժական
խորհուրդն այսօր շարունակվում է Արցախում» (Ասողիկ)։

Քարոզների վերջում Վարդանաց դասեր են տրվում ներկա սերնդին։ Այսպես՝
«Այսօր էլ նոյն պատերազմն ունինք, ոչ գէնքի, ոչ հալածանքի դէմ ծառանալու, այլ
մի ուրիշ տեսակի ահաւոր թշնամու, որ անտարբերութեան հոգի է կոչում դէպի
համազգային ժառանգութիւնները, երկպառակութեան յամառ ոգի, որ սպառնում է

երկրորդականը կարեւորից, սխալն ու ճշմարիտը իրարից զամազանելու կարողութեան» (Գարեգին Կաթողիկոս Հովսեփյան): «Վարդանանց խորհուրդը սերունդների հոգում դարձավ ամենաճշմարիտ ճանաչումը հայրենի հողի, մայրենի լեզվի և հիսուսյան հավատքի» (Ասողիկ եպս. Արիստակեսյան): «Կոնիւր չի դադրել եւ շարունակում է քոյր ճակատներում եւ աշխարհի չորս ծագերում» (Արամ Ա):

Քարոզի վերջաբանին առանձնահատուկ է հորդորակն ու հայրական օրհնությունը: Հայրական աղոթքներն ու մաղթանքները ևս ունեն ազգասիրական և հայրենասիրական բնույթ: Այսպես՝ «Բարեմաղթանք եւ յորդոր, որ միշտ կենդանի մնայ այդ ոգին, ճշմարիտ քաջութիւնն ու իմաստութիւնը թող ապրի մեր ազգային գործունէութեան մէջ» (Թորգոմ Պատրիարք): «Աղօթենք, որ ոչ մէկ պատուհաս մօտենայ հայրենիքի մեր ժրջան եւ ստեղծագործ ժողովուրդին, որ անխորտակ մնայ Հայաստանը եւ անասան Մայր Աթոռ Ս. Էջմիածինը» (Օսին Սրբազան, 1982 թ. հունվար):

«Երանի՜ թե Վարդանանց ոգին արտացոլայ մեր հասարակական կեանքում եւ դառնայ միխթարութեան ու հրճուանքի առիթ», - Ավետարանական երանիների համաքանությանը կատարված այս ցանկությանը է ավարտում իր քարոզը Արտակարգեպս. Մանուկյանը:

Քարոզի թեման թեղադրում է համապատասխան լեզվական միջոցներ ու արտահայտչաձևեր, գրաբարաբանություններ, հրապարակախոսական ոճին բնորոշ բառեր: Համարյա թե չկա մի քարոզ, որում չնշվի *մահ իմացեալ* բառակապակցությունը: Վարդանանց քաջերը ներկայացվում են խոսում մակդիրներով ու համեմատություններով: Քարոզները խոսվում են աշխարհաբարով, չնայած Սուրբ Պատարագից հետո ի հիշատակ մահատակների տրվող հոգեհանգստյան կարգը կատարվում է գրաբարով: Քարոզները հնչում են և՛ արևելահայերեն, և՛ արևմտահայերեն:

Վարդանանց քարոզներում մեծ թիվ են կազմում լեզվաոճական այլևայլ արտահայտություններով՝ մակդիրներով, համեմատություններով և փոխաբերություններով կերտված մտքերը: Այսպես՝ *Ավարայր* տեղանունը բնորոշվում է հետևյալ պատկերավոր արտահայտություններով. «դարերի վրայ երկարող թանձրացեալ իրականութիւն», «մեր սրտերին ջանքւող կազդոյր» (Արտակարգեպս. Մանուկյան), «Վարդանանց հերոսագործութիւն», «ալեգարդ անցեալով հրաշակերտուած եւ իմաստաւորուած անմահ սխրագործութիւն», «սրբանուէր պատերազմ, ժառանգական դաս» (Գևորգ Զ), «լուսաւոր հնոց, կենսաբեր ճառագայթ» (Գարեգին Կաթողիկոս Հովսեփյան), «զաղափարի ու հավատքի Ավարայր», «եղիշէի դյուցազնաշունչ համանվազ» (Ասողիկ եպս. Արիստակեսյան), «Վարդանանց եւ Վահաննանց հաւատամարտ» (Արտակարգեպս. Թրթոյան), «Հայոց պատմութեան մեծագոյն ոչ», «Հայու արդար եւ անլռելի պահանջատիրութեան հերոսամարտ» (Արամ Ա), «մեր հոգու վիթխարի ընդվզում» (Նզինկ եպս. Պետրոսյան), «սրբազան պատերազմ, մեր ժողովրդի հոգևոր, ազգային և քաղաքական կյանքի ճշմարիտ հիմնաքար» (Վազգեն Ա), «հայրենիքի ու կրօնքի, ազատութեան գերագոյն սկզբունքի կերտում» (Հովնան արքեպս. Տերտերյան), «Աւետարանով լուսաւորուած ազգի մը

խղճմտանքին հանդիսատրագրում պայթում» (Թորգոմ Պատրիարք Գուշակյան) և այլն: Ասողիկ եպիսկոպոսի քարոզում *Ավարայր* տեղանունը ձեռք է բերում ման ժամանակահիշ բառի իմաստ: Այսպես՝ *Ավարայրի դարձրից է եկել մա*:

Ավարայր տեղանունը կիրառվում է փոխաբերական իմաստով: Այն, որպես մոր բառ, ունի մաքրողում, պայքար, ինքնահաստատում իմաստը, ինչպես օրինակ, «Մեր պատմությունը սկզբից մինչև մեր օրերը Ավարայր է եղել (Ասողիկ եպս. Արիստակեսյան): «Աւարայրի ճամբայ», որ փոխաբերաբար նշանակում է քաջություն, հերոսություն, «վարդանանց գերերկրային քաջութիւն», «նկատամարտ-հաւատամարտ», «արիւնով թրծուած մերժում» (Արամ Ա):

Վարդանանք ևս քարոզիչների խոսքում յուրահատուկ բնութագրում են ստանում: Այսպես՝ «համաշխարհային քրիստոնէական քաղաքակրթութեան պաշտպանութեան առաջին ճշմարիտ ասպետներ», «ջահակրած գաղափարի դարտեւ արդիւնատրութիւն» (Դերենիկ եպիսկոպոս) և այլն:

Վարդան անձնանունը ևս քարոզներում ձեռք է բերում փոխաբերական իմաստ և նշանակում է հերոս: Այսպես՝ «Հայոց պատմութեան յայտնի և անյայտ վարդաններ» (Արամ Ա):

Այսպիսով՝ Վարդանանց քարոզներում քարոզխոսությանը բնորոշ բարձր ոճով և հղկված հայերենով ներկայացվում է Հայ եկեղեցու մարտական շուքն ու ոգին, և ամբողջովին հերքվում են քրիստոնեության նկատմամբ եղած այն թյուր կարծիքները, թե քրիստոնեությունը խեղճի և թույլի կրոն է, և ինչպես Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանն է ասում իր քարոզում՝ «Հայ ժողովուրդը Ավարայրով ապացուցեց, որ քրիստոնեությունը սխրանքի և հավերժության ունիունք է»:

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՐՈՊԱՅՈՒՄ

Է. ՂՈՒԿԱՍՅԱՆ

«Նայագիտությունը Ֆրանսիայում
19-րդ դարում» թեմայի դեկավաթ, ԵՊԿ

ԷԴՈՒԱՐԴ ԴՅՈՒԼՈՐԵՒ (1807-1882 թթ.)

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին եվրոպայում սկզբնավորվում և զարգանում է հայագիտությունը որպես գիտություն: Հայկական մշակույթի, հայ ժողովրդի պատմության և Հայաստանի՝ ժամանակի իրավիճակի նկատմամբ հետաքրքրության պատճառը պատմա-գեղարվեստական մեծաթիվ հուշարձաններն էին ու հայ ժողովրդի հոգևոր հարուստ ժառանգությունը:

Հայագիտության զարգացման գործում առանձնահատուկ դեր ունի Ֆրանսիայի հայագետների դպրոցն իր բազմաթիվ նշանավոր գիտնականներով, որոնք անգմահատելի ավանդ են ներդրել հայ մշակույթի ուսումնասիրման ասպարեզում:

Հայագիտության ֆրանսիական դպրոցի ակնառու դեմքերից է Էդուարդ Դյուլորեն: Նշանավոր գիտնականն ամբողջ գիտակցական կյանքը նվիրել էր արևելագիտական հետազոտություններին, որոնց զգալի մասը հայագիտության խնդիրներն են: Դյուլորեն մեծ վաստակ ունի Ֆրանսիայում հայագիտության վերածննդի և զարգացման գործում: Գիտնականի արևելագիտական գործունեության սկիզբն առնչվում է եգիպտագիտությանը, իսկ հետո՝ նաև մալայական և հավայական լեզուների ուսումնասիրությանը: Սակայն Դյուլորենի գիտական ուշադրության կենտրոնում էին հատկապես քրիստոնյա Արևելքի ուսումնասիրությանը վերաբերող հարցերը:

Սամուել Մուրադի և Գաբրիել Այվազովսկու օգնությամբ նա անցնում է հայերենի խորացված ուսումնասիրությանը: Լավ պատկերացնելով հայկական ձեռագրերի նշանակությունը հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության հարցում, Դյուլորեն զբաղվում է Վենետիկի, Վիեննայի, Փարիզի, Պետերբուրգի, Մոսկվայի մատենադարաններում և գրադարաններում պահպանվող ձեռագրերի ուսումնասիրության, թարգմանության և հրատարակման բարդ ու տքմաջան գործով: Այդ աշխատանքի արդյունքն էր Արևելքի մշակույթի ամենաարժեքավոր հուշարձաններից մեկի՝ Միխայիլ Աստրու «Ժամանակագրության» նախ համառոտ (1849), իսկ 1868 թ.՝ ամբողջական հրատարակությունը: Քանի որ վերջինիս բնագիրը չի պահպանվել, հայերեն թարգմանությունը, որը կատարվել է 13-րդ դարում, միակ աղբյուրն էր:

Դյուլորեն «Ժամանակագրության» առանձին հատվածները ֆրանսերեն է թարգմանել և կցել ընդարձակ մեկնաբանություններ: Այդ հատվածներում ներկայացված են 523-713 թթ. Ասիայում կատարված իրադարձությունները՝ հեղաշրջումները, պատերազմները, որոնց արդյունքում արաբները նվաճեցին Իրանը, Սիրիան, Հյուսիսային Աֆրիկան և Բյուզանդական կայսրության արևելյան մահացածները: Թարգմանության առաջաբանում Դյուլորեն գրում է, որ հայերը, գտնվելով միջնադարյան այս մշակավոր իրադարձությունների կենտրոնում, դրանց հիմնական պահանջներն ու պատմության այդ շրջանի անաչառ նկարագրողն էին:

Դյուլորեն ընդգծում է հայկական սկզբնաղբյուրների և հունական ու հռոմեական չափազանցված ձեռագրերի հայերեն թարգմանությունների առանձնակի հավաստիությունը հարևան երկրների, մահմեդական ժողովուրդների պատմության և նրանց տեղաշարժերի ճշգրիտ նկարագրության հարցում:

Հիմնվելով հայերի՝ հունարեն ձեռագրերի ուսումնասիրության և թարգմանության ժամանակային առաջնության վրա, Դյուլորեն գտնում է, որ ժամանակի չափազանցված բազմաթիվ գրական հուշարձանների հետքերը հարկավոր է փնտրել առաջին հերթին գրաքար թարգմանություններում:

Ներկայացնելով Միխայիլ Աստրոմ և նրա երկը, գիտնականը նշում է բնագրի կորստի պարագայում հայերեն թարգմանության բացառիկ մշակակությունը: Դյուլորենի աշխատությունն ավելի են արժեքավորում այս պատմության ֆրանսերեն թարգմանության գիտական ծանոթագրությունները:

«Ժամանակագրության» հրատարակությամբ գիտնականը նախապատրաստեց հայ պատմիչների գործերի մոր հրատարակությունը՝ ֆրանսերեն զուգահեռ թարգմանությամբ և ծանոթագրությամբ: Նման հրատարակության զաղափարը ծնվել էր 19-րդ դարի սկզբներին, բայց մի շարք պատճառներով չէր իրագործվել: Դյուլորեն որոշեց հայ մատենագիրների գլխավոր երկերի ֆրանսերեն թարգմանությունները ի մի հավաքել և հրատարակել, մյուսները՝ հատվածաբար հրատարակել՝ պատմական և աշխարհագրական մանրամասն ծանոթագրություններով: Պատմիչների մատենաշար տպագրելու մասին գիտնականի առաջարկը ոգևորությամբ ընդունվեց ոչ միայն Ֆրանսիայի, այլև Եվրոպայի գիտական շրջանակներում, քանի որ պատմական գիտության համար մեծ շարքի հրատարակությունը բացառիկ կարևոր մշակակություն ուներ և հովանավորվում էր Ալեքսանդր II-ի կողմից:

Դյուլորեն, սակայն, չկարողացավ լրիվ իրագործել իր մտահղացումը:

1859-ին լույս տեսավ 1-ին հատորը՝ Մատթեոս Ուոհայեցու «Ժամանակագրությունը» (952-1136 թթ.), որը շարունակել է Գրիգոր Երեցը մինչև 1162 թ.: Գրքի առաջաբանում Դյուլորեն ընդգծում է հայ գրականության ունեցած պատմական մեծ կարևորությունը՝ որպես Արևելքի թուրք քրիստոնեական գրականություններից ամենահարուստի ու ինքնատիպի: Դյուլորեն ընդգծում է հունական գրականության հետ հայ գրականության ունեցած կապերը դեռևս անտիկ շրջանում, որոնք քրիստոնեության ընդունումից հետո ավելի են սերտանում:

Հայ գրականության ինքնատիպությունը Դյուլորեն բացատրում է հակադիր քաղաքակրթությունների միավորմամբ. արևելյան քաղաքակրթությանը Հայաստանը կապված է հնագույն ավանդույթներով և աշխարհագրական դիրքով, իսկ արևմտյան քաղաքակրթության բարոյական և իմոտելեկտուալ ոգում մոտ է թե՛ կրոնական, թե՛ ազգագրական և թե՛ ծագումնաբանական ընդհանրությամբ, քանի որ հայերը պատկանում են հնդեվրոպական ընտանիքին: Գիտնականի կարծիքով, հենց դրանով են պայմանավորված հայ հեղինակներին հատուկ կոտ տրամաբանությունը, լակոնիզմը, բարձր ոճը, գեղեցկությունը ու ճարտասանությունը, որոնց ամենաբարձրը դրսևորումը 5-րդ դարի պատմիչներ Խորենացու և Եղիշեի գործերն են, որ կարծես հիշեցնում են Հուստատանի և Հոմերի մշանավոր հուշարձանները:

Խոսելով հայ պատմագրության հետագա ուղու և զարգացման մասին միջնադարում, Դյուլորեն բարձր է գնահատում այդ շրջանի պատմագրությունը, որը հիմնականում ժամանակագրության տեսքով պատմական դեպքերի շարադրանքն է տարի առ տարի: Գիտնականը նշում է այդ ժամանակագրությունների ոճական շեղումները, որոնք արտացոլում են այդ շրջանի լեզվի ընդհանուր վիճակը, բայց և միաժամանակ ընդգծում դրանցում մերկայացված փաստերի կարևորությունը, քանի որ դրանցից շատերի մասին ոչ մի ուրիշ հիշատակություն չի պահպանվել, իսկ մյուս իրադարձություններն արևելյան պատմիչները մերկայացնում են իրենց քաղաքական և կրոնական հայացքներին հարմարեցնելով՝ փաստորեն միանգամայն այլ մեկնաբանությամբ:

Հայկական ձեռագրերի ուսումնասիրության և հրատարակության միակապատրաստման ընթացքում Դյուլորեն թազմաթիվ դժվարություններ հաղթահարեց, որոնք վերաբերում էին պատմության ժամանակագրությանը, առանց որի ճշտման հնարավոր չէր մկարագրված պատմական իրադարձությունների մեջ ճիշտ կողմնորոշվել: Այդ գիտակցելով և հայերեն սկզբնաղբյուրների հրատարակման գործին մվիրվելով Դյուլորեն ուսումնասիրեց հայոց տոմարը: Այդ տքնաշան աշխատանքի արդյունքն էր «Հետազոտություններ հայոց ժամանակագրության շուրջը»¹ մոնումենտալ գիրքը՝ տարբեր տոմարների համեմատական հաշվարկային աղյուսակներով: Հայոց տոմարը, որը հայերը կիրառում էին 6-րդ դարի կեսերից, հիմնված էր շարժական տոմարի 1461 տարվա շրջանի վրա՝ տարին 65 օրով: 1461 տարվա այդ շրջանը, որը կազմում է հայոց մեծ դարաշրջանը, համապատասխանում էր հուլյան ամշարժ օրացույցի 1460 տարիներին:

Դյուլորեն հանգամանորեն ուսումնասիրեց տոմարի վերաբերյալ հնագույն և ժամանակակից աշխատությունները, հավաքեց, դասակարգեց ու մեկնաբանեց փաստական մեծածավալ նյութերը և ցույց տվեց, որ հայոց մեծ թվականության սկիզբը մ. թ. 552 թ. հուլիսի 11-ն էր: Այդ օրվա ճշգրտումը կարևոր էր ոչ միայն Հայաստանի պատմության, այլև Արևելյան կայսրության պատմական իրադարձոթ-

¹ E. Dulaurier, Recherches sur la chronologie arménienne technique et historique... P., 1859.

յունների, խաչակրաց արշավանքների սասնոն հայ հեղինակների տված տեղեկությունների ճշգրտման համար:

Հայ պատմիչների մատենաշարը հրատարակելու գիտնականի մտադրությունն անավարտ մնաց և մասամբ իրականացավ Լանգլուայի և Բրուսելի ջանքերով, որոնք 1867-1869 և 1874-1876 թվականներին տպագրեցին երկուական հատորներ:

Դյուլորեն երկար տարիներ ուսումնասիրում էր խաչակրաց արշավանքներին ժամանակակից հայ հեղինակների երկերը, թարգմանում և նախապատրաստում հրատարակության՝ դրանք համարելով կարևոր մասն այդ արշավանքներին նվիրված գրականության: Ինչպես նշում էր նշանավոր արևելագետ Էռնեստ Ռենանը, եվրոպային, հատկապես Ֆրանսիային սերտորեն կապված Կիլիկիան «ծագեց», առաջացավ խաչակրաց պատերազմների հետևանքով և պատմությանը կտակեց բազմաթիվ կարևորագույն վավերագրեր: Այդ ընթացքում արդեն հրատարակվել էր ֆրանսիացի պատմիչների գործերի ժողովածուն, իսկ հայ պատմիչների երկերին նվիրված հատորներն Ակադեմիան հանձնարարեց Դյուլորենին: 1869-ին լույս տեսավ հայկական սկզբնաղբյուրներն ընդգրկող ժողովածուի 1-ին հատորը²: Գիտնական հրատարակիչն ամեն ինչ արել էր, որպեսզի աշխատանքն արժանի լինի հրատարակող հաստատությանը, գրել էր առաջաբան, իսկ հավելվածում շարադրել Կիլիկիայի պատմությունը Լուսինյանների ժամանակաշրջանում, որի վերաբերյալ հայկական սկզբնաղբյուրները բավարար չեն:

Հարկ է նշել, որ այդ ժողովածուի հրատարակությունից առաջ, 1861 թվականին, լույս տեսավ Դյուլորենի ուսումնասիրությունը Փոքր Հայքի պատմության, քաղաքական և վարչական կառուցվածքի մասին³: Աշխատության մեջ լուսաբանված են Կիլիկիայի փոխհարաբերությունները հարևան պետությունների՝ Կիպրոսի, եգիպտոսի, Հունաստանի, Սիրիայի, Իտալիայի և Ֆրանսիայի հետ, որի ազդեցությունն այնտեղ բավականին զգալի էր: Դյուլորեն Կիլիկյան Հայաստանի պատմությունը դիտարկում է ընդհանուր Հայաստանի և խաչակրաց արշավանքների համապատկերում:

Գիտնականի հետաքրքրությունը Հայաստանի պատմության նկատմամբ չէր սահմանափակվում, սակայն, միայն խաչակրաց արշավանքներով: Նրան հետաքրքրում էին նաև մոնղոլական արշավանքները: 1858-1860 թվականներին Դյուլորեն թարգմանեց և հրատարակեց հատվածներ Կիրակոս Գանձակեցու և Վարդան Արևելցու աշխատություններից՝ «Մոնղոլները հայ պատմիչների տվյալներով» վերնագրով: Առաջաբանում խոսելով մոնղոլական արշավանքների երկհարյուրամյա տիրապետության մասին, գիտնականը կրկին նշում է, որ այդ շրջանի հայկական աղբյուրները լրիվ ուսումնասիրված չեն: Նա ընթերցողին ներկայացնում է Գան-

² խաչակրաց արշավանքների պատմիչների երկերի ժողովածու: Հայկական նյութեր, Փարիզ, Բ. Ի, 1869 (հայերեն և ֆրանսերեն):

³ E. Dulaurier, Etudes sur l'organisation politique, religieuse et administrative du royaume de la Petite Arménie. Paris, 1861.

ծակեցու «Պատմությունը», ինչպես նաև Վարդան պատմիչի կյանքն ու գործունեությունը, նրա հռչակավոր Պատմությունը, որտեղ օգտագործված են աստիճանական և բյուզանդական բազմաթիվ սկզբնաղբյուրներ: Այն համգամանքը, որ այդ աղբյուրներից շատերը չեն պահպանվել և ոչ մի այլ հեղինակի կողմից չեն հիշատակվում, Վարդանի «Պատմությամբ» հատուկ նշանակություն է տալիս:

Դյուլորեի գիտական հետաքրքրությունների ոլորտը, պատմագրությունից բացի, ընդգրկում էր նաև իր ապրած շրջանը: Սերը Հայաստանի, նրա մշակութային նկատմամբ, աշխարհասփյուռ ժողովրդի ցավը կիսելու ցանկությունը նրան մղեցին ժամանակի հայկական կյանքի ուսումնասիրմանը: 1854 թ. լույս է տեսնում գիտնականի աշխատությունը, որտեղ ներկայացվում են հայ կյանքի և գաղթավայրերին, ազգային մտածողությամբ և ազգային բնավորությամբ վերաբերող հարցեր:

Քննելով հայ ժողովրդի պատմության և տարբեր պետությունների կազմում հայտնված հայկական գաղթավայրերի ժամանակի կյանքին վերաբերվող հարցերը, Դյուլորեն համեմատում է տարբեր երկրներում ցրված հայերի բնակության պայմանները:

Պատմության քննությունը Դյուլորենի բերեց այն համոզման, որ գաղութաբանությանը թմորոշ առաջին հատկանիշը սերն է և կարող էր Հայաստանի նկատմամբ: Ոչ մի զգացում չի կարող նրանց սրտին ստիպել ավելի արագ բարխել, քան հիշողությունները կորցրած հայրենիքից, որի հետ վերջին կապն ազգային եկեղեցին է: Հեղինակը համգամանային կերպով է գրել նաև Մխիթարյանների գիտական, պատմական, գրական և հրատարակչական լայն գործունեության մասին: Նա Մխիթարյանների հրատարակչական գործունեության հետ է կապում և հայ լրագրության սկզբնավորումն ու ներկայացնում տարբեր երկրներում լույս տեսնող հայկական պարբերականները: Դյուլորենի գրչի տակ հայ վերնախավը ներկայացնում է որպես բարոյական և նյութական օժանդակություն ցույց տվող ուժ, որի հայրենասիրությունը չի մահանջում ոչ մի զոհաբերության առաջ՝ համուց լուսավորության և կրթության:

Դյուլորեն գրում է Մխիթարյանների հիմնադրած Ռաֆայելյան և Սամվել Մուրադյան վարժարանների մասին, իսկ Մոսկվայի արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտին նվիրել է մի քանի հոդված, որտեղ մանրամասն պատմում է Լազարյան ընտանիքի և նրանց հիմնադրած ինստիտուտի, նրա նվիրական նպատակի և գործունեության, այդտեղ ուսանած բազմաթիվ աշխույժ հետազոտողների, գիտնականների, արևելագետների մասին: Կենսագրական ակնարկում և իշխան Իվան 2-րդ (Հովհաննես) Լազարյանի մահվան կապակցությամբ գրած հոդվածում Դյուլորեն ներկայացնում է նրա ակնառու ծառայությունն արևելագիտությանը, հայ հին հեղինակների գործերի, գիտական աշխատությունների և դասագրքերի հրատարակությունը:

Լուսավորության հարցերը սերտորեն առնչվում են լեզվի հարցերին, որոնցով նույնպես հետաքրքրվում էր գիտնականը: Հայոց լեզուն հենց սկզբից գրավեց նրա

ուշադրությունը, որպես հնագույններից և հնդեվրոպական լեզվաընտանիքի, ինչպես այդ ժամանակ կարծվում էր, իրանական ենթաճյուղի ամենալավ պահպանվածներից մեկը: Դյուլորեն համոզված էր, որ հայերենի համեմատությունը հունարենի հետ բացահայտում է նրանց զարմանալի նմանությունը, հայերենի ավելի հնագույն ծագումը և մերձավորությունը հնդեվրոպական նախալեզվին:

Իր մեկ ուրիշ աշխատությունում, որը նվիրված է հայոց հին երգերի և հին Հայաստանի առասպելների ու ավանդությունների վերլուծմանը Մ. Էմինի «Վեպք հնոյն Հայաստանի» գրքում, Դյուլորեն քննում և մեկնաբանում է պահպանված ժողովրդական երգերն ու առասպելները, որոնք հիշատակում է խորենացին: Քննարկելով «Վեպ, գրոյց, առասպել» բառերի Էմինի մեկնությունը՝ Դյուլորեն փորձում է ճշտել դրանց պարունակած պատմական այն իմաստը, որոնցով դրանք կիրառել են խորենացին: Նա չի համաձայնում Էմինի այն տեսակետին, թե հայերը ունեցել են հնագույն էպոս «Օաս-Նամե»-ի մեծ, քանի որ ամհավանական է համարում, որ խորենացին, եթե անգամ էպոսը չի հասել նրա ապրած ժամանակները, չիմանա դրա գոյության մասին:

Հայագիտության առանձին հարցերի վերաբերյալ ունեցած տարբեր կարծիքները, անշուշտ, չէին ազդում երկու գիտնականների փոխադարձ հարգանքի վրա: Եվ Դյուլորեն, բարձր գնահատելով Էմինի աշխատանքը, այն արժանի է համարում եվրոպական գիտական հասարակայնության ուշադրությանը: Իսկ Դյուլորենի աշխատությունն օրինակ է հայ հին գրականության բարդ հարցերից մեկի, որը երկար ժամանակ գիտնականների ուշադրությունից դուրս էր, խոր, շահագրգիռ ուսումնասիրության, ինչպես նաև լուրջ, անաչառ բանավեճի՝ գիտական ճշմարտությունը վեր հանելու:

Կյանքի վերջին տարիներին Դյուլորեն հրատարակության էր պատրաստում Ստեփանոս Տարոնացու (Ասողիկի) «Տիեզերական պատմության» ֆրանսերեն թարգմանությունը: Գրքի առաջին երկու մասերն արդեն պատրաստ էին, բայց լույս տեսան միայն 1883-ին, նրա մահից մեկ տարի անց: Գիտական ծանոթագրությունները վկայում են գիտնականի խոր գիտելիքների, վարպետության և մասնագիտական հմտության մասին: Հետագայում աշխատանքը շարունակեց մեկ ուրիշ նշանավոր հայագետ՝ Օգյուստ Կարյերը, որը հրատարակության պատրաստեց գրքի 3-րդ և 4-րդ մասերը:


Իր կյանքի ընթացքում Դյուլորեն զբաղվեց հայագիտությանը վերաբերող բազմաբնույթ հարցերով: Գիտնականի հետաքրքրությունների մեջ իրենց արժանի տեղն ունեին Հայաստանի պատմությունը, աշխարհագրությունը, տնտեսական և քաղաքական իրավիճակը, ժամանակի հայ հասարակության, հայոց լեզվի և գրականության, հայ հոգևոր և հասարակական կյանքի հարցերը: Դյուլորեն հաջողությամբ համադրում էր գիտական և մանկավարժական գործունեությունը: Նա երկար տարիներ դասավանդում էր, իսկ 1862-ին, Լևայան դը Ֆլորիվալի մահից հետո, միաձայն ընտրվեց Արևելագիտության բարձրագույն դպրոցի հայոց լեզվի ամբիո-

մի վարիչ: Նա ֆրանսիական և Տուրինի թագավորական ակադեմիաների անդամ էր. Պատվո Լեգեոնի շքանշանակիր:

Դյուլյորեն իրավամբ ուներ Ֆրանսիայի ամենանշանավոր հայագետներից մեկի համբավը, անցմահատելի ծառայություններ է մատուցել հայ պատմագիտությանը և գրականությանը՝ Եվրոպայի և աշխարհի գիտական շրջաններին ներկայացնելով հայ պատմագրության նշանավոր հուշարձանները: Նրա կյանքն ու գործունեությունը հայագիտությանը անմնացորդ ծառայելու բնորոշ օրինակ է:

Այս տարի լրանում է Դյուլյորեի մահվան 120-ամյակը: Սակայն մրա (ինչպես նաև Ֆրանսիայի մյուս հայագետների) գիտական ծառանցությունը Հայաստանում բավարար չափով ուսումնասիրված չէ: Հուսանք, որ 21-րդ դարում կլրացվի այս բացթողումը և մեր դարն ավելի արդյունավետ կլինի ընդհանուր հայագիտության այս կարևոր ասպարեզում ևս:





ՄՐԲՈՑ ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ՔԱԽԱՆԱՅԻՑ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՇՆՈՒՄ

(5 փետրվարի 2002 թ.)

Սրբոց Ղևոնդյանց քախանայից փոքր յուրաքանչյուր հայ հոգևորականի համար նշանավորվում է նաև որպես իր իսկ փոք, ուստի այն կարելի է համարել Հայ Եկեղեցու ողջ հոգևորականաց դասի փոքը: Արդեն իսկ ձևավորված ավանդույթի համաձայն, այդ օրը, հրավերով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրելին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում էր հավաքվել Հայաստանյան թեմերի քախանայից դասը՝ առաջնորդությամբ իրենց թեմակալ առաջնորդների:

Օրը նշանավորվեց նաև Ղևոնդյանց քախանայից փոքին նվիրված քախանայական ժողովով: Ի գլուխ ունենալով Նորին Սրբությանը՝ մեր հոգևորականաց դասը միասնաբար պիտի հաղորդակից դառնար օրվա խորհրդին, լսեր համապատասխան դասախոսություններ՝ մեր Եկեղեցու համար կենսական նշանակություն ունեցող ընթացիկ շարք հարցերի մասին, և ինչու և՛ միասնաբար որոշումներ կայացնեն այսօր Եկեղեցու առջև ծառացած դժվարությունների հարթման համար:

Առավոտյան ժամը 10-ից սկսվեց հոգևորականաց հոսքը դեպի Մայր Տաճար: Միասիրտ և միափող լինելու գաղափարն էր, որ առաջնորդում էր նրանց բոլորին ողջ հայության Սրբություն Սրբոց:

Հայ Եկեղեցու քախանայից դասը նախ բարձրացավ Վեհարան՝ շնորհավորելու Նորին Սրբությանն իր փոքի կապակցությամբ, որպես Ամենայն Հայոց Քախանայակերի, և թափորով Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղեկցելու դեպի Մայր Տաճար՝ միասնական աղոթքի, ուր կատարվեց թիվ Պատարագ՝ հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի, հավարտ որի Նորին Սրբությունը իր պատգամը ուղղեց ներկա Քախանայից դասին և հավատացյալ բազմությանը:

Միտքի հոգևոր եղբայրներ

Այսօր փոքն է Ղևոնդյանց քախանայից, և մենք բոլորու հավաքվել ենք այսօրեղ, այս սուրբ կամարների ներքո՝ նորոգելու մեր ուխտը մեր Տեղ Դսուս Զրիստոսի, մեր Փրկչի հեղ, նորոգելու մեր ուխտը դեպի մեր հայրերի սրբազան հավատը և նորոգելու մեր ուխտը դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Այսօր, ներկա ժամանակում, բազում մարտահրավերներ են ծառացել մեր և մեր Եկեղեցու առջև, և որպեսզի կարողանանք համարժեք

պարտահամեմատելի փողոված այդ մարտահրավերներին, հարկ է, որ մենք, որպես եկեղեցականներ, որպես սպասավորներ Աստծո և մեր ժողովրդի, կարողանանք մեր հավատավոր զավակների հոգիներից ներս հաստատել խորհուրդը, յույս պարգևը Սուրբ Էջմիածնի, որպեսզի Էջմիածինն ինչպես պարմական անցյալում, այնպես էլ այսօր և այսուհետ մեր և մեր ժողովրդի համար դառնա առաքելություն՝ նշանավորելով մեր կյանքի անխափան ընթացքը դեպի Աստված, դեպի բարոյ, ապահով ու երջանիկ կյանք հանուն մեր ժողովրդի և նորանկախազյալ մեր Հայրենիքի:

Ահա այս մարտումները որպես հայց և աղոթք դարձրած վերադարձն ենք երկինք՝ խնդրելով Տիրոջ գորակցությունը մեզ և Նրա շնորհը մեզ բոլորին, ամեն:

Հայրապետական թափորն այնուհետև ուղղվեց դեպի Հին Ճեմարանի հանդիսությունների սրահ, ուր Կեղի ունեցավ Ղևոնդյանց տոնին նվիրված նիստ-հանդիսությունը:

Այն սկսվեց աղոթքով, որից հետո բացման խոսքով ծանոթեց եկավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Կեսուք Տ. Եղիշն ավագ քահանա Սարգսյանը:

Թույլ տվեք Սրբոց Ղևոնդյանց քահանայից տոնին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու ողջ քահանայից դասի անունից շնորհավորել մեր սիրելի Վեհափառ Զահանայապետին և հայտնել որդիական մեր անմեղացորդ սերը, նվիրվածությունն ու շնորհակալությունը, որ քահանայից այս տոնը, օրացույցում ու Եկեղեցում հիշվելուց բացի, շնորհիվ Նորին Սրբության՝ նաև պարմական այս դասիձում հանդիպելու, խոսելու, իրար ավելի մոտիկից ճանաչելու հնարավորության գեղեցիկ և հիշարժան առիթ դարձավ:

«Խոսեցարուք զճշմարտության խրատանցիս ընդ ընկերի խրում, զի եմք միմեանց անդամք», - գրում է Նաթանուսաց Առաքյալը եփեսոսացիներին ուղղված թղթում (Դ 25):

Իրապես, այսօր հնարավորություն է ստեղծվել ոչ միայն հանդիպելու, խոսելու եկեղեցականներին հուզող հարցերի մասին, այլև սրանալու Հայոց Զահանայապետի օրհնությունը:

Սիրելի քահանա եղբայրներ, քրիստոնյա հոգևորականի կենդանի և ճշմարիտ օրհնակը մեր Փրկիչն է, որ երկիր իջավ աշխարհը փրկելու: Նա Իր անսահման մարդասիրությանը, Իր ներողամիտ, հեզ, սիրալիք վարմունքով ցույց տվեց, թե ինչպիսին պիտի լինի Աստծո տան պաշտոնյան, մարդկային ազգի փրկության սրբազան գործին սպասավորողը, մարդու և Աստծո միջև միջնորդը, հովիվը, քահանան:

Զահանայի սրբազան պարտականությունը հիմնականում ի սկզբանե եղև և մնում է որպես Աստծո տաճարի և հավատազյալ հոգի հովիվ լինելը: Իրենց սրտի խորախորհուրդ գաղտնիքները հավատացյալները կարող են

քանալ միայն սիրված և հարգված քահանային: Արժանավոր ու սիրված քահանաները Ասրժո խոսքը փոխանցելով միշտ էլ սպասված հյուր են եղել հայ ընտանիքում, լինելով և խորհրդավոր ու անկեղծ քարեկամ հավատացյալների համար:

Լիարժեք կերպով արդարացնելու համար քահանաներիս վարսահաված հավատացյալ հորի հոյսերը, պարտավոր ենք սիրով ու անթերի կատարել քահանայական այն պարտականությունները, որ ստեղծվել են մեր եռամեծար վարդապետ Հայրենյու: Հետո մեզանից ծովություն, մեծամարտություն, կոպարություն, արծաթախրություն և այլ խորհի ու մերժիկ երևույթներ: Պարտաւոր լինենք կենդանի պահելու հավատքը, հայրենասիրությունը, եկեղեցասիրությունը մեր ժողովրդի հոգում ու գիտակցության մեջ:

Անխաթար պահենք մեր պատմության մեծագույն նվաճումը հանդիսացող Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, որի սպասավորությանն ենք կոչված բոլորս:

Մենք, որպես Ասրժո կենդանի խոսքի փոխաններ, պարտավոր ենք ամեն օր կատարելագործել մեզ՝ կարդալով ոչ միայն Ս. Գիրքը, այլև այն բոլոր գիտական և կրոնական հրատարակությունները, որոնք մեզ ճանապարհի սիրտ ցուցանեն դիմագրավելու այն վտանգը, որ գալիս է զատնագծաբար զայլերից ու բորենիներից, որոնք, օգտվելով «խղճի ազատություն» կոչված օրենքից, ամեն օր, ամեն ժամ ցալ ու տատապանք են պարնառում Սրբազան մեր Եկեղեցուն:

Ինչ ենք անում մենք եկեղեցականներս, որ թեթևացնենք հոգսը մեր Եկեղեցու և Մայր Աթոռի: Ինչ ենք անում մենք քահանաներս, որ կարողանանք մեզ կոչել հեղինորդն ու հոգևոր սրբազան գործի արժանավոր շարունակողները Սուրբ Ղևոնդյանց քահանայից, որոնք հայ ժողովրդի և մեր բազմաճարհար Սուրբ Եկեղեցու սիրտն և հարաբերության ապահովման համար նահապետակցին և իրենց թափված արյամբ անմահացրեցին մեր Եկեղեցին:

Սիրելի հոգևոր եղբայրներ, այսօր մեզանից նահապետություն չի պահանջում, և միշտն ասած՝ դրա կարիքն էլ չկա: Մեզանից պահանջվում է անսակարկ նվիրում քահանայական գործունեությանը և մեր Սուրբ Եկեղեցուն: Թող Սրբոց Ղևոնդյանց քահանայից անսահման սերն ու նվիրվածությունը մեր պատմության միջոցով փոխանցվի մեզ, որպեսզի կարողանանք ապրել ու գործել նրանց ոգով և նվիրումով, որ հավիտյանս ապրի մեր Սուրբ Եկեղեցին, մեր Հայրենին և ժողովուրդը:

Թույլ տվեք խոսքս ավարտել մեծ հայի ու գորսավարի մեկ արտահայտությամբ, որը, մի փոքր փոխելով, պիտի հաղցնեի. շատ սիրելի հոգևոր եղբայրներ, քննից երբեք մտածել՝ եք, թե ինչ եք արել և տվել Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն և մեր ժողովրդին: Այսօրվանից ես պիտի առաջարկեի. երբ օրվա հոգանքից հոգնած, երեկոյան անկողին եք մտնում, հիշեցեք ձեր այդ օրվա արածի ու ճարածի մասին, որը, վարսահեղնում եմ

ձեզ, սփյուռնի օգնի վաղվա անելիքը ավելի հավատքով և նվիրումով կատարելու:

Թող Ղեկնդրանց քահանայից անմահ մարտիրոսական ոգին և նվիրումը թնամի այս դասիկճում, և այստեղից դուրս գանք ավելի զոռացած ու լցված նրանց անմահ հոգով:

Տեսուչ Նոր բացման ողջույնի խոսքից հետո Վեհափառ Հայրապետի առաջարկով և ժողովականների համաձայնությամբ նիստի արժեքները ընտրվեցին Սյունյաց թեմի առաջնորդ Ս. Աբրահամ եպս. Մկրտչյանը և Շիրակի թեմի առաջնորդ Ս. Միքայել եպս. Աջապահյանը, որոնք էլ վարեցին առաջին երկու նիստերը: Առաջին բանախոսությունը կարդաց Արցախի թեմի առաջնորդ Ս. Պարզև արքեպս. Մարտիրոսյանը՝ «Եկեղեցական համայնքների, ծխերի վերակազմավորման անհրաժեշտությունը» թեմայով: Սրբազան Հայրն իր բանախոսության ընթացքում անդրադարձավ եկեղեցական ծխերի և համայնքների անցյալում ծավալած գործունեությանը և ներկայիս այդ գործունեության վերականգնման անհրաժեշտությանը՝ նշելով նաև, թե այն ինչպես պետք է համապատասխանեցվի մերօրյա իրականությանը: Սրբազան Հայրն անդրադարձավ նաև ծխական համայնքներում աշխարհականների ներգրավման անհրաժեշտությանը: Բանախոսության ընթացքում Սրբազան Հայրն, ասածը հավաստելու համար, քանիցս համապատասխան օրինակներ բերեց, որոնք լավագույնս կարող են օգտակար լինել մեր Եկեղեցուն նաև այսօրվա գործունեության շրջանակում:

Այնուհետև բեմ հրավիրվեց Արժանապատիվ Ս. Ղևոնդ քահանա Մայիլյանը, որն էլ բանախոսեց «Հայաստանյայց Եկեղեցին և կրոնական խճանկարը արդի Հայաստանում» թեմայով՝ րարով Հայաստանում գործող համարյա թե բոլոր աղանդավորական ուղղությունների, Հայաստանում նրանց հասարակելու նախապայմանների, գործունեության ոլորտների, միջոցների և հետևողների մասին հստակ պատկերացում՝ շեշտելով նրանց գործունեության ազգակործան բնույթը: Այնուհետև ծավալվեց մտքերի փոխանակություն, և հարցեր քննարկվեցին երկու բանախոսների:

Երկրորդ նիստն սկսվեց Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տեսուչ Ս. Բագրատ արք. Գալստյանյանի «Քառանկյունները երեկ և այսօր» բանախոսությամբ: Հոգեշնորհ Հայր Սուրբը ներկայացրեց Եկեղեցու, որպես բարոյական համայնքի, չափանիշները՝ ընդգծելով նրանում հատկապես քառանկյունության ունեցած բացառիկ դերն ու նշանակությունը: Բանախոսը նաև անդրադարձավ Մկրտության, Ս. Հաղորդության և Սուրբ Հոգով նոր կյանքի ընկալման վերաբերյալ հասկացությունների սահմանմանը, դրանց Ավետարանական և Հին Կտակարանյան ակունքներին, ինչպես նաև Հին և Նոր Կտակարաններում՝ Աստված և իր ժողովրդի միջև հատուկ հարաբերության և Մարդնության խորհրդին՝ շեշտելով այն գաղափարը, որ «Եկեղեցին սոսկ հաստատություն կամ հիմնարկություն չէ: Այն գոյության ձև է, լինելության ճանապարհ»:

Բանախոսությանը հաջորդեցին քննարկումները, որ վերաբերում էին ոչ միայն քվյալ թեմային, այլև ընդհանրապես քառանկյուն դասին հուզող հարցերին:

Ձեռնարկվեցին նաև նիստերի ընթացքում բաժանա Հայրերի կողմից նդամ այն առաջադրությունները, որոնք կապված էին քահանայագործելու ընթացքում առաջացող բազմաթիվ խոչընդոտներին, դրանց հաղթման միջոցներին և Եկեղեցու կյանքում կենսական փոքր գրադեցնող փարբեր հարցերին:

Վեհափառ Հայրապետի երավերով իր մարածումները ներկաների հետ կիսեց Տ. Տաճար քեն, Դավթյանը: Քառանա Հայրը պատմեց Միացյալ Նախանգներում մեր Եկեղեցու ներքին կյանքի կազմակերպման, ինչպես նաև արտասահմանի մեր երեկեղեցական կյանքի կազմակերպման առավել հաջող փորձառությունների և Հայաստանում դրանց կիրառման հնարավոր փարբերակների մասին:

Ձեռնարկումներն ավարտվեցին նիստի արհեստագետ Տ. Արթուրյանի կողմից կազմված հայտարարությամբ: Այս քնարկումների վերջում Վեհափառ Հայրապետ իր կարծիքն ու դիրքորոշումը հայրենց յուրաքանչյուր հարցի վերաբերյալ առանձին-առանձին, ինչպես նաև իր օրհնության խոսքն ուղղեց ներկա հոգեվորականներին:

Միջնի հոգևոր եղբայրներ և ներկաներ

Ես ուզում եմ իմ շնորհակալությունը և գնահատականը արտահայտել բոլոր այն անձանց, ովքեր ձեռնարկեցին և կազմակերպեցին մեր այս հավաքը՝ դիվանապետ Հայր Սուրբին, լուսարարապետ Հայր Սուրբին, ինչպես նաև իմ գնահատականը եմ քերում Պարզն Սրբազունին, Բազրար Հայր Սուրբին և մեր սիրելի Տեր Հորը և սրբենապետող մեր Սրբազաններին: Ասեմ նաև, որ այսօր, երբ մեր Սրբազանների հետ միասին խմբված էինք Վեհարանում, մարածումն արտահայտեցի, որ բավարար չե այսպես մեկօրյա հանդիպմամբ բավարարվել, որովհետև չենք կարողանալու այս մեկ օրվա մեջ մեր առաջ ծառացած խնդիրների պատասխանները տալու, մեր դժվարությունները միմյանց փոխանցելու, մեր լուծումները գտնելու: Բայց, ինչպես արդեն Սրբազան Հայրն ընդգծեց, մենք այս հանդիպումից ակնկալում ենք լուծումներ ու ճանապարհներ և այդ իմաստով իրապես դժվար է այս մեկ օրը այնպես կազմակերպել, որ պատասխանները տա մեզ հուզող հարցերի: Ուստի մենք որոշեցինք, որ հանդիպումներ ունենանք մեր թեմերի ծառայող քահանաների հետ առանձին-առանձին:

Նկատի ունենալով, որ Արցախը, Վերահայրց թեմը և Հայաստանի թեմերը բոլորը միասին տասը թեմ են, և, ուրեմն, տարվա տասներկու ամսվա մեջ ամիսը մեկ թեմի քահանաների հետ կարող ենք հանդիպել և ավելի ակնկալական, պարզ երկխոսություն ունենալ և մեկս մյուսով զորացած, մեկս մյուսով ոգևորված մեր առաքելությունը կատարել մեր Եկեղեցու և մեր ժողովրդի կյանքում: Ուստի նորից պիտի խնդրեմ մեր թեմակալ առաքելողներին ինձ հիշեցնել, որ տարին մեկ անգամ մենք քահանայից դասի հետ պետք է հանդիպենք և կարող ենք հանդիպել ոչ միայն տվյալ թեմում կարող ենք հանդիպել Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, կարող ենք հանդիպել որևէ մի ուխտաձայրում, միասնաբար ուխտի գնալով:

Այժմ մի քանի խոսք ուզում եմ ասել այս ժողովից իմ տպավորությունների մասին: Դուք խեղճ դասախոսություններ, շատ հարցեր տվեցիք, բայց ես կարծում եմ, որ այժմ և բոլոր ժամանակներում որքան էլ որ տարաբնույթ դրսևորումներ ունենա կյանքը տվյալ ժամանակահատվածում, քահանայական առաքելության բնույթը չի փոխվում: Եթե մենք ուզում ենք արդյունավետ ծառայել մեր ազգին, պիտի ունենանք Ղևոնդ Երեցի ոգին, կամքը, հավատը, նվիրումը, սերը՝ ինչպես ժամանակահատվածում էլ որ ապրենք, ինչպես դժվարություններ էլ որ ունենանք, ինչպես խնդիրներ էլ մեր առջև ծառացած լինեն: Եթե մենք ժողովրդի անձնի մեջ կերպավորողը եղանք Ղևոնդ Երեցի նկարագրի և ոգու, մեր առաքելության մեջ մենք հաջողած ենք, մենք հաջողած ենք իբրև քահանա, մենք հաջողած ենք իբրև Եկեղեցի:

Իր ժողովրդի համար դժվարին պահին, ճակատագրական պահին ինչպես Ղևոնդ Երեցը կանգնեց և հաղթական իր դիրքորոշումը արտահայտեց նախ Աստուծո առջև, իր Եկեղեցու առջև, իր հայրերի սուրբ հավատքի առջև կանգնեց և իր հավատարմությունը դրսևորեց և քաջաբար ու վստահ իր հավատքը, իր համոզմունքը հնչեցրեց՝ պատրաստ լինելով գիտակցությամբ հանձնառություններ վերցնելու, անձնագոհության գնալու, իր կյանքը վրանդի ենթարկելու, ապրելու «Մահ իմացնայ անմահություն է» գիտակցությամբ:

Ես հիմա նայում եմ և տեսնում եմ, որ հազար հինգ հարյուր հիսունմեկ տարիներ են բաժանում մեզ իրարից, Ղևոնդ Երեցի ապրած ժամանակահատվածից, թերևս կյանքում երբեմն երևույթները տարաբնույթ են, տարբեր են, նույնական չեն, բայց առաքելորդող ոգին նույնն է հայ եկեղեցուկանի: Այսօր էլ կյանքում 5-րդ դարի պայմանները, բնակավայրերը, բնադատությունը փոխված են իրենց դրսևորումների, իրենց երևույթների մեջ:

Այն այսօր մեզ ներկայանում է աղանդների հարձակումներով, աղանդների կերպով, այն մեզ ներկայանում է քարոշական արժեքների անկման կերպով, այն մեզ ներկայանում է մեր ժողովրդի աղքատության, այսինքն՝ տարբեր ձևերի մեջ, բայց նույնն են մարտահրավերները, որոնց առջև պիտի կանգնենք որպես Ղևոնդ Երեցիներ և մեր ծառայությունը բերենք: Ունենք մենք այդ ոգին, այդ սերը, այդ հանձնառությունը, պատրաստակամությունը զոհաբերվելու: Փառք Աստուծո, դրա անհրաժեշտությունն այսօր չկա, ես Վարդանանց տոնի առիթով մի ուրիշ նշանաբան եմ ժամանակին կիրառել, կյանքով անմահությունը պետք է կերտել՝ «Կյանք իմացրայ անմահություն է» գիտակցությամբ: Ես հավատում եմ, որ որոշիչ է և էական է մարդու գիտակցությունը, մարդու ներաշխարհը, մարդու աշխարհընկալումը:

Չեզ հեղ, սիրելիներ, ես քաջաբան կերպով ասում եմ, եթե մի ուրախություն ունենք՝ բոլորինս է, եթե մի ցավ ունենք՝ բոլորինս է, եթե մի մեղք ունենք՝ բոլորինս է, եթե մի թերություն կա՝ բոլորինս է, բոլորիս կողմից դա պարճառված թերություն է: Եթե մեկը ծառայություն է կատարում և թերա-

նում, եթե մեկը նախանձախնդիր չէ մեր առաքելության, մեր ծառայության նկատմամբ, մենք պարտավոր ենք բոլորն միանալ և թերություն սիսուլ դրսևորում ունեցող անձին կարգի հրավիրել, որ վնասը ավերիչ չլինի, որ դրսևորված թերությունն ավերիչ վնաս չհասցնի:

Բոլորն էլ ինչ-որ տեղ դժգոհ ենք այն արդյունքներից, որ այսօր առկա է եկեղեցիներից և կյանքում, բոլորն էլ այստեղի քննադատական կողմեր ունենք: Բայց ամեն մեկս պետք է նայի իր դիմացինին: Եթե մենք մեր արդյունավետության պակասը փորձում ենք հիմնավորել առկա միջոցներով և դրանց պակասությանը, հնարավորությունների նվազ լինելով և այլ նմանատիպ հիմնավորումներով, արդեն իսկ մեր կոչման, մեր առաքելության մեջ, Ղևոնդ Երեցի հոգով ու կերպարով ոգեզնչված եկեղեցականի կոչման մեջ է, որ թերականգնվում ենք:

Ինչպես արդեն լսեցինք աղանդավոր 8-րդ, 10-րդ դասարանի կրթություն ունեցող անձր քարոզում է մեծ հաջողությամբ, և նա ավելի լավ ու հաջող քարոզչություն է իրականացնում, քան մեր՝ Լոնդոնի Աստվածաբանական Համալսարանը ավարտած հոգևորականը: Ուրեմն 10-րդ դասարանի այդ պարանին ավելի ունակ է առաջնորդի այդ դերի մեջ զգրվելու, քան թե մեր վեցամյա աստվածաբանական կրթություն ստացած եկեղեցականը: Բայց ես վստահ եմ, որ այդ երիտասարդը իր առաքելության նվիրյալ է, խենթ է, հավատացող է իր գործին, նա Ղևոնդ Երեց է այդ պահին իր ժողովրդի համար, իր համայնքի համար:

Սա մեր Եկեղեցու կենսատոճը, ապրելաձևը, կենցաղը պետք է լինի: Եթե մենք կարողացանք դա կերպել, ուրեմն ապահովված կլինենք մեր ժողովրդին ամեն տեսակի չարիքներից, նա աղանդավորի հեղինակ չի լինի, աղանդավոր չի դառնա: Այսօր ես կարևորագույն մի խնդիր եմ տեսնում մեր Եկեղեցու առջև՝ այս իրականությունը նկարի ունենալ և համաձայն այս իրողության գործել:

Մեր առաքելության հոգևոր-կրթական գործունեությունը, քրիստոնեական հավատքի կերպումն ու ամրապնդումն է մեր ժողովրդի գիտակցության մեջ, երկրորդ՝ սոցիալական դաշտի վրա, տնտեսական ոլորտից ներս մեր դերն ու առաքելությունը, դրանք միմյանց հետ շաղկապված են, մեկը մյուսով պայմանավորված: Եկեղեցու դերը այս ոլորտներում շատ մեծ է, Եկեղեցին պարտավոր է այստեղ իր խոսքն ասել, բայց այդ խոսքը եթե իր արտահայտությունը չգտնի կոնկրետ կյանքի մեջ, դրսևորումները չգտնի իմ թվարկած այդ ոլորտներում ու քննազատներում, մեր խոսքն անարժանք կլինի, արմատներ չի ների և պտուղ չի տա:

Մեր ժողովուրդը չի կարող բարեկեցիկ կյանքով ապրել, եթե արարավոր երևույթները հիմնական տեղ են գրավում մեր կյանքում: Ուրեմն այդ բարոյական աջակցությունը, հոգևորով՝ ժողովրդին բարոյական աջակցությունը, այդ առաքելությունը նույնպես Եկեղեցու վրա է, և որը կոչված ենք մենք իրականացնելու: Նաև դա էր Ղևոնդ Երեցի առաքելությունը, դա էր

Ղեկնող Երևցի կատարած գործի էությունը: Եթե մենք մեր ժողովրդին սիրենք ավելիով, քան մեզ և մեր ղեկավարը, կապրենք անհամեմատ ավելի բարվոք պայմաններում, մենք կգործենք անհամեմատ ավելի մեծ հնարավորությունների և միջոցների պայմաններում: Ժողովուրդը գիտն Կրայ, երբ արևելում է, որ այդ վերցնողը ամբողջությամբ վերադարձնում է իրեն՝ վերածված մի նոր արժեքի: Այնքան ժամանակ, որ մենք մեր ոգին, հավատքը, կրակը, չկարողացանք նվիրել մեր գործին և առաքելությանը, մենք միշտ պիտի գանք այստեղ, և մեր շրթունքներից անպակաս պիտի լինի դժգոհությունը, բայց մենք պետք է անմասնորոշ նվիրումով լինենք մեր գործի առաքելությունը, այն ժամանակ մեր գործը բարեհաջող ընթացք կունենա:

Ինչպիսիք եք պատկերացնում գործի հաջողությունը, երբ ձեր հայացքի մի հատվածը մշտապես դեպի նրա է ուղղված՝ դեպի ձեր ղեկավարը, երբ քո մտածումները, քո զգացումները հենու են քո համայնքից, երբ «հովիվ» գաղափարը քո գործի մեջ մասնակցություն չունի: Կարգապահությունը նա, այն, ինչ որ էության մասին խոսեցի, նվիրումի մասին խոսեցի, դրա մաս է կազմում: Կարգապահությունը պետք է որ դառնա ուղեկցող մեր կյանքի, մեր գիտակցության մեջ լինի:

Քահանան պիտի գիտենա իր առաքնությունը լսել, եթե գրեթե է, որ առաքնությունը սխալ է գոյություն ունի Թեմական խորհուրդ, գոյություն ունի Հայոց Հայրապետ, կարող է դիմել, բայց գիտցած եղև, որ Կաթողիկոսը հեղինակ ընկալումն ունի Եկեղեցու սպասավորի համար՝ նվիրում, գոհաբերություն աշխատանքի նկատմամբ, խենթի գիտակցություն, անվերապահ նվիրվածություն, անձնագոհ կերպ, ամբողջական գոհաբերության ոգի, և սա պիտի լինի հատկանիշը Հայ Եկեղեցու յուրաքանչյուր սպասավորի, և սա մեր փրկության, մեր հաջողության, մեր երջանկության ճանապարհն է:

Իմ աղոթքն է, իմ մաղթանքը, որ Աստված մեր մեջ գորացնի այդ ոգին, որա մեզ այդ սերը, այդ կամքը, այդ հավատքը:

Ղեկեղյանց նվիրված քահանայական հավաքն ավարտվեց «Էջ Միածինն ի Տօրե» շարականով և «Պահպանիչ» աղոթքով, որից հետո Հայ Եկեղեցու ողջ քահանայից դասը թափորով ուղևորվեց Մայր Տաճար՝ միասնաբար աղոթք կատարելու: Տեղի ունեցավ Երեկոյան ժամերգություն՝ հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի, որի ավարտին Հայրապետական թափորով Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց Վեհարան, ուր քահանաները, աջահամբույր առնելով, երաժնշար փվեցին Նորին Սրբությանը:

Քահանա Հայերը, ստանալով Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ու բարեմաղթանքը, վերադարձան իրենց համայնքները նորոգված ուխտով, նոր սպասումներով և մի նոր վճռականությամբ՝ լծվելու Աստծու և իրենց հոգի ծառայության՝ ի փառս Աստծու և ի բարօրություն մեր Մայր՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու:

Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՆՎԻՐՎԱԾ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 7-ին, Վարդանանց խորհրդին հաղորդվելու համար, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում էր հավաքվել հավաքացյալ հայորդիների մի հոծ բազմություն: Հավաքվել էր ոչ միայն հաղորդակից դառնալու համագգային այս մեծ փոնակատարությանը, այլ նաև շնորհավորելու Նորին Սրբությանը, քանի որ Վարդանանց փոնր նաև Անվանակոչության օրն է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

Առավոտյան մատուցված Ս. Պատարագի ընթացքում կատարվեց Հայրապետական մատթանք, որի ընթացքում ներկա հավաքացյալ հայորդիները, մեր հոգևորականաց դասի գլխավորությամբ, աղոթք բարձրացրեցին առ Աստված՝ Վեհափառ Հայրապետի «յամերում ժամանակօց ապահով անդորրութեան» և «Աստուածակառոյց Մեծի Աթոռոյս անասանութեան» համար:

Երեկոյան ժամը 17.00-ին, Վարդանանց փոնր արժանի շուրջով նշելու համար, հայ հավաքացյալների առաջ նորից իր հյուրընկալ դոներն էր բացել Վեհաբանի հանդիսությունների դահլիճը, որտեղ Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ ու Գևորգյան Հոգևոր Ծննդարանի ջանքերով նշվեց Վարդանանց փոնր:

Տեղումնական «Հայր մեր»-ից և Հայաստանի Հանրապետության օրհներգերից հետո հեջնց Ծննդարանի բայրերը, որին հաջորդեց Գևորգյան Հոգևոր Ծննդարանի փետույ Տ. Եղիշե ավագ քնն. Սարգսյանի բացման խոսքը.

Այսօր հիշատակի օրն է «Մորոց Վարդանանց զօրավարացն մերոց հազար երեսուն և վեց վկայիցն, որք կարարեցան ի մեծի պատերազմին»:

Պատմահայր Մովսես Խորենացին, իր անմահ Պատմության մեջ խոսելով մեր ժողովրդի անցած հերոսական ուղու մասին, գրում է «Զի թեպէտ և էմք Ածու փոքր, և թուով յոյժ բնդ փոքրու սահմանեալ և զօրութեամբ տկար, ... սակայն բազում գործ արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս արժանի գրոյ յիշատակի»:

Վարդանանց պատերազմի հերոսապատումը հենց Պատմահոր նշած արհուրյան, հայրենասիրության և մեր Ս. Եկեղեցու հավիտենական երթը շարունակական դարձնելու հիշարժան գործերից է: Միանշանակ հաստատելով Պատմահոր խնայուն խոսքը, ավելացնենք նաև, որ մեր ժողովրդի 30-դարյա պատմության մեջ երկար է շարքն այն պատմական սքանչելագործությունների, որոնք ոչ միայն ձևավորել են ազգային-կրոնական իրական նկարագիրը մեր ազգի, այլև խորհուրդ ու փայլ տվել մեր պատմությանը և մեր բազմախորհուրդ անցյալին:

... Խունկ և աղոթք խնայելով անմահացած Ս. Վարդանանց քաջամարտիկներին և Ղևոնդյանց քահանաներին, որոնք մարտիրոսացան, որ ապրի մեր Հայրենիքը և մեր Ս. Եկեղեցին:

Վեհափառ Տեղ.

Այսօրվա հանդեսի բացման այս հակիրճ խոսքի ավարտից առաջ պարտաւորություն ունենւմ ներկաների կողմից շնորհավորել նաև Ձերոյ Սրբութիւնը, անվանակոչութեան առթիւ, ի սրտե՛ն ցանկանալ բոլորի կողմից քաջատոգորություն և բեղմնավոր հովսեփականություն՝ ի փառս և ի շինություն Ս. Վարդանանց և Ս. Ղեկեղյանց նահապետկայանք փրկված և հաճիւրհեակուն կյանքի սրբազան իրավունք վաստակած մեր Ս. Եկեղեցու և ի վայելումըն Հայրենիքի և աշխարհասփյուռ հայորդիների:

Տեսուչ Հոր բացման խոսքից ետք «Վարդանաց խորհուրդը» բանախոսութեամբ հանդես եկավ Գեորգյան և Վազգենյան Հոգևոր Ճեմարանների գործարի դասախոս, բոլորի կողմից սիրված պրն Պետրոս Բեղիդյանը, որն իր բանախոսութեան մեջ, մեր պարմութեան նմանապիպ սխրանքները նկարի ունենալով, Արմին Վեգների հանգույն հայերիս որակեց իբրև՝ «պարտութեամբ չհաղթված ժողովուրդ»: Բանախոսը, անդրադառնալով Վասակ-Վարդան հարաբերութիւններին, դրանք թողեց պարմաբանների դարին՝ ի մասնավորի շեշտելով այն հանգամանքը, որ առավել կարևորը ժողովրդի ընտրութիւնն էր, և թե՛ ժողովուրդը, առաջնորդութեամբ Վարդանի, կարո՞ղ էր այլ կերպ վարվել: Անշուշտ՝ ոչ:

«451-ի օրվա մարդը՝ դարձել է դարերի հայ մարդը: Նա բոլոր մահկանացուների նման մարմնական կարճաթև կյանքով է վախճան գտել, սակայն իր հոգով ու մանավանդ ոգով անվախճան ժամանակների մեջ է մտել՝ հիմնավորապես»,- նշեց իր խոսքում պրն Բեղիդյանը՝ ավելացնելով, որ Վարդանը մշտական նեկայութիւն է մեր ընտանիքներում, մեր մանուկներն իրենց ճանաչել են երգելով՝ «Հայ՛ եմ ես, հայ՛ եմ ես, Զաջ Վարդանի թո՛նն եմ ես»:

Բանախոսութիւնից ետք ճեմարանի Ա լսարանի սան Գոռ Նազարյանի կատարմամբ հնչեց Վ. Թեքեյանի «Մահերգ նախապակաց» բանաստեղծութիւնը, որին հաջորդեց «Արեգակն արդարութեան» շարականը: Հանուն ուսանողութեան Վեհափառ Հայրապետին, անվանակոչութեան րոնի կապակցութեամբ, շնորհավորեց և ճեմարանցիների կողմից սրտի խոսք ասաց Զ լսարանի սան Վիգեն սրկ. Շիրվանյանը.

«Տէրն բարեկարգ ընդ մեզ տեսանենք յառաջնորդութիւն, չէ մեր մարդ զօրավար, այլ զօրագլուխն ամենայն մարտիրոսաց»:

Ավարայրի մարտից առաջ Ս. Վարդանի այս խոսքերը, իրենց պարզութեամբ հանդերձ, հրաշալիորեն պերճ և խոսուն են և իրենց հնութեամբ՝ միշտ արդիական և ժամանակակից:

1551 տարիներ առաջ վասն Փսոսի և վասն Հայրենկաց նահապետկայան հայ քաջորդիք դավանեցին ու վկայեցին Բրիտանիան թշնամու առջև՝ չվախենալով մարմինը սպանողներից, և եղան «նորասրանց լուսաւորիչք» և «նահապակք պսնծալիք»:

Եղան լուսավորիչներ. որովհետև օրհասի պահին չերկմեցին, այլ իրենց կյանքով շարունակեցին Սրբոց Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների և առաքիլապատիվ Սուրբ Գրիգոր Լուսավորչի քարոզությունը հայոց մեջ: Ավերարանասնունդ հոգով ու մտքով դարերին փոխանցեցին հայոց քրիստոնեական դպրոցի անսպիտակ լույսն ու անհաղթ հոգին: Ամմահ Զրիարոս է այդ դպրոցի վարդապետը. և այն հիմնամուր է հավաքի մեր Տոբ աջով հաստատված, Ներսես Մեծի ձեռքով քարծրացած, Մահալ-Մաշտոցի սխրանքով հայացած ու Թարգմանյաց ոգով ընդմիշտ զորացած:

«Ուխտ մեր ընդ Աստուծոյ է և ոչ ընդ մարդկան»։ այս էր Վարդանանց պարասխանը փորձության պահին ամբաստանության ու բռնության ներքո:

Այսօրվա սուրբ խորհրդով Վարդանանք մեզ հետ են, նայում են մեզ երկրներից, հոգուց հոգի զրուցում մեզ հետ, պարմում, թե ինչպես սիրենք Վարդանը Նայրենին ու Սուրբ Եկեղեցին. որ զարնան ծաղկունքով լեցուն Ավարայրի դաշտում, որը ներկվեց վարդագույն արյամբ, իրենք տեսնում էին հայոց այսօրը՝ քրիստոսահավատ ու նորոգված պետականությամբ:

Տիրալի, հերոսական ու պանծալի հայոց պարմությունը ներշնչանքի անսպառ աղբյուր է մեզ համար: Սուրբ Վարդանանց հիշատակի առջև խնարհումով այսօր ուսանողներս կոչում ենք միմյանց. «Բարոնենացն ճըշմարտից եկայք և մեր հերեմեսցուք»: Ընթանանք Վարդանանց հերքերով, հավաքի ու հավատարմության մեջ չերկմեցինք և չերկնչեցինք, միշտ հիշենք, որ «վախը թերահավատության է նշանակ», իսկ թերահավատությունը մենք ազգովի վաղուց, շատ վաղուց մերժել ենք: Թող մեր՝ հայոց անմահ քաջերի ժառանգորդներին հոգում միշտ պայծառ մնա Վարդանանց պարկերը և հարանորոգ՝ նրանց պատգամը. «Տերն բարերար ընդ մեզ տեսանեմք յառաջնորդութիւն», «չէ մեր մարդ գորավար, այլ գորագլխին ամենայն մարտիրոսաց»:

Վեհափառ Տեր, Ձերդ Սրբության անվանակոչության տոնի առիթով մեր որդիական սերն ու նրախորագիտությունն ենք բերում Ձեզ: Սրբոց Վարդանանց բարեխոսությունն ենք հայցում առ Աստված, որ Իր օրհնության ներքո միշտ առաջադնն ու զորավոր պահի Վեհապետիդ և Ձերդ Սրբության մականի ներքո՝ հաստատուն ու ծաղկյալ Նայոց Եկեղեցին. ամեն:

Այնուհետև Հոգևոր Ծննդաբանի երգչախումբը, մենակապարտությամբ Դ յարանի սան Էդգար դպիր Հակոբյանի, հնչեցրեց Մ. Եկմալյանի «Լեց» երգը, որին հաջորդեցին Ա յարանի սան Հայկ Ամիրյանի կապարմամբ՝ Վ. Հովհաննիսյանի «Ավարայրում», և ապա Արսեն Հարությունյանի կապարմամբ՝ Վ. Թեքեյանի «Նշրդություն» բանաստեղծությունները, որոնցից հետո երգչախմբի կապարմամբ հնչեց «Ի գէն» սպեկտակոլոգիան: Հանդիսության զեղարվեստական մասի ավարտից հե-

դու ներկաների հետ իր մրաժույթները կիսեց և օրհնության իր խոսքն առաջ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

ՎԵՏԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

Միջին հոգևոր եղբայրներ, դասախոսներ, սաներ և բարեպաշտ հավատացյալներ:

Կուզեմայի իմ սրտի գոհաբանական զգացումները հաղորդել ձեզ, որոնք որպես օրհներգություն և աղոթք դեպի երկինք են բարձրանում: Աղոթք, օրհներգություն գոհաբանության, որ Աստված ձեզ պարգևում է այսպիսի հոգեզմայլ, այսպիսի հարուստ ապրումներով պահեր, օրեր, տոներ, հիշատակներ, երբ մենք մեր պատմության հայելու մեջ մի պահ փորձում ենք տեսնել արտացոլված մեր կյանքը, արտապարկելով մեր անձը, մեր էությունը: Բով հայացքը հիմա ուղղված է Վարդանանց այս հիասքանչ կրավին, ու Աստված լույս խեցնի շիրիմի վրա հեղինակի՝ Գրիգոր Խանթյանի, և երկնքում թող ցնծա հոգին Հայոց Հայրապետի՝ Վազգեն Ա երջանկահիշատակ Կաթողիկոսի, որոնք որ մնալուն արժեք եղող նաև այս սքանչելի գործը պարգևեցին ձեզ, թողեցին մեր ժողովրդին:

Նայում եմ այս կրավին և այնտեղ տեսնում եմ մեծանուն հայորդյաց դեմքեր: Խորհուրդ է փոխանցված այս պարկերի միջոցով ձեզ: Վարդանանք Ե դարում, որոնք որ ապրում են մեր ժողովրդի զավակաց մեջ անունների փոխվելով, նկարագրեր, կենսագրություններ, ճակատագրեր, բայց էության մեջ մնում են անփոփոխ, առաքելության մեջ մնում են նույնական՝ հավատարիմ այն արժեքներին, որ ազգովին ուխտեցինք քրիստոնյա դառնալով, Զրիստոսի հեղեղողներ լինելով, Զրիստոսի ուխտին հավատարիմ անդամներ լինելով:

«Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է»:

Ես կարծում եմ սիրելիներ, որ ամեն մի տուն, որ մեր հայրերը կարգել են ու ավանդել ձեզ, որ մենք տոնախմբենք ոչ թե պարզ հիշատակներ վկայակոչելու համար է, այլ որպեսզի դրանք աղբյուր դառնան նորոգության, լիցքի, որպեսզի դրանք զան դաս դառնալու, պարսկության դառնալու, պարզամ դառնալու մեզ, որոնցով մենք զինվենք, որոնցով մենք զրկենք մեր կյանքի ճիշտ ճանապարհը, ուղին ու ապրենք Աստուծով, Աստուծուն հավատարիմ ընթացքով:

«Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է»:

Այս բառերը երբ փոխադրում ենք մերօրյա կյանքի շրջանակներից ներս, ակամայից հաստատում ենք, թե մեր ժողովրդի որքան զավակներ այսօր ապրում են ճիշտ հակառակ ընկալումին և ապրումին Վարդանանց այս գաղափարի, որքան մահեր այսօր զիջակցված չեն մեր կյանքում, ոչ ֆիզիկական, այլ բարոյական նկատի ունեն այսօր մեր կյանքում, թվարկե-

ու անհրաժեշտություն և կարիք չեմ զգում մեր կյանքում տեղ գրած բարոյական չափանիշների անկումը, դրանց հեղինակներով արտաբերվող երևույթների դրսևորումները զանազան ու զանազան ոլորտներում ու սուսարեգներում, արտաբերվող երևույթներ, որոնք բազում հայրողյաց հանդիմ թշվառության մեջ են զգում, որոնք բազում հայրողյաց պատճառ են դառնում հայրենիքը լքելու ու օտար երկրներում, օտար ամերիկ մեջ իրենց բախտը որոնելու և անվերապահ մահվան գիշերը ներկայիս, կենդանի մահվան:

Այս իմաստով մենք, որ անընդհատ մեծ տոնախմբությունների ժամանակ ոգևորվում ենք, ընդգծում ենք, որ Վարդանանց ոգին առանց ընդհատումի շարունակական կերպով փոխանցվել է մեզ, ապրում է յուրաքանչյուր դարի, յուրաքանչյուր սերունդի մեջ, ակամայից ցավալի կերպով հասարակում ենք, թե որքան հեռու ենք մենք այսօր այդ ոգուց, այդ իրականությունից: Կրոնական կազմակերպություններից և սփյուռքյան մեր համայնքներից դուրս այսօր, Նայասարանում և նախկին Խորհրդային Միության մեջ այդ հասկացությունը՝ Վարդանանց տոնախմբությունները, վերացել են մեր կյանքից:

Անդրադառնում եմ հիմա, որ դեռևս անցյալ տարի, փառք Աստծո, մեր խորհրդարանը հոյակեց Վարդանանց տոնը պեպական տոն, որը և նորից մեզ հույսով է լեցնում, որ առաջիկա տարիներին հավանաբար նոր սկիզբ դրվի Վարդանանց տոնակարարություններին, թեպետև անցնող տարիների ընթացքին մենք, որպես Եկեղեցի, փորձ կարարեցինք վերակենդանացնելու այդ ավանդույթը, այդ սովորույթը մեր ժողովրդի կյանքից ներս: Ինչևէ, ես կարծում եմ, որ մենք, որպես Եկեղեցի, պետք է որ միշտ հնչեցնենք, ուսուցանենք, փոխանցենք մեր ժողովրդի զավակաց, նրանց գիրակցությանը հասցնենք, որ, ինչպես ասվեց այսօր, Ավարայրի պարերազմը շարունակական պարերազմ է իր ձևերի մեջ:

Իր երևույթի մեջ այն փոփոխական՝ երբեմն նաև կրկնությունն է Ավարայրի իմաստային առումով, բայց երբեմն խորհրդանշական բնույթ է ստանում, այսինքն պարերազմական իրավիճակների մեջ չենք, ներքե չենք արձակվում, թնդանդենք չեն որոտում, սակայն բարոյական պարերազմի դաշտում ենք մենք ապրում, և որ մենք պարտավոր ենք զինված նույն ոգով, նույն նախանձախնդրությամբ, նույն հավատարմության զգացումներով հանդեպ մեր նախնաց սուրբ հավատը պահպանելու այն ամբողջ հոգևոր ժառանգությունը, որ ավանդ է թողնվել մեզ մեր հայրերից, որոնցով ապրված կյանքը միայն երաշխիք կարող է լինել մեր հարապետության, մեր հավերժության:

Վարդանանց այս գաղափարին էին հասել: Վարդանանց պարերազմը խղճի ազդարարության համար մղված առաջին պարերազմն էր ազգերի և պետությունների կյանքում: Եվ ակամայից միտածում եմ, թե այսօր որքան օտար կազմակերպություններ մտաք են գործել Նայասարան և փորձում են

մեր ժողովրդի գիտակցությանը հասցնել խղճի ազատության զաղափարը այն դեպքում, երբ 1551 տարիներ մեր ժողովուրդը գիտի, թե ինչ է նշանակում ապրել խղճի ազատության համար, որ իր մահով է այդ ազատությունը կռել, կռիել, և այսօր ոչ թե խղճի ազատություն է, որ պահանջում են մեզանից, այլ այդ ազատությունն է, որ ուզում են խլել մեզանից, քայքայել անվարան է իմ հավատքը, որ մենք պիտի կառողանանք միշտ Վարդանանց հոգին հրեշեցնել մեր ժողովրդի զավակաց գիտակցության մեջ, նրանց սրտերում, և ոչ միայն հեջեցնել, այլև կներել նրանց էությունը այդ ոգով, մեր ընթացքը դարձնել միշտ հաղթական՝ առ Տեղ ունեցած սիրով պայմանավորված:

Ես Վարդանանց տոնի այս ուրախ առիթով ուզում եմ մեր գնահատանքը բերել Ճեմարանի տնօրենները, սանուց, որոնք որ ամեն տարի կազմակերպում են այս տոնախմբությունը, և դա էլ խորհրդանշական է, որ Ճեմարանն է կազմակերպում, որ սաները այդ ոգով կրթվելու ու դաստիարակվելու ճանապարհի վրա են կանգնած, այդ ընթացքն են ապրում:

Մեր գնահատանքն ուզում ենք բերել մեր բանախոս դասախոսին՝ պարոն Պետրոս Բեդիրյանին, որ խնամված մի խոսքով ներկայացրեց մեզ խորհուրդը, իմաստը Վարդանանց: Նաև մեր գնահատանքը բոլոր մասնակիցներին, որ հոգեպարար այս գեղեցիկ պահը պարզեցին մեզ: Մենք ուզում ենք այս առիթով նաև մեր շնորհավորանքները բերել օրվա բոլոր հերոսներին, որոնք որ Վարդանանց հերոսամարտի քաջորդիների, քաջերի անունն են կրում և չունեն տարվա ընթացքին հովանավոր այլ սուրբ իրենց համար, քան այսօրվա հերոսներն են, իրենց պաշտպանները, պահապան հրեշտակները, պահապան հոգիները:

Ես կարծում եմ, որ նույնիսկ եթե հայորդիներն ունեն իրենց համար հովանավոր սրբեր, այդուհանդերձ Վարդանանց տոնը բոլորի համար անվանակոչության օր է և տոն ցանկալի: Եվ իմ մաղթանքն է, իմ ցանկությունն է, իմ աղոթքն է, իմ խնդրանքն է, որպեսզի յուրաքանչյուր հայորդի մկրտվի այս օրը, մկրտվի այս օրը Նիկողեմոսին պարգամվող մկրտությամբ, Վարդանանց ոգիով, որպեսզի միշտ բերկրանքը, ուրախությունը ու զոհաբանության աղոթքը մեր հոգում լինի, որ մղի մեզ այն կյանք ու զործ դարձնելու՝ ի շինություն և ի պայծառություն մեր Հայրենիքի ու Եկեղեցու:

Թող Մարված օրհնի մեզ ամենքս և զորացնի Վարդանանց սուրբ խորհրդով, նրանց ճանապարհը հավերժական դարձնի մեր ժողովրդի կյանքում, նրանց ճանապարհը օրհնության ճանապարհ դարձնի մեր զալիք սերունդների համար, ամեն:

ՍԻՐԹՈՒՐ ՍՐԿ. ՀՈՎՀՄԵՆՆԻՍՅԱՆ

ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳՐԵՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԱՓՈՐՆԵՐԻ ԱՄՊՏՈՎԱԿԱՆԱԿԻՐՆԵՐԻՆ

Փետրվարի 10-ին, Բուն Բարեկենդանի օրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հիմք դրվեց մի նոր ավանդույթի. Վեհարանի դահլիճում Ամենայն Հայոց Հայրապետն օրհնության և գնահատանքի գրքեր հանձնեց Հայրապետական Ս. Պատարագների ամպիոփանակիրներին՝ Հայ Եկեղեցու ծիսաարարողական կյանքին որդիական պատրաստականությամբ իրենց մասնակցությունը բերելու համար:

Հայ Առաքելական Եկեղեցու ավանդույթի համաձայն, ամպիոփանին գործածվում է եկեղեցական մեծախաղես Հայրապետական թափորների ժամանակ՝ իբրև Աստծո հովանու ներկայություն և առաջնորդություն, այնպես, ինչպես ապրվածաշունչյան ամպի այունը, որ երես ժողովրդին եզիպական գերությունից առաջնորդեց դեպի Ավիպոյաց երկիր: Հայրապետական թափորների ամպիոփանակիրներ են ընտրվում Եկեղեցուն առավել մոտ կանգնած և իրենց ծառայությամբ Եկեղեցուն նպաստ բերած պարվարժան մարդիկ:

Նորին Սրբություն Գարեգին Բ Կաթողիկոսի հայրապետական ընտրությունից ի վեր ամպիոփանի կրելու պարվին են արժանացել Հայաստանի ու Սփյուռքի ավելի քան երկու տասնյակ ճանչված հայորդիք, ազգային բարերարներ, պետական ու հասարակական գործիչներ, գիտության և մշակույթի ներկայացուցիչներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, մրավորականներ: Նրանց թվում են ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանը, Մատենադարանի տնօրեն Սեն Արևշապյանը, կոմպոզիտոր Ռաբերտ Ամիրխանյանը, ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի դեկան Գագիկ Ղազինյանը, սփյուռահայ բարերարներ Էդուարդո Հոնեկյանը, Գառնիկ Ցակուբյանը և այլք: Հայրապետական Օրհնության գրքի է արժանացել նաև «Տիգրան մեծ» երապարակչության տնօրեն Վրեժ Մարկոսյանը՝ իբրև այս տարվա Ջրօրհնյաց արարողության կնքահայր:

Վեհարանում կազմակերպված այս միջոցառմանը հանդիսավարեց և բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը.

Այսօր սկզբնավորվում է մի նոր ավանդություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կամարների ներքո, երբ յուրաքանչյուր ամպիոփանակիր Հայրապետական Պատարագի մարտուցման ընթացքին, որպես մեծ ժողովրդի հավատարմորդ ակնկներից մեկը, իր նպաստն է բերելու Պատարագի կազմակերպմանը և իրականացմանը, ստանալու է Վեհափառ Հայրապետի մասնավոր գնահատանքն ու օրհնությունը: Եվ այս զգացումով այս գեղեցիկ հանդիսությունը, Վեհափառ Տեղ, թույլ տվեք բացված համարել: Եվ բնականաբար ինչ

պես ամեն մեկ հանդիսություն, որ թարգմանն է լինելու մեր հոգևոր ուրախության և հոգևոր զգացումների, այս հանդիսությունը ևս համեմատված է գեղարվեստական մասով՝ համապարասխան բանախոսությամբ, որ մենք հնարավորություն պիտի ունենանք առավել մտրից, առավել հանգամանալից ծանոթանալու այն երևույթին, որ կոչվում է ամպիոփանակություն, ինչպես նաև տեսնելու, թե իրապես ամպիոփանակիրն ինչ ծառայություն և ինչ առաքելություն է սրանձևում իր այդ մարտուցած ծառայության մեջ։ Մի րով, ուրեմն, հանդիսությունը հայտարարում ենք բացված և հրավիրում ենք տիրա Վարդան Դերիկյանին բանախոսելու այսօրվա խորհրդի շուրջ։

Այա օրվա բանախոսը, ներկայացնելով ամպիոփանու պարունակած հոգևոր խորհուրդը, նշեց, որ ամպիոփանու սուրբգրային համարժեքը Հնգամպյանում քանիցս հիշարակվող ամպի և երի պյուն է, որը հրեա ժողովրդին եգիպտական գերությունից առաջնորդեց դեպի Ավելպյաց երկիր։ Այնուհետև զեկուցողն անդրադարձավ ամպիոփանու մասին մեր եկեղեցական մարենագրությունում եղած հիշարակություններին, ազգային վերիմաստավորմանը և վերջինովս պայմանավորված ժողովրդական բարեպաշտական ըմբռնումներին, ինչպես նաև ամպիոփանու կառուցվածքին ու պարաստման ձևին։

Այնուհետև մենակարար Միրանուշ Դարբինյանը, նվագակցությամբ Սյուզան Համբարձումյանի, կարարեց Ա. Վիվալդիի սրեղծագործություններից, ինչպես նաև Կոմիտասի «Միրանի ծառ» և Հարո Մրեփանյանի «Ույ Արագած» երգերը։

Այա «Էջ Միածինն ի Հօրե» շարականի հնչողության ներքո Հայրապետական Օրհնության գրերը բերվեցին Վեհարանի դահլիճ։ Առաջին Օրհնության գիրը, որ տրվում էր Սեբգեյ Համբարձումյանին, ընթերցեց Տ. Թորգոմ աղբ. Տոնիկյանը։ Այա Նորին Սրբությունը հաջորդաբար ամպիոփանակիրներին հանձնեց իրենց Օրհնության գրերը՝ յուրաքանչյուրին նվիրելով Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի առիթով հրապարակված 1700 շքեղ Ավետարաններից մեկական օրինակ, ինչպես նաև Մայր Աթոռի հրապարակած սեղանի օրացույցներ։

Օրհնության գրերի և նվերների հանձնումից հետո, ամպիոփանակիրների անունից շնորհակալության խոսք ասաց ԳԱԱ ակադեմիկոս, Երևանի Մաշտոցի անվան Մաքենադարանի տնօրեն տիրա Մեն Արևշապյանը։

Վեհափառ Տէր,

Միրելի հոգևոր Հայրեր, տիկնայք և պարունայք

Այսօր շար հանդիսավոր պահ է բոլորիս համար։ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ այս հարկի տակ հավաքվել ենք, որպեսզի մեկ անգամ ևս մեր սիրո և նվիրվածության հոյգերդ արտահայտենք Հայ Եկեղեցուն և Գարեգին Բ մեր սիրելի Վեհափառին։ Ժամանակին մենք բոլորս երբ երիտասարդ էինք, այնուհետև հաջորդ տասնամյակներում տարիք առանք, մեծացանք,

ծերացանք, քայք միշտ էլ, ևույնիսկ այն դաժան փաստամյակներում, երբ որ կրոնն ու Եկեղեցին հալածվում էին, իմանաք, որ Եկեղեցու հանդեպ հայ մարդու ստորում հարգանքը, սերը միշտ խորը արմատներ է ձգած եղել ու հարկապես այն մարդկանց ընտանիքներում, որոնք այդ ավանդույթը գալիս էր սերնդեսերունդ, դարերի խորքից:

Այնպես որ այսօր, երբ մենք կրկին անգամ, Վեհափառ Տեղ. Չեր կողմից արժանանում ենք այս ուշադրությանը, ուզում ենք սանել, որ մեզ համար լինել Չեզ հեպ, լինել Մայր Աթոռի, Մայր Եկեղեցու, Էջմիածնի, առհասարակ լինել Հայ Առաքելական Եկեղեցու հեպ՝ նշանակում է կարարել մեր որդիական պարտքը: Մենք բոլորս, անկախ տարիքից, մեր Եկեղեցու զավակն ենք, և երբ որ Դուք կամոքն Աստծո ընտելեցիք որպես Հայրապետ և Ամենայն Հայոց Կաթողիկոս, և մենք եղանք ամպիտվանի կրողները, դա մեզ համար մեծ պատիվ էր և մեծագույն համոյք գոնե այդ առիթով արտահայտելու մեր նվիրումը, զգացումը մեր ազգային Եկեղեցու նկատմամբ:

Բոլոր ներկա գրեկողներին և հարկապես ամպիտվանի կրողներին անուկից խորին շնորհակալություն եմ հայտնում Չեզ, միաժամանակ ուզում եմ ասել, որ լինել Չեզ հեպ, հանդիսանալ ամպիտվանի կրող, դա մեծ պատիվ է և ամեն մեկին նկատմամբ վստահության արտահայտություն:

Խորին շնորհակալություն:

Այնուհետև շնորհակալության խոսք ասաց նաև Իրանում Մ արքայկարգ և լիագոր դեսպան փոխ Գեղամ Ղարիբջանյանը:

Վեհափառ Տեղ,

Տոգևոր Հայրեր, Սիրելի ներկաներ,

Եզակի զգացումներ եմ ապրում, որովհետև այսօր՝ Բուն Բարեկենդանի օրը, այս մեծ պատվին արժանացա Հայ Եկեղեցու առաջնորդից՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսից: Եվ պիտի ասեմ, որ մեզ համար, մեր ժողովրդի համար Եկեղեցին և հայ ընտանիքը եղել են այն երկու սյունները, որոնց շնորհիվ, ջանքերով պետականություն, մենք ավելի քան վեց դար գոյարենել ենք և վերջապես, երբ արդեն փաստամյա մանուկ պետությունը քայլում է փոքրիկի քայլերով՝ էլ ավելի կարևոր է, որ մեր Եկեղեցին ինչպես 1700 տարի, այնպես էլ այսօր ևս Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջնորդությամբ մեր ժողովրդին փանի դեպի հայրապետություն: Ես իմ խորին շնորհակալությունն եմ ցանկանում հայտնել Վեհափառ Հայրապետին՝ իրեն ցանկանալով արևշարություն, լույս, և քանի որ հատուկ այս նպատակով եկել եմ Իրանից, ուզում եմ նաև փոխանցել իրանահայության որդիական սերը Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Չեզ արևշարություն, Վեհափառ Տեղ:

Երկրաշփյուռի ժողով
 Լեւոն Սեդրակյանի խոսքից հետո Երկրաշփյուռի
 ղեկավարները և Երկրաշփյուռի անդամները



Հանդիսության ավարտին Նորին Սրբությունն իր շնորհակալությունը հայտնեց ամպիոնականիկներին և օրհնության խոսք ասաց ներկաներին:

Մորազան Հայրեր, հոգևոր եղբայրներ, սիրելի ամպիոնականիկներն և շատ սիրելի զավակներ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու, սիրելի ներկաներ և սաներ

Մեզ համար ուրախության պահ է համահունչ է այսօրվա խորհրդին նաև, թեպետև եկեղեցական առումով այլևս Բուն Բարեկենդանին մենք հրաժեշտ փվեցինք և Մեծի Պահոց շրջանն ենք մուտք գործել, բայց կարծում եմ, որ այսօրվա տրամադրությունը մեզ տակավին թողնում է Բուն Բարեկենդանի մթնոլորտի մեջ, Բուն Բարեկենդանի խորհրդի մեջ, անցկացնելու մի քանի ժամ ու նոր հրաժեշտ տալ այս վերջին ցնծուն օրվան և մուտք գործել քառասունօրյա ապաշխարության Մեծի Պահոց շրջանը: Եվ շատ հաճելի է որ մեր Եկեղեցու հարկի տակ, Վեհաբանի այս կամարների ներքո, մենք Բուն Բարեկենդանը նշեցինք նման իրադարձությամբ, նման միջոցառումով:

Մենք Մեր գնահատանքի, Մեր շնորհակալության, Մեր օրհնության խոսքն ենք բերում մեր Եկեղեցուն մշտապես սիրով, պատրաստակամությամբ ու նվիրումով իրենց ծառայությունը բերող անձանց, արժանավոր զավակներին մեր ժողովրդի: Սա վկայություն է, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, իր սպասավորությունը բերելով ազգին, նաև արժևորում է ազգի կողմից Հայ Եկեղեցուն մատուցած ծառայությունը: Եվ ինչպես արդեն ընթերցանության պահին նկատեցինք և բանախոսի խոսքի մեջ անդրադարձնեցիք, Հայրապետի կողքին մշտապես եղել են մեր ազգի անվանի, նշանավոր, բազմապատասխան զավակներ՝ կարծեք թե խորհրդանշելու այն միությունը, որ դարերի մեջ կերտվել և ձևավորվել է Հայ Եկեղեցու և Հայ ժողովրդի մի միություն, որ մենք, որպես իրական ժառանգություն մեր հայրերի, պարտավոր ենք գուրգուրել, փայտափայլել և զալիք ժամանակներին, զալիք սերնդին հասցնել, լինել մեր օրերի լավագույն օրինակը, վատ վկաներն այդ միասնականության, ոգու հարստության:

Ինձ համար անհուն գոհունակություն է տեսնել ամպիոնականիկներին այս շաբթը, ես լիք անդրադարձել, որ այսօրվա Պատարագներ եմ մատուցել, երբ ընթերցվեց թիվը, տեսա, որ այս երեք տարիների ընթացքում բավականին շատ Պատարագներ ենք մատուցել Մայր Աթոռ Ս. Էջմիածնում և ունեցել ենք ուրախությունը Մեր կողքին տեսնելու մեր ժողովրդի արժանավոր զավակներին:

Մենք ցանկացանք պարզապես այսօրվա այս հանդիսությամբ գնահատանքի Մեր զգացումները փոխանցել իրենց և նաև թողնել մի հիշատակ, մի վկայություն այդ ծառայությունը մատուցած անձանց՝ իրենց զավակներին,

իրենց թոռներին, իրենց գերդաստանի պատմությանը և մեր ժողովրդի առաքմությանը, որ նաև որպես հպարտության զգացում փոխանցվի սերունդներին, որ հայ ժողովրդի, Հայ Եկեղեցու ավելի շիրակ՝ Հայ Եկեղեցու մկրտության կնիքը իր վրա կրող հայ ժողովրդի արժանավոր զավակներ ծառայություն են մատուցել Եկեղեցուն, և դրա վկայագիրը շնորհված է իրենց Հայոց Հայրապետից: Եվ երբ ձեռնամուխ հղանք այս միջոցառման ծրագրմանը՝ ծնվեցին ուրիշ գաղափարներ, որ թերևս ժամանակն է մուսծել Ս. Էջմիածնի «Ասպետների միության» հիմնադրման մասին:

Մեր գնահատանքը, Մեր օրհնությունը ձեզ ամենքիդ, բոլորիդ անխորհր, նրանց ովքեր այսօրվա հերոսներն են, նրանց ովքեր այսօրվա մասնակիցն ու ներկան դարձան այս արարողության: Թող Աստված պահի մեզ միասնական՝ ազգին, Հայրենիքին և Եկեղեցուն սիրո և ծառայության մեջ, և այդ ծառայությամբ շենացնենք մենք մեր երկիրը, զորացնենք մեր հայրենին ու պետությունը և երջանկություն, բարօրություն բերենք մեր ժողովրդի զավակաց, որպեսզի ուրախությամբ, ցնծությամբ, ժպիտով ապրեն աստվածապարզն իրենց օրերը օրհնյալ այս հողի, այս երկրի վրա, որ տրված է մեզ, մեր ազգին որպես մասունք նվիրական ու սուրբ: Թող Աստված պահի մեզ, պահպանի մեզ ամբողջ ու անխռով, ամեն:

Կուզեմ նաև շնորհակալությունս հայտնել գեղարվեստական այս երեկոն կազմակերպող անձանց՝ մեր սիրելի Արշակ Հայր Սուրբին, մասնակիցներին, բանախոսին, ասմունքողին, մենակատար երգչուհուն, որը մեր հարսն է՝ մեր սարկավազներից մեկի նշանածը, և ուրախ ենք, որ այդպիսի լավ ընդրություն է կատարել: Նաև մեր գնահատանքը, մեր շնորհակալությունը Երևանի Կամեռային երգչախմբին և նրա ղեկավարին՝ տիար Հարություն Թովիկյանին: Թող Աստված օրհնի ձեզ, պահի-պահպանի առողջ, կայսրառ և արեղծագործական ընթացքի մեջ:

Այսպիսով, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հաստատագրվեց մի նոր ավանդույթ, որ կարծում ենք, պիտի շարունակվի մեր ազգային-եկեղեցական կյանքից ներս՝ դառնալով ոգեշնչման նոր աղբյուր մեր ազգի հավաքավոր զավակների համար՝ հապացույց այն բանի, որ մեր ազգն ու Եկեղեցին մշտապես միաբերդ և միասիրտ են եղել և երբեք էլ չպիտի դադարեն այդպես լինելուց, շնորհիվ միմյանց նկատմամբ փոխադարձ անվերապան նվիրումի և ծառայության:

ՍՐԹՈՒՐ ՍՐԿ. ՀՈՎՀՍԵՆՆԻՍՅԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Մարտի 15-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում, Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ, փեղի ունեցավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի երեք միաբան հայրերի վարդապետական թեզերի պաշտպանությունը:

Տ. Շահեն արքեպս. Աճեմյանի նախագահությամբ քննիչ հանձնախումբը «Խոսք և ներշնչում» թեմայով թեզի համար ծայրագույն վարդապետական աստիճան շնորհեց Տ. Մյուռտն վարդապետ Գրվըզյանին: Մասնավոր վարդապետական աստիճանի արժանացան Սևանի Վազգենյան Դպրանոցի փեսոյ Տ. Բագրատ արքեպ. Գալստյանյանը՝ «Հիվանդաց օժման խորհրդի խնդիրը հայ Եկեղեցում», և Տ. Աշոտ արքեպ. Մնացականյանը՝ «Անառակ որդու առակը հայ մեկնողական գրականության մեջ», թեզերի համար:

Հայ Եկեղեցում վարդապետության աստիճան շնորհվում է աստվածաբանական ոլորտում գիտական ուսումնասիրություն կատարած կուսակրոն քահանաներին, որոնց տրվում է քարոզելու, Ս. Գիրքը և Եկեղեցու դավանանքը մեկնելու իշխանություն: Ինքը՝ վարդապետ բառը նշանակում է ուսուցիչ: Վարդապետությունն ունի փաստացի աստիճան, որոնցից առաջին չորսը մասնավոր վարդապետության աստիճաններն են, իսկ մնացած փասը՝ մեծ կամ ծայրագույն վարդապետության:

Մարտի 16-ին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում փեղի ունեցավ Ծայրագույն վարդապետական և մասնավոր վարդապետական աստիճանների տրվելու արարողությունը՝ ձեռամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պեփրոսյանի և Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանի:

Ինչպես Ձեռնադրության Մաշտոցում է ասվում, վարդապետական աստիճանի տրվելու ներկայիս կարգը սահմանել է հայ Եկեղեցու եռամեծար վարդապետներից Ս. Գրիգոր Տաթևացին: Եկեղեցական արարողության ընթացքում նորընծա վարդապետներին կտրվեն օծագլուխ գավազաններ՝ իբրև վարդապետական աստիճանի և իմաստության խորհրդանիշ:

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ



Տ. ՄՅՈՒՌՈՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳՐՎՐԳՅԱՆ

Ծնվել է 1950 թ. հուլիսի 23-ին Լիբանանի Տրիպոլի քաղաքում:

Նախնական կրթությունը ստացել է տեղի Խրիմյան-Նուպարյան ազգային վարժարանում:

1968 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1967 թ. դեկտեմբերին, Ս. Ստեփաննոսի տոնին, ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Հայկազուն արքեպս. Աբրահամյանի:

1969 թ. ավարտել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանը՝ ավարտաճառ ներկայացնելով «Գիրք Սաղմոսացի քննությունը», և արժանացել գերազանց գնահատականի:

1970 թ. մայիսին, երջանկափառակա Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, ուղարկվել է Բուենոս Այրես (Արգենտինա)՝ իր ուսումը շարունակելու «Էլ Սալվադոր» (Ս. Փրկիչ) և «Բուենոս Այրես» համալսարաններում՝ եկեղեցով աստվածաբանության, փիլիսոփայության և հոգեբանության դասընթացներին: Ուսումնառության տարիներին մասնակցել է նաև Բուենոս Այրեսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր ծառայությանը՝ սպասավորելով որպես սարկավագ, և միաժամանակ դասավանդել եկեղեցուն առընթեր Ս. Գրիգոր Լուսավորիչ երկրորդական վարժարանում հայոց լեզու, Հայ Եկեղեցու պատմություն և անգլերեն:

1979 թ. վերադարձել է Մայր Աթոռ և դեկտեմբերի 24-ին ձեռնադրվել կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տ. Արսեն եպս. Բերբերյանի:

1980 թվականից հոգևոր հովիվն է Իսի լե Մուլինոյի հայոց Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցու (Ֆրանսիա):

2002 թ. մարտի 15-ին ծայրագույն վարդապետական թեզ է պաշտպանել «Խոսք և ներշնչում» թեմայով:



Տ. ԲԱԳԴՅԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱՍՏԱՆՅԱՆ

Ծնվել է 1971 թ. մայիսի 20-ին Գյումրիում:

1978-1988 թթ. սովորել է Երևանի № 156 դպրոցում:

1988 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

1993 թ. դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփաննոս Նախավկայի փոխին, ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Գերաշնորհ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի:

1994 թ. մայիսին ավարտել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանը՝ ավարտաճառ պաշտպանելով «Խոսքով եպիսկոպոս Անձևացի» (կենսագրական գծեր) և «Բացալսյալություն Կարգաց Եկեղեցու» (ընագիրն ու աստվածաբանությունը) թեմայով, և արժանացել «գերազանց» գնահատականի:

1995 թ. հուլիսի 23-ին, Պայծառակերպության փոխին, ձեռամբ Երջանկաեղբայրակ Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1996-1998 թթ. եղել է «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր:

Այս ընթացքում Եկեղեցական երաժշտություն, Հայրաբանություն, Ընդհանուր Եկեղեցական պատմություն և Նոր Կտակարանի մեկնություն առարկաներն է դասավանդել Գևորգյան Հոգևոր Ճեմարանում, Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում և ԶԴԶԿ-ի ուսուցչաց լսարաններում:

1998 թ. Գարեգին Ա Հայրապետի փնտրիչությամբ մեկնել է Անգլիա՝ սովորելու Լիդսի համալսարանում և Մթֆիլդի Ս. Հարության քոլեջում, միաժամանակ լինելով և եռվիվը Մանչեսթրի հայ համայնքի Սուրբ Երրորդություն եկեղեցու:

2000 թ. ավարտելով ուսումնառությունը Անգլիայում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի փնտրիչությամբ վերադարձել է Մայր Աթոռ Ս. Էջմիածին և նշանակվել Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տնօրեն, ուր դասավանդում է նաև Եկեղեցական երաժշտություն, Ս. Պողոս առաքյալի աստվածաբանությունը և Ս. Հովհաննես ավետարանչի աստվածաբանությունը առարկաները:

2002 թ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի փնտրիչությամբ, Վազգենյան Դպրանոցի տնօրեն պարտականություններին զուգահեռ, նշանակվել է Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգի խորհրդի նախագահ:

2002 թ. մարտի 15-ին պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Օծումն եիվանդաց խորհրդի խնդիրը Հայ եկեղեցում» (Պատմությունը, գործադրությունը, վարդապետությունը և բնագիրը) թեմայով:

ՄԱԳԼԱՌՈՒՄՈՎՈՒ ՇՐՋԱԿ ՎՄԴԱՐՔՈՑՈՒԿԻՍԳՐ
ԼՂ ՌԱՍԽՈՏՈՒՄՈՒՄԻ ՄԱԳԼԻԿՈՐԿՆԵԳ՝ ՎԱԳՇԱԹՔԻՍԳՐ ԼՈՒԿՈՏԱՆԻՆԻՍԻ





Տ. ԱՇՈՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

Ծնվել է 1972 թ. նոյեմբերի 4-ին Գորիսի շրջանի Տաթն գյուղում:

1979-1989 թթ. սովորել և ավարտել է տեղի Ս. Առաքելյանի անվան միջնակարգ դպրոցը:

1989 թ. ընդունվել և 1995 թ. ավարտել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, ավարտաճառ պաշտպանելով «Հովհան Որոտնեցու կյանքն ու դավանաբանական հայացքները» թեմայով:

1995 թ. հոկտեմբերի 22-ին ձեռնադրվել է սարկավազ՝ ձեռամբ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի:

1995-1996 թթ. եղել է Մայր Աթոռի ձեռագրապահ պալատախանապետ:

1996 թ. հունիսի 2-ին Մայր Աթոռում, ձեռամբ Տ. Շահեն արքեպս. Աճեմյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1996 թ. հոկտեմբերից մինչև 2001 թ. դեկտեմբերը եղել է 1700-ամյակի եկեղեցական հանձնաժողովի Մայր Աթոռի գրասենյակի պալատախանապետ:

2002 թ. մարտի 15-ին պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Անառակ որդու առակը հայ մեկնողական գրականության մեջ» թեմայով:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԱՅՅԵԼԵՑ ԱՐՈՎՅԱՆԻ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԿԱՄԱՆԱՎԱՅՐ

Մարտի 27-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Աբովյանի կանանց և անչափահասների կալանավայր՝ Մեծի Պանոց շրջանում Քրիստոսի Հարության խորհրդով մխիթարություն բերելու ազապագրկման մեջ գտնվող կանանց և անչափահասներին:

Այցի ընթացքում քրեակադարտական վարչության պետ Ս. Հովհաննիսյանը և կալանավայրի պետ Յ. Զամալյանը Նորին Սրբությանը ներկայացրեցին կալանավայրի խնդիրներն ու առօրյան, որից հետո Վեհափառ Հայրապետը ինքնուրույն մտազնային ազապագրկման հետ և իր պարզամիտ ուղղեց նրանց:

«Աստված ամենուր մեզ հետ է, Աստված հավասարապես սիրում է ամենքիս, և դեպի Աստված դարձի ճանապարհը բոլորիս առջև բաց է: Պարզապես պետք է կարողանանք ինքներս մեր մեջ գտնել արիությունը այդ ճանապարհը փնտնելու, փնտնելու մեր կյանքի մեջ Լույսը և առաջնորդվելու դեպի այդ Լույսը՝ թողնելով մեր հետևում և՛ խավար, և՛ բոլոր փնտնելի այն մտածումներն ու զգացումները, որոնք հետաքննում են մեզ Աստված», ասաց Նորին Սրբությունը:

Վեհափառ Հայրապետը նշեց, որ Հայ Եկեղեցին մշտապես հիշում է իր բոլոր զավակներին՝ հայցելով Տիրոջ օգնականությունը, սերը և ուղորդությունը, որպեսզի ամենքին առաջնորդի կյանքի շիտակ ճանապարհով:

Հանդիպման ավարտին ազապագրկվածները ներկայացրեցին գեղարվեստական խաղաղի, ապա Նորին Սրբությունը առանձին զրույց ունեցավ նրանց հետ:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Արարադյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կոմյանը և ՀՀ զինված ուժերի հոգևոր տեսուչ Տ. Արշեն արեղա Սանոսյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՆՈՒՇ-ՑԵՐԵԿՈՒՅՑ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՆՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Սույն թվականի մարտի 3-ին լրացավ հայազգի մեծանուն բարերար Ալեքսանդր Մանթաշյանի ծննդյան 160-ամյակը:

Տարբեր ժամանակներում նրա ջերմ բարեկամներն են եղել և աջակցություն տրամադրել Ս. Էջմիածնի մի շարք բարձրաստիճան հոգևորականներ և միաբան հայրեր, այդ թվում նաև Կոմիտաս Վարդապետը, որին Բեռլինում ուսումը շարունակելու համար միջոցներ է հատկացրել Մանթաշյանը: Նրա ֆինանսական հովանավորությունն են վայելել նաև բազմաթիվ ճանաչված մտավորականներ, գրողներ, իրավաբաններ:

Այսօր հայրենիքում գլխավոր նրա ամենամեծ հիշատակը Ամենայն Հայոց Կաթողիկոսության շքեղագարդ Վեհարանն է: Ալ. Մանթաշյանն հոգով ու սրտով է ըմբռնել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կաթողությունը համայն հայության կյանքում և իր նպաստը բերել նրա պայծառությանը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությունն ավանդաբար ամեն փարի Ալ. Մանթաշյանի ծննդյան օրը Միածնաէջ Մայր Տաճարում կատարում է հոգեհանգստյան պաշտոն՝ մեծ բարերարի հոգու խաղաղության համար:

Այդպես էր և այս փարի, երբ Պատարագի վերջավորությանը ներկա հավաքացյալ ժողովրդին իր խոսքն ուղղեց Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պողոսյանը՝ հանգամանորեն ներկայացնելով մեծ բարերարի բերած նպաստը Հայոց Եկեղեցուն:

Նույն օրը, ժամը 15.00-ին, Մանթաշյանի հիշատակի վկայակոչումը շարունակվեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների դահլիճում, որտեղ փեղի ունեցավ ցերեկույթ, որը կազմակերպել էր Ճեմարանի տեսչությունը: Հանդիսությանը ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, միաբան հայրեր և ճեմարանական սաներ: Հանդիսությունը նախագահում էր Ամերիկայի Միացյալ Նահանգների Արևմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը: Բացման խոսքով հանդես եկավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Արժանապատիվ Տ. Եղիշե ավագ քնն. Սարգսյանը: Հոբելանական ցերեկույթին բովանդակալից զեկուցումով իր մասնակցությունը բերեց Սանդրա սրկ. Բեքրուլյանը: Միջոցառմանը մեծ շուք հաղորդեցին Ճեմարանի երգչախմբի կատարումները՝ ղեկավարությամբ Ռ. Շարբաթյանի:

Ալեքսանդր Մանթաշյանի ծննդյան 160-ամյակին նվիրված հուշ-ցերեկույթն ավարտվեց Գերաշնորհ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանի օրհնությամբ:

ԳՈՒՐԳԵՆ ՆՍՄԲՈՅԱՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՆՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ
ԱԼՄԱՐԱՆԻ ՍԱՆ

ԼՈՒՐԵՐ ԳԵՐՄԱՆԱԿԱՅՈՑ ԹԵՄԻՑ

Փետրվարի 7-ին Հյուսիսային Գերմանիայի հոգևոր հովիվ Ս. Սերովբե վարդապետ Իսախանյանը Գերմանիայի Հանովեր քաղաքում գրավող Ուղղափառ Եկեղեցիների Կենտրոնում բանախոսեց «Հայոց Եկեղեցին. 1700-ամյա անցյալն ու այսօրը» թեմայով: Բանախոսությանը ներկա էին Ուղղափառ և Կաթոլիկ Եկեղեցիների շուրջ 30 հոգևորականներ: Հանդիպումը կազմակերպվել էր Կաթոլիկ Եկեղեցու տեղի առաջնորդարանի Արևելյան Եկեղեցիների հետ համագործակցության բաժնի պարասխանապարտ հոգևորական, դոկտոր Նիկոլաուս Վիրվոլի կողմից:

Հավաքույթի ընթացքում ներկաները դիմել են նաև Փաուլ Իմոֆի վերջերս նկարահանած «Արարարի հովանու ներքո» հայաստան քրիստոնյա կղզի իպամական աշխարհում» մեկժամանոց ֆիլմը:

Վերջում ներկայացվեց Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների բաժնի վարիչ Եզնիկ Նախկոպտոս Պետրոսյանի «Հայ Առաքելական Եկեղեցին» գործի գերմաներեն թարգմանությունը, որն արդեն պատրաստ է հրատարակության:

Փետրվարի 10-ին, Բուն Բարեկենդանին, Ս. Պարարագից հետո, Բեռլինի Հայ տանը տեղի ունեցավ հայկական ավանդական երաժշտական գործիքների ցուցահանդես: Տեղի հայ համայնքի անդամներից Պետրոս Տիգրիսյանը հանգամանակից բանախոսությամբ ներկայացրեց շուրջ մեկ տասնյակ հայկական երաժշտական գործիքներ՝ դիդու, շվի, դուդուկ, սազ, պարկապզուկ, քամանչա, քանոն, թառ և այլն: Զուգադրությունը ուղեկցվում էր այս գործիքներով երաժշտական կապարտումներով:

Հանդիսությանը ներկա էր և գնահատանքի խոսք ասաց Բեռլինի հայ համայնքի հոգևոր հովիվ Ս. Սերովբե վրդ. Իսախանյանը:

Հայ տանը նախատեսված էր նաև համանման ցուցադրություն կազմակերպել՝ նվիրված հայկական տարագին:

Այս տարի բեռլինաբնակ համայնքում, եկեղեցում Արևագալի ու իսկման արարողություններին զուգահեռ, Հայ տան մեջ, ամեն ուրբաթ երեկոյան, կազմակերպվեցին միասնական ընթրիքներ, իսկ կիրակի առավոտյան՝ միասնական նախաճաշ, որից հետո հայերեն և գերմաներեն ընթերցվում էր օրվա Ավետարանը, ապա համայնքի հոգևոր հովիվ Սերովբե վարդապետը ներկայացնում էր Մեծի Պառնոց տվյալ կիրակիի հոգևոր խորհուրդը և ավետարանական պատգամը:

Փետրվարի 24-ին, Գերմանիայի հայոց առաջնորդարանի մշակութային հանձնախմբի նախաձեռնությամբ, Քյոլնի Մայր եկեղեցու համայնքային սրահում տեղի ունեցավ Նոր Զոտյայի հայկական եկեղեցիներին նվիրված լուսապատկերների (սլայդների) ցուցադրություն: Օրվա բանախոսն էր Արմեն Հախնազարյանը:

Այս միջոցառմանը Տ. Գարեգին արքեպս. Բեկչյանի նախագահությամբ ներկա էին մեծ թվով հայեր և գերմանացիներ:

Մարտի 3-ին Բեռլինի հայոց համայնքի անդամական ընդհանուր ժողովում ընտրվեց համայնքային նոր վարչություն՝ ավերնապետությամբ Պետրոս Տիքիճյանի և փոխապետությամբ Սարգիս Զեյֆիյանի:

Մարտի 6-7-ը Առաջնորդարանում, թեմակալ առաջնորդի հրավերով, տեղի ունեցավ Գերմանիայի հայոց թեմի հոգևորականների հերթական ժողովը, որում քննարկվեցին թեմին վերաբերող խնդիրներն ու առաջնային լուծում պահանջող հարցերը: Կրոնական ժողովի մասնակիցներն առաջնորդանիստ Ս. Սահակ-Ս. Մեսրոպ եկեղեցում, մարտի 6-ին, չորեքշաբթի երեկոյան, միասնաբար կատարեցին հսկումի արարողություն:

Մարտի 10-ին Զյուլի Ս. Սահակ-Ս. Մեսրոպ առաջնորդանիստ Մայր եկեղեցում տեղի ունեցավ Հայաստանի Ֆիլիարմոնիկ նվագախմբի դեկավար Հովարդ Թովիյանի գլխավորած խմբի համերգը, որի ընթացքում փարբեր հաղվածներ կատարվեցին հայ և արևմտաեվրոպական դասական երաժշտությունից:

Մարտի 16-ին Գերմանիայի հայոց թեմի առաջնորդարան այցելեց Գերմանիայում Հայաստանի Հանրապետության նորանշանակ դեսպան Կարինե Ղազինյանը:

Երեկոյան դեսպանուհին թեմակալ առաջնորդի հետ ներկա գտնվեց Գերմանահայոց կենտրոնական խորհրդի նախաձեռնած հիմնադրամի հանդեսին:

Հանդիսության ընթացքում ընթերցվեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնի և օրհնության գիրը հիմնադրամի ստեղծման առիթով: Հանդիսությունը եզրափակվեց գեղարվեստական կատարումներով:

ԸՍՏ ԳԵՐՄԱՆԱԿԱՅԻՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԴԻՎԱՆԻ

ՕԳՏԱԿԱՐ ԴՄԱՆՆԹԵՑՆԵՐ

Սույն թվականի մարտի 16-26-ը Մարդկային Զարգացման Միջազգային Կենտրոնի (ICHD) և Բանակցությունների դպրոցի Conflict Management Group (CMG)-ի Momentum համալսելի ծրագրով Հարվարդի համալսարանի Իրավաբանական դպրոցում կազմակերպվեցին դասընթացներ, որոնց նախագահն էր Հայաստանի երիտասարդ մասնագետներին ծանոթացնել հակամարտության կառավարման, արդյունավետ հաղորդակցության, բանակցություններ վարելու, ղեկավարման և համակարգված մրաժարության հմտություններին:

«Բարգավաճում կրթության միջոցով» կարգախոսով թվով 5-րդ Momentum-ը ներկրված էր կրթական համակարգի բարեփոխումներին: 13 հոգուց բաղկացած խմբում, որում ընդգրկված էին Հայաստանի կրթական զանազան հաստատություններից երիտասարդ դասախոսներ ու մանկավարժներ, այդ թվում՝ կրթության նախարարի խորհրդականը, նաև մեկ ներկայացուցիչ Արցախից՝ Մարտիանյանների համալսարանից, Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ և օրենությամբ, որպես հոգևոր ապաստարան, մասնակցեցինք նաև մենք:

Չնայած մեկշաբաթյա ուսուցման ընթացքը բավականին հագեցված էր սակայն դասերը հաջող էին կազմակերպված, և նյութը կամ խնդիրը մատուցվում էր պրաժմատիկական տարբեր հնարքների և անգամ խաղերի միջոցով, ինչը հետաքրքրություն էր առաջացնում՝ ուշադրությամբ հետևելու ամբողջ ընթացքին: Ամեն օր կրթական ոլորտի տարբեր պաշտոնատարներ դասախոսություններ էին կարդում՝ նվիրված կրթական համակարգի զանազան խնդիրներին:

Այս ծրագրի շրջանակներում այցելեցինք Բոստոնի հանրակրթական դպրոցներ (Public School և Charter School), Մասսաչուսեթսի համալսարան (UMass) և հանդիպում ունեցանք կրթական տնօրեն վարչության պատասխանատուների և ուսանողության հետ՝ ծանոթանալով կրթական ծրագրերի մանրամասներին, գործող համակարգում առկա խնդիրներին ու դասավանդման մեթոդներին: Մարտի 24-ին՝ Ճաշկազարդի օրը, խմբով ներկա եղանք Ութըրթաունի Սուրբ Հակոբ եկեղեցում մատուցվող տոնական Պատարագին և այցելեցինք կից գործող Կիրակնօրյա դպրոց: Եղանք նաև Սուրբ Մարկիանոս Ազգային Վարժարանում, ուր երկվեզու կրթություն են ստանում շուրջ 150 հայորդիներ:

Դասընթացներից հետո յուրաքանչյուրը պետք է ներկայացնեի ՀՀ կրթական համակարգում կարճաժամկետ բարեփոխման ծրագիր-նախագիծ: Մեր ներկայացրած առաջարկը՝ «Դարձ դեպի քրիստոնեական մեր ինքնությունը» վերաբերությամբ, վերաբերում էր կրթական համակարգում քրիստոնեական դաստիարակություն կամ Հայ Եկեղեցու պատմությունն առարկայի դասավանդմանը: Դասընթացի վերջում քննարկեցին համապատասխան վկայականներ:

ՊԱՐՈՒՅՐ ԲԱՆԱԼԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Մայր Աթոռի Դիվանատան Բարերության

**ՄՆՏԻՈՔԻ ԵՒ ՎՄՄԱՅՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՍՍՈՐԻ
ՈՒՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԵՏ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ ԶԱՔՔԱ Ա. ՊԱՏՐԻԱՐԻ
ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ
Ի ՊԱՂՏԱՏ**

25 Յունուար – 5 Փետրուար 2002-ին Իրաք կը գտնուէր Ասորի Ողորպիսա եկեղեցւոյ պէտք. Անտիոքի Ս. Աթոռոյ գանակալ Ն. Ս. Զաքքա Ա. Իվաս Պատրիարքը՝ հովուապետական այցելութիւն տալու իրաքաբնակ իր համայնքին, նաեւ հովանաւորելու եւ օծումը կատարելու սոյն համայնքի նորակառոյց եկեղեցւոյն:



Օգտագործելով այս բարեբաստ առիթը, թեմիս բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տ. Աւագ արքեպս. Աստուրեանը ընթրիքի հրաւիրեց Նորին Սրբութեան եւ անոր ընկերակցող առաջնորդներն ու եպիկոպոսները Յունուարի 28-ին զիշերը առաջնորդարանիս դահլիճին մէջ:

Սրբազան Պատրիարքը իր շքախումբով ժամանեց երեկոյեան ժամը 8:00-ին եւ դիմաւորուեցաւ առաջնորդ Սրբազան Հօր, հոգեւորականաց դասուն եւ Ազգային Կեդրոնական Վարչութեան կողմէ, ապա ուղղուեցաւ առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի, աղօթք բարձրացուց առ Աստուած՝ եայցելով խաղաղութիւն ամբողջ աշխարհին եւ ի մասնաւորի Իրաքին եւ անոր պետութեան:

Երեկոյթի սկիզբը առաջնորդ Սրբազան Հայրը, յանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Նորին Սրբութիւն Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի ողջունեց եւ բարի գալուստ մատչեց հիւր Հայրապետին, ապա անդրադարձաւ մեր եւ յոյր այս Եկեղեցւոյ պատմութեանը եւ սերտ յարաբերութեան, որը սկսած էր քրիստոնէութեան վաղ դարերէն եւ շարունակուած մինչեւ օրերս:

